

УНИВЕРСИТЕТ
ГРИГОР НАРЕКАЦИ



UNIVERSITY
GRIGOR NAREKATSY

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

*Հասարակական գիտությունների
հանդես*

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

Հասարակական գիտությունների

հանդես

2023-1 (15)

-

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

*Գլխավոր խմբագիր՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Главный редактор: ВАРДАН АКОПЯН
Ответственный секретарь: АМАЛИЯ ГРИГОРЯН*

*Chief Editor: VARDAN HAKOBYAN
Executive Secretary: AMALYA GRIGORYAN*

© Հանդեսում գետեղված հեղինակներ, 2023
© Ստեփանակերտի «Գր. Նարեկացի» համալսարան, 2023
© «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2023

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՄԵՆ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ – պատմական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ պրոռեկտոր

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր

ԲԱԲՍՅԱՆ ԴԱՎԻԹ - պատմական գիտությունների դոկտոր, ԱՀ ԱԳ նախարար

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուստովիկա և Ցակոբ Այնթապյան կենտրոնի տնօրեն, Որակի ապահովման պատասխանատու

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն

ԵՂԻՍԱՐՅԱՆ ԱԶԱՏ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի Հայ-ռուսական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

ԹՈՎՍԱՍՅԱՆ ԱՐԿԱՂԻ – Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

ԹՈՎՍԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզվի դասախոս

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՎԱԿ – իրավաբանական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր

ՏԷՐ - ՄԱԹՈՍԵԱՆ ՊԵՏՐՈՍ – պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեքրասկա-Լինբոլնի համալսարանի դասախոս, Հայագիտական ուսմանը ընկերության նախագահ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԱՆՈՒՇ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական քարտուղար

ՄԿՐՏՁՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

ՄՈՒՍՍՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ – բանասիրական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս

ՄՈՒՐԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ-ի Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԵՐԵՄՅԱՆ ՆԱՆԱՐ - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզվի դասախոս

ՔԱՈՒ ՊԻՏԵՐ – ամերիկյան <ՅուՍիԷլԷյ> (Լոս Անջելես, Կալիֆոռնիա) համալսարանի Նարեկացու անվան հայագիտության ամբիոնի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայագետ:

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АВАКЯН АРЦРУН – доктор филологических наук, профессор, декан филологического факультета ЕГУ

АВАНЕСЯН АРМЕН – кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегамяна НАН РА

АВАНЕСЯН ВАЛЕРИЙ – доктор исторических наук, проректор АрГУ

АРЗУМАНЯН ЛИЛИТ – доктор филологических наук, профессор, ректор Ереванского государственного института театра и кино

АКОПЯН СЕВАК – кандидат юридических наук, проректор по научной части и международного сотрудничества Степанакертского университета «Григор Нарекаци»

БАБАЯН ДАВИД – доктор исторических наук, министр иностранных дел РА

ГРИГОРЯН АМАЛИЯ – кандидат филологических наук, доцент, директор западно-армянского арменоведческого научно-исследовательского центра Лютовики и Акопа Айнтаплеан Степанакертского университета «Григор Нарекаци», ответственная по обеспечению качества

ДЕВРИКЯН ВАРДАН – доктор филологических наук, директор литературного института имени М. Абегамяна НАН РА

ЕГИАЗАРЯН АЗАТ – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка и литературы Ереванского армяно-русского университета

ЕРЕМЯН НАНАР – преподаватель кафедры языков Степанакертского университета «Григор Нарекаци»

КАУ ПИТЕР – руководитель арменоведческой кафедры американского университета <ЮСиЭлЭй> (Лос-Анджелес, Калифорния) имени Нарекаци, доктор, филологических наук, профессор, арменовед.

МАНАСЯН АЛЕКСАНДР – доктор философских наук, член-корреспондент НАН РА, профессор кафедры философии и логики ЕГУ

МАРГАРЯН СИРАНУШ – кандидат филологических наук, научный секретарь литературного института имени М. Абегамяна НАН РА

МКРТЧЯН ЭДУАРД – доктор филологических наук, профессор, преподаватель кафедры армянского языка и литературы Степанакертского университета "Григор Нарекаци"

МУРАДЯН САМВЕЛ – доктор филологических наук, профессор ЕГУ, заведующий кафедрой армянской литературы и истории имени академика Г. Тамразяна

МУСАЕЛЯН ОВИК – доктор филологических наук, преподаватель кафедры литературы и журналистики АрГУ

НИКОГОСЯН АРКМЕНИК – кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегяна НАН РА

ТОВМАСЯН АРКАДИЙ – преподаватель Степанакертского университета «Григор Нарекаци», кандидат педагогических наук, профессор

ТОВМАСЯН ЛУСИНЕ – кандидат филологических наук, доцент, преподаватель кафедры языков Степанакертского университета «Григор Нарекаци»

ТЕР - МАТЕВОСЯН ПЕТРОС – доктор, исторических наук, профессор преподаватель университета Небраски в Линкольне, председатель организации арменоведческого исследования, США.

EDITORIAL COUNCIL

ARTSRUN AVAGYAN - Doctor of Philology, Professor, Dean of the Faculty of Philology of YSU.

ARMEN AVANESYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Institute of Literature after M. Abeghian of NAS of RA.

VALERI AVANESYAN - Doctor of Historical Sciences, ASU Vice-rector.

LILIT ARZUMANYAN - Doctor of Philology, Professor, Rector of Yerevan State Institute of Theatre and Cinematography.

DAVIT BABAYAN - Doctor of Historical Sciences, Minister of Foreign Affairs

AMALYA GRIGORYAN - Candidate of Philological Sciences, Docent, Director of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University, in charge of Quality Assurance.

VARDAN DEVRIKYAN - Doctor of Philosophy, Rector at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

AZAT EGHIAZARYAN - Doctor of Philology, Professor, Head of the Armenian Language and Literature Chair at Armenian-Russian University.

ARKADI TOVMASYAN - Lecturer of the Chair of Pedagogy of "Grigor Narekatsi" University of Stepanakert, Candidate of Pedagogy Sciences, Professor

LUSINE TOVMASYAN - Candidate of Philological Sciences, Associate, Lecturer of Foreign Language at Stepanakert «Grigor Narekatsy» University.

SEVAK HAKOBYAN - Candidate of Law Sciences, Vice-Rector for Scientific-International Cooperation at Stepanakert "Grigor Narekatsy" University

PEDROS DER-MATOSSIAN-Doctor in Historical Science, Professor in the University of Nebraska-Lincoln, The United States of America, President of the Society for Armenian Studies

ALEXANDR MANASYAN - Doctor of Philosophy, Corresponding Member of NAS RA, Professor of the Chair of Theoretical Philosophy and Logic of YSU.

SIRANOUSH MARGARYAN - Candidate of Philological Sciences, Scientific Secretary at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

EDUARD MKRTCHYAN - Doctor of Philology, Professor, Lecturer of Armenian Language and Literature Chair at Stepanakert "Grigor Narekatsy" University

HOVIK MUSAELYAN - Doctor of Philosophy, Lecturer of the the Literature and Journalism Chair at ASU.

SAMVEL MURADYAN – Doctor of Philology, Professor, YSU, Head of the History of Armenian Literature Chair named after Academician Hr. Tamrazyan.

ARQMENIK NIKOGHOSYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Literature Institute after M. Abeghian of NAS of RA.

NANAR YEREMYAN - Lecturer of Foreign Language Departament at Stepanakert «Grigor Narekatsy» University.

PETER QAU - Narekatsi Professor of Armenian Studies at UCLA, Doctor in Philological Sciences (Los Angeles, California), Professor, Armenologist.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրականագիտություն

Ազատ Եղիազարյան

Չարենցյան առնչություններ - Թումանյան և Իսահակյան 15

Արմեն Ավանեսյան

Վարդան Հակոբյանի բանաստեղծական նորարարությունը 23

Լատուրա Մուրադյան

Գրականագիտական պրպտումների ակնառու արգասիքը
Քնարիկ Աբրահամյանի. «Գրական հորիզոնի ներքին շերտերում» 38

Արքմենիկ Նիկողոսյան

1930-ականների գրական կյանքն ու դեմքերը
անկախության շրջանի բանավեճերում 45

Վանո Եղիազարյան

Արցախը հայ հին գրականության մեջ 52

Զինաիդա Բալայան

Եղծերի ու հաստատումների փիլիսոփայական ընթերցումները ... 71

Լեզվաբանություն

Էդուարդ Մկրտչյան

Գրաբարյան բառաքերականական կառույցներ Գրիգոր Նարեկացու
ստեղծագործության մեջ 90

Մհեր Քումունց

Նախահայերենի «Ժամանակ» հասկացության բառափմաստաբանական
խմբի բառերի քննություն (ըստ Սյունիք-Արցախի բարբառների) 100

Լիանա Սանթրոյան

Հումորը Հայկ Խաչատրյանի «Քշմրոր» վիպակում 112

Մանկավարժություն և մեթոդիկա

Օրսանա Գասպարյան

Ուսուցչի նախապատրաստվելը դասին 121

Նանար Երեմյան

Անգլերենի ուսուցման մեթոդները և նորարարական տեխնոլոգիաների
օգտագործումը ուսուցման գործընթացում 129

Հոգեբանություն

Ալբերտ Զուրաբյան

Հոգեբանական անվտանգությունը որպես մասնագիտական
գործունեության դրդապատճառ 137

Ալբերտ Զուրաբյան

Հուզական այրումը պայմանավորող գործոնների ուսումնասիրումը
մասնագիտական գործունեությունում (SS ոլորտի աշխատակիցների օրինակով) ... 145

Իրավագիտություն

Վլադիմիր Հովսեփյան

Ցեղասպանության ուրվականը (Բերձորի) Լաչինի միջանցքում 156

Երաժշտագիտություն

Զաքար Քեշիշեան

Արմենուիի Կարապետեանի մանկապատանեկան
խմբերգագրութեան վաստակը 171

Գեղանկարչական արվեստ

Անահիտ Օհանյան

Նարեկացին և հայ մանրանկարչությունը 181

Գրախոսություն

Վարդան Հակոբյան

Վիրտուալ աշխարհի կառավարման գիտական հիմունքները 187

СОДЕРЖАНИЕ

Литературоведение

Азат Егиазарян

Чаренцские отношения- Туманян и Исаакян 15

Армен Аванесян

Поэтическое новаторство по Вардану Акопяну 23

Лаура Мурадян

Плодотворный итог в литературоведческих исканиях Кнарик Абраамян

“Внутренние пласты литературного горизонта” 38

Аркменик Никогосян

Литературная жизнь 1930-х гг. и лица в дебатах круга независимости 45

Вано Егиазарян

Арцах в древнеармянской литературе 52

Зинаида Балаян

Философские прочтения мифов и утверждений 71

Языкознание

Эдуард Мкртчян

Лексико-грамматическая структура грабара в творчестве Григора Нарекаци 90

Мгер Кумунц

Изучение праармянских слов лексической группы концепта «Время»

(по суйско-арцахским диалектам) 100

Лиана Сантрян

Юмор в романе Айка Хачатряна "Кшмор" 112

Педагогика и методика

Оксана Гаспарян

Подготовка учителя к уроку 121

Нанар Еремян

«Подходы и использование инновационных технологий в процессе

обучения английскому языку» 129

Психология

Альберт Зурабян

Психологическая безопасность как мотивация

профессиональной деятельности 137

Альберт Зурабян

Исследование факторов обуславливающих эмоциональное выгорание в

профессиональной деятельности (на примере сотрудников сферы ит) 145

Юриспруденция

Владимир Овсепян

Привидение геноцида в лачинском (бердзорском) коридоре 156

Музыковедение

Закар Кешешян

Арменуи Карапетян- новатор в армянской детско-юношеской хоровой музыке..... 171

Живопись искусство

Анаит Оганян

«Нарекаци и армянская миниатюра» 181

Обзор

Вардан Акопян

Научные основы управления виртуальным миром 187

CONTENT

Literary Criticism

Azat Yeghiazaryan	
<i>Charents' Relations-Tumanyan and Isahakyan</i>	15
Armen Avanesyan	
<i>Poetic innovation according to Vardan Hakobyan</i>	23
Laura Muradyan	
<i>A Remarkable Achievement in Thorough Literary Research: Knarik Abrahamyan</i>	
<i>"The Inner Layers of the Literary Horizon"</i>	38
Arkmenik Nikoghosyan	
<i>The Literary Life and Figures of the 1930s in the Independence Period Debates</i>	45
Vano Yeghiazaryan	
<i>Artsakh in Ancient Armenian Literature</i>	52
Zinaida Balayan	
<i>Philosophical Readings of Myths and Statements</i>	71

Linguistics

Eduard Mkrtchyan	
<i>Grabarian Lexical Grammar Structures in the Works of Grigor Narekatsi</i>	90
Mher Kumunz	
<i>The Study of the Proto-Armenian Words of the Lexical Group of the Concept</i>	
<i>"Time" (According to the Sui-Artsakh Dialects)</i>	100
Liana Santryan	
<i>Humor in Hayk Khachatryan's Kshmrar Novel</i>	112

Pedagogy and Methodology

Oksana Gasparyan	
<i>Teacher's Preparation for the Lesson</i>	121
Nanar Yeremyan	
<i>The Approaches of Teaching English and the use of Innovative</i>	
<i>Technologies in the English Teaching Process</i>	129

Psychology

Albert Zurabyan	
<i>Psychological Safety as Motivation of Professional Activity</i>	137
Albert Zurabyan	
<i>Research of Factors Causing Emotional Burnout in Pprofessional Activity</i>	
<i>(Using the Example of it Employees)</i>	145

Jurisprudence

Vladimir Hovsepyan

The Gost of the Genocide in the Berdzor`s (Lachin) Corridor 156

Musicology

Zakar Keshishian

Armenuhi Karapetyan, the Innovator in Armenian Children's and Youth Choral Music ... 171

Painting art

Anahit Ohanyan

Narekatsi and the Armenian Miniature 181

Review

Vardan Hakobyan

Scientific Basis of Virtual World Management187

ՉԱՐԵՆՑՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ԹՈՒՄԱՆՅԱՆ ԵՎ
ԻՄԱՀԱԿՅԱՆ

Ոչ մի հայ բանաստեղծի գրական առնչությունների շրջանակը այնքան մեծ չէ, ինչքան Չարենցին: Ներկա հոդվածում փորձ է արվում նկարագրել նրա գրական հարաբերությունները Հովհաննես Թումանյանի և Ավետիք Բասիակյանի հետ:

Թումանյանի հանդեպ հենց սկզբից Չարենցը պաշտամունք ուներ: Թեև իր ստեղծագործությամբ շատ հեռու էր Թումանյանից, բայց գիտակցում էր նրա հսկայական դերը հայ պոեզիայի զարգացման ընթացքում, նրան համարելով «անհաս Արարատը մեր նոր քերթության»:

Բասիակյանի հետ նրա հարաբերությունները ավելի բարդ էին: Դա կապված էր առաջին հերթին Բասիակյանի քաղաքական պատկանելության հետ: ՀՅԴ նկատմամբ իր վերաբերմունքը նա տարածում էր Բասիակյանի ստեղծագործության վրա, երբեմն անարդար գնահատականներ տալով Բասիակյանին: «Ազգային երազ» պոեմը և «Էլեգիա, գրված Վենետիկում» բանաստեղծությունը վկայում են այս իրողությունը: Բայց կյանքի վերջին տարիներին Չարենցը փոխեց իր վերաբերմունքը Բասիակյանի նկատմամբ: Նրա ամենավերջին բանաստեղծություններից մեկը՝ գրված բանտում և նվիրված Բասիակյանին, սիրո ու խոնարհումի արտահայտություն է:

Այս առնչությունների քննությունը օգնում է հասկանալ Չարենցի ճանապարհի առնձնահատկությունները և ընդհանրապես հայ նորագույն բանաստեղծության զարգացման ընթացքը:

Բանալի բառեր՝ «Դոմանս անսեր», Գյոթե, «Էլեգիա, գրված Վենետիկում», հեզնանք, գրական վեճ, վարպետ, Հոռոմ, ուղղափառ հեղափոխական, քարավան, քնարերգություն, «Գիրք ճանապարհի»:

Ոչ մի հայ գրողի գրական առնչությունները երևի այնքան բազմազան և լայնատարած չեն, ինչքան Չարենցին՝ և՛ արտասահմանյան գրականությունների մեջ, և՛ հայ գրականության ներսում: Մա Չարենցի գրական անհատականության ամենահետաքրքրական դրսևորումներից է: Դա գրականագիտական մեծ ուսումնասիրության առարկա է: Ներկա հոդվածում ես կփորձեմ նկարագրել նրա գրական հարաբերությունները Հովհաննես Թումանյանի և Ավետիք Բասիակյանի հետ: Մա հետաքրքրական է ոչ միայն նրանով, որ երկու բանաստեղծները իրենց ժամանակի և, առհասարակ, արևելահայ նոր գրականության մեծագույն հեղինակներն էին, այլև նրանով, որ Չարենցն իր ստեղծագործությամբ կարծես շատ հեռու էր և՛ առաջինից, և՛ երկրորդից: Ի՞նչն էր, ուրեմն, Չարենցին ստիպում ոչ միայն նամակներ գրել /Թումանյանին/, այլև իր ստեղծագործության մեջ այս կամ այն կերպ դիմել / և հարաբերականորեն հաճախ/

նրանց երկերին:

Նախ տեսնենք Չարենցի հեռակա շփումները Թումանյանի հետ: Առաջինը Թումանյանի 1916 թ. նամակն է Նար-Դոսին՝ Չարենցի մի բանաստեղծության տպագրության խնդրանքով: Ուրեմն Չարենցը դիմել է Թումանյանին: Այստեղից կարելի է ենթադրել, որ նա եղել է Թումանյանի մոտ: Սա միակ դեպքն է, որ մտածել է տալիս նրանց իրական հանդիպման մասին: Բայց ավելի կարևորը Թումանյանի վերաբերմունքն է երիտասարդ բանաստեղծի հանդեպ: Ես ուրիշ դեպքեր չգիտեմ Թումանյանի այս բնույթի միջնորդությունների մասին: Բայց Չարենցի համար միջնորդել է՝ այն էլ նրան բնութագրելով իբրև «երիտասարդ շնորհալի բանաստեղծ»¹: Այս բնույթի մի փաստ էլ է հայտնի. 1919-ին Չարենցը նորից դիմել է Թումանյանին՝ այս անգամ խնդրելով իր բանաստեղծությունները տպագրել նոր գրական հանդեսում: Բայց այդ հանդեսը լույս չի տեսել:

Ավելի հետաքրքրական է Չարենցի նամակը Թումանյանին, որը գրվել է Թումանյանի մահվանից քիչ առաջ, 1923 թ. հունվարի 1-ին: Թումանյանը պառկած էր մոսկովյան մի հիվանդանոցում, Չարենցն էլ գտնվում էր Մոսկվայում: Նա ցանկացել է այցելել Թումանյանին, բայց չի ստացվել: Ահա այդ նամակը.

«Խորապես ցավում եմ, որ հնարավորություն չունեմ անցնել Ձեզ մոտ և ամենախորին հարգանքներս բերել Ձեզ, մեր խոսքի ամենամեծ վարպետին, մեր ամենասիրելի պոետին: ... Ընդունեցեք իմ, Ձեր կրտսերագույն աշակերտի ամենաջերմ հարգանքները, հավատացած եղեք, որ ես Երևանում սրտատրոփ պիտի սպասեմ Ձեր վերադառնալուն և պիտի գամ Թիֆլիս՝ իմ անհուն հարգանքը բերելու Ձեր վաստակած և իմաստուն կյանքին, որ նվիրել է հայրենի եզերքին այնքան «շոայլ» ձեռքով հոգեկան բարիքներ ու գանձեր:

Ձեր՝ Եղիշե Չարենց»²:

Այս նամակը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Ուշադրություն դարձրեք նամակի գնահատականներին, հատկապես իմ ընդգծած տողին: Չարենցը Թումանյանին համարում է *մեր խոսքի ամենամեծ վարպետը, մեր ամենասիրելի պոետը*: Մի բանաստեղծի սրանից ավելի բարձր ի՞նչ գնահատական կարելի էր տալ: Բայց ո՞վ էր գնահատական տվողը՝ մի այլ բանաստեղծ, որը հենց այդ տարիներին կրթով ժխտում էր դասական բանաստեղծությունը, նույնիսկ մի ժամանակ իր ամենասիրած բանաստեղծի՝ Վահան Տերյանի գործերը կտրուկ մերժում էր: Երևի կարիք չկա ընթերցողին զբաղեցնել «Երեքի դեկլարացիայի» քննությամբ, «Պոեզոգուոնաի, «Ռոմանս անսերի» և Չարենցի այդ շրջանի մյուս գործերի վերլուծությամբ: Չարենցը այս գործերում ուլտրահեղափոխական բանաստեղծ էր, որը կոչ էր անում՝ «Շին շինի դու հիմի»: Դասական պոեզիան այլևս պետք չէր:

Ահա այս փաստին պետք է հատուկ ուշադրություն դարձնել, հասկանալ, թե Չարենցը, այսքան արմատականորեն մերժելով դասական բանաստեղծությունը, ինչո՞ւ էր այսպիսի խորագույն ակնածանքով խոսում այդ նույն դասական բանաստեղծության նահապետի մասին: Այս հարցին ճշգրիտ պատասխան տալ երևի հնարավոր չէ, բայց գոնե հստակ կարելի է ասել՝ անկախ բոլոր տեսություններից,

¹ Թումանյան Հովհ., ԵԼԺ, հ. 10, 1999, էջ 238:

² Չարենց Ե., Երկերի ժողովածու, հ. 6, 1967, էջ 396-397:

Չարենցը ամբողջ էությամբ զգում էր Թումանյանի մեծությունը: Այսինքն, Չարենցի բոլոր հեղափոխական հրապուրանքները, այդ թվականներին նրա գրած գործերը, ինչքան էլ կարևոր նրա գրական կյանքում, հոգու ամենախորին խորքերում նրան հարազատ չէին, նրա էության իսկական արտահայտությունները չէին: Դրանք նրա անխուսափելի տուրքն էին ժամանակին: Չարենցը դա էլ պետք է փորձեր, ինչպես մինչ այդ շատ բան էր փորձել: Դրանք իրենց հետքը թողեցին նրա հետագա ճանապարհին: Բայց նրա հոգու նույն այդ խորքերում ապրում էր խոնարհումը դասական բանաստեղծության առջև, որը մի քանի տարի հետո պետք է միս ու արյուն առներ «Խմբապետ Շավարշը», «Էպիքական լուսաբաց» և այլ գործերում: Հարևանցի ասենք, որ Չարենցի հակումը կտրուկ փոփոխությունների նկատմամբ այդ տարիներին շատ վառ է արտահայտվում: Բայց մեր թեմայի համար էլ ավելի կարևոր իրողություն է, որ նամակը մեկուսացած փաստ չէր Չարենցի գրական կյանքում:

Այդ նույն ակնածալից խոնարհումը Թումանյանի հանդեպ շարունակվում է երեսնական թվականներին, «Գիրք ճանապարհիում»: Այդ տարիներին Թումանյանին՝ նրա նվիրած տողերը, քառյակները մեկը չեն, երկուսը չեն. վեց բանաստեղծություն է գրել Չարենցը Թումանյանի մասին՝ ամեն անգամ ցանկանալով մի նոր կողմից լուսավորել Թումանյանի մեծությունը:

Նախ հիշենք Չարենցի երկու գնահատականները, որոնցով ընդգծվում է Թումանյանի միանգամայն առանձնահատուկ տեղը հայ և համաշխարհային պոեզիայում.

*Ես կարդում եմ նրան ու ասում. - Այս հմուտ, հանճարեղ Լռեցին
Հոմերի, Գյոթեի հետ մի օր հավասար՝ նստել է քեֆի,
Եվ թաա է բռնել նրանց հետ, մեծարանք տվել ու առել,
Ինչպես իր պապերն են արել՝ իրար հետ խնջույքի նստելիս...*

Չարենցը Թումանյանին համեմատում է համաշխարհային գրականության երկու մեծագույն դեմքերի հետ: Եվրոպական և համաշխարհային գրականության մեջ չկա մեկ ուրիշը, որը հավասար լիներ Հոմերոսին: Թումանյանը **բացարձակ** մեծություն էր Չարենցի համար: Պատկերը հետաքրքրական է ու շքեղ՝ նահապետական խնջույք՝ երեք ամենամեծերի մասնակցությամբ: Կարելի է երկար դատողություններ անել երեք բանաստեղծների մասին, համեմատել նրանց գրված տեղերը համաշխարհային գրականության մեջ և այլն: Բայց այս համատեքստում կարևորը Չարենցի համեմատության բուն փաստն է: Եվս մի երկտող.

*Կա Մեծարենց, կա Տերյան, - և բազում ուրիշ պոետներ կան,
Բայց - Թումանյան՝ նա է անհաս Արարատը մեր նոր քերթության:*

Առաջին տողում հիշված երկու բանաստեղծներն էլ Չարենցի ամենասիրած նախորդների թվում են: Տերյանի հանդեպ նրա վերաբերմունքի մասին շատ է խոսվել: Իսկ Մեծարենցին նա անվանում էր «*հիվանդ, հանճարեղ պատանի*»: Նրանց հետ համեմատությամբ էր ընդգծվում Թումանյանի մեծությունը, այս անգամ հայ պոեզիայի մեջ: Մնացած բանաստեղծությունները և քառյակները բացահայտում են Չարենցի հիացումի նորանոր եզրերը: Բայց ավելի բարձր գնահատական, քան տրված է բերված տողերում, անհնար է տալ: Ավելի բարձր չի լինում:

Հայ գրականության մեջ թերևս Չարենցն էր, Տերյանից և Մակինցյանից ու

Խանգադյանից հետո, այսօրվան բարձր և ճշմարիտ գնահատում Թումանյանի նշանակությունն ու դերը հայ պոեզիայի մեջ: Այս անգամ էլ գոեհիկ սոցիոլոգիզմ կոչվածի հզոր ազդեցության պայմաններում, ազդեցություն, որը նույնիսկ երկու տաղանդավոր մարդկանց՝ Ալեքսանդր Մարտունուն և Պողոս Մակինցյանին գրել տվեց տողեր Թումանյանի նացիոնալիզմի և նահապետականության մասին: Այդ պայմաններում Չարենցի այս տողերը ոչ միայն բանաստեղծի հիացմունքի արտահայտություն էին, այլև լուրջ ներդրում թումանյանագիտության մեջ: Մյուս կողմից, դրանք բացահայտում էին Չարենցի գրական ճանապարհի նոր փուլի առանձնահատկությունները: Կյանքի թումանյանական ընդգրկման տիեզերականությունն էր հիմա գրավում նրան.

Դու Տերյանից սովորեցիր լսել տրտունջը ոգու, -

Ա՛յն, որ մեր մեջ նվում է միշտ, գանգատվում ու մորմոքում.

Բայց արդ՝ քո մեջ ծայր է առնում ա՛յլ մեղեդի մի անվերջ. -

Թումանյանի հուրն է անշեջ քո կրակը բորբոքում:-

Ես կարծում եմ, մանավանդ «Գիրք ճանապարհի» շարքերից մեկը՝ «Տաղեր և խորհուրդներ», ներշնչված է «Թումանյանի հրով»: Կյանքի և մահվան կապը, մահվան այդ զարմանալի խաղաղ ընկալումը, որը հայ գրականության մեջ իր բարձրակետին հասավ Թումանյանի պոեզիայում, մանավանդ քառյակներում, շարունակվեց Չարենցի երեսնականների ստեղծագործության մեջ: Չարենցը չէր կրկնում Թումանյանին. բայց Թումանյանի ոգին թևածում էր այդ բանաստեղծության վրա:

Իհարկե, հոգու այն խաղաղությանը, որը բնորոշ էր Թումանյանին և որն այնքան գրավում էր Չարենցին, անհասանելի էր նրան: Անհատականությունն էր ուրիշ, ժամանակն էր ուրիշ, և վերջապես, Թումանյանն անկրկնելի էր: Չարենցի հսկայական տաղանդը ծնում էր աշխարհի այն փոթորկուն, հակասական պատկերը, որը բնորոշ էր Չարենցին նրա ամբողջ ստեղծագործական կյանքում: Եվ, այնուամենայնիվ, այս քառյակը և Թումանյանին նվիրված մյուս տողերը Չարենցի գրական կենսագրության ամենահետաքրքրական, ամենակարևոր փաստերից են:

Չարենց – Իսահակյան հարաբերություններում ամեն ինչ այդքան պարզ ու միանշանակ չէ: Դրանք ոչ միայն գրական էին, ինչպես Թումանյանի դեպքում, այլև իրական, անմիջական Չարենցի ամբողջ կյանքի ընթացքում:

Նախ, նորից հիշենք պատանի Եղիշե Սողոմոնյանի և Ավետիք Իսահակյանի հանդիպումը Կարսում: Դա կարող էր մնալ զուտ զվարճալի մի դրվագ, եթե հետագա հանդիպումները չլինեին: Վենետիկում նրանք հաճախ հանդիպել են և զրուցել, ինչպես վկայում է ինքը՝ Իսահակյանը: Այդ հանդիպումները Չարենցին գրել են տվել «Էլեգիա, գրված Վենետիկում» ծավալուն բանաստեղծությունը /կամ պոեմը/, որին դեռ կանդիդատականը: Բայց հիմա վերադառնանք տասական թվականների վերջը, Չարենցի «Ազգային երազ» պոեմը, որը կարծես բավարար ուշադրության չի արժանացել և՛ չարենցագիտության, և՛ իսահակյանագիտության մեջ: Բայց այդ երգիծական պոեմում Իսահակյանը բավական նկատելի տեղ է գրավում: Ահա մի անսպասելի երկտող պոեմի 16-րդ զլխից.

Այս, չէր մոռացել իմ խենթ սիրտը դեռ,

Որ երգիչ եմ ես... երկնքի թիթեռ...

Ընթերցողը պետք է որ անմիջապես նկատի Բսահակյանի հայտնի բանաստեղծության տողը աննշան փոփոխություններով: Ինչ գործ ուներ Բսահակյանի հույժ քնարական այս բանաստեղծությունը Չարենցի երգիծական գործում: Շատ բան կարելի էր ասել, բայց ամենագլխավորը այն էր, որ տողը բերված է բացահայտ հեզնանքով: «Երկնի թիթեռ-երգիչը» այս պոեմում այլ դեր կատարել չէր կարող: Չարենցը, ամբողջովին տարված հեղափոխությամբ և հայրենիքի ճակատագրով, այսպիսով մերժում էր Բսահակյանի քնարերգությունը, և դժվար թե իր մերժման մեջ Չարենցը ամբողջովին արդար էր: Բսահակյանը այդ թվականներին արդեն «Աբու-Լալա Մահարիի» և հասարակությունը մերժող բազմաթիվ բանաստեղծությունների հեղինակ էր: Մյուս կողմից, Բսահակյանը հայրենիքին և ազատագրական շարժման գործիչներին նվիրված շատ բանաստեղծություններ էր գրել: Բայց Չարենցը այսպես էր տեսնում Բսահակյանի ստեղծագործությունը: Ինչու:

Բսահակյանը Չարենցի համար ոչ միայն բանաստեղծ էր, այլև քաղաքական որոշակի ուժի ներկայացուցիչ /իսկ Թումանյանը բարձր էր կուսակցություններից, քաղաքական ուժերից, առօրյա քաղաքական պայքարից/: Բսահակյանը ՀՅԴ անդամ էր, իսկ պոեմը առաջին հերթին ներկայացնում էր Դաշնակցության գործունեության արատավոր կողմերը /գոնե Չարենցի ընկալմամբ/: Զարմանալիորեն այս պոեմը չի դարձել լուրջ քննարկման առարկա Հարենցագիտության մեջ: Միայն ամենավերջին տարիներին է լրջորեն խոսվում պոեմի մասին: Բայց պոեմի ամբողջական և խոր վերլուծությունները շատ քիչ են: Առհասարակ, Չարենցի վերաբերմունքը ազգային կուսակցությունների հանդեպ, մանավանդ ՀՅԴ-ի, պետք է ավելի խորքով քննվի, նկատի առնելով և՛ այս պոեմը, և՛ «Երկիր Նաիրի» վեպը, և՛ «Խմբապետ Շավարշը», բանաստեղծությունների մի մասը /այստեղ պետք է հիշեմ Մելքոն Գրիգորյանի արժեքավոր հոդվածը Չարենցի և Ավետիս Ահարոնյանի հարաբերությունների մասին/: ՀՅԴ-ի հանդեպ Չարենցի դիրքը ստվեր էր նետում և Բսահակյանի նկատմամբ Չարենցի վերաբերմունքի վրա: Առանց դրանց քննության դժվար է հասկանալ Չարենցի տողերը Բսահակյանի մասին:

Հաջորդ՝ 17-րդ գլխում ավելի ծավալուն անդրադարձ կա, այս անգամ «Աբու-Լալա Մահարիին»: Այստեղ հեզնանքը ավելի է ընդգծված:

Օ, Բսահակյան եղբայր Ավետիք, —

Քանի կան կյանքում Թորգոմյան որդիք —

Աբուլ Ալաներ չեն պակսիլ կյանքից...

Միրելի եղբայր, հավատա՛ դու ինձ,

Որ երբ ես տեսա երագիս միջում,

Թե ինչպես քա՛ղցր է, քա՛ղցր է դողանջում՝

Բրդի քարվանք Լեզեռն մեծի —

Աբուլ Ալայիդ քարվանն հիշեցի...

Մի՞ թե այս բանում մեղավո՛ր եմ ես —

Ավո ջան, հոգի՛ս, խնդրում եմ... ներես...

Մի՞ թե չգիտես, որ մարդ երագում

Երբեմն հիմար բաներ է ասում: —

Ես էլ, երբ որ այդ քարվանք տեսա —

«Աբուլ Ալայի քարավանն է սա» —

Չգիտեմ ինչու ասացի հանկարծ...

Նախ, ուշադրություն դարձնենք հատվածի ոճին: Բացահայտ հեգնանք: Առաջին տողից սկսած, Չարենցը հեգնական երկիմաստություն է հաղորդում իր մտքերին՝ երազում կամ երազից ծնված: Բայց, ակնհայտորեն, «Աբու-Լալա Մահարիի» հիշատակությունը այստեղ մի քիչ բռնագրոսիկ է. Բահակյանի հերոսի քարավանը որևէ առնչություն չունի Լեգեոնի բրդի քարավանի հետ: Մական Չարենցի ընտրած ժանրը և պոեմի ակնհայտ քաղաքական ուղղվածությունը միանգամայն հասկանալի են դարձնում պոեմի հիշատակությունը: Չարենցի թիրախը, ըստ էության, ոչ թե «Աբու-Լալան» է, այլ որոշակի քաղաքական կուսակցություն: Եթե փորձենք «պրոգնոզիկ» լեզվով շարադրել Չարենցի պոեմի միտքը, պետք է ասենք, որ նա ծաղրում է Դաշնակցության քաղաքական «անմեղսունակությունը»: Ուզում էին մի բան անել ժողովրդի համար, բայց իրենց մանկական արկածախնդրականության բերումով այնպիսի բաներ էին անում, որ միայն վնաս էր տալիս այդ նույն ժողովրդին, այն էլ ծանր, անուղղելի վնաս: Հիշեմ միայն սկզբնական դրվագը, որտեղ Ահոն, ցանկանալով հրդեհել թշնամու գյուղը, սխալմամբ հրդեհում է հայկական գյուղը: Չարենցը կասկածի չի առնում, որ Ահոն սխալվել էր, այն էլ հայրենասիրական անկեղծ պոռթկման մեջ: Բայց հետագա իրադարձությունները, Ահոյի ընկերների կողմից նրա ճակատագրական սխալին այդպիսի ըմբռնումով վերաբերելը և այլն, և այլն, այդ սխալին տալիս են համակուսակցական բնույթ: Եթե պոեմի հերոսների նախատիպերին չճանաչեինք էլ, նրանց ճառերը, նրանց հայրենասիրական պաթետիկան անմիջապես մատնացույց պետք է անեին քաղաքական այն ուժը, որին պատկանում էին այդ հերոսները: Առանց այս համատեքստի պարզապես անհնարին է հասկանալ Բահակյանի և նրա պոեմի հիշատակությունը «Ազգային երազում»:

Գրական վեճը Բահակյանի հետ շարունակվում է քսանական թվականներին: Չարենցը եվրոպական ճանապարհորդության ժամանակ Վենետիկում հանդիպում է Բահակյանին, երկար զրույցներ են ունենում, մտերմանում են: Այդ բոլոր զրույցները Չարենցը ամփոփում է իր հայտնի բանաստեծության /թե պոեմի/ մեջ՝ «Էլեգիա, գրված Վենետիկում»: Այս գործը, իբրև գնահատական Բահակյանի ժառանգությանը, իհարկե, անարդար է, ուղղագիծ, ծայրահեղորեն քաղաքականացված: Բայց հասկանալի է Չարենցի գրական կենսագրության համատեքստում: Չարենցը այդ ժամանակ քաղաքական հայացքներով դեռ ուղղափառ հեղափոխական էր: Անկասկած, նշանակություն է ունեցել և «Ազգային երազի» ավանդույթը, վերաբերմունքը Դաշնակցության հանդեպ: Բայց այս գործում գնահատականը շատ ավելի ուղղագիծ է, անզիջում, քան «Ազգային երազում», ինչն անխուսափելիորեն նվազեցնում է պոեմի գեղարվեստական արժեքը: Բահակյանի պոեզիայի նշանակությունը նեղացվում էր՝ վերածվելով հնի, նահապետականի գովերգի: Բահակյանի՝ սոցիոլոգիական դիրքերից պարզունակացված աշխարհին հակադրվում էր Հայաստանի վերակառուցումը, արդյունաբերության զարգացումը.

Եվ լսի՛ր, լսի՛ր, լսի՛ր, վարպե՛տ,—

Բզուր ես հինը դու երազում

Եվ զո՛ւր է, զո՛ւր է սիրտդ հարբել

Անմխիթար այդ սին երազով:

Բզուր է սիրտը քո գազազում

Երկրի հանդեպ մեր վերածնվող.

Ո՛չ մեր երկիրն է շվայտ Հոռոմ

Եվ ո՛չ էլ ինքդ— նոր մի Նագոն:

Դժվար է համաձայնվել այս գնահատականի հետ: Այստեղ, ի տարբերություն «Ազգային երազի», հեզնանք չկա: Ամեն ինչ ուղղագիծ է, ճակատային, կուսակցական: Բայց այս տողերում ներկա «վարպետ» բառը որոշակի հակասականություն է հաղորդում դրանց: Չարենցը ընդունում է, որ Իսահակյանը վարպետ է, բայց դրան մեծ արժեք չի տալիս:

Ընդհանուր առմամբ, Չարենցի խոսքը դեռ հին հունով է գնում: Վեճը Իսահակյանի հետ շարունակվում էր և այս պոեմում հասավ իր ամենաբարձր կետին: Բայց Չարենցը գիտակցում էր, զգում էր, որ Իսահակյանը վարպետ է: Այս դեպքում էլ առօրեական քաղաքական խնդիրները վարագուրում էին Չարենցի էության խորքերում եղածը՝ Իսահակյանի վարպետ լինելու գիտակցությունը: Բայց կյանքն ինքը Չարենցին ստիպելու էր փոխել գնահատականը: Գալու էր տխուր և ողբերգական ժամանակը, երբ Չարենցը իր համար պետք է հայտնագործեր Իսահակյանի քնարերգության իսկական արժեքը և արդեն բանտախցում պետք է գրեր անկեղծ այս տողերը նրա մասին.

Որքան գնում – անքան խոնարհ,

Այնքան անհուն և այնքան ջերմ

Ես խոնարհում եմ քո առջև

Ե՛վ սեր, և՛ սիրտ, և՛ քնար...

Գրական զարգացման պատկերը անմիանշանակ է, պարզ մոտեցումները՝ մերժող: Այնքան երանգներ և նրբերանգներ կան, որոնք միանգամից չեն երևում: Պարզունակ տրամաբանությամբ դժվար է հասկանալ Չարենցի հարաբերությունները երկու մեծ բանաստեղծների հետ: Բայց այդ հարաբերությունները իր ժամանակի գրականության և գրական կյանքի իրական արտահայտություններից են: Առանց դրանց մենք չենք հասկանալ գրական զարգացման իսկական բարդությունը: Ոչ միայն կողք կողքի էին, այլև ամենատարբեր ներքին կապերով կապված էին այնքան իրարից տարբեր՝ և՛ տարիքով, և՛ անհատականություններով ու գրական սկզբունքներով, գրողներ:

Չարենցը, քսանականների սկզբի իր տեսական հայացքներով և ստեղծագործությամբ, փաստորեն, դեմ գնալով Թումանյանի աշխարհատեսությանը և պոետիկային, իրականում նրան համարում էր հայ մեծագույն բանաստեղծը: Չարենցը մերժում էր Իսահակյանի քաղաքական հայացքները, բայց Իսահակյանը մնում էր վարպետ: «Ազգային երազի» հղումներով Չարենցը ցույց էր տալիս Իսահակյանի պոեզիայի իր իմացությունը, իր տարվածությունը դրանով:

Վերջապես, այս հարաբերությունների ցանցում բանաստեղծներից ամեն մեկը երևում է այնպիսի նրբերանգներով, որոնք այդ ցանցից դուրս տեսանելի չեն:

АЗАТ ЕГИАЗАРЯН

ЧАРЕНЦСКИЕ ОТНОШЕНИЯ- ТУМАНЯН И ИСААКЯН

РЕЗЮМЕ

Литературный круг отношений ни одного армянского поэта не так велик, как Чаренца. В данной статье делаются попытки описать его литературные отношения с Ованесом Туманяном и Аветиком Исаакяном. Еще с самого начала Чаренц преклонялся Туманяну. Несмотря на то, что он своими произведениями был далек от Туманяна, все же осознавал его великую роль на процесс развития армянской поэзии, считая его "недосягаемым Араратом нашей новой поэзии." С Исаакяном его отношения складывались сложнее. Это, в первую очередь, было связано с политической принадлежностью Исаакяна. АРФ его отношение он распространял на произведения Исаакяна, иногда давая несправедливые оценки. Поэма "Национальная мкчта" и стихотворение "Эллегия, написанная в Венеции" свидетельствует этой реальности. Но в последние годы Чаренц изменил свое отношение к Исаакяну. Его последнее стихотворение, написанное в тюрьме и посвященное Исаакяну- выражение любви и преклонения. Исследование этих отношений помогают понять особенности творческого пути Чаренца и, в целом, процесс развития новейшей поэзии.

Ключевые слова: "Романс без любви", Гетте, "Эллегия, написанная в Венеции", ирония, литературный спор, Рим, ортодоксальная революция, караван, лирика, "Книга дороги".

AZAT YEGHIAZARYAN

CHARENTS' RELATIONS - TUMANYAN AND ISAHAKYAN

SUMMARY

The circle of literary relations of no other Armenian poet is as wide as that of Charents. This article attempts to describe his literary relations with Hovhannes Tumanyan and Avetik Isahakyan. Charents worshiped Tumanyan from the very beginning. Although he was very far from Tumanyan in terms of his work, he was aware of his huge role in the development of Armenian poetry, considering him "the unreachable Ararat of our new poetry". His relations with Isahakyan was more complicated. First of all, this was due to the political affiliation of Isahakyan. He extended his attitude towards ARF to Isahakyan's work, sometimes giving unfair assessments to Isahakyan. The poems "National dream" and "Elegy Written in Venice" testifies to this reality. But in the last years of his life, Charents changed his attitude towards Isahakyan. One of his last poems, written in prison and dedicated to Isahakyan, is an expression of love and admiration. Examining these relations helps to understand the characteristics of the Charents way and the development process of modern Armenian poetry in general.

Key words: "Romance Loveless", Goethe, "Elegy Written in Venice", irony, literary feud, master, Rome, orthodox revolutionary, Caravan, lyric, "Book of Roads".

ՎԱՐՂԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Արդի պոեզիան նոր որակներ է ի հայտ բերում 20-րդ դարավերջում և 21-րդ դարասկզբում և, կարելի է ասել, կայացել է նոր գրական շարժում (որը դեռևս ընթացքի մեջ է), ինչի արդյունքում ի հայտ եկան բոլորովին նոր արտահայտչամիջոցներով թե՛ լեզվական, թե՛ կառուցվածքային, և թե՛ բովանդակային: Նորարարությունը հատկապես արմատավորվեց վերջին տարիներին, չնայած սկզբնավորվել էր դեռևս 1960-ական թթ. և անմիջապես կապված էր աշխարհում տիրող նոր գրական շարժումների հետ, հատկապես՝ հետմոդեռնիստական փիլիսոփայության: Ահա, նորի կայացման այս ակունքներում է Վարդան Հակոբյանի ստեղծագործությունը:

Վարդան Հակոբյանի պոեզիան ժամանակակից հայ գրականության համապատկերում, կարելի է ասել, իր տեղը հաստատել է և անգամ ընթացք կազմավորող գործառույթ ունի:

Այս ուսումնասիրության մեջ առանձին անդրադարձել ենք Հակոբյանի պոեզիայում ավանդույթի և հետմոդեռնիզմի խաչաձևումներին, երազատեսությանն իբրև պատկերակերտում, բառակերտման արվեստին և բառի մոգականությանը:

Բանալի բառեր¹՝ հետմոդեռնիզմ, ավանդույթ, գրական ընթացք, պոեզիա, երազ, բառակերտում, փիլիսոփայություն, տարածաժամանակային, նորարարություն, գեղագիտություն:

ՀԵՏՈՒՂԵՌՆԻՋՄ՝ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒԺՈՎ

Վարդան Հակոբյանի պոեզիան հետաքրքիր միջանկյալ ծիրում է ավանդական բանաստեղծության և հետմոդեռնիստական գրականության: Սույն ընտրանին, որքան էլ կանխակալ, այնուհանդերձ կազմված է մեկ հիմնական սկզբունքով՝ ցույց տալ բանաստեղծի էվոլյուցիան: Իսկ այդ էվոլյուցիան հստակ տեսանելու համար պետք է ճանաչել բանաստեղծի բոլոր ժողովածուները՝ հատկապես դրանցում զետեղված լավագույն բանաստեղծությունները:

Վարդան Հակոբյանի բանաստեղծության մեջ հստակ ուրվագծվում են Շիրազի, Սևակի և Սահյանի ավանդները՝ հատկապես առաջին գրքերում («Մեղեդիներ», 1969 թ., «Մեր եւ ժպիտ», 1973 թ., «Մայրանում է լույսը», 1975 թ., «Ծառի անունից», 1978 թ. և այլն): Խոսքս պարզունակ ազդեցություններին չի վերաբերում, այլ ընթացքը շարունակելուն: Այս իմաստով ճշգրիտ կարելի է նկատել թե՛ տողի գեղագիտությունը, թե՛ բառամթերքը և թե՛ բնութենապաշտությունը:

Լուսինը, ինչպես բյուրեղյա մի գունդ,

Իջել է բարդու կանաչ կատարին:

Եվ բարդին լուռ է, չի շրշում բարդին...

Գլուխը շարժի՝

Լուսինը հանկարծ կընկնի, փշրվի՝

Սակայն Վարդան Հակոբյանը դասականության չափին ու գեղագիտությանը պատվաստում է հետմոդեռնիստական-նորարարական փիլիսոփայությունն ու գաղա-

¹ Հակոբյան Վ., Ընտրանի, Ե., «Արմավ» հր., 2014 (այսուհետև՝ Հակոբյան Վ., Ընտրանի), էջ 11:

փարները, ինչպես նաև նոր արտահայտչամիջոցները: Հետմոդեռնիստական գրականության հիմքում ճշմարտությանը հասու լինելու գաղափարն է: Այս դեպքում գրողը նպատակ չունի ընթերցողին ուղղորդել ճշմարտության անհատական ընկալման: Ավելի ճիշտ կլինի ասել՝ գրողը պարզապես հարցեր է բարձրացնում և ոչ թե փորձում է տալ դրանց պատասխանները, այլև տարընկալումների հնարավորություն է ընձեռում: Պոստմոդեռնիստական գրականությունը հեռանում է ավանդական հիմնարար գաղափարներից, սակայն Վարդան Հակոբյանը համատեղում է անհամատեղելին, որն, անշուշտ, փաստում է գրական ձիրք ու ճաշակ ունեցող անհատականության մասին.

*Թները բացեց առաջին անգամ,
Առաջին անգամ փորձ արեց թնել
Դեպի բարձրություն
Եվ ծառից իսկույն մայր հողին ընկավ:
Բայց ընկա՞վ, արդյոք,
Թե՞ հողը նրան իր գիրկը քաշեց՝
Օրհնելու համար...²*

Ժամանակակից պոեզիայի տարաբնույթ տեսությունների ու փիլիսոփայությունների համաձայն՝ կարելի է հասնել համընդհանուր ճշմարտության սոսկ կյանքը գեղարվեստականորեն ներկայացնելով: Պոստմոդեռնիստական տեսությունն, ընդհակառակը, գրական երկը դիտարկվում է՝ որպես իրական կյանքում տեղի ունեցող իրադարձություն, որին մասնակցություն ունի նաև ընթերցողը: Բանաստեղծության բովանդակության ու պատկերների ընդունված, դասական զարգացումը պոստմոդեռնիստական ստեղծագործության մեջ հասցված է նվազագույնի: Կյանքի պատկերման համար կիրառվում են բազում արտահայտչամիջոցներ՝ ոգեշնչվելով պատմության դասերից, մշակույթից և անդրադառնալով սոցիալական հիմնախնդիրներին:

Վարդան Հակոբյանի բանաստեղծություններում բնալիներ են անսովոր բովանդակությունը, մտածողության պատճառահետևանքային կապը, զգացման ազդեցությունը պատկերների ձևավորման վրա և այլն: Եվ ահա այս ամբողջի համադրությամբ բանաստեղծը ստանում է հետմոդեռնիստական պոեզիա, երբ ճշմարտությունը բացարձակ չէ. գոյություն ունեն բազում հնարավոր ճշմարտություններ՝ կախված, թե երևույթներն ինչ դիտակետից են ընկալվում: Ինչպես եվրոպական հետմոդեռնիստական մի շարք բանաստեղծներ, այնպես էլ Վարդան Հակոբյանը ստեղծում է այնպիսի բնագիր, ուր ընթերցողներն իրենց տեսիլքներն են ընձյուղում իմաստային ամբողջականության համար.

*Թե չմեկնեիր ինձ ծաղիկները դժոխքից բերված,
վայրկյանը
իրեն ընծայված ժամանակի մեջ կտեղավորվե՞ր, արդյոք³:*

Պոստմոդեռնիստական գրականությունը մղում է վերստին գնահատել արվեստի և իրականության միջև գոյություն ունեցող սահմանները: Իսկ «սահմանը գեղեցիկ է, երբ խախտվում է»: Անտեսվում է այն գաղափարը, ըստ որի՝ գրականությունը կյանքի պատկերումն ու արտացոլումն է: Ընդհակառակը, պոստմոդեռնիստական ստեղծագործությունները համարվում են առօրյա իրադարձություններ՝

² Նույն տեղում, էջ 28:

³ Նույն տեղում, էջ 199:

որպես կյանքի մի մաս: Հետևաբար բանաստեղծության տպավորությունը կարող է ընթերցումից ընթերցում փոփոխության ենթարկվել: Բոլոր նրանց համար, ովքեր վարժվել են բովանդակային կանոնիկ, սեղմ ու կոկիկ լուծումներին, սա կարող է անընդունելի համարվել: Ինչպես նշում է տեսաբան Դմիտրի Կրեմնյովը՝ «Ի տարբերություն ավանգարդիստների, պոստմոդեռնիզմը ձգտում է անընդհատ նոր ինքնակազմավորման և ընթերցումը կարող է լինել բազմաշերտ, ընդհուպ մինչև հեզնական: Ընդհանուր առմամբ պոստմոդեռնիստական բանաստեղծությունը հասցեագրված է հիմնականում էլիտար ընթերցողին»⁴:

Ժամանակակից բանաստեղծները իրենց ստեղծագործություններով ցույց են տալիս, թե ինչ լավ է հորինված բանաստեղծությունը. սա հիմնականում արձագանքն էր նրանց փորձարարական ձևերի ու ընկալումների, որոնք հաճախ հակասության մեջ են արդեն ընդունված գեղարվեստական ձևերի հետ: Այդ պատճառով էլ ժամանակակից պոեզիայի համապատկերում տեսանելի են աբսուրդի, ագիտ-պրոպի, էպիկական-պատմողական բանաստեղծության տարրեր: Վարդան Հակոբյանի նորարարությունը պոեզիա ներարկեց ժամանակակից մտածողություն՝ հորինումը վավերագրության սկզբունքով, վավերագրումը՝ հորինման.

*Մայրս ասաց, որ ինձ գետից է հանել: Ասաց
հենց այնպես,
բայց ես հենց այնպես չէի լսում, այնքան, որ
դրանից հետո կանգնում էի մեկ-մեկ գետափին
ու ակնդետ հետևում ալիքների քսփսքներին,
թվում էր, թե գետից չհանված երեխաների ձայն եմ լսում... ⁵*

Այս փոքրիկ պատառիկում տեսանելի է հորինման և վավերագրումի փոխներթափանցում: Մանկության հուշը՝ (գետից հանված երեխա), դառնում է գեղարվեստական զորեղ պատկեր (ալիքների քսփսքը՝ երեխաների ձայն): Իսկ պայմանական հորինումը՝ մեկ-մեկ գետի ափին կանգնելը, դառնում է վավերագրում: Այս ամենից բացի Հակոբյանի տողերն այնքան արագ են փոփոխվում, որը բնորոշ է 21-րդ դարի արագատեմպ ռիթմերին: Հակոբյանը նոր տեսակի բանաստեղծությանը առաջադրում է նոր կառուցվածքային հնարավորություններ, որը, անշուշտ, հարստացնում է բնագրի շերտերը: Նրա որդեգրած կառուցվածքի (հատկապես վերջին շրջանի բանաստեղծությունների) նպատակն էր ստեղծել ոչ դասակարգային բանաստեղծություն: Բանաստեղծը դիտմամբ մտերմիկ զրույցի է բռնվում ընթերցողի հետ՝ վերջինիս ներքաշելով գրականության պայմանական իրականություն, և մի տեսակ հավասար հարթության վրա է ընթերցողի հետ, իսկ խրատներ ու դեղատոմսեր չի տալիս, այլև մի տեսակ ինտիմ բացում է իր գաղտնիքները.

*Երեկ դու փարվելով
մերկ, մամռակալած կրծքիս,
շշնջացիր.
-Իմ արջուկ...
Այն է՝ պիտի ինձ կորցնեի, իսկապես մարդ դառնայի,
ճչայի՝ այդ ինչպե՞ս իմացար,
բայց զգացի, որ դու հենց այնպես ասացիր... ⁶*

⁴ <http://anti-glob.ru/list/liter/krempost.htm>.

⁵ Հակոբյան Վ., Ընտրանի, էջ 234:

⁶ Նույն տեղում, էջ 168:

Վարդան Հակոբյանի բանաստեղծության շնորհիվ ընթերցողը ոչ միայն ճանաչում, այլև կարծես մի տեսակ անմիջական շփման մեջ է գտնվում մարդկային հոգեբանության և իրավիճակների տարբեր ձևերի հետ՝ առանց ձանձրության նշույլ զգալու: Հեղինակի ստեղծած որոշ պատկերներ նույնիսկ հակընթաց են շարժվում և կոնտրաստային նոր երանգներ են բերում բանաստեղծություն: Բանաստեղծություններն այնքան լի են բազում հասկացություններով, որոնք անընդհատ նոր տարածքներ են բացահայտում: Ինչպես տեսաբան Օլեգ Վորոբյովն է նկատում մի առիթով՝ «Աշխատասեղանի վրա, խաղաղ գոյակցում են տարբեր, հաճախ իրարամերժ հասկացությունները»⁷:

*Գինեփախ աչքերը չկարողացավ հավաքել
պորտապարերի միջից, ջազի,
ծխի, ժպիտների միջից՝ հազար ու մի
թմրախորշերով ետին ու մութ.
երկնաքերի տունը իրենը չէր,
կամ իրենն էր, ինքը չէր ինքը:
Մայրը գգում էր մազերը
(բայց չէ՞ որ նա վաղուց էր մահացել)
բոլոր կանանց ու աղջիկների մեջ,
որոնք ինքնամոռաց ու մերկ կոտրատվում էին
անհասկանալի ու սուրսայր ռիթմերի տակ,
մայրը իր կուրծքը ծեծում էր անպաշտպան,
խկ ինքը անտարբեր ընկնում էր,
բռնելու տեղ չկար: Եվ հատակն էլ չկար...⁸*

Եթե փորձենք զուգահեռել պոստմոդեռնիստական բանաստեղծությունն ու դրան նախորդող ժամանակահատվածում գոյություն ունեցող պոետական ուղղությունները, պարզորեն կնկատենք, որ դասական քնարերգության ողջ էությունը բովանդակության մեջ է, որն ստեղծվում էր պատկերային միասնությունների սկզբունքով: Սակայն ներկա մտածողությունն այնպիսին է, որ միայն պատկերային հերթագայությունը չի կարող հնարավորինս հարուստ կերպով ընդգրկել կյանքի բազմազանությունը. ժամանակակից պոեզիայի հիմնական ուղղվածությունն էլ հենց այդ բազմազանության հնարավորությունն է՝ ի պատասխան 20-րդ դարի բարոյական, կրոնական և սոցիալական համակարգերի փլուզման: Ուստի ժամանակակից բանաստեղծի հիմնական նպատակն է ցույց տալ, թե որքան հարուստ է կյանքը: Անշուշտ, նոր բանաստեղծության այսպիսի գաղափարական ուղղորդման վրա մեծ ազդեցություն են գործել դադայիստական և պուրռեալիստական շարժումները: Ընդհանուր առմամբ, բոլոր այս ուղղությունների հետևորդներն էլ ընդգծում են, որ կյանքն անտրամաբանական է, իսկ լեզուն որպես հաղորդակցության միջոց անհամապատասխան է մարդկային շփումներին, և միակ փրկությունն այդ իրավիճակից կարող է լինել ծիծաղը: Աբսյուրդը իրավացիորեն նկատում է. «... Ժամանակակից

⁷ http://highpoetry.clan.su/index/poehzija_i_postmodernizm/0-36.

⁸ Հակոբյան Վ., Ընտրանի, էջ 170:

գրականության մեջ ճշմարտությունը նույնացված է պատրանքի հետ, որպեսզի ավելի ցայտուն կերպով ցուցադրվի կյանքի աբսուրդայնությունն ու անհուսալիությունը»⁹:

1960-ականներից սկսած, ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականության մեջ ի հայտ եկած նոր ավանգարդիստական միտումները որքան էլ անհրաժեշտության անմիջական հետևանք էին, այնուամենայնիվ, փորձարարություն չէր, որ ընդունվում էր: Այդ ժամանակաշրջանում ավանդական բանաստեղծությունը որքան էլ գերակա վիճակում լիներ, այնուամենայնիվ, նորը կարծես թե իր հունը գտնում էր: Սակայն ավելի մեծ պահանջարկ նոր ոճի բանաստեղծության եղավ անկախությունից հետո, երբ առօրյան անգամ նորանոր ձևերով հարստանում էր: Արցախյան պատերազմ, անկախացում, ինչից հետո հատկապես հայ գրողը հասկացավ, որ նոր ժամանակների հասարակությունն ու կյանքը բազում խնդիրներ են առաջացնում մարդ-անհատի համար: Այդ իսկ պատճառով մարդ-կյանք-հասարակություն եռանկյունին փիլիսոփայական նոր գիտակցության և արդիական ընկալումների հնարավորություններ է տալիս: Գրողը՝ որպես հանրության ամենագգայուն միավոր, ավելի նախընտրում է պոստմոդեռնիստական ձևերը, քանի որ ձևավորվում է նոր աշխարհայացք:

Նոր բանաստեղծությունը ի վիճակի չէր ենթարկվելու համընդհանուր կանոններին և կենսական է կարծրացած մտածողության շրջանակից դուրս: Մյուս կողմից նորի փնտրտուքի ճանապարհին շատերը դիմում էին ծայրահեղությունների, որն, ինչպես ժամանակը ցույց տվեց, փակուղի էր տանում: Միանշանակ վստահ եմ, որ այլընտրանքային բանաստեղծությունն ավելի երկարակյաց է, եթե ակունքում անցյալի գրականության ավանդույթն է: Այս մոտեցումը որդեգրեց Վարդան Հակոբյանը և նրա բանաստեղծությունը խոսում է, հուզում է և գտնում է իր ընթերցողին:

ԱՐԹՄՆԻ ԵՐԱԶԱՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ՊԱՏԿԵՐ

Լավ բանաստեղծությունը հնարավորություն է ընձեռում երազատեսության: Դեռևս հնագույն ժամանակներից, հատկապես բուդդիստական ուսմունքում մեղիտացիոն երազատեսությունը ուղեկցվում է բառ-պատկերների գեղագրության կամ դրանց արտասանության արվեստով:

Նման երազատեսությունը վառ և ակտիվ փորձառություններ է կրում իր հիմքում, որն արտացոլում է անհատի կողմից տարբեր ձևերով՝ քնած թե արթմնի, երևակայության և ենթագիտակցության հոսք ապահովելով դեպի միտք: Լավագույն բանաստեղծներն օգտագործում են այս փորձառությունը՝ որպես խարիսխ, և ոգեշնչում իրենց ստեղծագործության համար: Արձակը ևս իր մեջ կրում է երազատեսության որոշ դրույթներ, սակայն գեղարվեստական ժամանակի ու տարածության ընդգրկունությունն արձակին բերում է ավելի շուտ տեսիլք-շարժանկար, քան թե երազ-պատկեր ու զգացողություն: Վարդան Հակոբյանի պոեզիային հատուկ է հենց պատկեր-զգացողությունն ու դրա տեսողական կենտրոնացումը:

«Եթե իմ շունը օրագիր ունենար» գիրքը նոր ու թարմ է ոչ միայն հեղինակի ընդհանուր բնագրի սահմաններում, այլև ընթացիկ հայ պոեզիայի համապատկերում: Անշուշտ, արցախաբնակ բանաստեղծի բնագրում տեղի ունեցած փոփոխություններում շատ բան կապված է նաև վերջին տարիներին հայ ժողովրդի կյանքում

⁹ Abboston Susan C.W.: *Thematic Guide to Modern. London. Greenwood Press. 2003. P.12.*

տեղի ունեցող քաղաքական-հասարակական ճգնաժամի հետ, ինչպես նաև 2020 թվականին տեղի ունեցած աղետալի պատերազմի և դրա խայտառակ ելքի կնիքն է կրում իր վրա: Գիրքն ունի «Գնում եմ այնտեղ՝ ուր չեմ գնում», «Երբ չգիտես, որ սիրում ես», «Միակը, ում հետ ես ես եմ», «Վերջակետից հետո», «Բացիկներ», «Հայելին վերելակում» և «Աստծո ականջի տակ» շարք-բաժինները: Վերջինը ներառում է երեք պոեմ՝ «Մեղապարտ դպիր Չարենց Եղիշե», «Իմ շունը» և «Պոեմ խաբեության», իսկ մնացյալ շարքերում բանաստեղծություններ են:

Վարդան Հակոբյանի այս գրքի բանաստեղծություններում պատկերները հակված են մասնատվածության, անորոշ են, բայց միտված կենտրոնացումի, պարունակում են սիմվոլիզմ կամ փոխաբերություն և հազվադեպ են ունենում հստակ սկիզբ կամ ավարտ:

*Նայում եմ ոչ այն ծաղկին,
ում նայում եմ,
այլ այն ծաղկին եմ նայում,
ում չեմ նայում¹⁰:*

Բանաստեղծի բնագրում իրար գուգահեռվում են բանաստեղծականն ու էպիկական նարատիվը: Դրանք իրենց ներքին բովանդակային տարածքում կրում են զգացմունքների և մթնոլորտի փոփոխակի անցումները, զավթում են մտածողության սահմաններն ու ընթերցողին կանգնեցնում մեկնաբանության կամ անխուսափելի հարցի առջև: Մա, թերևս, հատուկ է երազատեսությանը, երբ մարդը գիտակցում է ինչ-որ իրողություն (ներառյալ սոցիալ-մշակութային և ֆիզիկական միջավայրը, կյանքի իրական պատկերը), այնուամենայնիվ, ձգտում է դեպի իր ինքնության պատմությունը, վերագնահատումն ու ավելի խորքային ճանաչողությունը՝ որպես երազի համատեքստ:

*Ծառը ծամում է երկնքի փեշերը: Ձին
ձիավորին կապել է Գանաչ բացատում՝
բաց սրունքներով կանգնած մենավոր
կաղնուց: Այստեղ գերեզմանոցն է
պատերազմի ժամանակ մի կերպ
հողին տրված
զինվորների: Խոտ ու ծաղիկ դառն են՝
արածելու համար: Աղբյուրը Տիգրան Մեծի
տնկած Սոսի ծառն ի վեր հոսում է դեպի
երկնքի անհասանելի տարածքները: Անտառը
խրխնջում է բարձր, շատ բարձր: Աստղերը
երազի չթափվող ձիեր են: (Ո՛ւմ երազի)¹¹:*

Եթե դիտարկենք վերբերված հատվածը երազի¹² ընկալման տեսության ուսպնյակների միջոցով, կարելի է փաստել, որ պատկերային կառույցները (**երկնքի փեշերը ծամող ծառ, դեպի վեր հոսող աղբյուր, խրխնջացող անտառ** և այլն) ու պատու-

¹⁰ Հակոբյան Վ., Եթե իմ շունը օրագիր ունենար, «Արմավ» հր., 2022 (այսուհետև՝ Հակոբյան Վ., Եթե իմ շունը օրագիր ունենար), էջ 17:

¹¹ Նույն տեղում, էջ 32:

¹² Ի դեպ երազը հիշատակվում է բնագրում՝ այն էլ երկու անգամ:

մային-դիպաշարային ընթացքը (*ձին կապել է ձիավորին, պատերազմի ընթացք ու թաղված գինվոր* և այլն) իրենց զուգադրմամբ եզակի մի բնագիր են ստեղծում, որը նախ և առաջ ճանաչելի է իբրև ինքնակենսագրական, բայց քնարական բնույթ ունի, հնարավորություն է տալիս ուսումնասիրել հեղինակի ինքնության գաղափարը և այդ նույն ինքնության անընդհատ փոխակերպումը:

Կարելի է փաստել, որ Վարդան Հակոբյանն իր այս գիրքը կառուցել է արթմնի երազատեսության սկզբունքով: Երազային են դառնում անգամ այն բանաստեղծությունները, որոնք ընդգրկում են հեղինակի կյանքի որոշակի ժամանակահատվածը, կամ իրողությունները:

Ասենք՝ սերը, ամենից անձնականացված և իրականությունից ուղղակիորեն սնվող զգացողությունը, որը վերարտադրվում է գրի տարածքում, երազային պատրանքի մեջ նոր տարազ է ստանում ու նոր բովանդակություն: Այն, որ Վարդան Հակոբյանը մեր ժամանակների լավագույն սիրերգակներից է, փաստում են նրա բոլոր գրքերը, սակայն այս գրքում սերը ևս երազատեսություն է հիշեցնում.

*Մենության մեջ մութը քաղցր է լինում՝
թևերիդ մեջ ննջող այն աղջկա պես,
ուժ թե՛ւ ոչինչ դեռ չես հասցրել ասել,
բայց ամեն օր, անխոս ու լուռ, ինքդ քեզ
խոստովանում ես,
որ սիրում ես:
Բառը վիրավորում է թե՛ գիշերվա
հմայքներով հյուսված քնքշությունը:
Բսկ առավոտյան, երբ լույսը բացվում է,
տեսնում ես հանկարծ, որ մահճակալիդ
երկաթե ձողերին վարդ է բուսնել¹³:*

Նման բանաստեղծությունները կարելի է հստակորեն նույնացնել քնարերգության հետ, սակայն հիշողությունները (*«և սեր չեն էլ նոր սերերը, / հին սերերի... կրկնություն են»* (Նույնը, էջ 89), *«Քո հեռացումը ինչո՞ւ ես լցրել, / երբ ամեննին բաժանված չենք»* (Նույնը, էջ 91), *«Խաբվեցի միշտ աչքերս բաց, / անգամ ինքս ինձ խաբեցի: / Ապրեցի իբրև սիրուց արբած, / թույն էր, սեր չէր, պարպեցի»* (Նույնը, էջ 95) և այլն) և երևակայության թռիչքները (*«Ես չգիտեմ՝ ինչպե՞ս, բայց աչքերդ իմ մեջ / ստեղծագործում են՝ / ամեն վայրկյան ինձ տալով մի նոր պատկեր»* (Նույնը, էջ 88), *«Ես փշրվեցի, / դու էլ՝ իմ մեջ»* (Նույնը, էջ 108), *«Քո շուրթերն այնպիսին են, / որ կարելի է նրանցից ամռան արեգակի / կրակե ծաղիկներ քաղել»* (Նույնը, էջ 109) և այլն), երազ-պատկերների մի համակցություն են ստեղծում, երբ թվում է, թե մարդն արթնացել է, բայց դեռևս ապրում է երազի բերած ապրումով: Բանաստեղծություններից շատերը նաև բովանդակում են երազներից դուրս՝ արթնության նախազգացողությունը, որի հետ չի հաշտվում բանաստեղծը.

*Ես ինչ անեմ, չգիտեմ,
ես ընդամենը սիրուդ հեղեղին տրված
քշվող մի նավակ եմ, որի մեջ
ես եմ և փրկարար երազս՝ քո տեսքով¹⁴:*

¹³ Հակոբյան Վ., Եթե իմ շունը օրագիր ունենար, էջ 85:

¹⁴ Նույն տեղում, էջ 101:

կամ՝

*Աչքերդ ընդամենն աչքեր են,
հոգիս՝ ընդամենն անհունություն,
բայց երբ ժպտում ես դու ինձ՝
ծնվում է երազը¹⁵:*

Պետք է նշել, որ «Երազ-բանաստեղծություն» հասկացությունն այս գրքում այնքան է ընդգծված, որ թվում է, թե հեղինակը գիտակցված է գնացել այս քայլին՝ գեղարվեստական մշակման ենթարկելով երազներն ու դրանց արձագանքները: Այլ կերպ ասած, գեղարվեստական և գրական առումով երազների պատկերման հեղինակի միտումը կարելի է սահմանել որպես հոգեբանական հեռանկար: Գրողը տարբերակում է երազների մեկնաբանական և չմեկնաբանվող հատկականությունը, և, ինչպես համաշխարհային հոգեբաններն են ասում՝ «քնի ժամանակաշրջան չկա, մարդու մտքում ինչ-որ մտավոր գործունեություն միշտ տեղի է ունենում», այնպես էլ Վարդան Հակոբյանի բնագրում կերպարի մտավոր գործունեությունը տատանվում է իրականության լայն շարունակության, տեսողականության և նկարագրական մանրամասնությունների հետ միասին: Սա բանաստեղծությանը յուրօրինակ մի շարժում է հաղորդում, որը կարևոր է ժամանակակից հայ բանաստեղծության համար: Հենց սա էլ դառնում է Վարդան Հակոբյանի նոր ձեռքբերումը՝ հայ քնարերգության համապատկերում: Հարցն այստեղ բանաստեղծության մեջ տեղի ունեցող գործողությունների արտաքին շերտերի շարժումը չէ, որը վաղուց է ի հայտ եկել և իրեն սպառել 60-ականների սերնդի ջանքերով, այլև ներքին բովանդակության տարուբերումները, դիպաշարից էլ խորքը գնացող պատկեր-անցումներն ու դրանցից բխող շարունակությունն՝ ընթերցողի ներսում: Այսինքն, ինչպես երազը կարող է տարբեր մեկնաբանություններ ունենալ տարբեր մարդկանց կողմից, այնպես էլ Վարդան Հակոբյանի գեղարվեստական պատկերն է մեկնաբանելի տարակերպ:

Երբ մարդու մարմինը քնած է, միտքը զբաղված է երազներով: Նման կերպ, Վարդան Հակոբյանն իր բնագրում շարք է ստեղծում՝ «Վերջակետից հետո» խորագրով, երբ բանաստեղծությունն ասես ավարտվել է, ու շարունակվում է նրա հետագիծը: Այս շարքի բոլոր բանաստեղծություններն սկսվում են վերջակետով և դառնում են երազի նման տեսողական, վառ պատկերներ, կամ զգայավիճակներ, որոնք միանգամից պարուրում են ընթերցողին: Այս գործերն իրականում փոքրածավալ են, բայց իրենց մեջ կրում են լայնածավալ մտածողության օրինաչափություններ և մտավոր զգացողության փորձառությունների բազմաթիվ հիփերիդային համակցություններ:

*գույգ սուրակաֆներ են աչքերդ,
ամբողջ կյանքում վազում եմ՝
գույները բռնելու: Ու միշտ, թվում է,
ուր-որ է, ահա,
վերջապես հասնում եմ,
ձեռքս մեկնում եմ,
սակայն՝ գուր, իմ գտած գույներն
անմիջապես անհետանում են...¹⁶*

¹⁵ Նույն տեղում, էջ 106:

¹⁶ Նույն տեղում, էջ 139:

Գրքի այս հատվածի բանաստեղծություններում գիր-երազները նման են խորը մտածողության առարկայացման կամ ցերեկային պատրանքի: Դրանք ներառում են ավելի քիչ էմոցիաներ և պատկեր-անցումներ, քան նախորդ շարքերի բանաստեղծությունները և կարծես թե ավելի շատ կապված են վերջին տարիների իրադարձությունների և դրանցից բխող մարդու մտահոգությունների հետ: Այսինքն, թվում է՝ երազ-պատկերը ավարտվել է, և դեռ մի կարճ ժամանակ շարունակվում է դրա ազդեցությունը՝ մեղմ հույզերով:

*մարդու մեծագույն
հայտնությունը կյանքում
ճանապարհն է,
որն ամեն տեղից նրան
տանում է ամենուրեք,
բայց ոչ մի տեղից ոչ մի տեղ
չի տանում փաստորեն...¹⁷*

«Վերջակետից հետո» շարքի բանաստեղծությունները հակված են լինել ավելի կարճ, ավելի քիչ վառ, ավելի քիչ տեսիլային, ավելի քիչ մշակված, պակաս ակտիվ, ավելի հավանական և ճշմարտացի, ավելի մտահոգված ընթացիկ խնդիրներով, ավելի խոսակցական, ավելի մտածային, սակայն՝ դրամատիզմով հագեցած ու զգացմունքային, կարծես բանաստեղծը կիսվում է իր ամենավերջին երազներով ու ապրում նոր արթնության պահեր:

«Բացիկներ» շարքը 21-րդ դարի իրականության պատկերումներով հագեցած հաջորդական անցումներով է աչքի ընկնում: Պոեմաշունչ բանաստեղծություններում գրողը ապավինում է օրագրային, նամակագրական և հուշագրական ձևերին: Այստեղ ի հայտ է գալիս բանաստեղծական նարատիվը: Սա կարելի է համարել գրողի կողմից արթմնի կյանքի և երազներից բխող նարատիվի զուգադրում: Այս գործերում կան կերպարներ, սոցիալական փոխազդեցություններ, իրողություններ: Բանաստեղծն իր քաղաքացիական դիրքորոշումն է հայտնում աշխարհաքաղաքական իրողությունների շուրջ: Շարքի առաջին բանաստեղծությունը՝ «Ոչնչացնել բոլոր գրողներին», առարկայացնում է այսօրվա մշակութային նահանջի պատկերը: Գրողն իբրև հուշ-երազ ներկայացնում է Նարեկացու ու Ֆիրդուսու, Չարենցի ու Մահարու, Վարուժանի, Ռուբեն Սևակի ու Սիամանթոյի եղբրական ճակատագրերն ու ուղիղ-արթմնի համեմատական է անցկացնում մերօրյա իրողությունների և շուկայական հարաբերությունների գերակա վիճակի հետ:

*Բիզնես-շուկաներում վաճառորդներին բաժանեք
գրադարանների գրքերը,
որ պանիր կամ ձու փաթաթեն նրանց թերթերով:
Հանրօգուտ գործ է դա:
Կտրեցեք գրիչ բռնող ձեռքերը՝
դրանով իսկ փրկելով մեր գործարար հայրենիքը:
Գրողները չարիք են
մեր ստեղծարար, «անող-թողնող» հասարակության համար...¹⁸*

¹⁷ Նույն տեղում, էջ 155:

¹⁸ Նույն տեղում, էջ 172:

Հաջորդ՝ «Բաց նամակ» բանաստեղծության մեջ, որն ունի հստակ հասցեատեր «ԱՄՆ նախագահ Ջո Բայդենին», գրողն իր հայացքը հառում է առ աշխարհում տեղի ունեցող մարդակործան իրողությունները («Երբ պատերազմ է, Ջո, / «հանրության կարծիքը» մի փամփուշտ անգամ չարժե» (Նույնը, էջ 174)): Երկու իրավիճակներում էլ պարզ է, որ իրական փաստի հետ կապված քիչ չեն ճանաչողական ընկալումներն ու նույն փաստից բխող արձագանքները: Իրականությունը դառնում է արթնության խորհուրդը, իսկ դրանից բխող գրողական արձագանքը՝ երազինը:

Հաջորդ շարքը՝ «Հայելին վերելակում», երազի խաթարման խորհուրդն ունի: Կյանքը ծուռ հայելուց նայում է մարդուն իբրև մի երազ, ուր իրար են բախվում ճշմարտությունն ու դրա արձագանքը: Հոգեբանական փակ վակուումը (վերելակի, մեկուսարանի, դժոխքի խորհրդով) չի ենթադրում ոչ մի պատուհան (եղածը հայելի է ընդամենը, որն արտացոլում է նույն ներփակ իրականության խեղված պատկերը սոսկ) և խաթարվում է մարդու ոգևորությունը, ու նա ինքն իրեն ուղղորդում է մեկ ուրիշ իրողության մեջ՝ ինքզինքը գտնելու հույսով:

*Սեղմում եմ կոճակը, մի րոպե չանցած՝
դիմացս հանդիսավոր բացվում է վերելակի դուռը,
ներսից մեկն ինձ հրավիրում է՝ համեցեք,
ես նույն ձևով նրան դուրս եմ հրավիրում,
որ նոր միայն ես մտնեմ՝ դրսևորելով իմ հարգանքը,
նույնիսկ գլխարկս եմ խոնարհումով հանում:
Ոչ նա է ինձ ենթարկվում, ոչ ես նրան,
մի քանի անգամ վերելակը գնալ-գալուց հետո,
որոշում եմ, այնուամենայնիվ, զիջել, ներս մտնել:
Եվ ի՞նչ է պարզվում՝ վերելակն ունի մեծ հայելի,
որտեղ հասակով մեկ
ես եմ երևում, իսկ ինձ թվում էր՝ դա ուրիշ մեկն է¹⁹:*

Բացի երազի բովանդակության և արթուն կյանքի գրողական փորձառությունների միջև առկա նմանություններից, կան նաև որոշ համընկնումներ երազ-ժամանակի և արթնության մտքի միջև:

Սա արդեն տարածաժամանակային այլ չափումներ է ենթադրում, որոնք առկա են Վարդան Հակոբյանի պոեմներում: Պոեմներում եղած բովանդակային խորքը չորս փուլերի կարելի է բաժանել.

Առաջին փուլը երազատեսության ամենաթեթև վիճակն է, երբ բանաստեղծական պատկերը ցածր լարման ակտիվություն ունի և երբեմն-երբեմն պոթեկումներով ալիքներ է տալիս.

*Աշնանային մի խոլ ամպրոպ նախորդում է կայծակին - (պոթեկումով ալիք):
Որի մահահոտ շողքի տակ մոլորակը կորչում է տխեղծ - (ցածր լարում):
Գույների մեջ... Լռության քողը պատռում են Քուչակը - (ցածր լարում):
Եվ Նարեկացին... «Արարատի նման ձերմակ գազաթ չկա»: - (ցածր լարում):
Ու նոր ծաղրաբրբիջ՝ քեզ սուրբ լեռն ենք բարձրացնում: - (պոթեկումով ալիք):*

¹⁹ Նույն տեղում, էջ 184:

Երկրորդ փուլը դարձյալ թեթև երազատեսությունն է, բայց այն առանձնանում է արթնության ակտիվության մշտական աճերով.

Հասա տուն, փոքրիկ եղբայրս չճանաչեց ինձ, - (արթնության ակտիվություն):

Շատ էի փոխվել, - (արթնության ակտիվություն):

Իմ մասին ինձ նա հարցրեց՝ - (թեթև երազատեսություն):

Իմ ախպերն ու յո՞ւ ա... - (արթնության ակտիվություն):

Ասի՛ ես եմ, զգվեց նորից: - (թեթև երազատեսություն):

Աչքս շանն էր փնտրում, նա չկար, սիրտս լցվեց: - (արթնության ակտիվություն):

Երրորդ փուլը բանաստեղծական երազ-պատկերի ու մեկնաբանություն-բովանդակության խորքային փուլն է, երբ առաջանում են պայթյուններ, բայց կան նաև ցածր հաճախականության բարձր ամպլիտուդային ակտիվության «դանդաղ ալիքներ».

Մահվան դուռը բացվում-փակվում է, (պայթյուն)

ինչպես երախը ~

յոթգլխանի դևի, (պայթյուն)

հասնողներն արժանապատվորեն ~

գրանցվում են (դանդաղ ալիք)

անհայտ (պայթյուն)

կորածների դասակում (պայթյուն):

Չորրորդ փուլը երազատեսության վավերագրումի փուլն է, որտեղ գերակշռում են «բարձր ալիքները», ինչը բանաստեղծական տեքստը մոտեցնում է հրապարակա-խոսությանը.

Քաղաքակրթությունը մարդուն դարձրել է ~

ավելի վայրենի, քան այն ժամանակ, (բարձր ալիք)

երբ նա վայրենի էր: (բարձր ալիք)

Խաղաղություն երբեք չի հաստատվում ~

աշխարհում, (բարձր ալիք)

լինում է անվերջ, անդադար պատերազմ: (բարձր ալիք)

Մարդու փրկությունը միայն նրա մահն է: (բարձր ալիք)

Փաստորեն Վարդան Հակոբյանի նոր՝ «Եթե իմ շունն օրագիր ունենար» գիրքը նոր ժամանակների արագատեմպ ռիթմերին բնորոշ, աշխարհաքաղաքական-հասարակական արդիական տրամադրություններով հագեցած ժողովածու է, ուր բանաստեղծական բառերի ընտրության գործընթացը դառնում է թե՛ հորինվածքի երազ-պատրանքի կառուցում, և թե՛ արթմնի՝ կյանքի մեկնաբանության ելակետը: Կարելի է ասել, որ երազի փորձը Հակոբյանի՝ պոեզիայի վերածելու բուն գործառույթն իր էությանմբ, ներառում է նաև երազի մեկնաբանության արձագանքը: Ուստի, գրքում բազմիցս է երևում երազի փաստացի հիշատակումը. «ու ծեր որբուկիս զմրուխտ **երազի** հեռուն կտանի, **երազով** եմ ես միշտ ապրել, սուտ դուրս եկան **երազ**, խորհուրդ ու գիր, **երազը** որդնում է, **երազում** ինչպես, խոր քնում, ես եմ և փրկարար **երազս**՝ քո տեսքով,

ծնվում է **երազը, երազը** մաքուր, անբիծ լույս մանի, ում դեռ **երազի** աչքով եմ տեսել և այլն»: Կարելի է պնդել, որ երազի ընտրված տարրերը և գործածված հատուկ բառերը ենթադրում են որոշակի մեկնաբանություններ, որոնք էլ դառնում են իրական կյանքի պատկերները: Գեղարվեստը երազն է՝ «*Բանաստեղծությունները թունավորում են / իրականությունը / երազներով*», որին ապավինում է բանաստեղծը, իսկ իրականությունը արթմնի այն կաղապարն է, որ շղթայված է պահում մարդուն:

ԲԱՌԻ ԱՆՍԱՀՄԱՆ ՀՄԱՅՔ

Պոեզիան հսկայական աշխարհ է, նույնքան հին, որքան մարդկության պատմությունը, և ամենուր է, որտեղ կյանք կա: Հոգվածի սույն բաժինը խնդրադրում ունի վերլուծել Վարդան Հակոբյանի պոեզիայի և բանաստեղծական մտքի որոշ առանձնահատկություններ «Բառից դուրս կամ ամեն օր ուշ է» գրքի սահմաններում: Վարդան Հակոբյանի բանաստեղծական պատկերները կարելի է համարել մտքի անկախ ձևեր:

Հակոբյանական պոեզիան լեզվի այլօրինակ օգտագործման մի ձև է: Ե՛վ պոեզիան, և՛ լեզուն գրողի բնագրում ունեն ծիսական բնույթ, նման հմայախոսությանն ու կախարդանքին:

Բանաստեղծ Թ. Ս. Էլիոթը առաջարկում է պոեզիա հասկացությանը զուգահեռ առանձնացնել ոտանավոր հասկացությունը, իսկ ֆրանսիացի բանաստեղծ Պոլ Վալերին, համեմատելով պոեզիան ու արձակը, նշում է, որ արձակը քայք է, պոեզիան՝ պար: Վարդան Հակոբյանն իրար է ձուլում թե՛ Էլիոթյան տեսլականը (պոեզիայի և ոտանավորի համադրում) և թե՛ Պոլ Վալերիի տեսակավորումը (սահուն քայքից մինչև խենթ պար):

Վարդան Հակոբյանի պոեզիան ճանաչելի է նախ և առաջ իր բառընդերքով, տոնայնությամբ և տեմպերով, որոնք արձագանքում են նույնիսկ լռության մեջ՝ «*Բառերը շատ հաճախ // շարահյուսում են լռության ձայնով*»²⁰:

Հակոբյանի բանաստեղծության բառաշերտը յուրահատուկ է իր ճշգրտությամբ ու ազդեցիկությամբ, և խոսքը բառակապակցությունների մեջ համակցելու յուրահատուկ դիպուկություն է դրսևորում հեղինակը՝ բնականաբար հաշվի առնելով հնչյունները զուգակցելու էֆեկտիվ արվեստը: Բանաստեղծը փորձում է ճշգրտել այն, ինչն այլ կերպ ձևակերպելիս նույն իմաստով չափելի չէ և նույնիսկ նույն իմաստով հասանելի չէ:

Վարդան Հակոբյանի բանաստեղծությունը կազմված է ներքին և ինտելեկտուալ ձևերից, ինչպես նաև արտաքինից պարտադրված և նախապես գոյություն ունեցող որևէ կոնկրետ օրինակից, և այդ ամենն արդեն իսկ բավարար է, ու պարտադիր չեն կանոնավոր չափերը, ինչպես հանգր: Նման բանաստեղծական ձևը հիշեցնում է թխվածքաբլիթ, որը ոչինչ չի հուշում համի մասին: Անշուշտ արտաքին տեսքը կարևոր է և չպետք է վանողական լինի, բայց թխվածքաբլիթի համը զգալու համար այն պետք է համտեսել: Այսինքն, կա բաղադրության խնդիր, որը հակոբյանական պոեզիայի սահմաններում ընտրված բառի անսահման հմայքով է պայմանավորված. «*Բարդիներն առվի խշռոցները տարել են երկինք*», «*Իմ ու քո միջև չկա ոչ մի միջև*» (Նույնը, էջ 16), «*Ինչքա՛ն լավն եք, մարդիկ, / որ ավելի վատը չեք*» (Նույնը, էջ 19), «*Ծառի հիշողության մեջ քանի՞ թռչուն կա*» (Նույնը, էջ 81) և այլն:

Նման դիտարկումներ և մտորումներ շատ կան Վարդան Հակոբյանի պոեզիայում, և դրանց նպատակն է հնարավորինս հստակ տարբերակել աշխարհը՝ առանց որևէ առարկայի կամ հասկացության տրոհման ճանաչել սարսափելի, անօգնական վշտի և

²⁰ Հակոբյան Վ., *Բառից դուրս կամ ամեն օր ուշ է*, Ե., «Արմավ» հր., 2023, էջ 7:

հուսահատության զգացումները կամ այն ապրումները, որոնք կենսատու են, իմաստավորում են գոյք, դառնում կենարար աղբյուր: Հենց այդ իմաստներն են առաջացել գրողի բանաստեղծական մանրակրկիտ խորհրդածությունից: Հենց սա կարելի է աշխարհայացք անվանել, որը, եթե բազմակողմանի է, ընթերցողին տանում է դեպի արվեստին բնորոշ յուրահատուկ բերկրանքը, և անգամ աշխարհի սարսափելի իրողությունների մասին խոհը հոգեվթարի չի տանում ընթերցողին, քանզի բարձր գեղարվեստն ունի նաև հայելային անդրադարձումի պաշտպանիչ ուժը:

Վարդան Հակոբյանի բառակերտումը բազմապիսի դրսևորումներ ունի. երբեմն հանդիպում են ոտքերով կառուցված ձևեր, որոնց հաջորդում է շեշտադրված վանկը.

*Ամեն ինչ տխուր ու համր է,
չի փրկում անգամ ներումը:
Չգաս հանկարծ, այնպես ծանր է
տեսնել ինքդ քո ավերումը²¹:*

Կա մեկ նախադասությամբ ակնհայտ շանթող արտաքին ձևը, որը հավասարակշռված է այլ քերականական միավորներով և հակադիր է մետրական ձևին.

*Ես անընդհատ մեռնում եմ և տեսնում եմ, որ
առանց դրա չեմ կարող ապրել: Եվ տեսնելիս
չեմ պատկերացնում, պատկերացնելիս
տեսնում եմ սակայն: Եվ արհամարհում եմ
սիրո մոտավորը, և ահավոր է,
երբ ծաղիկը դառնում է խորհրդանիշ,
թեկուզ՝ սիրո...²²:*

Երբեմն հանդիպում են էպատաժին պատկանող գեղարվեստական ձևեր, որոնք տանում են այն ընկալմանը, թե ընթերցողն ինքն է ասում այդ բառերը (*Աստված աշխարհում ոչ ոքի / աղոթք չի ընդունում այլևս...*) (*Նույնը*, էջ 24): Շատ է հանդիպում փոխաբերական բառակերտման ձևը՝ իր բազմաթիվ հնչողություններով՝ ողբերգականից մինչև հեգնանք, սիրո հանդգնությունից մինչև ներում.

*...իբրև բարձրանում ես:
Մտքի հետ և մտքի պես:
Բսկ հարթության վրա
աստիճաններն իզուր են:
Ինքդ քեզ մի շրջանցիր,
մի վազանցիր ինքդ քեզ²³:*

Կա նաև լեզվական կամ շարահյուսական ձևը՝ առնվազն մի քանի հնարքներով. երկրորդ նախադասությունն, իր կառուցվածքով մասնակցում է իմաստին: Կարելի է ավելացնել ևս մեկ ձև՝ հնչյունների հավասարակշռությունը՝ սկսած հանգի ակնհայտ նմանությունից մինչև բառօգտագործման նրբությունն ու ճշգրտությունը:

Վարդան Հակոբյանի բանաստեղծությունը միշտ մնում է գեղեցիկ. այն շարունակում է հուզել թե՛ երիտասարդներին, որ դեռևս անմեղ են և անխնայ վատնում են իրենց տրված

²¹ *Նույն տեղում, էջ 57:*

²² *Նույն տեղում, էջ 17-18:*

²³ *Նույն տեղում, էջ 49:*

Ժամանակը, և թե՛ ծերերին, որ վիշտ ունեն, քանզի ճաշակել են կյանքի անհամար դառնությունները: Եվ սա՝ բառի անսահման հմայքի շնորհիվ, որը և՛ իմաստային-փիլիսոփայական լիցք ունի, և՛ հոգեբանական վայրիվերումներ, և՛ որոշակի քարտեզագրում ու տեղորոշում:

Գրականագետ Այվոն Արմսթրոնգ Ռիչարդսը մի առիթով նշում է. «Պոեզիայի առաքելությունն է պաշտպանել մեզ, մեր պատկերացումները և ոչ թե առարկաների, և հնարավորություն է տալիս չսխալվելու»²⁴: Վարդան Հակոբյանի պոեզիան ևս այդ առաքելությունն ունի, ուստի հաճախ կարող ենք տեսնել կյանքում տեղի ունեցած իրողություններ, որոնք այս կամ այն կերպով պատկերվում են գրողի կողմից: Հատկապես Արցախի ճակատագիրը, պատերազմները փոխաբերությունների ու այլաբանությունների մեջ այնպես շեշտակի ու անակնկալ են հայտնվում, որ իրական փաստի ու գեղարվեստական պայմանականության բոլոր սահմանները խաթարվում են: Մնում է բառերի աշխարհը, որտեղ ամեն բառ ապրում է մարդու պես ու բացառիկ է:

АРМЕН АВАНЕСЯН

ПОЭТИЧЕСКОЕ НОВАТОРСТВО ПО ВАРДАНУ АКОПЯНУ

РЕЗЮМЕ

Современная поэзия выявляет новые качества в конце 20-го и начале 21-го веков, и можно сказать, что произошло новое литературное движение (которое продолжается до сих пор), в результате которого появились совершенно новые средства выражения как с точки зрения языка, структуры, так и содержания.

Новаторство особенно прижилось в последние годы, несмотря на то, что зародилось еще в 1960-х годах и было непосредственно связано с новыми литературными движениями в мире, особенно с постмодернистской философией. Именно с этих источников созидания нового Вардан Акопян начал свою литературную деятельность, который и сегодня находится в поисках нового и новаторского.

Можно сказать, что поэзия Вардана Акопяна заняла свое место в панораме современной армянской литературы и даже имеет процессообразующую функцию.

В данном исследовании мы отдельно коснулись пересечений традиции и постмодернизма, сновидения как образообразования, искусству словообразования и магии слова в поэзии Акопяна.

Ключевые слова: *постмодернизм, традиция, литературный процесс, поэзия, мечта, словообразование, философия, пространственно-временное, новаторство, эстетика.*

²⁴ <https://www.britannica.com/art/poetry/Poetry-as-a-mode-of-thought-the-Protean-encounter>.

ARMEN AVANESYAN

POETIC INNOVATION ACCORDING TO VARDAN HAKOBYAN

SUMMARY

Modern poetry brought out new qualities in the late 20th and early 21st centuries, and it can be said that a new literary movement (which is still ongoing) has taken place, resulting in the emergence of entirely new means of expression both in terms of language, structure and content.

The innovation has especially taken root in recent years, despite having originated as far back as the 1960s and was immediately connected with new literary movements in the world, especially postmodernist philosophy. Here, Vardan Hakobyan started his literary activity from these sources of creation of the new, who is still in search of the new and the innovative today.

Vardan Hakobyan's poetry can be said to have established its place in the panorama of the modern Armenian literature and even has a process-forming function.

In this study, we have separately referred to the intersections of tradition and postmodernism, dreaming as image formation, the art of word formation, and the magic of words in Hakobyan's poetry.

Key words: *postmodernism, tradition, literary process, poetry, dream, word formation, philosophy, spatiotemporal, innovation, aesthetics.*

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԻ ԱԿՆԱՌՈՒ ԱՐԳԱՍԻՔԸ
ՔՆԱՐԻԿ ԱՐԲԱՀԱՄՅԱՆԻ «ԳՐԱԿԱՆ ՀՈՐԻԶՈՆԻ»
ՆԵՐՔԻՆ ՇԵՐՏԵՐՈՒՄ»**

Հոդվածում ներկայացվում է բանասիրական գիտությունների թեկնածու Քնարիկ Աբրահամյանի «Գրական հորիզոնի ներքին շերտերում» հոդվածների ժողովածուն՝ արժևորելով գրականագետի տարիների աշխատանքի արդյունքը, ի ցույց հանելով նրա հետաքրքրությունների բազմազան գիտական ուղղվածությունը: Գրքի բոլոր 5 բաժինների անդրադարձով հանգել ենք այն եզրակացության, որ հեղինակի հանգամանալի դիտարկումները հատկանշվում են տիպաբանական և ձևաբովանդակային ընդհանրական բացահայտումներով, որոնց նախորդել է փաստացի նյութերի մանրակրկիտ հավաքչական հետազոտություն: 20-րդ դարասկզբից մինչև մեր օրերը ձգվող համազգային գրական մտքի քննությունը պայմանավորված է գրականագետի հետևողական հայեցակարգի տեսական, գեղագիտական, աղբյուրագիտական սկզբունքների միասնական կիրառման ընթացքով: Ընդգծվում է, որ ամենատարբեր թեմաների իրացումները նախանշում են դրանց հետագա առավել լայն հետազոտման սահմանները: Ժողովածուի նյութերի դիտարկմամբ ակնհայտ է դառնում Ք. Աբրահամյան-հետազոտողի դիմորոշ նախասիրությունը՝ արևմտահայ և հատկապես սփյուռքահայ գրական արժեքների քննության համալրված երևույթով: Արդյունքում գաղափարագեղագիտական սկզբունքները միավորվելով ի հայտ են բերում արդիական հնչողությամբ շեշտվող սփյուռքահայ գրական ընթացքի առանցքային խնդիրները՝ մոռացության վտանգի, ազգապահպանության առաջադրությունների հաստատմամբ:

Ուշագրավ է, որ գրականագետի գիտական հետաքրքրությունները համալրվում են գործնական իրացումներով՝ դասավանդման մեթոդաբանական հարցերի քննությամբ: Դրա վկայությունն է «Մեթոդական դիտարկումներ» բաժինը, որտեղ ընդգրկված տարբեր հեղինակների գործերի դասավանդման առարկայական ներկայացման օրինակներն անպայմանորեն օգտաշահ կլինեն ուսուցման գործընթացներում:

Իր ամբողջության մեջ ժողովածուն հայ գրականության որոշակի ուղղորդված խնդիրների քննության հետևողական մասնագիտական որակն է ներկայացնում՝ գրապատմական երևույթների իմաստային-գեղագիտական դաշտի նպատակամիտված լայնացմամբ, մերօրյա գիտական, կրթական մարտահրավերներին ընդառաջ:

Բանալի բառեր՝ հայ նոր և նորագույն շրջանի գրականություն, արևմտահայ և սփյուռքահայ գրական դեմքեր, նամականու ժանրային քննություն, գրական առնչություններ, մեթոդական գործնական դիտարկումներ:

Բանասիրական գիտությունների թեկնածու, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական համալսարանի Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, իսկ 2022-ից՝ նաև «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի գիտական աշխատող Քնարիկ

Աբրահամյանի գրականագիտական հետևողական համակարգված հետաքրքրություններն ի հայտ են եկել նրա բազմաթիվ գիտական և գիտամեթոդական հոդվածներում, 2013 թ. լույս տեսած «Զարեհ Խրախունին և արևելահայ բանաստեղծությունը» գրքում, Մփյուռքի գրականությունը ներկայացնող՝ նրա կազմած և խմբագրած տասնյակ գրքերում: Տարիների աշխատանքի ամբողջական ներկայացման հասունացած պահանջով էլ ՀՊՄՀ գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվել է ներկա ժողովածուն՝ նվիրված Համալսարանի հիմնադրման 100-ամյակին:

Քնարիկ Աբրահամյանի ներկայացվող ժողովածուն¹, ընդգրկելով բազմաշերտ խնդրադրության ոլորտներ, հատկանշվում է հետազոտության լայն, համապարփակ բնույթով, ինչը թելադրված է թեմաների առանձնահատկություններով և ներառված նյութի տրամաբանությամբ: Ժողովածուն կարևորվում է գրական խնդիրների լուսաբանման արդիական հնչողությամբ, գրապատմական արժեքների նորովի բացահայտումներով: Հեղինակի ընտրությամբ ժողովածուում տեղ են գտել 2012-2020 թթ. հրապարակված հոդվածները, որոնք վերաբերում են հայ նոր և նորագույն շրջանի գրական երևույթներին: Ժողովածուի բաժիններից յուրաքանչյուրը ի ցույց է հանում գրականագետի հետաքրքրությունների բազմազան գիտական հայեցակետերը:

Գիրքը բաղկացած է 5 բաժիններից՝ «Գրական երկխոսություններ նամակագրության մեջ», «Գրականագիտական երկխոսություններ», «Գրապատմական զուգահեռականներ», «Բնփնության հարցադրումներ», «Մեթոդական դիտարկումներ»: Ժողովածուի վերջում զետեղված են նաև օգտագործված գրականության և անձնանունների ցանկերը:

Առաջին բաժինն արդեն ինքնին ուշագրավ է նյութի ընտրությամբ, քանի որ նամականի ժանրում գրական փաստերի և դրանց տեսական հիմնավորումների քննությունը սպառված չի կարող դիտվել: Տարբեր հեղինակների՝ ժանրի անդրադարձների և ուրույն իրացումների (Մատթեոս Մամուրյան, Ղևոնդ Ալիշան, Հովհ. Թումանյան, Կոմիտաս, Հակոբ Կարապենց և այլք) դիտարկումները հանգում են տիպաբանական և ձևաբովանդակային մի շարք կարևոր ընդհանրական հատկանիշների բացահայտման: Ինչպես այս բաժնի հոդվածներում, այնպես էլ ժողովածուի մյուս բաժինների հոդվածներից ակնհայտ է դառնում, որ դրանց գրությանը նախորդել է մանրակրկիտ հավաքչական աշխատանք՝ մամուլի էջերից և արխիվային նյութերից քաղված և հետազոտված հարուստ նյութ, որի հիման վրա էլ ներկայացվել է արժեքային բազմաշերտ քննություն: Դրա վկայությունն են նաև կատարված բանասիրական ճշտումները (էջ 8, 16, 37, 55, 105, 113, 140, 153... և թվարկումը կարող է շարունակվել), որոնք վավերացնում են գրականագիտական գնահատումների ստուգությունը: Էպիստոլյար ժանրի քննության հետ կապված՝ հեղինակի առաջադրությունները ժանրի սահմաններից դուրս գիտական նաև այլ շերտեր են հայտանշում պատմագործառության, համեմատական գրականագիտության, գրական քննադատության և այլ ոլորտներում:

Ըստ հեղինակի նյութերի թեմատիկ դասդասման՝ ժողովածուի կառուցվածքը

¹ Աբրահամյան Բ., Գրական հորիզոնի ներքին շերտերում (յոդվածների ժողովածու), Երևան, ՎՄՀ-Պրինտ, 2022:

ենթարկվել է ուսումնասիրությունների որոշակի հետազոտական տրամաբանության՝ ի ցույց հանելով գրականագետի հետաքրքրությունների բազմապլան գիտական հայեցակետերը: Սակայն թեմաների ընդհանուր տրամաբանության մեջ, կարծում եմ, քննության համար շահեկան կլինե՞ր նաև հետևել ժամանակագրական սկզբունքին, քանի որ նամականու ժանրի գեղարվեստական ընթացքը մեծապես պայմանավորված է որոշակի ժամանակի գաղափարագեղարվեստական միտումներով:

Ժանրի ուրույն իրացումների մանրակրկիտ դիտարկումները զլխում հանգում են տիպաբանական և ձևաբովանդակային բնորոշ ընդհանրական հատկանիշների տեսական եզրահանգումների: Գլխի ենթաբաժիններից յուրաքանչյուրը ամբողջության մեջ հայտանշում է ժանրի փոխաձևումները: Եթե առաջին ենթավերնագրի ներքո՝ «Նամակն իբրև հայ վեպի ժանրակազմիչ տարր», ներկայացվում է առավելապես գեղարվեստական առանձնահատկությունների համակարգը, ապա հաջորդ հոդվածներում դիտարկվում են նաև առկա գրաքննադատական-գեղագիտական նկատումները: Ժանրի բովանդակային փոփոխության երևույթը կարևորվում է նամակ-գրախոսության, նամակ-քննադատականի փոխաձևման նոր դրսևորումներով: Այս ենթաբաժիններից ուզում եմ առանձնացնել Ղևոնդ Ալիշանի, Հովհ. Թումանյանի նամակների անդրադարձները, որոնցից յուրաքանչյուրը բերում է խնդրի քննության նոր շերտեր: Նամականի ժանրի ընթացքի ուղեգծումների հետ ներկայացվում են բացառիկ անհատների մեծության տարբեր կողմերը՝ դառնալով գրամշակութային արժևորման ուրույն չափանիշներ պատմագործառության զործոնի կարևորմամբ:

Բանասեր գրականագետի հետևողական հայեցակարգի տեսական, գեղագիտական, աղբյուրագիտական սկզբունքների միասնական կիրառման ընթացքով են պայմանավորված ժողովածուի թեմատիկ բազմազանությամբ հատկանշվող՝ 20-րդ դարասկզբից մինչև մեր օրերը ձգվող համազգային գրականության և գրականագիտական մտքի անդրադարձները՝ գրախոսությունների, գրապատմական զուգահեռների, գրական առնչությունների, առանձին գեղարվեստական գործերի կամ գրողների դիմանկարների երևույթով: Ընդգծենք, որ ամենատարբեր թեմաների այս իրացումները նախանշում են դրանց հետագա, առավել լայն քննության սահմանները:

«Գրականագիտական երկխոսություններ» բաժնում Բ. Աբրահամյանը, գրախոսության ժանրային սահմանները լայնացնելով, կարևորում է տեսական, բանասիրական, աղբյուրագիտական միասնական քննության սկզբունքը: «Հայկազեան հայագիտական հանդեսի» գրականագիտական նյութերի տեսության, Սամվել Մուրադյանի «Շիրազապատում» երկհատոր մենագրության, Ալբերտ Մակարյանի գրականագիտական ժողովածուի արժևորող հոդվածները անաչառ գնահատման հետ ձգտում են արդի գրականագիտական մտքի ընթացքի համարված ներկայացման:

Ավելացնեմ մի նկատառում. «Հայկազեան հանդեսի» գրականագիտական նյութերի համապատկերը, թերևս հարուստ բովանդակային տարածքն ընդգրկելու միտումից, որոշ թուուցիկության երևույթն է ի հայտ բերում՝ երբեմն դառնալով հոդվածների թվարկում: Մեր նկատառումն ամեննին չի բացառում, սակայն, հոդվածի համակարգված հարցերի տեսադաշտում գրապատմական զարգացումների համադրական քննության աներկբա արժեքը՝ իբրև հայագիտական հանդեսի գիտական ընթացքի հանրագումար տեսություն:

Ժողովածուի գրականագիտական դիտումների բազմաշերտ տիրույթում ուշագրավ անդրադարձներով է ներկայանում «Գրապատմական զուգահեռականներ» բաժինը՝ ընդգրկելով 19-րդ դարի ռոմանտիզմի ուղղության հայտանիշներից մինչև խորհրդահայ գրականության առանձին դրվագներ, ներառյալ նաև Սփյուռքի գրականության առանձին խնդրադրումներ: Հենց առաջին հոդվածից՝ «Լամարթինը 19-րդ դարի հայ գրական ընկալումներում. մի քանի շեշտադրումներ» վերնագրով, ի հայտ է գալիս հեղինակի հետազոտական մոտեցումների որոշարկվող սկզբունքը՝ քննության հստակ տարբերակված հարցադրումներով: Շեշտադրումները ներառել են երեք հիմնական ուղեգծումներ՝ Լամարթինի թարգմանությունները հայերեն, գնահատումները և Պետրոս Դուրյանի հետ ստեղծագործական առնչությունները: Բոլոր նշված առումներով գրականագետը կատարում է և՛ բանասիրական, և գրապատմական, գեղարվեստական արժևորման արդյունավետ համադրումներով հազեցած վերլուծություն՝ եզրահանգման մեջ նշելով հարուստ նյութի բացահայտման նոր օրինակներ արդեն մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակները: Ուշագրավ են հեղինակի դիտումները գրականագիտական, գրապատմական գնահատումների վերանայման մասին՝² գրապայքարի թեկուզ և անուղղակի դրսևորումներով թարգմանությունների լեզվի առիթով: Լամարթին-Դուրյան զուգահեռում կանխանշվում է ռոմանտիզմի ուղղության սկզբնավորումը՝ այդտեղ էլ նկատելով և այդ հիմքում տեսնելով թեմաների ընդհանրությունները: Որպես հաստատում բերվում են բանաստեղծական խոհի, աստվածայինի ընկալման հոգեհարազատությունը, պատկերային նմանությունները, ինչպես և իր՝ Դուրյանի տողերում հստակ հղումը Լամարթինին³:

Գրականագիտական ուրույն վերլուծությամբ են ներկայացված այս հատվածում Ավ. Ահարոնյանի «Լռություն» վեպը, Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը, որտեղ Աբրահամյանը, հետևելով մեկ գործի շուրջ վերլուծականի փորձառությանը գրականագիտության մեջ, կատարում է փաստացի հիմնավորված բացահայտումներ: Ահարոնյանի վեպի առիթով կարևորվում է սիմվոլիզմի առկայությունը պատկերման և մտածողության տիրույթում:

Թումանյանի հանրահայտ բանաստեղծության մեկնությամբ գրականագետը նոր հիմնավորումներ է գտնում, ինչպես ինքն է նշում՝ «բանաստեղծի ստեղծագործական հանձնառությունը հասկանալու տեսակետից»⁴, «Անհայտի, հեռուի, անհունի» խորացված իմաստավորման անդրադարձը փիլիսոփայական բացահայտումների համակարգային բնույթին է նպատակամիտվում:

Անպայմանորեն ուշադրության են արժանի բաժնի «Թեքեյան-Իշխան, առնչություններ», «Ազգային ինքնության սահմանը խորհրդահայ գրական փնտրտուքներում. 1945-1965 թթ» և իհարկե, Օշականի «Ամբողջական գործեր»-ի առաջին հատորը՝ հոդվածները, ընդ որում ուսումնասիրությունների նյութերն ու դրանց իրացումը նախանշում են խնդիրների հետագա առավել լայն քննության սահմանները: Այստեղից էլ որոշարկվում են և սահուն անցում դառնում հետազոտական նոր նշանակետեր ժողովածուի հաջորդ՝ «Ինքնության հարցադրումներ» բաժնի համար,

² Նույն տեղում, էջ 145:

³ Նույն տեղում, էջ 151:

⁴ Նույն տեղում, էջ 167:

որտեղ գետեղված հողվածները վերաբերում են սփյուռքահայ և, մասնավորապես, պոլսահայ նորագույն շրջանի գրողների գործերին: Մկրտիչ Մարկոսյանի, Ինգա Մարըասչանի, Վեհանույշ Թեքեյանի, Հարություն Պերպերյանի, Մարսելա Փոլեյնի ստեղծագործությունների քննությամբ Աբրահամյանը ներկայացնում է նրանց ինքնահատուկ գեղարվեստական մտածողության բնութագրական հայտանիշները՝ առանձին գործերի վերլուծությամբ ստեղծելով նոր գեղաձևումների համապատկերը: Հենց այստեղ էլ ակնհայտ են դառնում ժողովածուի հեղինակի որոշակի շեշտված նախասփյուռքային սփյուռքահայ-պոլսահայ գրական շրջանի հանդեպ:

Որքան էլ բազմաձայն են ժողովածուում գետեղված նյութերը՝ համազգային գրականության համատեքստի շեշտադրումներով, սակայն ակնհայտ է նաև Ք. Աբրահամյանի հետազոտական դիմորոշ միտվածությունը արևմտահայ և հատկապես սփյուռքահայ գրական գործընթացների տեսական և գործնական քննության համալրված գործառնությունների իմաստով: Բացի անհրաժեշտ տեղեկատվական, ճանաչողական արժեքից, հեղինակը պարզում է ժամանակների հոլովությամբ յուրաքանչյուր ստեղծագործողի ուրույն գեղարվեստական մտածողության երևույթները հարափոփոխ արժևորման չափանիշներով: Նյութի ընդգրկումն իմացությունը, մեթոդաբանական մոտեցումները թույլ են տվել գրականագետին որոշարկել քննությունների համադրական բնույթը իր ենթաշերտային յուրօրինակություններով: Իր դրույթներն ու գնահատման եզրահանգումները հեղինակն առհարկի հիմնավորում է գրականության համաշխարհային փորձի և տեսական մտքի ընդհանրացվող եզրերով՝ միաժամանակ հետևողականորեն ընդգծելով ազգային էությամբ ինքնորոշվող գրողների ստեղծագործական դրսևորումները: Արդյունքում հետազոտական գաղափարագեղագիտական արժևորման դիտանկյունները միավորվելով ի հայտ են բերում արդիական հնչողությամբ շեշտվող սփյուռքահայ գրական ընթացքի առանցքային արժեքները՝ մոռացության վտանգի, ազգապահպանության գերխնդրի առաջադրույթի հաստատմամբ:

Ուշագրավ է, որ բանասեր գրականագետի գիտական հետաքրքրությունները համադրվում են մասնագիտական գործնական իրացումներով՝ դասավանդման որոշարկվող մեթոդաբանական հարցերի քննությամբ: Դրա վկայությունն է ժողովածուն ամփոփող «Մեթոդական դիտարկումներ» բաժինը, որտեղ ըստ հեղինակի դասդասման ընդգրկվել են արևմտահայ, սփյուռքահայ և պոլսահայ գրականությունների դասավանդման խնդիրները, որոնց հանգամանալի և առարկայական վերլուծությունները որոշակի գրողների գործերի ներկայացման օրինակներով անպայմանորեն օգտաշահ կլինեն ուսուցման գործընթացներում:

Իր ամբողջության մեջ ժողովածուն համազգային գրականության որոշակի ուղղորդված խնդիրների քննության հետևողական մասնագիտական որակն է ներկայացնում գրապատմական երևույթների իմաստային դաշտի նպատակամիտված լայնացմամբ՝ մերօրյա գիտական, կրթական մարտահրավերներին ընդառաջ:

ЛАУРА МУРАДЯН

ПЛОДОТВОРНЫЙ ИТОГ В ЛИТЕРАТУРОВЕДЧЕСКИХ ИСКАНИЯХ КНАРИК
АБРААМЯН “ВНУТРЕННИЕ ПЛАСТЫ ЛИТЕРАТУРНОГО ГОРИЗОНТА”

РЕЗЮМЕ

В статье представлен сборник работ кандидата филологических наук Кнарик Абраамян, “Внутренние пласты литературного горизонта”. По достоинству оценивая результаты многолетних исследований литературоведа, здесь отмечается ее интерес к многослойной научной направленности. Мы пришли к тому заключению, что во всех пяти частях книги дается детальный авторский анализ проявляющийся в стилистических, типологических, формосодержащих обобщающих выводах, которым предшествовало подробнейшее собрание фактического материала. Исследование общенациональной литературной мысли протянувшейся неразрывной связью с начала двадцатого века до наших дней обусловлено течением единого процесса последовательных воззрений-теоретических, эстетических, источниковедческих принципов. Подчеркивается, что осуществлением самых различных тем, открывает возможности их дальнейших, более широких исследований. Материалы сборника позволяют увидеть предпочтения К. Абраамян-исследователя особенно в отношении феномена изучения западноармянской литературы. В результате эстетического объединения исследовательских принципов становятся очевидными основные проблемы, стоящие перед изучением западноармянской и особенно литературы диаспоры, где утверждаются вопросы сохранности национального. Примечательно, что научные интересы литературоведа дополняются практическими задачами изучения методологических вопросов. Об этом свидетельствует раздел “Методические изыскания”, где подчеркиваются методы преподавания произведений различных авторов и предметная подача материала, которые будут весьма полезны в учебном процессе. Весь сборник в своей целостности представляет последовательное изучение определенных проблем армянской литературы: литературно-исторические, эстетико-смысловые явления направлены на расширение аспектов исследования данной литературной сферы, навстречу злободневным научно-образовательным вызовам современности.

Ключевые слова: армянская литература нового и новейшего периода, представители западноармянской литературы и литературы диаспоры, изучение эпистолярного жанра, литературные связи, методологические практические воззрения.

LAURA MURADYAN

A REMARKABLE ACHIEVEMENT IN THOROUGH LITERARY RESEARCH: KNARIK ABRAHAMYAN "THE INNER LAYERS OF THE LITERARY HORIZON"

SUMMARY

The paper presents the book by Knarik Abrahamyan, candidate of Philology, "Inside Layers of Literary Horizon", appreciated as a hard work of the literary critic and the diversity of her scientific studies. By considering the five chapters of the book we draw conclusions from the true depth of the author's observations based on typological and substantial revelations. The examination of the national literary mind from the early 20s to the present day, provides the author's a more extensive insight into theoretical, aesthetic, source study concepts. The realization of various themes marks the research borders of them. While observing the literary material, the author's preference to Western Armenian and Diaspora Armenian literary works is visible. In the result, the formation of the ideological-aesthetic principles reveal the contemporary Diaspora Armenian literary movement, its challenges and problems: danger to be forgotten, protection of national values.

The scientific interests of the researcher evolves also the practical activities and teaching methodology. The chapter "Methodological observations" includes several studies by different authors on teaching matters.

The book is a collection of professional quality studies on Armenian Literature, the challenges in the field of science, education.

Keywords: *Armenian New and Modern literature, Western Armenian and Diaspora Armenian literary figures, the examination of epistolary genres, methodological, practical observations.*

1930-ԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԴԵՄՔԵՐԸ
ԱՆԿԱՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ
(Երկու ուրվագիծ)

Հորվածում անդրադարձ է կատարվում 1930-ական թվականների գրական կյանքին ու գրական դեմքերին նվիրված երկու բանավեճի, որոնք տեղի են ունեցել անկախության շրջանում: Հիմնական զծերով ներկայացվում են բանավեճերի կարևոր հարցադրումները, դրանց շուրջ թեր ու դեմ կարծիքները: Առանձնացվում են այն կարևոր հարցերը, որոնց շուրջ դեռ խոսակցություն ու քննարկումներ պետք է սպասել:

Բանալի բառեր՝ բանավեճ, արխիվ, բռնաճնշումներ, վերաբժնորում, գնահատական, մեղադրանք, կոլեկտիվ բնույթ, գրական ընթացք:

Մուտք

Հայաստանի անկախության առաջին տարիներից սկսած, հատկապես տարիներով փակ մնացած արխիվների բացման հնարավորության պայմաններում, տարբեր ազդեցություններից ու տաբուներից ազատագրվելով՝ հրաշալի հնարավորություններ էին ստեղծվել անցյալի գրական կյանքի տարբեր իրողություններ ու հարցեր նոր լույսի տակ քննելու, ինչպես նաև՝ էական վերաբժնորումների համար: Շատ կարևոր էր, որ թյուր մեկնաբանված բազմաթիվ երևույթներ, հարմարեցված մեկնաբանություններ, անտեսված կամ գերազնահատված հեղինակներ ու ստեղծագործություններ վերջապես ներկայացվեն *ինչպես որ կա*-ի սկզբունքով՝ թեկուզև ապագայում նման սխալներն ու վրիպումները կանխելու համար: Թվում էր, թե այս մտահոգությունն ու նպատակն ընկալվելու է միանշանակ, սակայն, պարզվեց, որ ամեն ինչ այդքան էլ հեշտ չէ:

Հայ գրականության պատմության, հատկապես խորհրդահայ շրջանի գրական ընթացքի Ավգյան ախոռների մաքրումը կամ դրա նախաձեռնման փորձերը տարբեր հատույթներում արժանացան տարաբնույթ քննարկումների: Ինչպես և սպասելի էր, ծավալվեցին բանավեճեր, որտեղ, ցավոք, ընթացքում մոռացվում էր բուն նյութը, և առաջ էին գալիս անձնական հարաբերությունները, և խնդիրները քննվում ու քննարկվում էին «ով ում մասին ավելի շատ վատ բաներ գիտի ու կասի» սկզբունքով:

Իհարկե, այդ բանավեճերի արդյունքում կարևոր բացահայտումներ, սրբագրումներ եղան, որ Ավգյան ախոռների ապագա մաքրումների համար լավ հենք կարող են ծառայել:

Մույն հոդվածում ներկայացնում ենք երկու այդպիսի բանավեճ:

1.

1980-ական թվականների վերջին, հասկանալի պատճառներով, Հայաստանում սկսեցին բացեիքաց խոսել որոշ արգելված կամ քիչ քննարկված թեմաների մասին, հրատարակել հուշագրություններ ու տարբեր գրքեր հատկապես 1930-ական

թվականներից ծայր առած բռնաճնշումների մասին: Նախ՝ «Գարուն» ամսագրում, ապա նաև առանձին գրքով լույս տեսավ Վահրամ Ալազանի «Տառապանքի ուղիներով» հուշագրությունը, վերջապես հայրենիքում լույս ընծայվեց Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարերը» վիպակը, Սուրեն Ղազարյանի «Դա չպետք է կրկնվի» հուշագրությունը և այլն:

Այնուհետև արդեն հասանելի արխիվներից հանվեցին և մամուլում հրապարակվեցին ամենատարբեր նյութեր:

Ինչպես և ենթադրելի էր, այս հրապարակումներն անադմուկ չանցան: Մանավանդ որ ոչ միայն հասարակական, այլև մասնագիտական գիտակցության մեջ շատ հարցեր վերջնականորեն չէին պարզաբանվել, որի պատճառով շատուշատ գնահատականներ, մեղադրանքներ ստացվեցին հապճեպ և ունեցան աղետալի հետևանքներ:

«Անպաշտպանվածության զգացումից թելադրված»¹ հոդվածում, որն, ըստ էության, ուղղված էր գրականագետ Դավիթ Գասպարյանի դեմ, որն այդ շրջանում թերևս ամենից շատ էր զբաղվում փակ դռների գաղտնիքներով և հրապարակումներ անում², գրող Անահիտ Մահինյանը գրում է. «Անցյալից ժառանգություն մնացած իրար խժոռելու կիրքը այսօր արդեն հանդես է գալիս այլ անվան տակ, իբրև թե արդարությունը վերականգնելու, ազնվության, հայրենասիրության, մանավանդ՝ հայրենասիրության անունից»:

Մյուս կողմից՝ «Արխիվները բացվել են, բայց արխիվները լրջորեն չեն հետազոտվում: Դրա համար երկար ժամանակ է պետք, իսկ համբերություն չկա»³, - գրում է Մահինյանը: Սա, ըստ էության, փակ դռների գաղտնիքները բացողների ամենամեծ թերությունն էր ըստ նրա:

Անահիտ Մահինյանի այս հոդվածը բավական մեծ արձագանք ունեցավ: Նախ՝ «Գարուն» ամսագրի ընթերցողներից մեկը հանդես եկավ նամակով⁴, որին ի պատասխան Անահիտ Մահինյանն արդեն «Գարուն» ամսագրում հրապարակեց «Մենք դեռ ճամփա ունենք իրար հետ գնալու»⁵ գրությունը: «Չպատասխանելն արդեն հանցանք կլինի» պատճառաբանությամբ՝ Անահիտ Մահինյանի այս, ինչպես նաև նախորդ հոդվածներում բացված խոսակցությանը և մեղադրանքներին անդրադարձավ Ռաֆայել Իշխանյանը⁶:

Անահիտ Մահինյանի հոդվածի մտահոգություններով է իր՝ «Հասկանալու ժամանակը» հոդվածն սկսում գրականագետ Ազատ Եղիազարյանը⁷: «Նորից հեղափոխություն է, և նորից անցյալի ժառանգության հանդեպ վերաբերմունքի խնդիրը

¹ Տե՛ս «Գրական թերթ», 1991, թիվ 9:

² Թերևս իբրև Անահիտ Մահինյանի հոդվածի դրդառիթմ կարող էր ծառայել Դավիթ Գասպարյանի «Մե հետագիծ» հրապարակումը՝ 1930-ականներին իր սև գործունեությամբ աչքի ընկած Արտաշես Ոսկերյանի մասին (տե՛ս «Գարուն», 1991, թիվ 3, էջ 66-69):

³ Տե՛ս նույն տեղում, էջ 66-69:

⁴ Տե՛ս «Գարուն», 1991, թիվ 9, էջ 31: Սուսաննա Ապրեսյանի նամակը:

⁵ Տե՛ս «Գարուն», 1991, թիվ 11-12, էջ 28-30:

⁶ Տե՛ս Իշխանյան Ռ., «Ճշմարտություն ամենից բարձր է...», «Գարուն», 1992, թիվ 4, էջ 60-61:

⁷ Տե՛ս «Գրական թերթ», 1992, թիվ 5:

հրատապ է դառնում,- գրում է նա:- Երեկ Մայակովսկին և ֆուտուրիստներն էին պահանջում դասականների դուրս նետել ժամանակի նավից, այսօր արդեն մենք ենք պահանջում Մայակովսկուն դուրս նետել»⁸:

Սա նշանակում է, որ գրականության գնահատումը, ըստ էության, վերաճում էր յուրօրինակ պատեհապաշտության, ըստ որի՝ կախված քաղաքական զարգացումներից, իշխանությունների բնույթից, ամեն անգամ պետք է այդ վերաբերմունքներն արվեն, արխիվների նյութերը նորովի մեկնաբանվեն:

«Խնդիրն այն է, որ մենք հասկանանք խորհրդային շրջանի մեր արվեստի և գրականության ներքին հակասականությունն ու ողբերգականությունը», - գրում է Եղիազարյանը: Իսկ դրա համար անհրաժեշտ են սթափ քայլեր. «Ի՞նչ է նշանակում արժեքների վերագնահատությունը մեր օրերում: Այն կարող է երկու իմաստ ունենալ՝ կա՛մ հրաժարվում ենք քարացած պատկերացումներից և գնահատականներից, կա՛մ, ելնելով փոխված քաղաքական իրադրությունից, մերժում ենք այն ամենը, ինչ չի համապատասխանում այսօրվա տիրապետող քաղաքական դոգմաներին և տրամադրություններին: Այս վերջինը մենք ունեցանք հեղափոխությունից հետո և հատկապես 30-ական թվականներին, և, ինչպես ասում են, Աստված չանի այն կրկնվի»⁹:

Ազատ Եղիազարյանի ընդհանուր եզրահանգումը հանուրի տրամաբանությամբ է. «Հիմա գալիս է **հասկանալու** ժամանակը: Եվ դիվաններին պետք է մոտենալ միայն այդ տեսանկյունից: Դիվանները, նրանց պարունակած նյութերը հաշիվներ մաքրելու, նոր «դասակարգային պայքար» բորբոքելու, ողջերի ու մեռյալների դեմ նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու համար չեն: Դրանք մեր գրականության դժվարին, ելնեջներով հարուստ ճանապարհը հասկանալու համար են»³:

Ուշագրավ է, որ Ազատ Եղիազարյանի հոդվածի հրապարակումից անմիջապես հետո, հենց հաջորդ համարում «Գրական թերթը» հրապարակեց «Հայ գրողների գրույցը Ա. Ի. Միկոյանի հետ» նյութը⁴, որը սղագրությունն է 1962 թվականի մարտի 14-ի հանդիպման ու գրույցի: Դժվար չէ նկատել խմբագրության միտումը՝ ցույց տալ, որ անգամ խորհրդային ժամանակներում մի շարք հայ գրողներ, որոնց անկախության այդ առաջին օրերին մեղադրում էին ամենատարբեր հանցանքների մեջ, այնուամենայնիվ, իրենք էլ ժամանակին ազգային պահվածք են դրսևորել⁵:

«Այսպես կոչված «արժեքների վերաբեքավորումը» այժմ դարձել է մեր մտավոր շարժման գլխավոր ձգտումը և ինքնին հրապուրում է հրապարակախոսին, քաղաքագետին, գիտնականին,- խնդրին անդադարձա՞վ նաև գրականագետ Սերգեյ Սարինյանը:- Վերագնահատվում է ամեն ինչ, և ժխտումն ավելի տիրական է, քան

⁸ Նույն տեղում, 1992, թիվ 5:

² Նույն տեղում, 1992, թիվ 5:

³ Նույն տեղում, 1992, թիվ 5:

⁴ Տե՛ս «Գրական թերթ», 1992, թիվ 6:

⁵ Թերևս նման նպատակ էր հետապնդում նաև հետագայում «Գրական թերթի» էջերում Նաիրի Զարյանի՝ Եղիշե Չարենցին և Ալսեղ Բակունցին նվիրված անտիպ հուշերի հրապարակումը: Տե՛ս՝ համապատասխանաբար «Գրական թերթ», 2000, թիվ 8 և թիվ 9:

հաստատումը, սակայն տակավին յուրացված չէ պարադոքսի ենթակայությունը հավանականության տեսությանը: Մինչդեռ թերևս անհրաժեշտ է խորհել նաև անհավանականության տեսության օրենքներով»⁶:

Ճիշտ է, Սերգեյ Սարինյանի հոդվածի հակաճառական կամ բանավիճային հենքը այդ ժամանակ արդեն Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Հակոբ Մովսեսի մի հարցազրույցն էր⁷, սակայն խնդիրն ու հարցադրումներն այնքան էին այսպես ասած՝ օղի մեջ, որ, անկախ դրդառիթից ու բուն հենքից, խոսակցություններն արձագանքվում էին:

2.

Երբ, թվում էր, 1990-ականների կեսերին 1930-ականների գրական կյանքի մանրամասներն ու մեղավորների դատապարտումը, Ավգյան ախոռների մաքրման տրամաբանությամբ, արդեն կարելի է փակված համարել, մի նոր ու ծավալուն բանավեճ սկսվեց, որի առիթը Նորայր Ադալյանի «Վերնագիրը՝ 1937»⁸ հոդվածն էր: Իհարկե, ինչպես բնորոշ է մեր գրականության իրականությանը, բախվեցին ոչ թե կարծիքներ ու փաստարկումներ, այլ՝ կարծիքներ, պնդումներ ու մեղադրանքներ: Բայց այնուամենայնիվ, այդ խոսակցությունը էական մի շարք հարցերի պատասխաններ տվեց՝ նախևառաջ վերաբերմունքի և հոգեբանական առաջընթացի առումով:

Ի՞նչ էր ասում այս հոդվածը:

Եթե նախկինում իրավացիորեն դժգոհություն կար, որ դեռ պետք չէ շտապ գնահատականներ տալ, առավել մանրամասն ու համբերատարորեն պետք է ուսումնասիրել ժամանակն ու մարդկանց գործունեությունը, նրանց արածի շարժառիթները, ապա հիմա պարզվում էր, որ գործնականում ոչինչ չի արվել այդ ուղղությամբ, իսկ 1990-ականներին հնչեցված գնահատականներն ու մեղադրանքերը, ինչպես ասում են, կամ մնացել են ուժի մեջ, կամ մնացել որպես օդում արձակված կրակոցներ:

Նորայր Ադալյանի «Վերնագիրը՝ 1937» հոդվածի թիրախն առաջին հայացքից Հրաչյա Քոչարն է: Հոդվածագիրը բերում է բազմաթիվ, նույնիսկ արդեն հանրահայտ փաստեր նրա գործունեությունից, և այդ ամենը հակադրում այն մեծարանքներին ու պատվին, որոնց, այնուամենայնիվ, արժանանում էր նա: Եվ եթե հասկանալի էր այդ ամենը նրա կենդանության օրոք, և եթե հասկանալի էր ինչ-որ տեղ այդ ամենը նաև նրա մահից հետո՝ հատկապես խորհրդային տարիներին, ապա անկախությունից հետո, ըստ Ադալյանի, կտրուկ պետք է վերանայվի այդ ամենը, նույնիսկ ամոթ է, որ նրա անունով փողոց կա Երևանում:

Նորայր Ադալյանին հատկապես մտահոգում է այն, որ Հրաչյա Քոչարի մասին գրված ընդարձակ մենագրություններում ու ուսումնասիրություններում, հանրագիտարանների համապատասխան հոդվածներում ոչ մի կերպ չի հիշվում նրա՝ 1930-

⁶ Սերգեյ Սարինյան, *Մինչև ե՞րբ և մինչև ո՞ր*, «Գրական թերթ», 1992, թիվ 9:

⁷ Տե՛ս «Երեկոյան Երևան», 1991, թիվ 237:

⁸ Տե՛ս «Գրական թերթ», 2007, թիվ 34:

ականների գործունեության մասին, որին զոհ գնացին շատ-շատերը: «Անհրաժեշտ է Հրայա Քոչարի և նրա նմանների կյանքն ու գործը հիմնովին վերանայել...», – ամփոփում է Ադալյանը: Սա պահանջում են Եղիշե Չարենցը և մեր ամբողջ ազնիվ գրականությունը: ...Պետք է վերանվանել նաև Հրայա Քոչարի փողոցը, որպեսզի այնտեղ ապրողները հանգիստ քնեն»⁹:

Արձագանքները այս հոդվածին եղան գրեթե միանգամից, անգամ՝ իրար հերթ չտալով:

Հակընդդեմ առաջին արձագանքներից մեկն այսպես կոչված՝ ակադեմիական մակարդակով էր: ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը խնդիրը դիտարկում էր հատկապես Հրայա Քոչարի անձի ու գործի գնահատման տեսանկյունից¹⁰: Նորայր Ադալյանի հոդվածում «մենք տեսնում ենք ոչնչացնելու, սևացնելու կիրք միայն», այնինչ՝ «երբ խոսքը գրող-գրականագետի մասին է, մենք ակնկալում ենք հավասարակշռված և մտածված գնահատականներ»¹¹: Ինստիտուտում, իհարկե, ընդունում են, որ «Հրայա Քոչարը, ուրիշ շատերի պես, երեսնական թվականներին թույլ է տվել արարքներ, որոնք մենք այսօր խստորեն դատապարտում ենք», սակայն կարծում են, որ Քոչարի ռազմաճակատային հրապարակախոսությունը, նրա 1960-ականների արձակի դերը ազգային զարթոնքի գործում ապահովում են «Գրողի կենսագրության... ողբերգական հակասություն», որը «չի կարելի սքողել համատարած սև ներկով»¹²:

Եզրահանգմամբ՝ Գրականության ինստիտուտը, ըստ էության, խոսակցության մակարդակը վերադարձնում է 1990-ականների տրամաբանության մեջ, այնինչ, մեր կարծիքով, Նորայր Ադալյանի «Վերնագիրը՝ 1937» հոդվածը միտված էր հենց այդ մեռյալ կետից առաջ շարժվելուն: Գուցե ոչ այդքան կտրուկ, բայց այնուամենայնիվ: «Մենք պետք է իմանանք ճշմարտությունը մեր անցյալի մասին, բայց *ամբողջ* ճշմարտությունը իր ողջ հակասականությամբ: Սևի և սպիտակի պարզունակ հակադրությունները այդ նպատակին չեն ծառայում»¹³ (ընդգծումը բնագրում. – Ա.Ն.), – ամփոփում է Գրականության ինստիտուտը¹⁴:

Արձակագիր Ռուբեն Հովսեփյանը ոչ պակաս կրքով պաշտպանեց Նորայր Ադալյանի տեսակետը¹⁵՝ ավելի շատ ըստ ամենայնի բորբոքված Գրականության ինստիտուտի արձագանքից:

Նախևառաջ՝ արձագանքի կոլեկտիվ բնույթն է Ռուբեն Հովսեփյանի թիրախում, որը, ակամա, վերադարձնում է այն ժամանակները, որի դեմ գրել էր Նորայր Ադալյանը: Եվ ստացվում է, որ դրա դեմ գրելով՝ Գրականության ինստիտուտը հին

⁹ Ադալյան Ն., *Վերնագիրը՝ 1937, «Գրական թերթ», 2007, թիվ 34:*

¹⁰ «Գրական թերթի» խմբագրությանը, «Գրական թերթ», 2007, թիվ 39:

¹¹ Նույն տեղում, թիվ 39:

¹² Նույն տեղում, թիվ 39:

¹³ Նույն տեղում, թիվ 39:

¹⁴ Այս հրապարակման արձագանք եղավ նաև արտագրական մամուլում, տե՛ս Արխիստակեայան Ռ., *Գրականության ինստիտուտի համախոսականի հետքերով*, «Ազգ», 2008, 26 հունվարի:

¹⁵ Տե՛ս Հովսեփյան Ռ., «Ճշմարտությունը գտնելու և հաստատելու» ճանապարհին, «Գրական թերթ», 2007, թիվ 43:

Ժամանակներին հարազատ մնալու իր բարդությամբ կամ ցանկությունն է ի ցույց դնում: Մյուս կողմից՝ Ռուբեն Հովսեփյանն ուղղակի կատեգորիկ մերժում է Գրականության ինստիտուտի՝ Հրաչյա Քոչարին արդարացնող ցանկացած փաստարկ, ցանկացած միտք: Հովսեփյանը գալիս է այն եզրահանգման, որ նմանատիպ հարցերն ու շահարկումները, առանց վախի, առանց տարբեր մտավախությունների պետք է օր առաջ բաց քննարկվեն ու հարցերը լուծվեն մեկընդմիջտ: Չի կարելի դա թողնել հաջորդ սերունդներին:

Եվ իսկապես, 1990-ականներին այս խնդրի վերջնական լուծման բացակայությունն էր, որ թեման կրկին արդիական դարձավ 2000-ականներին:

«Սա վիճակ չէ: Սա առողջ վիճակ չէ,– գրում է Ռուբեն Հովսեփյանը:– Կարգին մարդիկ առողջ վիճակում են կտակ գրում: Հիվանդ մարդու գրած կտակը գլխացավանք է դառնում հետնորդների համար: Հիմա մեր սերնդի կտակ գրելու ժամանակն է: Եվ քանի որ մեր սերունդն է ամենամոտը 1937-ին, հենց մենք ենք պարտավոր առանց հանելուկների կտակ թողնել մեզ փոխարինողներին: Նրանք իրենց հոգսերն են ունենալու, մեղք է, որ զբաղվեն մեր կտակի վերծանումով»¹⁶:

Թեմային Էդվարդ Միլիտոնյանի արձագանքը¹⁷ նույնպես, ըստ էության, միտված էր Գրականության ինստիտուտի արձագանքի կոլեկտիվ բնույթին, ինչպես Ռուբեն Հովսեփյանի պարագայում: «Կոլեկտիվ մարդիկ պիղատոսաբար վճանում են ձեռքերը: Նրանք պաշտպանում են իրենց նմանին, իսկ այդ «նմանը» կա բոլոր ժամանակներում,– գրում է Միլիտոնյանը:–... Մենք լավ գիտենք, թե ինչպես են գրվում այդ կոլեկտիվ նամակները. մեկը գրում է ու համաձայնեցնում կամ ստորագրել տալիս, հաճախ մարդիկ ստորագրում են առանց խորանալու նյութի մեջ»¹⁸:

Միլիտոնյանի մտահոգությունն առավելապես ներկայի ու ապագայի համար է, որպես դաս, որպես չկրկնվելու առիավատյալ. «Այո՛, վերաբժեքավորելու հոգսը ծանրացել է մեր ուսերին, և որևէ կոլեկտիվ մարդկանց խումբ, որքան էլ ջանա, անկարող է պաշտպանել մեղքը, որ չի մարում ոչ մի ժամանակում: Եվ այդ մեղքը չպետք է գցել ժամանակի ու տիրող բարքերի վրա»¹⁹:

Վերջին միտքն, ի դեպ, թե՛ 1990-ականներին, թե՛ հետագայում և հատկապես այս բանավեճի շրջանակում շարունակում էր մնալ գերիշխող: Թերևս այդպես հեշտ էր ապահովել համահարթեցումն ու փրկել նրան, ում մեծ ցանկություն կար փրկելու:

Մեծ հաշվով, կարելի է ասել, որ 1990-ականների բանավեճի այս նորացված տարբերակն էլ, ըստ էության, հանգուցալուծում չունեցավ: Էական ազդեցություն՝ նույնպես: Ուստի, վստահորեն կարելի է ասել, որ որոշ ժամանակ անց թեման կրկին բացվելու և նույն կրքոտությամբ քննարկվելու է:

Մնում է հուսալ, որ այդ անգամ վերջնականապես:

¹⁶ Նույն տեղում, թիվ 43:

¹⁷ Միլիտոնյան Էդ., Կոլեկտիվ մարդիկ և անհատականությունները, «Գրական թերթ», 2008, թիվ 1:

¹⁸ Նույն տեղում, թիվ 1:

¹⁹ Նույն տեղում, թիվ 1:

ԱՐԿՄԵՆԻԿ ՆԻԿՈԳՈՏՅԱՆ

ЛИТЕРАТУРНАЯ ЖИЗНЬ 1930-Х ГГ. И ЛИЦА В ДЕБАТАХ КРУГА
НЕЗАВИСИМОСТИ

(*два эскиза*)

РЕЗЮМЕ

В статье говорится о двух дебатах, посвященных литературной жизни и литературным деятелям 1930-х гг., состоявшихся в период независимости. В частности, сосредоточены основные вопросы дебатов, мнения за и против. Выделяются наиболее важные вопросы, по которым еще ожидаются разговоры и обсуждения.

Ключевые слова - полемика, архив, репрессия, переоценка, оценка, обвинение, коллективность, литературный процесс.

ARKMENIK NIKOGHOSYAN

THE LITERARY LIFE AND FIGURES OF THE 1930S IN THE INDEPENDENCE
PERIOD DEBATES

(Two Outlines)

SUMMARY

The article refers to two debates dedicated to the literary life and literary figures of the 1930s, which took place during the period of independence. Specifically, the main questions of the debates, the for and against opinions are focused on. The most important issues are being separated, on which conversations and discussions are still expected.

Keywords - debate, archive, repression, revaluation, assessment, accusation, collective nature, literary process.

ՎԱՆՈՒ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԸ ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ամփոփենք, հայ հին գրականության էջերում դեռևս 4-րդ դարում Արցախը հիշատակված է եղել որպես «ամուր գաւառն», և ըստ Փավստոսի վկայության՝ հայոց սահմանը արևելքում եղել է Կուր գետը: Պարտավ քաղաքը, որը գտնվել է այժմյան Ադրբեջանի Բարդա քաղաքից 5-6 կմ դեպի հյուսիս-արևմուտք, 9-րդ դարում Անանուն Զրուցագրի կողմից անվանվել է Հայոց արևելյան սահմանին գտնվող քաղաքական:

4-րդ դարում արցախյան Փառաճունի, Խաչյան, Խաղբյան ազնվական տան իշխանները պատիվ են ունեցել մասնակից լինելու Արշակունի թագավորի խնջույքի սեղանին՝ համաձայն Մեսրոպյան Գահնամակի: Մովսես Խորենացու կողմից Փոքր Սյունիք անվանված Արցախի Ամարաս վանքում, որը կառուցել է տվել Գրիգոր Լուսավորիչը, 338 թ. թաղվել է վերջինիս որդին՝ Գրիգորիսը:

5-րդ դարում քրիստոնեություն քարոզելու նպատակով Մեսրոպ Մաշտոցն այցելել է նաև Արցախ ու Աղվանք՝ այնտեղ բացելով դպրանոցներ:

Ըստ 5-րդ դարում գրված և 7-րդ դարում խմբագրված «Աշխարհացոյց»-ի՝ Արցախ աշխարհը եղել է Մեծ Հայքի 15 նահանգներից մեկը՝ 12 գավառներով:

Արցախը՝ որպես հայոց աշխարհի մաս, հիշատակել են նաև պատմիչներ Փավստոսը, Եղիշեն, Մովսես Խորենացին, Մեբեոսը, Մովսես Կաղանկատվացին, Ղևոնդը, Անանուն Զրուցագիրը, Մովսես Դասխուրանցին:

6-րդ դարում Արցախում գործել են Վաչագան Բարեպաշտ Աղվանից արքան և վերջինիս հետ գործակցած հոգևորականներ Մատթե Գիտնավորը, Պարտավի Շուփ-հաղիշո արքեպիսկոպոսը, Կապաղակի Մանասե եպիսկոպոսը, Հունան, Անանիա, Սահակ եպիսկոպոսները, Ուտիքի Փոդ եպիսկոպոսը, Կաղանկատուքի երեց Հովսեփը, Պարտավի երեց Մատթեն, թագավորի դրան երեց Թոման, Գայեգուճի երեց Պողոսը, Յրիի քորեպիսկոպոս Շմավոնը, Դարահոճի երեց Մատթեն, Բեթի երեց Աբիկազը, Մանուչեի երեց Ուրբաթայրը, Հովել, Պարմիդե և Հակոբ երեցները, Կաղանկատուքի նահապետ Բակուրը:

Որպես Արցախում գործած գրողներ հայ հին գրականության մեջ հիշատակվել են 7-րդ դարում՝ Դավթակ Քերթողը, Մովսես Կաղանկատվացին, Գրիգորատուր Վարդապետը, Հովսեփ Բրտիայրեցի Անապատականը, 9-րդ դարում՝ Եսայի Ապունուսե Արցախի իշխանը, Համամ Արևելցին, 10-րդ դարում՝ Մովսես Դասխուրանցին, որոնք իրենց ստեղծագործությամբ հարստացրել են հայ հին գրականության գանձարանը:

Հայ հին գրականության մեջ Արցախի և արցախցիների մասին հիշատակությունները Մեծ Հայքի Արցախ աշխարհի հայկականության մասին հնագույն անհերքելի ապացույցներ են:

Բանալի բառեր՝ Փառաճունի, Խաչյան և Խաղբյան ազնվական տներ, Փոքր Մյունիք, Արցախը որպես հայոց աշխարհի մաս հիշատակող պատմիչներ, Դավթակ Քերթոզ, Մովսես Կաղանկատվացի, Գրիգորատուր Վարդապետ, Հովսեփ Բրտիայրեցի Անապատական, Եսայի Ապումուսե Արցախի իշխան, Համամ Արևելցի, Մովսես Դասխուրանցի:

Հայ հին գրականության մեջ արցախյան վկայությունների մասին չկա որևէ ուսումնասիրություն: Սույն հոդվածի **արդիականությունը** հայ հին գրականության մեջ Արցախի և արցախցիների մասին վկայակոչումների համակարգումն է:

Մեր **նպատակն** է ընդհանուր գծերով ցույց տալ Արցախի հայկականության ակունքները և արցախցի մշակութային գործիչների դերը հայ հին գրականության զարգացման գործում: Սույն հոդվածի **խնդիրը** մինչև 10-րդ դարն ընկած հայ մատենագրության մեջ Արցախի մասին տեղեկությունների համակարգված ամփոփումն է:

Հոդվածում առաջնորդվել ենք **պատմական** մեթոդով: Հոդվածի **գիտական նորույթը** Արցախի և արցախցիների մասին հայ հին գրականության էջերում եղած տեղեկությունների ամփոփ համակարգումն է:

Հարկ է շեշտել, որ Արցախը՝ որպես Հայաստանի մի մաս, հիշատակում են նաև օտարազգի անտիկ պատմիչներ Ստրաբոնը, Դիոն Կասսիոսը, Պլուտարքոսը և այլք, ինչը, սակայն, դուրս է մեր ուսումնասիրության խնդրադրությունից:

Հայ հին գրականության հնագույն վկայությունը Արցախի մասին **Փավստոսի** պատմության մեջ է՝ հայոց Արշակ Բ թագավորի ժամանակի մասին. *«Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ, եւ ամուր գաւառն Տնօրեաց, եւ ամուր աշխարհն Կորդեաց. ապա եւ տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից»* / «Հայոց Արշակ թագավորից ապստամբեցան նաև Արձախի ամուր գավառը, Տնօրիքի ամուր գավառը և Կորդիքի ամուր աշխարհը, հետո նաև Կորդիք գավառի տերը գնաց կանգնեց Պարսից Շապուհ թագավորի առաջ»¹:

Ի դեպ, Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ ևս Արցախն անվանվում է «ամուր աշխարհ»²:

Իսկ Ե դպրության ԺԲ գլխում, որը վերնագրված է «Յաղագս Արձխայ», Փավստոսը կրկին համառոտ հիշատակում է Արցախ աշխարհի մասին. *«Հարկանէր գերկիրն Արձախայ մեծաւ պատերազմաւ, գերէր զբազումս ի նոցանէն. և զմնացորդացն առնոյր պանդանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր»* / «Արցախի երկիրն էլ ջարդում էր մեծ պատերազմով, նրանից շատերին գերում էր: Մնացածներից պատանդներ էր առնում և նրանց հարկի տակ դնում»³: Սրան հաջորդող «Յաղագս Աղուանից» ԺԳ գլխում Փավստոսը շարունակում է. *«Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից. հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս, զոր*

¹ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Ե., 1987 (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն), էջ 246-247:

² Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, Ե., 2011, էջ 82:

³ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, էջ 320-321:

*հաստեալ էր նոցա ի նոցանէն. զՈստի, զՇակաշէն եւ զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք: Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. և ի գլխաւորացն բազումս սպանանէին. և զմնացորդսն ի հարկի կացուցանէին, և պանդանդս ի նոցանէ առնուին» / «Պատերազմում էր նաև Աղվանից երկրի հետ և նրանց սոսկալի ջարդ էր տալիս: Նրանցից ետ էր խլում շատ գավառներ, որ նրանք գրավել էին – Ուտին Շակաշենը, Գարդմանաձորը, Կողթը և սրանց շուրջն եղած սահմանակից շատ գավառներ: Կուր գետը սահման դարձրեց (մեր) աշխարհի և Աղվանքի մեջ՝ ինչպես որ առաջ էր: Գլխավորներից շատերին սպանում էին, մնացորդներին հարկի տակի էին դնում և նրանցից պատանդներ էին առնում»⁴: Այսինքն՝ Արշակ Բ թագավորի սպարապետ Մուշեղը վերահաստատում է հայոց սահմանը մինչև Կուր գետը՝ Աղվանքի և Արշակունյաց Հայոց թագավորության միջև, ինչպես որ առաջ էր եղել (**«որպէս և յառաջն լեալ էր»**): Ակնհայտ է, որ 4-րդ դարում և դրանից առաջ էլ հայոց սահմանը եղել է Կուր գետը, և դա հաստատում է Փավստոսը:*

Ինչպես վկայում է **Կորյունը**, հայոց գրի և գրչության տարածման գործում Մաշտոցը չանտեսեց նաև Աղվանից աշխարհն ու Արցախը՝ բացելով դպրանոցներ նաև այս կողմերում: Մասնավորապես Աղվանքի մասին հստակ գրում է. **«Եւ ապա յեն այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանէր յաշխարհն եւ հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ զնոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատաւք հանդերձ. որոց առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի: Ապա հարցեալ ի նոցանէ, առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր: Եւ նոցա երկոցունց զուգակցելոց, եպիսկոպոսին եւ թագաւորին, յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ. տային եւս հրաման՝ ի գաւառաց եւ ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել եւ գումարել՝ ըստ արժանաւոր եւ պատէն տեղեաց, դասս դասս դպրոցաց, եւ ռոճիկս կարգել ի դարմանս» / «Եվ ապա դրանից հետո մնաք բարով ասաց՝ Աղվանքի կողմերը գնալու համար: Եվ գնաց, իջավ նրանց աշխարհը և հասնելով թագավորական տեղերը՝ տեսավ Աղվանների սուրբ եպիսկոպոսին, որի անունը Արսվաղ էր, որոնք և բոլոր ազատանիներով հանդերձ մեծ հնազանդությամբ ընդունեցին [նրան] Քրիստոսի անվան համար: Ապա երբ հարցրին, նա բացատրեց իր գալու նպատակը: Եվ նրանք երկու զուգակիցները, եպիսկոպոսն ու թագավորը, հանձն առան ընդունել դպրությունը և հրամայեցին իրենց իշխանության գավառներից ու տեղերից դպրության արվեստի համար բազմաթիվ մանուկներ բերել, ժողովել, արժանավոր ու հարմարավոր տեղերում դասասուներ-դպրոցներ [կազմել] և [նրանց] ապրուստի համար թոշակ նշանակել»⁵:**

Այս առումով ուշադրության է արժանի նաև Մովսես Կաղանկատվացու հաղորդումն այն մասին, որ Մաշտոցն Արցախի Գիսի գյուղում կառուցել է տվել եկե-

⁴ Անդ, էջ 320-323:

⁵ Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1980, էջ 118-119:

ղեցի⁶, իսկ իր աշակերտ Հովնաթանին կարգել է Աղվանից դպրոցների վերակացու⁷:

Իսկ **Եղիշեն** «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» պատմագրքում երեք անգամ հիշատակում է Արցախ տեղանունը:

Այսպես՝ առաջին անգամ Հայոց աշխարհի ամուր կողմերի շարքում հիշատակում է նաև Արցախը. *«Մոյնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց»* / «Այսպես էր վարվում նաև աշխարհի բոլոր ամուր կողմերում, Տմորիքում և Կորդվաց աշխարհում, Արցախում և Աղվանքում, Վրաստանում և Խաղտյաց աշխարհում»⁸: Երկրորդ վկայությունը ևս Արցախի ամուր վայրերի և խիտ անտառների մասին է. *«Քանզի բազումք յազգէ ի մեծ նախարարացն էին, և եղբարք և որդիք և դստերք, հանդերձ ամենայն սիրելեալք իւրեանց ի մէջ ամրական վայրացն, ոմանք յանդոյս երկիրն Խաղտեաց, և այլ բազումք ի կողմանս հարաւոյ՝ յանմատոյց ամուրսն՝ Տմորեաց, և կէսքն ի թանձրախիտ մայրիսն Արձախոյ, և այլ ոմանք անդէն ի միջոց աշխարհին բռնացան ի վերայ բազում ամրոցացն»* / «Որովհետև շատերը մեծ նախարարների ցեղից էին, եղբայրներ, որդիներ ու դուստրեր, իրենց բոլոր սիրելիների հետ միասին այդ ամուր վայրերում էին, ոմանք Խաղտյաց անդուս երկրում և ուրիշ շատերը հարավային կողմերում՝ Տմորիքի անմատչելի ամրոցներում, մի մասն էլ Արցախի խիտ անտառներում, և ոմանք այնտեղ Միջնաշխարհում տիրեցին շատ ամրոցների»⁹:

Երրորդ վկայությունը Արցախի անտառները որպես թաքստոց ու պատսպարան ներկայացնելն է. *«Նա և որ յԱրձախայ մայրիսն անկեալն էին փախստականք»* / «Նմանապես և ովքեր փախել-ընկել էին Արցախի անտառները»¹⁰:

Մովսես Խորենացին ևս իր «Հայոց պատմության» բազմաթիվ էջերում հիշատակություններ ունի Արցախ և Աղվանից աշխարհների մասին: Այսպես՝ պատմության Բ գրքում Խորենացին գրում է. *«Թեո սորա մեծ եւ անուանի եւ բազմաբիր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի եւ յամենայն գործ մտաւորութեան եւ հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: Բայց զայս գիտեա՛, զի զցեղս զայս մեծ եւ անուանի մոռացումն եղել մեզ յառաջնումն մատենին յիշատակել, զգունդն որ ի Միսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն որ ասի Հնարակերտ. եւ աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք. զի աղու ձայնէին զնա: Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի եւ քաջ կարգեցաւ կողմնակալ բիրաւոր ի Պարթեւէն Վաղարշակայ: Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտեացոց եւ Գարդմանացոց եւ Մաւրէացոց եւ Գարգարացոց իշխանութիւնսն»* / «Սրանից հետո Վաղարշակը հաստատում է արևելյան հյուսիսային կողմի մեծ, անվանի բազմաբյուր կուսակալությունը, կուսակալ նշանակելով Առանին,

⁶ Տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 136-138:

⁷ Տե՛ս անդ, էջ 162:

⁸ Եղիշեն, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989, էջ 190-191:

⁹ Անդ, էջ 252-253:

¹⁰ Անդ, էջ 256-257:

որ անվանի մարդ էր, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում, Կուր կոչված մեծ գետի ընթացքով, որ անցնում է մեծ դաշտով: Բայց գիտցիր, որ մենք Առաջին գրքում մոռացանք հիշատակել այս մեծ և անվանի ցեղը, այսինքն՝ Սիսակից սերված գունդը, որ ժառանգեց Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը, Երասխ գետից մինչև Հնարակերտ կոչված ամրոցը. աշխարհն էլ Աղվանք կոչվեց նրա քաղցր բնավորության պատճառով, որովհետև նրան աղու էին ասում: Այս Սիսակի սերնդից էր և այս անվանի և քաջ Առանը, որ Պարթև Վաղարշակի կողմից բյուրավոր կողմնակալ նշանակվեց: Ասում են, որ այս զավակներից են սերվել Ուտեացոց ազգը և Գարդմանացոց, Ծավդեացոց ու Գարգարացոց իշխանությունները»¹¹:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հենց Խորենացին է Արցախն անվանում Փոքր Սյունիք. *«Բսկ ի հասանել համբալոյ վախճանին Տրդատայ, ի դաւելոյ նորին Սանատրուկոյ եւ այլոց ոմանց հանապազատուտ արանց Աղուանից՝ սպանին գերանելին, ընթաղրեալ ձիովք, բարբարոսքն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով: Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի փոքր Միւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»* / «Բսկ էրբ Տրդատի վախճանվելու լուրը հասավ, բարբարոսները նույն Սանատրուկի և ուրիշ մի քանի միշտ սուտ խոսող աղվանների դավերով, երանելի Գրիգորիսին սպանեցին Վատնյան դաշտում, Կասբիական կոչված ծովի մոտ, ձիերի ոտնատակ տալով: Նրա սարկավագները նրա մարմինը բերին Փոքր Սյունիք, թաղեցին Ամարաս ավանում»¹²: Այս մասին վկայություն ունի նաև Մովսես Կաղանկատվացին¹³:

Մովսես Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ում, նաև 7-րդ դարում խմբագրված տարբերակում հիշատակվում է Արցախը՝ իր գավառներով. *«Արցախ յերի կալով Միւնեաց. ունի գաւառս երկոտասան, զՄիւսն Հաբանդ, զՎակունիս, զԲերձոր, զՄեծիրանս, Մեծկուանս, զՀարճղաւնս, զՄուխանս, զՊիանս, զՊանծկանս, զՄիսականիս, զԿոտակ, զՔուստիփատնէս, զԿոյստ, յորում լինի քարախունկ. զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց»*¹⁴: Ուշագրավ է, որ թեև Խորենացու «Աշխարհացոյց»-ում ասվում է 12 գավառ, սակայն վկայված է 13 անուն, ինչը սրբագրվել է 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ում. *«Արցախ յերի կայ Միւնեաց. գաւառք են ի նմա երկոտասան, զոր Աղուանք ունին. Միւս Հաբանդ, Վակունիք, Բերդաձոր, Մեծկուանք, Մեծիրանք, Հարճկանք, Մուխանք, Պիանք, Պանծկանք, Միսական ոստանն, Քուստիփատնէս, Կողթ՝ յորում լինի քարախունկ»*¹⁵:

Պատմական փաստն այն է, որ դեռևս 5-րդ դարում Արցախ աշխարհը եղել է Մեծ Հայքի 15 նահանգներից մեկը՝ 12 գավառներով:

Արցախի մասին սակավ հիշատակություններ են պահպանվել 6-րդ դարից, այն է՝ ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Բ Գաբեղենացու (557-574) անունով «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ պահպանվել են երկու թղթեր՝ ուղղված նեստորա-

¹¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Բ, ք:

¹² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գ:

¹³ Տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 72:

¹⁴ Մատենագիրք հայոց, հտ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2153:

¹⁵ Անդ, էջ 2172:

կանության և քաղկեդոնականության դեմ: Առաջին թուղթն ուղղված է Սյունյաց Միհրարտաշիր իշխանին և Վրթանես եպիսկոպոսին, իսկ երկրորդը՝ Աղվանից Աբաս կաթողիկոսին: Այս թղթերը կաթողիկոսն իր հավատարիմ այր նվիրակ Մատթեոս քահանայի հետ առաքել է նախ Սյունիք, ապա՝ Արցախ, որպեսզի անհրաժեշտության դեպքում թղթերին տրվի մեկնաբանություն:

Վերոհիշյալ Մատթեոս քահանային հայագիտության մեջ փորձել են նույնացնել Մատթե Գիտնավորի հետ¹⁶: Վերջինս «երկար տարիներ եղել է Արցախի Դարահոռ գիւղի երեքը եւ մշտական մասնակցութիւն է ունեցել մօտաւորապէս 485-523 թթ. գահակալած Վաչագան Բ Արշակունի Աղուանից թագաւորի աստուածահաճոյ գործերին»¹⁷: Արցախում գործած այս Մատթե Գիտնավորն աշակերտել է Հովհան Մանդակունի (478-490) կաթողիկոսին և վերջինիս մատանիով կնքված Արցախի Դարահոռի եկեղեցի է տեղափոխել հայոց սրբերի՝ Գրիգոր Լուսավորչի, Հովսիսիմեի և Գայանեի մատունքները, ինչի մասին տեղեկանում ենք Մովսես Կաղանկատվացուց. **«Գտանէր եւ զամենասուրբ նշխարս Գրիգորի եւ յոյժ հռչակելոյն Հովսիսիմեայ եւ Գայանեայ ի Դարահոռ գիւղն, որ է նահանգին Արցախայ, զոր էր բերեալ երիցուն Մատթէ անուն կոչեցեալ ի Յոհաննէ Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսէն, զոր ունէր նորին մատանեան կնքեալ եւ առաքեալ անդ երիցունս առնոյր առ իւր»**¹⁸ / «Նա գտավ Գրիգորի, չափազանց հռչակված Հովսիսիմեի ու Գայանեի ամենասուրբ մատունքները, որ գտնվում էին Արցախ գավառի Դարահոռ գյուղում, և որ հայոց Հոհան կաթողիկոսից ստացել բերել էր Մատթե անվանված քահանան: Մատունքները կնքված էին կաթողիկոսի կնիքով. թագավորը քահանաներ է ուղարկում Դարահոռ ու այնտեղից բերել է տալիս և վերցնում իր մոտ»¹⁹:

6-րդ դարում է հիշատակվել նաև Վաչագան Բարեպաշտ Աղվանից արքան, ում ամառանոցում տեղի է ունեցել եկեղեցական ժողով, որի կանոնները հայտնի են ամառանոցի անվամբ՝ «Աղուէնի եկեղեցական ժողովի կանոններ», ինչի ընդունմանը մասնակից են նաև արցախցի բազմաթիվ հոգևորականներ և իշխաններ. **«Եւ Վաչագան՝ Աղուանից արքայ, եւ Շուփհատիշոյ՝ Պարտաւայ արքեպիսկոպոս, Մանասէ՝ Կապաղակայ եպիսկոպոս, Յունան՝ Հաշուայ եպիսկոպոս, Անանիա եւ Սահակ, եւ Ուտոյ Փոդ եպիսկոպոս, Յովսէփ՝ Կաղանկատուաց երէց, Մատթէ՝ Պարտաւայ երէց, Թումա՝ թագաւորի դրան երէց, Պաւղոս՝ Գայեգուճու երէց, Շմաւոն՝ Յրոյ քորեպիսկոպոս, Մատթէ՝ Դարահոռոյ երէց, Աբիկազ՝ Բեդայ երէց, Ուրբաթայր՝ Մանուչէից երէց, Յովէլ եւ Պարմիդէ եւ Յակոբ երիցունք, եւ ազատ մարդիկ, եւ նահապետք Արցախայ, Բակուր Կաղանկատուաց նահապետ եւ այլք բազումք, որք միաբան առաջի եկին ի հանդէս ի հովոց ի տեղուջս յԱղուէն»**²⁰ / «Եւ Վաչագան՝ Աղվանից արքաս, Շուփաղիշոն՝ Պարտավի արքեպիսկոպոսը, Մանասեն՝ Կապաղակի եպիսկոպոսը,

¹⁶ Տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. Գ, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 357:

¹⁷ Անդ, էջ 357:

¹⁸ Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 104-105:

¹⁹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի, Ե., 1969, էջ 49:

²⁰ Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 129-130:

Հունանը՝ Հաշուի եպիսկոպոսը, Անանիան ու Սահակը, և Ուտիքի Փող եպիսկոպոսները, Հովսեփը՝ Կաղանկատուքի քահանան, Մատթեն՝ Պարտավի քահանան, Թուման՝ Թագավորի պալատական քահանան, Պողոսը՝ Գայեգուճի քահանան, Շմավունը՝ Յրիի քորեպիսկոպոսը, Մատթեն՝ Դարահոջի քահանան, Աբիկազը՝ Բեթի քահանան, Ուրբաթայրը՝ Մանուչեի քահանան. Հովել, Պարպ, Միգե, Հակոբ քահանաները, ազնվական մարդիկ և Արցախի նահանգապետները, Կաղանկատուքի Բակուր նահապետը և այլ բազմաթիվ մարդիկ, որոնք միաբան ինձ մոտ ներկայացան՝ ամառանոցային վայր Աղվենում»²¹:

Հիշյալ Վաչագան Բարեպաշտը «Բուն Աղվանքի վաղմիջնադարեան թագաւորութեան Արշակունի արքայատոհմի տասներորդ ներկայացուցիչն էր, իսկ Ժ դ. պատմիչը նրան համարում է բնիկ հայկական Առանշահիկ իշխանատոհմի շառաւիղ»²²:

7-րդ դարում ապրել ու գործել է ծնունդով արցախցի Գրիգորատուր Վարդապետը, ով պայքարել է Հովհան Մայրագոմեցու աղանդի դեմ:

7-րդ դարում է ապրել նաև Հովսեփ Բրտիայրեցի Անապատականը, ով հեղինակն է Արցախի Յդերկս գյուղի եկեղեցում գտնվող սուրբ նշխարների հավաքման մասին պատմության, որը պահպանվել է Կաղանկատվացու պատմության Բ գրքի Ծ գլխում:

Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ հիշատակվել են Արցախի մասին բազմաթիվ այլ վկայակոչումներ, որոնց ամբողջությամբ անդրադառնալը, կարծում ենք, նպատակահարմար չէ, սակայն մի քանի այդպիսի վկայություններ ենք փակելով այս խնդիրը, այսպես՝ **«մեծագոյն աշխարհ մի Արցախայ՝ Պազկանք անուն»** ²³, **«հովիտ մի Արցախայ յեզր գետոյ ինչ ի տեղի մի Չղախ անուն կոչեցելոյ»** ²⁴: Այլուր Մովսես Կաղանկատվացին Արցախն անվանում է անառիկ երկիր՝ **«ամուր աշխարհ»** ²⁵, որին նաև Մեծիրանք են անվանում՝ **«Մեծիրանցն կոչեն»** ²⁶: Իրականում Մեծիրանքը Արցախ աշխարհի մի գավառն է՝ Մեծ Առանքը:

7-րդ դարի պատմիչ Սեբեոսը ևս հիշատակություններ ունի Արցախի ու Աղվանքի մասին:

Այսպես՝ Սեբեոսի պատմության ԺԱ գլխում պարսից Վահրամ Միհրևանդակը նամակ է գրում հայ նախարար Սուշեղ Մամիկոնյանին. **«Եւ թէ ես յաղթեցից՝ երդունալ ի մեծ աստուածն Արամազդ, և յԱրեգակն տէր և ի Լուսին, ի Հուր և ի Զուր, ի Միհր և յամենայն աստուածս, եթէ ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւնն. զո՛ր և դուք կամիք՝ արասցիք ձեզ թագաւոր: Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցԳապկոն և ցրտոն Աղուանից. և յԱսորոց կողմանէ՝ զԱրուաստան, զՍրծուին և զԼոր Շիրական մինչև ցսահմանս Տաճկաց, զի առ**

²¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 65-66:

²² Մատենագիրք հայոց, հտ. Գ, էջ 127:

²³ Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 113:

²⁴ Անդ, էջ 269:

²⁵ Անդ, էջ 82:

²⁶ Անդ, էջ 262:

նախնեաքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արևմուտս մինչև ցԿեսարիա Կապադովկացոց: Եւ ես մի՛ ի իշխեցից քան զԶարասայ անցանել յայնկոյս. և գանձն Արեաց թագաւորութեանս քաւական համարեալ լիցի ինձ և ձեզ, և այնչափ ձեզ շատ լիցի՝ մինչև ձեր թագաւորութիւնդ հաստատեսցի» / «Եվ եթե ես հաղթեմ, երդվում եմ Արամագդ մեծ աստծով, տեր Արեգակով, Լուսնով, Կրակով, Ջրով, Միհրով և բոլոր աստվածներով, որ ես ձեզ կտամ հայոց թագավորությունը. ում էլ դուք կամենաք, ձեզ թագավոր կդարձնեք: Ձեզ կթողնեմ ամենայն Հայոց երկիրը մինչև Կապկոն և Աղվանից դուռը, Ասորիքի կողմից՝ Արվաստանը, Մրծուինը և Նոր Շիրականը մինչև տաճիկների սահմանները, որովհետև ձեր նախնիների օրոք իսկ ձերն է եղել, իսկ արևմուտքից՝ մինչև Կապադովկյան Կեսարիա: Եվ ես չեմ համարձակվի Զարասայից այնկողմ անցնել. և Արյաց այս թագավորության գանձերը պիտի բավականացնեն ինձ և ձեզ, և այդպես ձեզ համար լավ կլինի մինչև ձեր թագավորությունը վերահաստատվի»²⁰:

Այստեղ ուշագրավ է հատկապես «Աղվանից դուռ» տեղանվան հիշատակումը, որը, ինչպես պարսից Վահրամ Միհրևանդակ թագավորն է գրում հայ իշխանին, եղել է հայոց սահմանը:

Անչափ ուշաթման է նաև Սեբեոսի պատմության ԼԸ գլխում Տիգրանակերտ քաղաքի մասին վկայությունը. *«Իսկ գաւրն Պարսից փութանակի հասանէին ի Մրծուին: Ազդ լինի Երակլի կայսեր, եթէ եկն Խոռեամ ի Մրծուին: Առնու զգաւրս իւր և գերութիւն, և դառնայ առ ամուր աշխարհաւն Մարաց. գայ հասանէ ի Փայտակարան: Ազդ եղև Խոսրովու, եթէ դարձաւ Երակլոս և եհաս ի Փայտակարան, և կամի ընդ Աղուանս անցանել ի Վիրս. հրաման ետ գաւրավարի իւրոյ Շահր Վարազայ, զի զառաջն կայցի: Եւ նա փութով հասանէ յԱյրարատ, և անցանէ ի Գարդման ընդդէմ նորա, և բանակի ի միւս Տիգրանակերտի յանդիման նորա: Եւ Շահէնն ԼՏ-աւ հասեալ բանակեցաւ ի թիկանց Երակլի ի Տիգրանակերտ աւանի: Եւ էին սոքա աստի, և նոքա անտի բանակեալ: Եւ բանակի Երակլի ի մէջ նոցա երկոցունց:*

Իբրև ետես Երակլոս, եթէ ի մէջ արկին՝ զնա՝ դարձաւ ի վերայ գաւրուն՝ որ ի թիկանց կողմանէ, հապճեպ գաւրութեամբ եհար զնա և խորտակեաց և զնաց ընդ Օդուկս. և թափեցաւ ընդ լեռնակողմն ի դաշտն Նախճատանի ի ձմերան ժամանակին»: /«Պարսից զորքերը փութով հասան Մրծվին: Լուր տրվեց Հերակլ կայսերը, թե Խոռյամը եկավ Մրծվին: «Կայսրը» առավ իր զորքերն ու գերիներին և վերադառնալով Մարաց անառիկ աշխարհով՝ եկավ հասավ Փայտակարան: Լուր տրվեց Խոսրովին, թե Հերակլը վերադարձավ, հասավ Փայտակարան և կամենում է Աղվանքով անցնել Վրաստան: Հրաման տվեց իր զորավար Շահր Վարազին, որ «նրա» ճանապարհը փակի: Եվ նա փութով հասավ Այրարատ, անցավ Գարդմանք՝ նրա դեմ, և բանակեց մյուս Տիգրանակերտում՝ նրա հանդիման: Իսկ Շահենը երեսուն հազարով հասավ բանակեց Հերակլի թիկունքում՝ Տիգրանակերտ ավանում: Սրանք այստեղ էին բանակ դրել, նրանք՝ այնտեղ, իսկ Հերակլը բանակեց նրանց երկուսի միջև:

²⁰ Սեբեոս, Պատմություն, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գուրգեն Խաչատրյանի և Վանո Եղիազարյանի, Ե., 2005, էջ 71:

Երբ Հերակլը տեսավ, որ շրջապատեցին իրեն, շրջվեց դեպի այն զորքը, որ թիկունքում էր: Հապճեպ, զորությամբ զարկեց նրան, խորտակեց ու գնաց Ծղուկով և լեռնակողմով իջավ-լցվեց Նախճավանի դաշտը ձմեռ ժամանակ»²¹:

Այս տեքստում ակնհայտ է, որ «մյուս Տիգրանակերտը» Ուտիքի Տիգրանակերտն է, որտեղ բանակ էր դրել Շահիր Վարազը, իսկ Փայտակարանում բանակած Հերակլի թիկունքում գտնվող Շահեն զորավարը բնականաբար բանակել էր Արցախի Տիգրանակերտում: Մեբեոսի հաղորդումից էլ պարզվում է, որ Արցախի Տիգրանակերտ ավանից բացի եղել է մի ուրիշ Տիգրանակերտ, որն Ուտիքում է:

Հայոց Արևելից կողմանց Տիգրանակերտների մասին պահպանվել է ոչ միայն Մեբեոսի հիշատակությունը, այլ նաև Մովսես Դասխուրանցու, որ Աղվանից աշխարհի հոգևորականների շարքում հիշատակել է «Պետրոս՝ Տկոակերտոյ վանական»-ի անունը²²: Այս տեղանվան մասին Մովսես Կաղանկատվացու պատմության թարգմանության մեջ Վարազ Առաքելյանը ծանոթագրել է. «Տկոակերտը Արցախի Տուսքուստակ կամ Տիգրանակերտ գավառն է: Այս Տկոակերտ-Տիգրանակերտը պիտի գտնվեր այժմյան Գառնակեր կամ Բարսում գյուղի տեղում»²³:

7-րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին, ինչպես վկայում է ինքն իր պատմության մեջ, ծնվել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Առանձնակ Ուտիք գավառի Կաղանկատուք գյուղաքաղաքում, որը գտնվում է Արցախի Մարտակերտի շրջանի արևելյան մասում. **«Կաղանկատուաց, որ ի նմին յՈւտի գաւառի, յորմէ եւ ես»**²⁴ / **«(Կաղանկատուք) նույն Ուտի գավառում է, ուսկից և ես եմ»**²⁵:

Հավելենք, որ Մեբեոսի հիշատակած Հերակլի արշավանքի մասին վկայություն է թողել նաև Կաղանկատվացին «Պատմություն Աղվանից աշխարհի» երկի Բ գրքի Ժ գլխում, ըստ որի՝ Հերակլը ասպատակեց **«զկողմամբք Ատրպատականու մինչև ցտեղի անուանեալն Գայշ աւան՝ տեղի ամարոցաց ամսոց ջերմութեան ընտրեալ յառողջութիւն հովասնութեան թագաւորացն Պարսից, որ է ի սահմանս Մարաց աշխարհին: Աւերէր, քանդէր, գերէր գերկիրն ամենայն եւ անտի դարձեալ՝ կամէր ձմերել ի կողմանս Ադուանից, Վրաց եւ Հայոց աշխարհաց»**²⁶ / **«Ատրպատականի կողմերը մինչև այն տեղը, որ կոչվում է Գայշ Ավան, ուր ամրոցներ կային և շոգ ամիսներին պարսից թագավորների կողմից ընտրված էր իբրև հովաստուն ու առողջարար վայր և գտնվում էր Մարաստանի սահմաններում: Ավերում, քանդում ու գերեվարում է ամբողջ երկիրը և այնտեղից վերադառնալով կամենում է ձմեռել Աղվանքի, Վրաստանի ու Հայաստանի կողմերում»**²⁷: Ապա շարունակության մեջ Կաղանկատվացին ավելի հստակ նշում է, որ Հերակլի զորքը հասավ ու **«բանակեցան յՈւտի գաւառի առ հեղեղատովն, որ ի մէջ սահմանացն գեղջն Կաղանկատուաց. եւ կոխեցին քանդեցին զգեղեցիկ ստացուածս**

²¹ Անդ, էջ 175:

²² Տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 372:

²³ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 289:

²⁴ Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 184:

²⁵ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 105:

²⁶ Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 178:

²⁷ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 100:

այգեստանեացն եւ գիւղաստանեացն, ընդ որ անցանէին: Եւ անտի չունալ բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ՝ մաւտ ի գիւղն Դիւտական»²⁸ / «բանակեց Ուտի գաւառում, Կաղանկատուք գյուղի սահմաններում գտնվող հեղեղատի մոտ, տրորեց, քանդեց այն այգիների ու գյուղերի բերքերը, որտեղից անցավ: Այնտեղից մեկնելով բանակեցին Տրտուի հեղեղատին մոտիկ, որ Դյուտական գյուղի մոտ է»²⁹:

Հիշատակված Տրտուն Արցախի Թարթառ գետն է, Դյուտականը՝ Թարթառի ափին գտնվող մի գյուղ, որտեղ բանակել էր Հերակլի զորքը, երբ *«եկել հասին զհետ նոցա զաւրն Պարսից, զաւր Նձր զաւր անուանէին: Եւ էր զաւրազուխ նոցա Շահապղակն: Եւ ի հաւատարիմ նախարարաց թագաւորին վերակացու եւ հրամանատար ի միջի նոցա՝ այր մի, զոր Գրանիկն Սաղար անուանէին, եկն էջ ընդդէմ նորա. եւ միւս զաւրավարն Պարսից եկեալ ի Հռովմայ եւ դարձուցեալ զՀերակլիոսն ընդ կրունկն եւ վարեցին ընդ աշխարհն Միւնեաց»³⁰ / «սրանց հետևից եկավ-հասավ պարսից զորքը, որին կոչում էին նոր զորք: Այս զորքի զորավետն էր Շահրապաղականը: Թագավորին հավատարիմ նախարարներից նրանց մեջ կար վերակացու և հրամանատար մի մարդ, որին Գրանիկ սաղար էին անվանում, սա եկավ, իջավ ընդդէմ Հերակլի. իսկ պարսից մյուս զորավարը եկավ Հռովմից: Հերակլեսին ետ դարձրին և քշեցին (Սյունյաց) երկրով»³¹:*

Կաղանկատվացու այս վկայությունը գալիս է հստակ պնդելու, որ Հերակլի զորքը բանակել էր Թարթառ գետի ափին:

Ուտի առավել քան պարզ է, որ Սեբեոսի հիշատակած **Տիգրանակերտ ավանը** հենց Արցախի Տիգրանակերտն է՝ Վանքասարի ստորոտին, որի ավերակները գտնվում են Շահբուլաղ աղբյուրի (Արքաների աղբյուր) հարևանությամբ. այն հայտնաբերվել է դեռևս 2005 թվականին, որտեղ մինչև 2020 թ. գործում էր Տիգրանակերտի թանգարանը, սակայն, ցավոք, այն դավադրաբար հանձնեցին Ադրբեջանին:

Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ հիշատակվում է նաև Դավթակ Քերթոզը (մոտ 600-670-ից հետո)՝ որպես Պարտավ քաղաքում ապրող իշխանի պալատական երգիչ:

Դավթակի մասին միակ պատմական հիշատակությունն այն է, ինչ գրում է Կաղանկատվացին իր պատմության Բ գրքի ԼԴ գլխում. *«Յայնժամ ճարտասան ոմն ի մէջ անցեալ, որ տեղեակ էր արհեստական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ, հնարագիւտական վարժիւք յաջողակ եւ վերձանական քերթութեամբ յառաջադէմ: Որ եւ յառատաբար ի բանիցն պաճուճանս ճարտարութեամբ նուագէր, քաջապէս հրատարակող լեզու ունելով նման երագագիր գրչի: Մա յոլովիւք աւուրբք ժամանեալ յամէր ի դրան արքունի: Իսկ իբրեւ հասանէր արեւասական շշուն ի վերայ արեւելից աշխարհիս սակս յանկարծաւաս սպանման մեծի զաւրավարին, յայնժամ սկսաւ նա երգել ըստ ալիափետաց գլխակարգութեանց զողբս զայս ի վերայ բարեացապարտն*

²⁸ Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 179:

²⁹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 101:

³⁰ Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 179-180:

³¹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 101-102:

Ջուանշիրի և ասէ այսպէս»³² / «Այդ ժամանակ Դավթակ անունով ճարտասանի մէկը, որ ծանոթ էր տաղաչափական արվեստին, ստեղծագործելու մեջ վարժ ու հաջողակ, քերթողական ընթերցման մեջ առաջադէմ, մեջտեղ եկավ: Սա առատ խոսքերի պաճուճանքներով ճարտար կերպով երգում է և շատ լավ գովաբանում՝ ունենալով այնպիսի լեզու, ինչպիսին ունենում է արագագիր գրողը: Սա շարունակ գալիս և երկար ժամանակ մնում էր պալատում: Իսկ երբ մեծ զորավարի հանկարծահաս սպանության առթիվ օրհասական շշուկը տարածվեց արևելյան երկրի՝ Աղվանքի վրա, այդ ժամանակ նա սկսեց երգել այբբենական կարգով դասավորված այս ողբը բարյաց-պարտ Ջվանշիրի վրա և ասաց այսպէս»³³: Սրան հաջորդող Բ գրքի ԼԵ գլխում էլ Կաղանկատվացին մեջբերում է Ջվանշիրի մահվան մասին Դավթակ Քերթողի Ողբը:

Ավելի վաղ Կաղանկատվացին գրում է. **«Յոզնայորդոր գուսանաւք ներբողեալ տարփողականն Ջուանշիր՝ զաւրապետն տենչահասակ, որ և զանազան իսկ խոհականութեամբ նուաճէր իսկ զամենեսեան ընդ իւրով իշխանութեամբ և բոլորովինբ եղեալ յերկրականիս բարեբաստիկ գերաստացութեամբ խորխտաբար յաւրանայր իմաստակիր քաջութեամբ»**³⁴ / «Խանդավառ գուսաններով ներբողված սիրառատ Ջվանշիրը՝ պարթևահասակ զորավարը, որ գերազանց խոհականությամբ բոլորին ենթարկում էր իր իշխանության և, մահկանացուների մեջ իր ստացած գերազանց հատկությունների շնորհիվ ամբողջովին բարեբախտ լինելով, հպարտանում էր իր իմաստուն քաջությամբ»³⁵: Այստեղ հետաքրքիր փաստն այն է, որ Ջվանշիր իշխանի պալատում, որը գտնվում էր Արցախի Պարտավ քաղաքում, կար Դավթակ անունով մի ճարտասան, որ հանկարծախոսությամբ ողբերգեց նրա մահը:

8-րդ դարի պատմիչ Ղևոնդի պատմագրքում ևս կան որոշ հիշատակություններ Արցախի և Աղվանքի մասին՝ որպես հայերիս աշխարհի, որոնցից բերենք մի հատված. **«Որոց սփռեալ զասպատակս իւրեանց ըստ հիւսիսոյ գետոյն հզարագունի որ կոչի Կուր՝ առնուին բազում գաւառս՝ զՀէջար, զՔաղա, զՈստանի, զՄարգպանեան, զՀաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲիխ, զԽենի, զԿամբեխճան, զԽողմադ: Այս գաւառք աշխարհին Աղուանից»**³⁶ / «Ասպատակ սփռելով Կուր կոչված հզոր գետի հյուսիսային կողմերում, առան բազում գավառներ՝ Հէջար, Քաղա, Ոստան, Մարգպանյան, Հաբանդ, Գեղավու, Շաքե, Բեխ, Խենի, Կամբեխճան, Խողմադ: Այս գավառները Աղվանից աշխարհում են»³⁷:

Հիշատակված Հաբանդը Արցախի Կարկառ գետի աջափնյակից մինչև Դիզափայտի լեռները և Քիրսի լեռնաշղթայից մինչև Մուղանի դաշտի արևմտյան սահմանն ընկած հատվածն է, որ համապատասխանում է Հադրութի և Մարտունու շրջաններին, որն անվանվել է Սյուս Հաբանդ, իսկ ավելի ուշ՝ նաև Ամարաս՝ այդ

³² Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 287:

³³ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 176:

³⁴ Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 283:

³⁵ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 173:

³⁶ Մատենագիրք հայոց, հտ. Զ, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 825-826:

³⁷ Ղևոնդ, Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 1982, էջ 108:

Եսայի իշխանն ունեցել է Մովսես անունով մի որդի, ում մասին Շ. Մվազյանը գրում է. «Եսայի Աբու Մուսեն ունենում է մեկ որդի՝ Մովսեսը, որի անունը պահպանվել է հոր արաբական անվանաձևում՝ Աբու Մուսե՝ Մովսեսի հայր իմաստով: Տաբարի արաբ մատենագրի փոխանցմամբ՝ Եսային Սամարա էր տարվել հոր ու որդու հետ: Որդու անունը չի նշվում, բայց հավանական է, որ նա իշխանի միակ որդի Մովսեսն էր, որն, ինչ խոսք, նույնպես գտնվելու էր Քթիշի պաշտպանների շարքում՝ հոր կողքին և նրա հետ էլ կիսելու էր իրենց բաժին հասած ճակատագիրը: Կարելի է ենթադրել, որ Մովսես իշխանը, ի տարբերություն հոր, 857-859թթ. մյուս աքսորված հայ իշխանների հետ ազատվելով գերությունից և վերադառնալով հայրենիք, զբաղեցնում է հոր աթոռը»⁴⁴:

9-րդ դարում արաբների դեմ ազատագրական պայքար են մղել Առանշահիկների 2 ճյուղերը. առաջինը՝ Եսայի Ապումուսեն՝ Դիզակ գավառում, երկրորդը՝ Սահլ Սմբատյանը, Ատրնեսքեհը, Համամ Արևելցին՝ Խաչեն գավառում: Եսայի Ապումուսենի իշխանանիստն էր Գորոզ ամրոցը, որտեղ հետագայում՝ 10-րդ դարում, հիմնադրվել է Դիզակի թագավորությունը:

Արաբների Բուղա ոստիկանը մեծ գորքով արշավում է Աղվանք, իսկ Ապումուսեն իշխանն իր գորքով պատսպարվում է լեռներում: Բուղան ապաստանում է Պարտավում և մի թուղթ հղում Ապումուսեին, որ նա իջնի Քթիշ ամրոցից ու հանձնվի իրեն: Սակայն Արցախի քաջամարտիկ իշխանը նրան պատասխանում է մի բանաստեղծական թղթով. *«Աշխարհակալների սովորությունն է արքունի հոգածությամբ գնալ երկիրը, իբրև հնազանդների մոտ, վերցնել, թեթևացնել տառապյալների նեղությունները, իբրև խնամարկուներ, և ոչ թե ավազակաբար ավարել, սրածելով ու գերեվառությամբ ավերակ դարձնել [երկիրը]: Եվ եթե դու արքունիքից եկել էիր խաղաղությունը պահպանելու, շենություն պիտի պարգևեիր սրանց և ոչ թե ավերանք ու խառնակություն: Եվ արդ թող հայտնի լինի, որ ինչքան բավականանա իմ գործությունը և քանի դեռ կենդանի եմ, կընդդիմակայեմ տեր Աստծո ուժով ու գործությամբ և քեզ տեսնելու եմ ոչ թե սիրով ու խաղաղությամբ, այլ զենքով, աղեղով ու սրով, քաջ տղամարդկանցով և ընտիր երիվարներով: Եվ եթե դու ցանկանում ես ապրեցնել քեզ ու քո զորքը, արի ել այստեղից և [դուրս] գնա իմ [երկրի] սահմաններից: Ապա թե ջանաս զրկվել այս կյանքից՝ քո զայրության, կատաղության պատճառով և ոսկորներդ ցրես անապատներում ու դառնաս երկրի զազանների, երկնքի թռչունների կերակուր, քո կամքը թող լինի, ես անպարտ եմ քո արյան համար, մանավանդ որ մեծ բարեպաշտություն եմ համարում սպանել Աստծո թշնամիներին, ինչպես Մովսեսն Ամաղեկին, Հեսուն Քանանացիներին, Սամուելն Ագագին և Դավիթը Գողիաթին, նաև ինչպես իսրայելացիներն սպանեցին այլազգիներին: Եվ Աստված սիրեց նրանց: Նույն կերպ կանեմ քեզ և քո զորքի հետ: Արդ չեմ կամենում երկար խոսել քեզ հետ. քո ձեռքերում է խաղաղությունն ու խառնակությունը: Եթե, ինչպես ասացի, հեռանաս ինձանից, խաղաղություն կլինի, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ: Դու [կդառնաս] թիրախ, իսկ իմ աղեղը՝ խոցոտող, դու՝ ախոյան, իմ զինվորները՝*

⁴⁴ Անդ, էջ 11:

հաղթանակող, դու՝ ոսոխ, իսկ իմ գորքը քեզ դատապարտող, քո պատերազմը և մեր հաղթությունը, քո մարմինը և իմ նիզակը, քո պարանոցը և իմ սուրը, քո ստացվածքը՝ մենք նրա ժառանգորդ, քո ավարը՝ մենք ավարառուներ, դու ավազակ, մենք կողոպտիչներ, դու եղեգն, մենք դուրավառ կրակ, դու հարդ, իսկ մենք դուրություն փչող քամի, դու ծաղիկ, իսկ մենք թարշամեցնող խորշակ, դու պտղալից հանդ, մենք ապականող կարկուտ, դու շինվածք առանց հիման, իսկ ես հիմնիվեր տապալող հեղեղ, դու լեշ, իմ գորքը հոշոտող գազան, որ պատառոտում է քո սրտի առագաստը, դու խաղալիք, իսկ մենք մանուկներ, որ բռնելով քո գործությունը, խաղում, կատակում ենք քեզ հետ և քո այդ ողջ հպարտության ու անբարեհաճության հետ. դու վայրի երե, մենք՝ որսորդներ, դու թռչուն, իսկ մենք բարձությունից ցած ենք իջնում և ձգում որոգայթի մեջ, դու ծովի վիշապ, մենք՝ կարթ, քո քիմքից վեր ենք ձգում, քեզ անդունդների խորքից. դու իբրև եղջերու առանց եղջյուրների, մենք արծիվներ քո վերևում, քո աչքերը կուրացնողներ, որ քո լեշը գցում ենք մեր ձագերին և խորշերում բնակվող աղվեսներին: Եվ ահա դարձյալ եմ ասում. անհաստատ է քո ունեցածը: Եվ մինչև որ քեզ վրա չվերցնես այն, ինչ խոսեցի քո պատգամավորների հետ ու ավելի ջանաս փտանգել մեզ՝ դու կընդունես փտանգավորը»⁴⁵:

Ինչպես արդեն նկատվել է, «բոցաշունչ այդ նամակը տեղ-տեղ, ներքին ոգևորվածությունից վեր է ածվում ազատ բանաստեղծության՝ հանդիսանալով այն ժամանակներից մեզ հասած գրականության ամենաուշագրավ նմուշներից մեկը»⁴⁶: Ի դեպ, այս նամակը՝ «Պատասխանի առ ոստիկանն Արաբաց Բուլա» վերնագրով, որպես բանաստեղծություն տպագրել է Պոդոս Խաչատրյանը⁴⁷:

Մի քանի տարի անց՝ 855 թ., Բուլան դավադրաբար կալանավորեց քուն մտած հայոց իշխաններին՝ այդ թվում նաև Ապունուսեին, և սպանեց բոլորին⁴⁸:

Հայ հին մատենագրության էջերում՝ Մովսես Կաղանկատվացուն շարունակող Մովսես Դասխուրանցու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի, Վարդան Արևելցու, Մխիթար Այրիվանեցու, Ստեփանոս Օրբելյանի կողմից հիշատակվել է նաև Համամ Արևելցու (մոտ 850-մոտ 920) անունը՝ որպես Արցախի իշխանի:

Համամ Արևելցին (Համամ Բագրատունի, Համամ Բարեպաշտ, Համամ-Գրիգոր) ծնվել է մոտ 9-րդ դարի կեսին, ապրել և գործել է Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի (877-897) օրոք: Բագրատունիների կամ Առանշահիկների ազնվական տոհմից է, հիշատակվում է որպես իշխանաց իշխան (882-883), նաև թագավոր Հայոց արևելից կողմանց (894-895):

Համամը արաբ ոստիկան Բուլայի հարկադրանքով, ինչպես ինքն է հաստատում նաև իր շարակաճում, սպանել է կրտսեր եղբորը, ինչի համար զոջական երգ է գրել՝ Համամ ծայրակապով: Համամի մասին վկայություն է թողել նաև «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակը. «Համամը, աստծու նկատմամբ գործած մեծամեծ

⁴⁵ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 279-281:

⁴⁶ Մնացականյան Աս., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ե., 1966, էջ 181-182:

⁴⁷ Տե՛ս Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխատասիրությամբ Պոդոս Խաչատրյանի, Ե., 2000, էջ 75:

⁴⁸ Այս մասին տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 297:

հանցանքների պատճառով, որը այս փուլ կյանքի համար իր եղբոր արյան պարտքը իր վրա էր առել, ուրախությամբ ու անընդհատ մեծամեծ բարեգործություններ կատարեց եկեղեցու բոլոր կարոտյալների ու չքավորների հանդեպ. նաև հայոց մեծ հայրապետ Գևորգին ազատել տվեց անօրեն արարների բանտից, մեծ գանձեր նվիրելով և նրան բազմաթիվ մեծարանքներ ցույց տալով՝ ողջ-առողջ Հայաստան ուղարկեց»⁴⁹:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Համամը 894 թ. Ափշինի գերությունից փրկագնել է Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին. «Մաքատ արքայի հրամանով անմիջապես ուղևորվեցինք արևելքի մեծ իշխան Համամի մոտ: Քանի որ ոստիկանը այդ ժամանակ հասել էր Փայտակարան քաղաքը՝ իր հետ տանելով մեծ կաթողիկոսին, և այնտեղ ժամանելիս մերոնք շտապ հասան նրան: Իսկ նա [Համամը] խնդրում է իրեն տալ հայրապետին և առնում է: Նա ուղարկված գանձի վրա ավելացնում է նաև իրենը ու տալիս է տանելու ոստիկանին»⁵⁰:

Համամ Արևելցին նշանավոր դեմք է Հայոց արևելից կողմանց պատմության մեջ. նա կառուցել է Հավթախաղաց բերդը Տրտուի աջ ափին, տիրել է Արցախ-Խաչեն աշխարհին և 9-րդ դարում արաբների դեմ մղված պայքարին ակտիվ մասնակցություն ունեցել Առանշահիկների Եսայի Ապումուսե իշխանի նման: Հայոց արևելից կողմանց թագավորությունն ընդգրկել է Արցախի, Ուտիքի, Կամբեճանի ողջ տարածքը: Համամ Արևելցին խաղաղարար դեր է կատարել հայոց և աղվանից եկեղեցիների միջև առկա տարաձայնությունների հարթեցման գործում:

Պահպանվել են Համամի 2 արձանագրությունները. Մեկը՝ Մեծ Մագրայում 881-ին կանգնեցված խաչարձանի վրա, մյուսը՝ «Համամ» անունով և առանց թվագրության, Տիգրանակերտի ավերակների մոտ գտնվող Դաշտային Արցախի Սոֆուլու գյուղի մոտակայքում:

Արցախի Տիգրանակերտ քաղաքի մոտակայքում պահպանված դամբարանագիրը նվիրված է Համամի կրտսեր եղբորը, ով սպանվել է Համամի կողմից՝ արաբ ոստիկան Բուդայի դրդմամբ. «Մահապատժի մասին են վկայում նաև 4-րդ տողում արձանագրված խոսքերը՝ իրենց առանձնահատուկ արգելական շեշտադրումով: Մեզ է հասել նաև անվավեր մի շարական՝ նույնպես վերագրված Համամին (այդ մասին է վկայում նաև շարականի ծայրակապը՝ Համամ), որտեղ շարականի հեղինակ համարվող Համամը զոջում եւ ապաշխարում է սեփական եղբոր արյունը թափելու համար: Համամի կյանքի այս կարեւոր պատումը, հիմնված վերոնշյալ երկու վկայությունների վրա, ենթադրաբար ներկայացնում է նրա կյանքի հետագա մանրամասները: Ըստ այսմ՝ Համամը զոջալով եւ ապաշխարելով ընդունում է վանական սքեմ՝ Հովհաննես անունով, եւ կյանքի մնացած մասն անցկացնում վանքում»⁵¹:

Այդ շարականը, որ վաղուց դարձել է պարականոն, տպագրել է Պողոս Խաչատրյանը «Գանձարան հայ հին բանաստեղծության» գրքում:

⁴⁹ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն աղվանից աշխարհի, էջ 262-263:

⁵⁰ Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի, Ե., 1996, էջ 175:

⁵¹ Անանյան Շ. աբեղա, Համամ Արևելցի՝ թագավոր թե՞ մատենագիր, Էջմիածին, 2011, մարտ:

Ինչպես նկատել է Հ. Բախչինյանը. «Համամ Արևելացու այս երգը նորություն է հայ բանաստեղծության մեջ, քանի որ առաջին անգամ արծարծում է անձնական թեմատիկան: Հենց այս պատճառով էլ այն, միառժամանակ ընդգրկվելով կանոնական Շարակնոցի մեջ, շատ չանցած դարձել է պարականոն: Պատճառն ավելի քան պարզ է: Օրիներգերում զղջական-ապաշխարական խոսքը ասվել է պաշտող համայնքի կամ այն մարմնավորող ընդհանրական ես-ի կողմից՝ առհասարակ մարդկային մեղքերի համար: Իսկ խնդրո առարկա երգում ապաշխարանքը կոնկրետացված-անձնավորված է, քանի որ արված է կոնկրետ անձի որոշակի մեղքի համար: Սա շեղում է օրիներգական ավանդույթից, բայց նորույթ ու նորամուծություն էր միջնադարի հայ քերթության մեջ»⁵²:

Համամ Արևելացու անունով մեզ է հասել հարուստ մատենագրական ժառանգություն⁵³, որոնց մեջ նաև «Մեկնութիւն Առակացն Սողոմոնի», «Մեկնութիւն Յովբայ «Ո՛վ է դա»-ի» երկերը: «Մեկնութիւն Սաղմոսաց», «Մեկնութիւն Սաղմոսին, որ է Ամբիծք», ինչպես նաև մի պատմագրական երկ համարվում են կորած:

Համամի անունով պահպանվել է նաև Դիոնիսիոս Թրակացու քերականական մի մեկնություն՝ «Մեկնութիւն Քերականին», որը տպագրել է Նիկողայոս Ադոնցը Դիոնիսիոս Թրակացուն նվիրված իր աշխատության մեջ⁵⁴:

Համամ Արևելացու մահվան թվականը ստույգ հայտնի չէ: Կնոջ հետ թաղված է Արցախի Վարանդա գավառի Ավետարանոց՝ այժմյան Ասկերանի Չանախչի գյուղում, որը ևս, ցավոք, դավադրաբար հանձնեցին Ադրբեջանին:

10-րդ դարի պատմիչ Մեսրոպ Վայոցձորեցին Մեսրոպյան Գահնամակում հիշատակում է ոչ միայն իշխանական տների անունները, այլ նաև երկրորդական գահերը, որոնց տերերն իրավունք ունեին ներկա լինելու թագավորական խնջույքներին: Ըստ այդ Գահնամակի՝ Արշակունի թագավորի խնջույքի սեղանին՝ 71-րդ բարձին, կարող էր բազմել Փառաճունի կամ Ռաճունի ազնվական տան իշխանը, որ Մեծ Հայքի Արցախ նահանգի Փառիսոս (Քուստ-ի-Փառնես, Փառնես, Քուստի) գավառի իշխանն էր⁵⁵: Նույն Գահնամակի 138-րդ բարձին բազմելու պատիվը Խաչյան ազնվական տան իշխանին է, որ Մեծ Հայքի Արցախ աշխարհի Խաչեն (Մեծիրանք, Մեծ Առանք) գավառի իշխանն է⁵⁶: Նույն Գահնամակի 139-րդ բարձին բազմելու իրավունքը Խաղբյան ազնվական տոհմին է: Մեծ Հայքի Սյունիք նահանգի Հաբանդ գավառը անվանվել է նաև Խաբան, իսկ Մեծ Հայքի Արցախ նահանգի Սյուս Հաբանդ գավառը՝ Խաբանդ: Խաղբյանները հենց Հաբանդ գավառի տերերն էին, ովքեր Արցախի Առանշահիկ նախարարական տանից էին, որոնցից ծագել էին Խաղբալյանները,

⁵² Բախչինյան Հ., Շարականի գրապատմական ուղին, 5-14-րդ դարեր, Ե., 2012, էջ 140:

⁵³ Տե՛ս Մատենագիրք հայոց, հտ. Թ, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 449-556:

⁵⁴ Տե՛ս Ադոնց Ն., Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին, Պետրոգրադ, 1915, նաև Մատենագիրք հայոց, հտ. Թ, էջ 534-553:

⁵⁵ Տե՛ս Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսես հայոց հայրապետի պատմությունը, թարգմանությունը գրաբար բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Վանո Եղիազարյանի, Ե., 2015, էջ 155:

⁵⁶ Տե՛ս անդ, էջ 165:

որոնց ժառանգները Պոռշյան իշխաններն էին⁵⁷:

Ուրեմն ըստ Վայոցձորեցու՝ դեռևս 4-րդ դարում Արցախում եղել են Արշակունի թագավորի խնջույքի սեղանին մասնակից լինելու պատվի արժանի իշխաններ Փառաճունի, Խաչյան, Խաղբյան ազնվական տներից⁵⁸:

10-րդ դարում Մովսես Կաղանկատվացու պատմությունը շարահարել է Մովսես Դասխուրանցին⁵⁹, որ կրկին Մեծ Հայքի Ուտիք նահանգի Առանձնակ Ուտիք գավառից է, որտեղ գտնվել են Կաղանկատուքը և Դասխուրանը:

ВАНО ЕГИАЗАРЯН

АРЦАХ В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

РЕЗЮМЕ

В древнеармянской литературе, начиная с 4 века, Арцах упоминается как «провинция-твердыня» и, согласно свидетельству Павстоса, граница Армении на востоке проходила по реке Куре. Город Партав, который находился в 5-6 километрах на северо-западе от современного азербайджанского города Барда, в 9 веке, по словам Анонимного Логографа, являлся городским поселением, находящимся на восточной границе Армении.

Согласно местнической табели армянских феодалов, составленной Месропом, в 4 веке арцахские князья из аристократических домов Парачуни, Хачян, Хагбян удостоились чести сидеть за одним пиршеским столом вместе с царем из рода Аршакуни. Арцахский монастырь Амарас, который Мовсес Хоренаци именует Малым Сюником, был воздвигнут по распоряжению Григория Просветителя, и именно там в 338 году был похоронен его сын Григорис.

В 5 веке для проповеди христианства Месроп Маштоц посетил также Арцах и Кавказскую Албанию и основал там духовные школы.

Согласно «Географии», написанной в 5 веке и отредактированной в 7 веке, Арцах вместе со своими 12 провинциями входил в число 15 губерний Великой Армении.

Об Арцахе, как части Армении, упоминают историки Павстос, Егише, Мовсес Хоренаци, Себеос, Мовсес Каганкатваци, Гевонд, Анонимный Логограф, Мовсес Дасхуранци.

⁵⁷ Տե՛ս անդ, էջ 165:

⁵⁸ Ա. Հակոբյանը կարծում է, որ Մեսրոպյան Գահնամակի 135-րդ բարձին հիշատակված ազնվական տունը՝ «Գորոգուայր»-ը «հարաւարցախեան իշխանատոհմի» անվանում է այս մասին տե՛ս Յակոբեան Ա., Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար, Ե., 2020, էջ 117:

⁵⁹ Տե՛ս Եղիազարյան Վ., Գրիգոր Նարեկացին և հայ գրականությունը 10-րդ դարում, Ե., 2018, էջ 260-272, նաև Եղիազարյան Վ., Աղվանից աշխարհի պատմության հեղինակների հարցի շուրջ, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելս Սանթրյանի ծննդյան 80-ամյակին, Երևան, 2018, էջ 179-195:

В 6 веке в Арцахе правил царь Кавказской Албании Вачаган Благочестивый, окруживший себя лояльными представителями духовенства, среди которых выделяются: Матфей Книжник, Партавский архиепископ Шупагишо, Капагакский епископ Манасия, епископы Унан, Анания, Саак, Утикский епископ Под, Каганкатукский иерей Овсеп, Партавский иерей Матфей, придворный иерей Фома, Гайегучский иерей Погос, Црийский хорепископ Шмавон, Дарахочский иерей Матфей, Бетский иерей Абиказ, Манучейский иерей Урбатайр, иереи Овел, Пармиде и Акоб, Каганкатукский патриарх Бакур.

Среди писателей, работавших в Арцахе, в древнеармянской литературе упоминаются: Давтак Кертот, Мовсес Каганкатвацци, Архимандрит Григоратур, Овсеп Бртиайреци Пустынник, жившие в 7 веке; Арцахский князь Есаи Апумусе, Амам Аревелци, жившие в 9 веке; Мовсес Дасхуранци, живший в 10 веке, которые своими произведениями обогатили сокровищницу древнеармянской литературы.

Упоминания об Арцахе и арцахцах в древнеармянской литературе являются древнейшим неоспоримым доказательством исконного проживания армян на территории Арцаха, входившего в состав Великой Армении.

Ключевые слова: аристократические дома Парачуни, Хачян, Хагбян, Малый Сюник, историки, упоминавшие Арцах как часть Армении, Давтак Кертот, Мовсес Каганкатвацци, Архимандрит Григоратур, Овсеп Бртиайреци Пустынник, Арцахский князь Есаи Апумусе, Амам Аревелци, Мовсес Дасхуранци.

VANO YEGHIAZARYAN

ARTSAKH IN ANCIENT ARMENIAN LITERATURE

SUMMARY

Still in the 4-th century, in Ancient Armenian literature Artsakh was mentioned as a "strong province", and according to Pavstos, the Armenian border in the east was the river Kur. The town Partav, which was 5-6 km. north-west of the present town Barda in Azerbaijan, in the 9-th century was called an urban settlement near the east border of Armenia.

In the 4-th century, according to Mesropian Gahnamak (a proclamation of the positions, thrones or ranks of princes in the Armenian court). Parachuni, Khachyan, Khaghbyan princes of the Artsakh noble homes were honored to participate in the feast of Arshakuni King, In the Artsakh Amaras Monastery (named Minor Syunik by Movses Khorenatsi), built under the guidance of Gregory the Illuminator, the latter's son was buried in 338.

In the 5-th century, for the purpose of preaching Christianity, Mesrop Mashtots also visited Artsakh and Aghvank to open schools there.

According to the "Ashkharhacuc", written in the 5-th and edited in the 7-th

centuries, the land of Artsakh was one of the 15 states of the Mets Hayk including 12 provinces.

Artsakh as a part of Armenia, was also mentioned by historians Pavstos, Eghishe, Movses Khorenatsi, Sebeos, Movses Kaghankatvatsi, Ghevond, Anonymous Conversation, Movses Daskhurantsi.

In the 6-th century Vachagan the Pious, King of Aghvan in cooperation with priests Matte Gitnavor, Partavi Shuphaghisho Archbishop, Bishop Manase of Kapaghak, Bishops Hunan, Anania, Sahak, Bishop Pod of Utik, Priest Hovsep of Kaghankatuk, ,Prist Matte of Partav, the King's door priest Toma, Priest Poghos of Gayeguch, Bishop Shmavon of Tsri, Priest Matte of Darahoch, Priest Abikaz of Bet, Priest Urbatayr of Manuche, Priests Hovel, Parmide and Hakob, Patriarch Bakur of Kaghankatuk.

In Ancient Armenian literature the names of Davtak Kertogh, Movses Kaghankatvatsi, Grigoratur Vardapet, Hovsep of Brtiayrets Anapatakan (the 7-th century), Esayi Apumuse Prince of Artsakh, Hamam Arevelci (the 9-th century), Movses Daskhurantsi(the 10-th century) were mentioned as writers acted in Artsakh. They contributed greatly to the treasury of Ancient Armenian literature.

The main information on the land of Artsakh and its people mentioned in Ancient Armenian literature is a incontrovertible proof of the Armenianness (Aryanism) of Artsakh of Mets Hayk.

Keywords: *Parachuni, Khachyan and Khaghbyan noble homes, Minor Syunik, historians mentioning Artsakh as a part of Armenia, Davtak Kertogh, Movses Kaghanka\|tvatsi, Grigoratur Vardapet(Monk), Hovsep Brtiayretsi Anapatakan, Esayi Apumusem, ruler of Artsakh, Hamam Areveltsi, Movses Daskhurantsi.*

ԵՂԾԵՐԻ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՑԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԸ...

Արցախյան ազգային-ազատագրական պայքարը՝ հայության քաղաքական ճակատագրի վերջին՝ նախադեպը չունեցող բացառիկ հերոսական էջը, լի է արիության և ռազմական բարձրակարգ տաղանդի աննկարագրելի դրամատիկական անցքերով, որի անցումները դարձան գեղարվեստական գրականության թեմատիկ առանձնացումներով ստեղծված, ազգային գաղափարակառույցը հատկանշող օրինակների, արվեստի սքանչելի երկերի ընտրանի՝ ասք, հուշապատում (մեմուար), պատմվածք, քերթված, պատմավեպ, դրամատիկական երկերի, պատառիկների շարք, որոնք ստեղծեցին այդ պայքարին մասնակցած, պայքարն ապրած գրական մշակները՝ գրչի զինվորները...

«Քրիստոսի ծաղիկները» վիպասը այդ շարքի լավագույն գոհարներից մեկն է՝ արարված մտքի և հոգու անկրկնելի փայլատակումով, իմպրովիզացիոն ծալքերով, տաղանդի շռայլ դրսևորմամբ, որի հեղինակը արդի հայ քերթության, գրականության եզակի ներկայացուցիչներից մեկն է՝ Վարդան Հակոբյանը, պոետական հնարանների վարպետը՝ կանգնած Արցախյան շարժման, գոյամարտի մայրուղում:

«Քրիստոսի ծաղիկների» լեզվամտածողության կուլտուրայի շուրջ դատողությունները բերում են հետաքրքիր փաստարկների:

Հակոբյանի հասարակական ու գեղագիտական ընկալումները իրենց օբյեկտիվ (իրականություն) և սուբյեկտիվ (գնահատողություն) դիտություններով հաճախ միասնական արտահայտչատարածք են ընդունում: Բանաստեղծի էսթետիկայի՝ գեղագիտության համակարգը իր յուրահատուկ կատեգորիաներն է ընդգծում՝ գեղեցիկի, վեհի, ողբերգականի ու կոմիկականի միջոցով: Ինչո՞ւ միանգամից նրա ասքում միահյուս դարձան արվեստի ժամանակային տեսակի՝ գրականության մեջ գեղագիտության կատեգորիաների այս հոսքը. զարմանալի է:

Գեղագիտական կատեգորիաների համակարգը իր խառը դրսևորումներով առաջ է եկել վիպասի ժանրային բազմազանությունից, իսկ վերջինս հետևանք է հեղինակի աշխարհըմբռնման, հասարակական կյանքի բազմաբնույթ հարցերին անդրադառնալուն, ազգային ավանդությունների, ծեսերի, հավատալիքների, բնավորության, վարք ու բարքի շուրջ փիլիսոփայելուն, արժեքների վերհանման, գնահատման, պահպանման միտումներին, դասային առանձնացումներին, մարդկային խավերի՝ արվեստի, գրականության նկատմամբ ունեցած հասկացության ըմբռնմանը, դրանից առթող՝ իր իսկ բանաստեղծի վերաբերմունքից, որ լուսամուտ է բացում դեպի մարդկային բարքերը, քաղաքական, պատմական երևույթները:

Բանալի բառեր՝ Նիցշե, Մոնթե, Քիրս, Զառունգ խենթեր, ասք, մեմուար, Քրիստոսի ծաղկանոց, Սարդարապատ, հայդուկ, Մոռով, Գևո, հարալեզներ:

**Արցախը
ծաղկազփր նամակ է լեռների վրա՝
պարզված հավերժին...**

Վարդան Հակոբյան

Արցախի արարչակերպը, արցախցու ֆենոմենը, արցախական բառ ու բանի, տաղ ու հորովելի, ինքնախոկումի, ինքնահայտնության երևույթը հասկանալու, քննելու, մեկնելու համար առնվազն արցախցի պետք է լինել՝... խորքով ու լայնքով, արյան բաղադրությամբ ու բարոմետրով, ոգեղեն տրվածքով և սլացքով, տարածության պարամետրերով, պատմական, աշխարհագրական լանդշաֆտով, էթնիկ տոհմական լինելությամբ՝ ինքդ քո էության խորքում թթխմոր դառնալով, ու... ի վերուստ իրավունք ինքդ քեզ վերապահելով՝ ընկղմվելու նրա տիեզերական լինելության խորքը, մեկնելու նրա միֆական արքետիպը, ժամանակների վաղնջական հոլովույթում գտնելու նրա դիցաբանական տոտեմը, աստվածային մեկնության և լինելության սկիզբը, արևորդկանց խորհուրդը, ու շուրթերը նրա տիեզերածավալ արքենիությամբ, հրեղենությամբ պիտի ծխատուրքի ելնեն, արևախորհրդի՝ գաղտնագրությամբ, վաղնջական ցնծերգով.

Էգ, արեգ, այ էգ, արեգ,

Էգն արևուն տանք բարև...,-

աստղացույք է, աստղահմայիլ՝ հիշողության երկնականարում, նախասկիզբ՝ շղթայված լայնածավալ անսահմանությանը, շաղկապված արցախցու բացառիկությանը, կնիքված արքենի Թուր-կեծակիով՝ արցախյան բարբառով՝ «Մեր պառը երգինքանա կաթալ», ահա այսպես, այս թթխմորից հունցված՝ հայտնության իրավունքով երկնվեց «Քրիստոսի ծաղիկները»... «Դադարներ՝ կտրուկ շրջադարձերով» և այլ ենթավերնագրերով բազմախորհուրդ, իր իսկ խորքում գեղարվեստորեն բազմաժանր երկը, տվյալ դեպքում՝ ասքը...

Խոհածենք քերթվածի ու քերթության, ասքի, նախնյաց խնդրականներով՝ պոետիկայի, քերթողական արվեստի շուրջ...

Քերթությունը «ազատական» արվեստի խմբակիցն է, ձև ու բովանդակություն, կշռույթ է ստանում «ազատ» շնորհյալների կողմից, ենթակա է միմիայն ինքն իր խորքից առկայծող խնդրականներին ու ներքին խորհուրդներին, պահանջություններին՝ մարմնավոր ու ոգեղեն փիլիսոփայական, գեղագիտական, իռացիոնալ, ապա և բանականության մտակերպերը ցուցող օրենքներին:

Իսկ դրանք արվեստի օրենքներն են՝ աննահանջ, սահմոկեցուցիչ՝ մերկ, մորեմերկ, գեղադեմ, «խորշակահար» ու անթերի, ազնվագարմ, բայց ցավամոռն, էախոսությամբ՝ մաքառող ու... երկվախոկ, երկվադեմ, դարահեծ, դարադավ, բայց՝ ազնիվ ու նվիրյալ միակ ոգեմիտին՝ ազատության խորհուրդին ու լինելության կերպին, կենդանի, շարժուն, երևակայության սահմաններին, ձևույթներին մերձ, այն ամենին, ինչ կյանքը հավանական ու հնարավոր կհամարի ու... երևակայության ստեղծած արդյունքը ընթերցողին կմղի գեղեցիկի, կյանքի խորշերում հայտնված մարդկային ճակատագրերի բացահայտմանը:

Գեղարվեստական կերպարներին զուգընթաց կցուցի տիպական հանգամանքների բացումները: Հասարակական բարքերը հաճախ կծնեն իրենց սպասարկող գրականություն, սակայն սոցիումը երբեք չպիտի կաղապարներ ստեղծի ու ստրկացնի գրականությունը, բանաստեղծությունը, արվեստը:

Հարկա՛վ, հասարակական կյանքը, մարդկային բարքերը, հարաբերությունները, դասակարգային պայքարը, պատմական, փիլիսոփայական, քաղաքական, տնտեսական առանձնացված ձևությունները իրենց ազդեցություններն են երևան բերում գեղարվեստական գրականության կամ՝ ամբողջությամբ գեղարվեստի փիլիսոփայության մեջ: Բայց անկախ այդ համակարգերից, իսկական արվեստն ունի ազատ պահվածք, պարտադրված օրենքների կատարածու չի դառնում, այլ սոցիալական բոլոր հիմնահարցերի իրական արտացոլանքները, սոցիալական բոլոր խավերի զսպանակված, բռնադատված մղումները դարձնում է կշռույթ, նժար, բիրտ աշխարհի «քաղաքակիրթ» ազդակները, որոնց հրամայականի տակ կստրկացնեն մարդու վերջին ազատախոսության, ճշմարտացիության փշրանքները: Դրանք չպիտի միակ ճշմարիտ խոսափողը կոչվեն, չպիտի սուտ օրենուսույց լինեն...

Գրականության հիմնական նպատակը կյանքի իրական հանգամանքների ու իրական բարքերի ցուցումն է, տիպական կառուցվածքի վերհանումն ու ճանաչողական, գնահատողական մղումներ ստանալը: Իրական կյանքը ստեղծում է արվեստի մեծ գործեր, գեղագիտական, իմացաբանական մղումներ է ներարկում նրա երակները, ժամանակ հարաբերությունում կրում է որոշակի ընդհանրություններ, փոփոխություններ, բայց պահում է յուր արտացոլանքները գրողի աշխարհայացքի և նրա ստեղծագործության վրա: «Երևելի կրիտիկոսը»՝ (Մուրացան) Բելինսկին, նկատում է՝ արվեստի շուրջ դատելով, թե վերջինս իրականության վերարտադրությունն է, կրկնված, կարծես նորից ստեղծված մի աշխարհ:

Իսկական գեղարվեստական երկը, սնվելով կյանքից, ծնվելով նրա հարաբերությունների ու հակասությունների բախումից կամ զուգակցումից, ժամանակի մեջ մնում է որպես մշակույթի արժեք. հիրավի՝ ճշմարիտ է Չարենցը.

***Թեկուզ դարն է ծնում, և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի-
բայց երգը երկրից ու դարից մի՛շտ երկար է տևում...***

Հաճախ գեղարվեստական երկն է ստեղծում իր գնահատման չափանիշը՝ յուրովի գծելով քննողական դաշտ, առաջադրելով մեկնողական ներքին խառնվածքին բնորոշ պոետիկա՝ գրական համապատասխան դիտություններով, ենթարկվելով կամ չենթարկվելով տեսական ժանրային համապատասխան սկզբունքներին, օրենքին ենթակա ամբողջացմանը՝ եզրագիծ ներկայացնելով... Մեկնաբանական և արժեքաբանական, վերլուծական, համադրական, հակադրական գնահատման ասպեկտներում դիտենք երկի կառուցողական շրջույթները՝ խառը, կանոնավոր, թե՛ անկանոն, անձն թե՛ անանձն բանաստեղծական տաղաչափական մեկնության մեջ, ավանդապահ, թե՛ ավանդախախտ դեստրուկտիվ ընթացք վերապահելով դրանց՝ տվյալ դեպքում Վարդան Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկներին»...

Ի՞նչեր են սրանք, թե՛ ո՞վքեր են նրանք՝ «Քրիստոսի ծաղիկները...», որոնք ի վերուստ արդեն կարգված են լուսապսակվելու, լուսապսակ կրելու մի ավելի վեր, ավելի հրեղեն, հայրենադեն լինելության՝ ազատության, անկախության ուխտին:

Հարկա՛վ, հարցադրումն անբեկանելի, անտրոհելի, ցուցումը՝ աստվածահաճո
ու աստվածատուրք...

Ա՛սք է, թե՞ առասպել, հիշողություն՝ն, թե՞ պատմություն, տարեգրություն՝ն, թե՞
ժամանակագրություն, խենթ-խիզախների վարքագրություն՝ն, թե՞ հորինվածք՝
տաղանդավոր վիպերգուի՝ լեզվամտածողության բարձր մեղեդայնությամբ, քնարա-
կանությամբ, էպիկականությամբ, թե՞ քերթված՝ վաղնջնական ժամանակներից
քերթողական վսեմական տարատեսակներով կոփածո, բնածո՞, բնավեր հա՛վք, թե՞
բնարար ծիծեռնակ, թե՞ մորեմերկ, անդիմադրելի կույս՝ յուր խորհրդածննդանյութով,
կենսահյութով, ոգեղենությամբ, լույս-լույսերո՞վ, լուսեղեն, անհիշելիության սահմա՞ն,
թե՞ քերթվածի նորադիր սահման, թե՞ մկրտության ծես, սիրարբի՞, հուրարբի՞, թե՞
էպիկական ներբողական, հաղթերգ՝ արեգական, Արցախական, Արփի Գետիկի արքե-
նի ծործորներում վիպերգվող տաղ՝ անչափ-չափակի՞ր, դեռևս հողեղե՞ն, միֆեղե՞ն,
աննյութեղե՞ն, ինքնաբո՛ւյր..., ու... դադարները՝ հուշակտոր, դադարները՝ ոգեղեն,
մանանա-հուսկ՝ անսանձ-անդարձ, երկնեղեն, կապտեղեն, արնացույժ՝ ծամ-ծաղիկ ու
շողք, լուսաշող, սրբավայր՝ դալարագեղ, դալարավարդ, դարահեծ...

Հեծումներ մտքի, ոգու, կանչի, սիրո, սրի, արյան, ցուլացումի ու սիրատենչիկ,
սիրաշրթունք, սիրածոցիկ՝ խաղ-խաղիկներով, սիրակտուց, սիրախտակիր՝ մեծ,
անգուգական սիրո, մեծ սպասման, ծննդի, մեծ լարման՝ ազատաբաղձ, ազատատենչ,
նահատակության ու լուսակրության, մեծ մոռացման, մեծ սկզբի... հերոսացման՝
ազգովի, արցախովի, մեծ հեծծումի, մոգության, մեծ տաղասացության ու... ազատա-
կան խորհրդի, տիեզերածավալ ծննդի՝ արցախածննդի, կտրուկ դադարներով,
դադարներ՝ կտրուկ շրջադարձներով, դադարներ՝ վիպապատումի խնկումներով...

«Դադարներ՝ կտրուկ շրջադարձերով»

«Դադարների» բանաստեղծական կատարումը՝ կառուցողական կերպը,
կարծես հիշեցնում է անտիկ աշխարհի մեծ **էպիկականեր (հաղթերգեր՝** ներբողներ)
արարողի՝ Պինդարիոսի (Ք. ծ. ա. 6-5-րդ դդ.) քերթվածների շարային, ժանրային
արտասովոր, վսեմաշուք կազմանյութը՝ հասարակական ծեսերի, ավանդապատումի,
տոնախմբությունների, առասպելական վավերացմամբ հորինված երկերի հանգույն
պոետիկա՝ ներկայացված ավանդապահ-ավանդադեմ ստրոֆե-անտիստրոֆե-էպոդոս
կառուցվածքային դիտությամբ...

Հակոբյանի մոտ պատկերները քերթության **ստրոֆետով՝** «Երկիր սրբավայրով»,
ու փիլիսոփայական խոհի՝ **անտիստրոֆեի՝** «Դադարների» պրոգայիկ արքեսիպով
ու... նորից՝ «Հաղորդություն» ստրոֆետով են կազմաբանվում:

Քերթողական միջնորդությամբ բանաստեղծը արարման խորհուրդն է քննում,
մեկնելու՝ «Կրկին դադարներ»-ից **էպոդոսին՝** «Անխուսափելի կյանքից» ու
«Շրջանակից դուրս» միջնորմները՝ այն տարբերությամբ, որ միակ՝ հազիվ չափային
շարժում տեղավորվող Պինդարիոսի հզորահաղթ անցումներին հակառակ **ստրոֆե,**
անտիստրոֆե, էպոդոս կառուցվածքային եզրույթով Հակոբյանի պոետական շրջույթ-
ները անչափակիր են, քերթվածից՝ արձակ ձգվող, արարվող ծեսից ու ծննդացույթից
առասպել ու... տարեգիրք-վարք դարձած ասք-լինելություն, հուշամատյան, ասք-
ավանդապատում, ապա մորեմերկ սրբացում-ծաղկեպսակով՝ դափնեվարդ, թե՞

մրտու, թե՞ վարդեվարդ՝ Քրիստոսի ծաղիկների՝ սուրբ նահատակների՝ Արցախական աշխարհի նահատակների արյան շառափայլով, կորուսակիր վարքով պսակյալ... Այսպես ձև ու ձևույթ, խախտ ու չափություն, սկիզբ ու նախասկիզբ՝ գիրկընդխառն արարվել է ասքը՝ Վարդանական «դադարների» կտրուկ շրջադարձերով, քննելու ինքն իրեն ու ժամանակը, Արցախյան գոյամարտը, զինվորներին ու Խաչի պապին, Սաթենիկ տատին, թե՞ Ջառունց խենթերին՝ Ակուսիկ Ջհանին, Ծատուրին, ո՞ր մեկը թվես, բոլորին՝ ծակ պտուկ դարձած, հե՛յ Միեր, ո՞ւր թռավ քո սիրտը՝ թնին, հնին հնք տվեց ու... թռա՛վ հրաշքի պես, հե՛յ, Միե՛ր...

Թե՞ կռիվ կա աշխարհում, ախր կռիվը նախ յուրաքանչյուրի հոգում ու մարմնում է, որ կելնե ու կհորդանա ու Արցախական աշխարհին ապավեն կլինի, թե՞... ու դադարները այլևս դադարներ չեն ուղղակի իմաստով, այլ՝ ցավ ու կորուստ, ոգեղեն ցուք, կրակված հոգիներ, արցախականչ ձորեր ու... երդում՝ եռագույն դրոշին, այս ե՛րբ և ինչպե՛ս, որտե՞ղ ու ո՞ր ժամանակներից ու... այսօր ժամ ու ժամանակ տվել ու կռիւ են բռնել անտեր թուրքի հետ, որ փորձում է տիրական լինել իր մոզոնած «հայրենիքում»: Այսպես Վարդանական ասքը գլորվում, հա՛ գլորվում ու կարոտականչ դարձած, անտեսադեմ է. Սաքունց սարի սուրբ մատուռին պահ տված 3 տարեկան երեխա ասես, որ... «ամուր սեղմել է մայր մտնող արևի շողերն ու քնել՝ անցած, ներկա ու գալիք բոլոր պատերազմները հաղթանակած»՝ վաղուց զինվոր դարձած է... Հապա՛...

Հակոբյանի բանատողը տող չէ այլևս, նրա բանարվեստը դրասանգվել է պատկերախիտ քննամար, ներքին խմորումների հայեցմամբ ու... մակդիր էպիտետները այլևս ոչ թե երկրորդվել, այլև երրորդվել, չորրորդվել ու աստղաթև են, իրոք, հայեցողական են, համադիր ու հակադիր են անվերապահորեն,-

Երազը - ահա մեր առաջին հանդիպման վայրը:

Երազը - ահա մեր ժամադրավայրը վերջին՝- կխորհեն հերոսները:

Իսկ սամում ապրած արցախցու հոգուն՝ բանաստեղծական հոգուն, երազը կդառնա միայն սպասված ժամադրավայր:

Ի՞նչ ավանդական չափություններով պիտի քննել ասքը, երկվություններով լցված Հակոբյանի քերթողական հոգու դինամիկ անցումները, ի՞նչ խոհափիլիսոփայական դիտույթներ է նա ելման կետ ընդունում ու, արդյո՞ք, ընդունում է, արդյո՞ք, մի տաղանդավոր ասացող չէ՞ շուղ-շուղ բանատող դարձրել երկիր դրախտավայրի շուշանափերին իր սիրակիր թարթումները փնտրող քերթողը, պոետական ի՞նչ կառույցներ կան ու... ենթակա՞ են, թե՞ կարգալույծ, ասացողի բանատրո՞ւք է, թե՞ հոգու անսահման մերձերից ձայնարկող, կրկնաձայն ու անդնդախոր ավերի եղեգան փող, չարագույժ կռինչ...՝ ո՞ր կենդանու տեսքով.

Եվ մի ամբողջ գիշեր, թեժածարավ գույների մեջ

թավալվելով,

ես ընկղմվել էի հովտի մանուշակներում, պառկած էի տկլոր,

վերակերտում էի ժայռերը՝

չկարողանալով կասեցնել

¹ Հակոբյան Վ., Քրիստոսի ծաղիկները, տե՛ս Անդրադարձի տեսիլներ, ԵՃ, Ե., «Հայաստան» հր., 2002 (այսուհետև՝ Քրիստոսի ծաղիկները), էջ 505:

իմ այնքան տաք բռնկումի գրոհը դեռ կին չտեսած
եվ անանուն ու անմարմին, թունավոր ծաղիկը դրախտավայրի²...

Եվ պետք չէ լավ քերթված արարելու համար չափակիր լինել եղած գրական ուղղություններում ու պոետական կոլտուրայում: Լսենք Արշակ Չոպանյանի մեկնումները գրական երկի ու գրական ընդհանուր օրենքների հարաբերությունների շուրջ: «Ենթադրել որ գրված կանոններեն, տրված բանաձևերեն, վավերացված սեռերեն դուրս չկա գրականություն, ատիկա իմաստակություն է: Գրականությունը կը ծնի արվեստագետին տպավորական հոգիին վրա արտաքին ու ներքին աշխարհներուն ըրած կրկին ազդեցութենեն, և գրական գործերն են, որ կանոնները կը շինեն, ոչ թե կանոնները՝ գրական գործեր»³:

Իսկ բնության բոլոր անտես ու անմարմին երևույթները դեռ երկունքված ու ծնունդ չապրած, դեռ աստղացույք ու ասքաշյուղ, հմուտ ասացողի շրթին՝ շառագույն հևք են ու ծարավի են, ծարավի՝ հավիտենական ճամփածիրներում ու ձարխոտերի, գիլամասրենու, դեղձենու և անգամ՝ հարալեզների կանչերում, որ ծառերի վարսերն են, ու ծեծկոտուք՝ շրթաշուրթ, անխոս մեղեդի, կորսված, թե՞ դեռ չերգված, հավաքված բանաստեղծի հոշոտված մարմնի ու անչափակիր հոգու շուրջ...

Կա ու չկա վերադարձ ու սպասում, կա ու չկա ժամադիր հուշ ու «չբռնկվող երագ ու շող»:

«Դադարների» ելման կետը նաև Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» քերթողամուտն է հիշեցնում, թե հարկ է ի ձայն ընդունել՝ ինչ մեղքերի գնով պատուհասվեց ազգն հայոց ու... մատենագիրը, որ շարունակում է Նարեկա դպրոցի ավանդները, շարունակաբար, տարեգրական, պատմագրական, ժամանակագրական երկասիրություններին հատուկ դիտություններով, ժանրահյուս հարաբերությամբ է մատենագրում Հայաստան աշխարհին թուրք-սելջուկներից հասած դժբախտությունները՝ մեծ սթափությամբ ու ճշտությամբ տալով Հայաստան աշխարհի քաղաքական նկարագիրը. Հայաստան երկիրը «այժմ ընկած է բոլոր ճանապարհների խաչմերուկներում՝ մերկ, խայտառակված, և կոխկրտում են նրան նախատինքով ճանապարհների բոլոր անցորդները՝ ելած հայրենի աշխարհից, օտարացած ծանոթներին, հեռացած ընտանիքներից, բարեկամներից ու ազգականներից՝ դարձել է գերի ու կալանավոր բոլոր ազգերին»: Հակոբյանի ասքում ևս ժանրային միախառն դիտություններ են գծվել՝ պատում, ասք, նովել-նորավեպիկ, քերթված, տարեգրություն, ժամանակագրություն, պատմություն ու... Արցախական աշխարհի լինելություն, պայքարի, գոյատևման հաղթության մարտադաշտ: Լաստիվերտցու Հայաստանը կոխկրտված է, իսկ Հակոբյանի Արցախական աշխարհը փորձում է հաղթության դափնիներով զարդարել յուր հերոսներին...

Սպասում եմ,
որ ճակատիս գրերում ճշտումներ մտցնի Տերը,
որն ինձ տվել է տառապանքը անկշռելի

² Նույն տեղում, էջ 506:

³ Չոպանյան Ա., Մեր գրականությունը, տե՛ս Հայ գրական քննադատության քրեստոմատիա, 2 հ-ով, հ. 2, Ե., Երևանի համալսարանի հր., 1984, էջ 481:

ու ամեն պահ բզկտվող աշխարհի ամենամեծ սերը⁴:

Ու արարման, փլուզման, վերակերտման, կորուստների լաբիրինթոսում ու գեհենոսում անգամ Պլուտարքոսը անհայեցական է, գիտե որ

Աստվածների և

չաստվածների կռիվն է անվերջանալի:

Ժամանակները սառնարյուն են, հաշվառք ունեն, անբարո ու անմիխիթար են, սակայն, գիտե

Անցնում է

ամբողջ մի հավիտենություն⁵:

Արցախական աշխարհը, սակայն, գիտե ներքուստ ծանրութեթև անել լույսի ու արյան աշխարհը: Այլևս մահտարածամ ու մոռնչ է խոժոռամիտ.

Սամումը սև անապատի եկել, լեռան դուռն է ծեծում:

Հայոց Արցախական ամուր ու վես լեռները ևս այրուձի են, ներքին կորովով ու սպասելիքով: Այսպես-նախասկիզբն է ասքի, հերթապահ-զգուշացում, քամելիոն ու լորտու, աշխարհի հոգը չէ՝ ո՞վ և ի՞նչ է լինում. Հակոբյանի բանաստղղ ասքաշող է ու հարցում, պարադոքս ու անպատասխան, անշուշտ, ինքն էլ և՛ սամումը կցուցի, և՛... ասքաշողը.

Ամենաթեժ կետը երկիր մոլորակի, ուր կանգնում եմ՝

ոտքիս տակ է...

Իսկ դա Արևելից տունն է՝ Արցախատունը, խենթ-խիզախների հայացքակիր ու վիրակապ թներով ու թոնրաշուրթ սրտով... Վիպե՞նք... Վիպում է Հակոբյանը՝ թերևս ափսոսանք ունենալով խոհակիր հոգում ամուլ ապրած երագների համար.

Անձադիկ ծաղիկը աշնանավերջի ափսոսանքն է...

Այսպես երագադիր՝ ժամադրումով կայանում է մի խորհրդավոր ծես՝ առասպելաբանվելուն՝ հոգուն ու սպասելիքներին՝ ծուռ, Սաթենիկի թոռ, Սարգսի որդու խռովքին՝ համադիր և հլու.

Իսկ դրախտավայրը կայանում է միայն կորսվելուց հետո⁶...

Դա այդպես է՝ լինի սիրո, ծաղկի, ծիլի, բույրի, լույս ստինքների, ուր Ադամայգում կաթը գժվում է բանաստեղծվելուց:

Իսկ կյանքի անցումներում նրանք են՝ ասացողի խոհակիցները, սիրակիցները, երագակիցներն ու չեն գտնում, ու գտնում են..., կորցնում են ճամփաներն անթվակիր, անհասցե, որ իրենցը և իրենցը չէ՛ն... չէ՛ն. ամեն ինչ խունկ, ամեն ինչ անգո... ու անցումները՝ շիկացած, որոնք բանաստեղծի միջով են անցնում, նախանիշ են ինչ որի, որ որն է՝ աներկյուղ, նա՝ գո՞ւցե թե՛ անգոն ու անդեմը.

Բերում է աչքեր, դեռ ոչ ոքի չտեսած...

Բերում է սիրտ, դեռ ոչ մի կրակում չկիզված⁷...,- ու սիլլոգիզմներն են ընթացքավորվում, որ փիլիսոփայինն է, այստեղ՝ Վարդանինը, ու շիկացած պատկերները, որ քերթողինն են, ու ասացումները, որ ասացողինն են ու աստղածղի,

⁴ Նույն տեղում, էջ 502:

⁵ Նույն տեղում, էջ 504:

⁶ Նույն տեղում, էջ 504, 505:

⁷ Նույն տեղում, էջ 510:

հուշաբույր, երկնառաք ու բազմաստեղ են, հույլք-հույլք ու... դա Հակոբյանի անսանձ հոգին է թևածում, չափ ու ձևությ չընդունող, ասրափայլ ու կոստոտոտիկին խոհակիր՝ սարսռամիտ... սուլում են, փնջում են, ելնում ու թևում են: Արցախյա պիրկ լեռներ ու ձորերն են, այրուծի են, արնացուլք ու երազ են, հրեղեն լույս... ինքնատրոնման ու ինքնաճանաչման, ինքնատեսության խենթացումն է ու ամենը նաև մի հոգեկրի պես զինվորացու են, դեռևս չպտուղված ու պտղավորվածները, պապ ու տատը:

Ես արդեն ինձ չեմ ճանաչում Աստծո տված քո վրձնի ծայրին,
և սա իմ ինքնահաստատումն է ժամանակի
և տարածության մեջ...
տիեզերական⁸...

Բանաստեղծի ինքնահաստատումը ելման կետն է, որտեղից ամեն ինչ այնքան պարզ է ու... Հիասկացված, բայց և բույր է թուփում, ու սիրո բույրի, կարոտի, ցավի, երազի, չաստվածների, հեթանոս աստվածների սարսուռների դռները բացվում են ու փակվում, բանաստեղծին դողերոցքում բռնացնելով.

Իսկ մեր տունը՝ սպասումն է մեր, սուրբ սիրո մեջ,
Բա՛րձր, Բա՛րձր, ամենավեհ լեռան վրա աստվածամերձ⁹...

Քննելով Մուրացանի պատմության փիլիսոփայության համակարգը՝ մի առիթով Սարինյանը նկատել է. «Մուրացանը պատասխանելու համար ներկային, հարցում է անում անցյալին»... Թերևս դա պատմավիպասանի համար պարտադիր ստեղծագործական նախապայման է, նաև բանաստեղծի, մշակույթի մարդու համար ընդհանրապես... Այս զգացողությունն ես ունենում «Գալիքի հրավերքը կամ առերեսում անցյալի հետ» հատվածը ընթերցելիս ու... որպես վտանգն նախազգող ցավի նախանիշ, բանաստեղծը նախածին

Կրակը լափիլզելով՝ ինչ պատահի, մոտենում է...
(Վիհ: Անդունդ: Թռիչք-անցում):

Անհասին հասնում է նա, ով չի հասնում. որովհետև՝ երբ
Աստված է խոսում

լսում է բանաստեղծը,
ուշիմ,
խելագար,
երբ սկսում է խոսել բանաստեղծը,
Աստված չի «լսում»¹⁰, -

Իսկ աշխարհը, մարդիկ, և առավել՝ Աստված, լուռ են խորհրդավորությամբ,
ու դրանից առավել անհանգիստ է բանաստեղծը.
քանզի եթե լսող չկա, առավել ևս՝ պիտի ասել, ասել, ասել...
Իսկ, որ ավելի սահմոկեցուցիչ է՝ կրակն մոտեցող
«լափիլզող է» ու ծառն՝ այստեղ՝ Արցախական տունն է,
- ծառը տեսնում է-
ու չի կարող փախչել, ու չի կարող նահանջել. ծառ է՝

⁸ Նույն տեղում, էջ 511:

⁹ Նույն տեղում, էջ 513:

¹⁰ Նույն տեղում, էջ 514:

ընդերքներում խորը ագուցված արմատներով:

Չի՞ էլ փորձում¹¹...

Այո՛, ծառը՝ Արցախա տունը, մետաֆորիկ պատկեր հարցադրում է, անձնավորված, խորախորհուրդ, քանզի Արցախա տունը հին ու արմատավոր է, որքան էլ վտանգն կա, ինքն իր արմատներով հողի ընդերքում է. փոթորիկներ կգան ու կանցնեն, հողն Արցախական անասն է ու հավերժական...

Բանաստեղծի հիշողությամբ արցախցին քրիստոսածաղիկ է, հաճախ՝ նահատակ, բայց պատրաստ նորից հանուն հող հայրենիի մարտիրոսվելու, լուսապսակ կրելու...

Իսկ բանաստեղծը նախ և առաջ փիլիսոփա է. խոհածումները նրա՝ սիլլոգիզմներ՝ պատճառահետևանքային, առաջնայինից՝ երկրորդայինը միտվող սքոդումներով, աֆորիզմիկ՝ հետ ու առաջ դարձվող քննումներով. հարկա՛վ-

Հինը այն է, որ նոր չի լինում ոչ մի ժամանակ:

Քանզի բանաստեղծությանը ես մոտիկ եմ եղել

անհամեմատ,

երբ ավելի, անասելի շատ հեռու էի բանաստեղծությունից,

երբ ես դեռ չէի ծնվել,

բայց, անշուշտ, սերը կար աշխարհում:

Եվ բանտերը ազատության օազիսներ են:

Եվ ի՞նչ պոեզիա, եթե բանտերը լիքը չեն պոետներով:

Ու չնայած չափանիշ է ն՛ցավ ն՛կարոտ, ն՛սեր, ն՛ իշխանություն,-

Մուտ է, թե արքաները մենակ չեն մնում,

բոլոր արքաները լինում են մենակ:

Իսկ թե մենակ չեն՝ ինչ արքա:

(Աղվանից Վաչե արքայի երկվությամբ տնքող

հոգու հանգույն է բանված)...

«Լափլփող կրակի» արահետներում Արցախական աշխարհն է:

Ապագայի հրավերքը Աստծո սուրբ ոտնահետքն է հայոց

բիբլիական լեռան վրա¹²...,-

իսկ ճանապարհները ոտնահետքերն են, ոտնաձայները՝

տիեզերացունց մոնյունով Միամանթոյի, Ռուբեն Սևակի, Վարուժանի...

ու բանաստեղծված Արցախա հողում քերթության ու քերթողի շրշյուն է, ոտնաձայն,-

Ծանրացել են դեպի լյառն Արարատ բարձրացող Ուիթմենի քայլերը¹³...

Ու Ռոսկան սարը վիպական պահվածքով կարծես ելել է ծիսատրուքի.

երեսը փռել է ոտքերի տակ արեգակի՝

մի անծայրածիր, արյունոտ ժամանակի մեջ¹⁴...

Եվ ժամանակների նահատակները թխաչ մեծն Սևակն ու խարտյաշ

¹¹ Նույն տեղում, էջ 514:

¹² Նույն տեղում, էջ 516-518:

¹³ Նույն տեղում, էջ 523:

¹⁴ Նույն տեղում, էջ 524:

տաղանդավոր նրբերգու Եսենինն է, որ Կոմիտաս Հակոբյան քերթողի՝ Քրիստոսի ծաղկամարմին նահատակի սիրելին է, որին «մի օր աստվածներն հորինեցին» ու աստվածները խանդախառն «հարսնամոմի մեջ տաք-մեղրախոսուն», բանաստեղծի հոգին որպես նվեր՝ խնդրառուն դարձրին... աստծո դռներին... Նույն ծաղկի՝ սիրելիի մազափունջը ավերում: Օ՛, ասք է խնայ՝ աչցունքոտ. ու դարձդարձիկ՝ անցյալի ոգեղեն ստվերներն են սահում սիրայնամիտ, սիրախտավոր, բանախտավոր՝ Անդրանիկ, Նժդեհ, Արաբո, թե Աղբյուր Մերոբ, Նիկոլ Դուման ու Թևան, Տալվորիկից մինչ Հաքառու գետ, Մասիսից մինչ Քիրս, Վազգեն ու Ավո, Նորիկ, Ասկուկա, Արտուր ու Խաչիկ Դաշտենց՝ մեծ վրիժառուն, ապա մինչև այս ամենը չէր, երբ փիլիսոփայական խոհը երկունքվում է, ծննդալույս է բերում, երբ՝

Աղբյուրից կախվել է ծարավը,

Սիրուց կախվել է... աշխարհը, (սիրտ ասենք՝ շատ է մաշված):

Գոնդողների Վենետիկում Բայրոնը ավի մեջ ընթերցում է մի բուռ հող¹⁵...

Ապա նախաստեղծ արարումը շարունակվում է, այս անգամ անցյալ-ժամադրություն տեղայնելով. այս անցումները նախապատրաստում են մի մեծ ընդմիջման՝ դադարների-ստրոֆե-անտիստրոֆե-էպոդոս կառույցով, որտեղ բոլորն են երևում՝ Արցախական աշխարհի ծոերը՝ խենթերը, իսկ ասացողը՝ ծոերի մեծ տնից է՝ Զառունց ծոերի, տո՛, էս ի՞նչ երկիր է, բոլորն էլ ծուռ են ու... աստղավոր, աղվոր ու շանթ ու հույլք-բոց... ու անմար է ամենուրեքը՝ մի մեծ նախապատրաստում, մի մեծ ոգողեն, ասպազեն պատերազմի, ընդդեմ թշնամու, այսպես՝ խենթակոթիվ է.

Բոլորը՝ աղջիկ, երագ, տղա, կարոտ, քայլում են դանդաղ, անշտապ.

և ոչ ոք չի նկատում ժամանակի մեջ, որ վազում են բոլորը:

- Իսկ անտես աշխարհի միակ տիրակալը՝ քերթողը, այլևս վաղուց տեսակիր է.

Տեսնվող աշխարհն ինչ է չտեսնվող աշխարհի հետ
համեմատած¹⁶ ...

Այո՛, բոլոր ճանապարհները տանում են մի մեծ պատրաստության, պոթթկման, արարման, խենթացման՝ գրելու ազգի վեցերորդ ավետարանը՝ կովականչը՝ ազատականչով փաստված...

... Իր ետևից ուղարկված կարմիր խնձորը ավի մեջ՝
հորիզոնի վրա կանգնում է Նեմեզիսը¹⁷ ...

Ու պատկերը գեղարվեստական արժեքից բացի քաղաքական արժեք է ստանում, Նեմեզիսը՝ վրեժխնդրության աստվածը՝ աստծո կարգադիր, ինքը հենց հրամանավճիռ աստծո գործությամբ բանաստեղծին ևս հրավերք է հղում վրեժխնդրության՝ հրեղեն ու անզիջում վենետայի:

Ամեն, ամեն ոք շնչավոր ու անշունչ՝ ոգի առած. ասք են ոգում ու հազարաթև թևին տալիս ոսկեծղի ժամադիրին.

¹⁵ Նույն տեղում, էջ 516-517:

¹⁶ Նույն տեղում, էջ 518:

¹⁷ Նույն տեղում, էջ 522:

Նունեն որպես վերջին ընծա, կտրեց իր ծամը
ու զոհված զինվորի մատների մեջ «տեղադրեց» ծաղիկների
հանգույն,

որի անվերջ գուրգուրանքից շիրմի վրա աստղավորվում է կարոտը,
և հողը դառնում է զարմանալի բուրիչ ու անդավաճան¹⁸ ...

Այստեղ Քրիստոսի մի կոտրված, հուշ դարձած ծաղկի՝ Կոմիտասի ասքն է ու
երազներից կիսատ՝ երազ հյուսող Նունեի սիրաշողը, որ սեմնակիրն է ժամա-
նակների՝ սիրո, հուշապատումի սերմնակիրը. դեռևս նորից մահտարածամ է հողում
ավետյաց երկրի ու արյան պար.

Մն սամումը եղեռական մոլեգնում է Արցախական
սուրբ լեռների մեջ...

ու անվախճան ոջլոտությամբ ահագանգում է չարություն...

Այո՛, ճակատագրից հասցված «կտրուկ շրջադարձերը» այլևս պատմություն են
վարքագրում, պատմությունը մի հինավուրց երկրի՝ Արցախա Տան...

Գրական երկի ստեղծագործական ընթացքը, հարկավ, լի է բանաստեղծի
հոգևոր բևեռացումների, ունակությունների գերլարման ու ունեցած տաղանդի
առկայծումներով, խմորումներով, հում նյութի դասդասմամբ, պատումի քնարակա-
նությամբ, էպիկականությամբ, միֆականությամբ և շերտերի, հաճախ կանոնավոր,
մեծավ մասամբ, անկանոն տաղաչափությամբ, ռիթմիկ մատուցմամբ, երևակայական
անչափակիր թռիչքով, ոգեղեն խտացումներով, ներքին ուժերի հնարավոր
խմբակցությամբ, այո՛, արցախյան գոյամարտը, նրա դրդապատճառները, ճանա-
պարհները... դարձել են ասքի՝ «Քրիստոսի ծաղիկների» տաք երակը...

Մտահղացման ազդակները, գրգիռները՝ արցախահայության ազգային
ազատագրական կռիվներն են, նույնիսկ բոլոր նրանք, ովքեր միանգամից են ելել
կռվի... Այդ անտես, անմարմին, պարադոքսալ խոկումներով լի երկի՝ «Դադարների»
ստեղծման, փիլիսոփայական, առասպելական, քննական, գրական դիտումները
հետաքրքիր տիպական բացումներ են խոստանում, ու բացումներն այդ գեղար-
վեստական պատկերների մետաֆորիկ, այլաբանված շերտերն են հյուսում, ու
ստեղծվող պատկերները բառաբարդումներ, բառաձևույթներ են երևան բերում՝
հակոբյանական ռճային ինքնատիպ ցուցումներով:

Ասացողի ընկալումը և բանաստեղծական ընկալումը արդեն վիպական
պատումին ու հարալեզի մոգությանն են տրվում՝ ավանդապատումին, որ բնաբնույթ է
այս քերթության մեջ. Մեղրաքե՛րձը կարծես առասպելախառը նվագ.

«Ականջդ դիր քարին, քերձը գվվում է՝ ճեղքերում այնքան մեղվաընտանիքներ
կան վայրի, ականջդ, դիր քարին՝ հմայանքի ու կախարդանքի այնպիսի՝ նվագներ են
հնչում քերձի մեջ. քարակեղևի տակ աղբյուր կա, որ քարե երակներում խաղս ընկած
վերուվարում է, ապա բավականին ներքևում ոտուժոց քնած բլուրների արանքից իրեն
ցույց տալիս¹⁹...» :

Որտե՞ղ է իրականը, որտե՞ղ՝ միֆականը..., չկան ուղն ու ծուծը... Իսկ բոլոր
ասքերում էլ, մանավանդ, արցախահեն բանքերում հերոսները դալի են՝ խենթ, պել.

¹⁸ Նույն տեղում, էջ 524-525:

¹⁹ Նույն տեղում, էջ 530:

«Էն, որ ասում են՝ Զառունց խենթեր, իզուր չեն ասում: Էդ մենք ենք... Զառունց հավերն էլ կրթված են, բայց մեկ է, դրանցից ոչինչ չի փոխվում, խենթի անունը մնում է էլի մեզ վրա»²⁰:

Այսպես, Զառունց խենթ Գալուստը ուզելով, թե չուզելով, չփրկվեց մեղադրանքից, ու հակա կոչվելուց... կորավ: Պատումի շունչը շեշտակի ավարտով եզրագծում է. «Թեկուզ Զառունց ցեղին են խենթ ասում, բայց մեր տեսածը տեսած է՝ ամբողջ գյուղով էլ գժեր են», - եզրակացնում է հեղինակը: Պատումի շարունակվող էջերում Զառունց հերոսապատումի շարքի Գալուստը տարիներ անց Արցախի նոր կռվում «Ռուսաստանից կամավոր եկած և մեր կողմից կռվող յոթ հայերից մեկը, էն որ մի օրում երեք գերի է վերցրել թուրքերից՝ ինքը մենակ, շատ է նման Զառունց Գալուստին, թեկուզ մի քիչ, ոնց որ ռուսի արյուն էլ կա մեջը»²¹, ու հայրենիքից մենակ մի աղբյուրի անունը գիտե, որի պատճառով հայրը քշվեց Սիբիր:

Իսկ փոքրիկ, անչափ փոքրիկ հյուլք-նորավեպիկները շարք են դառնում, հիշողություն, ասք, արցախապատում, ուր արդեն արցախյան գոյամարտն է, ուր պատերազմ ու պատերազմ չէ, պատերազմի հետք ու կորուսակիր, լուռ ցավ է...

անտիստորֆե -ու.

Թաղում: Թաքում: Անլաց: Անծպտուն: Անթափոր²² ...

Հրաշք է ու հարության տաղ, հրաշք է ու անմար սպասում՝ դեպի վեր համբարձվող, խփված տանկից՝ նրա գեհենից սպողած, մեն-մենակ փրկված, կենդանի, անկենդան սրտոտ, ուժեղ, պինդ, ոչնչից չերկնչող Մհերի խաչերակ սիրտը, աշխարհի սիրուն սեր բերող արցախյան պստիկ ու տիեզերաչափ սիրտը, ու վիպասքը զգվում է ներքին հաղորդումից ու շվարանքից: Հեղինակը շվարած վերջաբանում է. «Մեկ էլ տեսանք՝ էդ քարից կրակ բարձրացավ, գնաց ու թևերը բացեց»... Դա շապիկի մեջ թրատված, քարի վրա դրված, Մհերի ծնողներին որպես վերջին մասունք տարվող՝ Մհերի սիրտն էր..., որ պեծին տվեց ու աննյութականացավ, վեր համբարձվեց՝ որպես Քրիստոս ու Քրիստոսի ծաղիկ... Քանզի «Միրտը թռել էր»... թնին տվել բնավեր հավքի նման:

Իսկ Մուհամեդի «անմեղ» գնդակից ճյուղակոտոր հավքի պես արյան ցուլեր մաղելով, թփրտող Մալխասանց Սուրենի աչքին անվերջ երևացող դիվահար պատկերները, որ ընդունայն ու ընդունայն չեն, հուշ ու արթմնի են ու... ստվեր, անմարմին, ցուլ արնաշուրթ... «Էդ գիշեր Ղաշխա խութի հանգստարանից մեռելները մեկ-մեկ վեր կացան քնից՝ ծեր թե ջահել, գյուղում ուրիշ ոչ մեկը չկար, զենք առան...»: Հակոբյանը տիեզերական ժամանակին ու խոհին խոհակիր, դառնում է հարցում ու հայեցող. «Տեսնես ի՞նչ մտքով է ամեն օր Մեծ քարի վրա իջնում երկինքներ կտրած-եկած հսկա աստղը: Ո՞վ կասի: Գուցե այն տղան է՞րը, որ գիշերը աստղերի թևով թռչում են: Մեծ քարը երբեք չի փոխվում՝ երբ էլ նայես՝ ինքը Մեծ քարն է»²³, - փիլիսոփայում է հեղինակ-վիպասացը...

Հեյ վա՛խ, քերծ Գևո, սահման ու անսահմանին, անցյալին մերձ, դու լաց ու

²⁰ Նույն տեղում, էջ 533:

²¹ Նույն տեղում, էջ 535:

²² Նույն տեղում, էջ 539:

²³ Նույն տեղում, էջ 550:

խինդի քավոր, ցավի ու ուրախության ընկնավոր, դու քերծ Գևո, խինդո՜՜ երեխա, ճիշդ՝ ճյուղակոտոր հրահավաք, թնակոտոր ու... դու, ուսերիդ տանկ՝ արցախցու բաժին փրկությունն ուսերիդ, դարձյալ քերծ Գևո՜. իսկ ասացողը, որ ժողովրդի շրթից պոկված ասքերը շրթե-շուրթ, շյուղե-շյուղ հավաքել, մեկիկ-մեկիկ բաժանում է ճամփաներին՝ դեռ ոտք չտեսած, դեռ համբույր չքաղված օրհորդանց շրթանց պես՝ կարոտներից, երազներից պեծկլտին տվող, ո՞վ է վիպողը, Մաթենիկ տատի գիժ թոռը՝ Վարդա՞նն ասացող, թե՞ շուրթերը ժողովրդկանց..., ճամփանե՛ր, ճամփանե՛ր..., ասացումները ընկնավոր ու երկնավոր են, գրադ ու ալազանի փողերից ելած սարսափն արհամարհող, հեզնող. Հեյ վա՛խ, քերծ Գևո. «Քերծ Գևո են կնքել ընկերները: Ուսերին տանկ են դրել՝ պահել է: Առանց չափազանցության: Կանի: Ես գիտեմ նրան, տեսել եմ, հավատում եմ»²⁴, - հաստատում է բանաստեղծը...

Ոչ հեռավոր, Քրիստոսի թվարկության 5-ամյա և ավելի վաղ ժամանակների՞ց չէր, որ ամեն մի գրական երկ, ժանր բանահյուսություն էր կոչվում, մինչև որ սեղմվեցին նրա սահմանները՝ մնալով բանահյուսություն...

Վարդանի գիրքը կարծես իր լինելությամբ հանում է փորձաքարը և վերադառնում իր տոտեմական ժամանակների վսեմական ժամանակները՝ կոչվելով բանահյուսություն. այստեղ ամեն ինչ ցավի, կրակի, արյան, ծննդի, երգի, լացի, կորուստի, ծիլ ու ծաղկի, կապտակապույտ հողի, Էրիկ Ճուտոյի-Սիրունի, աստվածներից արարված Կոմիտաս-Նունեի, Քերծ Գևոյի, չընդհեցի Մուրադ՝ Մյուրատ կոչեցյալ Նեապոլի արքայի և նորից չընդհեցի Վալերիանի՝ Մադաթով կոչեցյալի, 14-ամյա նոր հրաշքների՝ Միտ Սպարապետ-Բալայանի, 16-ամյա Հովիկ Բալայանի (որդիներին), ամեն ոք՝ անշունչ ու շնչավոր հյուսք են, բանահյուսք, բանասացություն, վեպք հնոյն ու նորոյն կամ վիպասացություն՝, գուցե թե՞ թուեյաց երգք... այո՛ Արցախատունը վիպում է, թվարկում, ասացում, իսկ... ասքի հրեղենությո՜ւնը, թթվահամությունը, բուրազեղությունը, արքենի պահվածքը, թուրկեծակիությունը հենց արցախցու ծրությունից են գալիս, արցախցու անկրկնելի-ավանդական փիլիսոփայությունից՝

հա՛յ ընք,
վա՛յ ընք,
ըստծու թա՛յ ընք..., -

ապա թե՛, -

հըյա՛վուր ընք,
սըվա՛վուր ընք,
թըվա՛վուր ընք..., -

գուցե թե հենց նրա լեզվի հրեղենությունից՝ «Մեր կիրը յըրգինքանա կաթալ» փիլիսոփայությամբ, հարկա՛վ, թե հենց Մարգսի տաղանդավոր լաճ Վարդանի բժժանքներով լի իմաստնախառնարանից, ուր քաղցր և հրեղեն բժժոցով վիպասք են հեգում թվակիր ու անթվակիր եղելություն-տաղերը, խաղիկները, քերծում բժժող մեղվապարսն ու ջրապարսը, շի՛թ-շի՛թ գլգլոցով ու... ո՛չ ավարտն է երևում, ո՛չ սկիզբը...

²⁴ Նույն տեղում, էջ 552:

Իսկ քարինտակցիների հերոսամարտերը, հրաշամարտերը, այս արցախցիները՝ ազալլու-մազալլու՝ հրաշակերտողներ. «Քարինտակը պլթալթում էր կրակի ու արյան մեջ: Ձյունասպիտակ հրեշտակները Ղազանչեցոց եկեղեցու և Կանաչ ժամի նախշաքանդակ կամարներից պոկվել, եկել, թևերի շոյանքով Բալասանում էին վերքերը զինվորների, հավաստ ու հույս ցրում մանանայի պես, քարինտակցու ուժն ու կորովը բազմապատկում էին: Շենացիների աչքի առաջ Վազիֆի միջով յոթ գնդակ է անցել, բայց այդպես էլ նա մնացել կանգուն, կռվել է մինչև վերջ: (Նահատակվել է ավելի ուշ, 1994թ., գենքը ձեռքին): Ինչ տղաներ զոհվեցին, ինչ տղաներ... Նրանցից ոչ մեկը չի եղել մինչև այդ Տղմուտ գետի ափին՝ 451 թվին, բայց այդ օրը՝ եղավ... չի եղել Մուսալեռում արծվենի..., բայց այդ օրը եղավ, ու «լաց եղան թրքաց մայրեր»²⁵:

«Մարդարապատում..., հայ քաջորդիներով Քարինտակը առավել Քարինտակ եղավ...» ու հաղթություն եղավ. «պատում են՝ այդ օրից սկսած, ամեն օր լուսաբացից առաջ արծիվները գալիս երամով շենի շուրջ կանգնում են՝ ամեն մեկը մի ժայռի վրա, հսկում Քարինտակի առավտը, իսկ լույսը բացվելուց հետո թռչում են երկինք. «Էն մեր սուրբ նահատակների արթուն ոգիներն են, տղերք»²⁶ ու ե՛րբ է երգին, ազատության ճանապարհին, սիրո ծննդին վախճան եղել, երբե՛ք...

Բանավորացը և ժողովողացը գիրկընդխառն են Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկներում»՝ պատումի վիպականությանը արյուն ներարկող. «Մակիչին օժը շուրջուդեն մաչին ա՝ հինչքան էլ վեր տխուր ինի: Մին էլ տեսեր կռվեն ամենաթեժ վախտը Մկրտիչին ասումա. «զարյադկաս» պրծնումա, մին պեն պատմե: Լիա վեր «դադարը» սկսվումա, Մկրտիչն էլ ընդեղ ա լիզուն խող տամ»²⁷ ու «գյոռբագյոռ» Մելիք Շահնազարի իշութունանան փիլիսոփայում...

Իսկ Հակոբյան գեղագետի փիլիսոփայությունը... որերորդ անգամ բռնում ու «Մեր ասպետ լինելը թուրքի համար հեչ բան է: Մեր ասպետությունը թշնամին թուլության է վերագրում և մեր ետևից գալի՝ ս է, քանի տարի. ճիշտ է ասված՝ մինչև որ չկանգնենք, մի լավ ծեծ չտանք ու շան լափը գլխին չթափենք գալու է... Անապատի գուրգա տեսե՛լ ես, տաք ավազներից ցնդած-հարբած, կտրված գլխի տեղ նորն է բուսնում, մեկի տեղ՝ տասնմեկը: Պիտի մեջքը ջարդել»²⁸, եզրահանգում է բանաստեղծը: Թուրքին քննելով մի այլ տեղում՝ դիտում է. «Թուրքը միայն չհայտարարված կռվում է հաղթում: Նրա գենքը շողոքորթությունն է ու խարդախությունը... Նենգ է: Եվ սա մեր դժբախտությունն է»²⁹:

Շուշիի երանելի ազատագրումը հեղինակը հայ զինվորի «պատվի պատիվը պահելու խնդիրն է» համարում, իսկ դա նախնիներից եկող սուրբ պատգամ է... իսկ Շուշին «Անիի փոքր քույրն է»:

«Իսկ երբ մերոնք ազատագրեցին Շուշին, հրաշք ու զարմանք էր պատել բոլորին. առանց զանգ ու լեզվակի Ղազանչեցոց եկեղեցուց (երկնքից էին գալիս) սկսեցին արևազիլ ղողանջներ հնչել երկար ու ձիգ՝ տարածվել հայոց աշխարհով մեկ»³⁰:

²⁵ Նույն տեղում, էջ 556:

²⁶ Նույն տեղում, էջ 558:

²⁷ Նույն տեղում, էջ 560:

²⁸ Նույն տեղում, էջ 564:

²⁹ Նույն տեղում, էջ 565:

³⁰ Նույն տեղում, էջ 572:

Իսկ Վիշապ Դավոյի պատո՞ւմը, որտե՞ղ է սովորականը, որտե՞ղ՝ անսովորը, որտե՞ղ է երգը, որտե՞ղ սպանողը... ու «Դուլուլվենք քերծը, ինչպես ասում են, յոթ անգամ յոթանասուն քարայր, ծակ ու ծուկ ունի, բայց ամենագլխավորը քերծի ծերից մինչև գետի հատակը գնացողն է՝ ծավվեծալ, օձագալար, նե՛ղ... Դավոն իջել էր այդ անցքով, դիրք բռնել ու... նահանջս որն է, ետ գալս որն է, փրթում է ագերիներին... Դավոն երևի, որ սուտ չլինի, քառասուն-հիսուն ագերու գրողի ծոցն էր ուղարկել... Բայց փամփուշտները պրծել էին: Մի քանի հատ պահել էր նեղ պահի համար... թուրքը շշմել էր... Դավոն ժայռի ներսից երգում էր ու... երգից, բառերից արդեն «արյուն էր ծորում»... թշնամին փորձում էր Դավոյին կենդանի վերցնել, բայց զուր, ու թշնամին հրամայեց. «Ձեռքերդ վեր...»: «Ես իմ պապն եմ, տղաք, պապիս ձեռքերը ոնց բարձրացնեմ թուրքի առաջ... Զե՛, էդի չեղնող բան է»... Վիշապ Դավոն կրծքի շղթայից կախված վերջին գնդակն իրեն բաժին արավ... Երբ վրա հասնող ընկերները «Դավո» ճչացին, ուշ էր արդեն: Դավոն փլվեց քերծն ի վար, դեպի գետի խորխորատները անմատչելի: Այդ պահին թեպետ ժածք չեղավ Գյումրիում, բայց նրանց տանը բոլորը ցնցվեցին Դավոյի մայր Հերիքնազի սուր ծկլթոցից. «Տղուս բան եղավ»³¹:

Հակոբյանի պատումի կարգը մեծ էպիկականությամբ վավերացվում է յուրաքանչյուր նորավեպիկի մեջ, պայթուցիկ ու շանթ է արձակում, հուր, երկնեղեն մանանա, թե...

...Երկինք ու երկիր դորդացին, ժայռի փլված բեկորները իրարու եկան, և Մհերի պես քարայր մտած Դավոյի երգը սկսեց վարարել անկանգ Հաքառուի պես...»: Իրապատումի հետքերը այլևս հետքեր չեն, քանզի վիպասքի բեկոր է այն դառնում, երգվում դարսեցու թոռ Վիշապ Դավոյի պես. ավաղ»: Թեպետ առաջին կովում նահատակվել էր Վիշապ Դավոն, բայց ամեն մարտի էլ շարունակում էր նրա երգը նեղել թուրքին՝ նրան հասցնելով վախի ու խելագարության դուռը:

Պատումի շունչը արծաթագոծվում է, հերոսականանում. «Տղաք, ես ես չեմ, ես իմ Արմենակ պապն եմ, երգեմ՝ լսեք»: Ու հնչում է ժայռից ժայռ, Հայոց աշխարհով՝ Արցախից մինչև Մուշ ու Արդահան, արձագանք է տալիս կրակե երգը՝ երդումի հանգույն. «Հայոց երկնքով անցեք հավքեր իմ սիրուն, Քաջ Հայդուկից բարև տարեք դեպի տուն»³²:

Քերթվածը, քերթությունը հզոր է ժողովուրդ ու ժողովրդականով, որ մետաֆիզիկայի, միֆոլոգիայի, էպիկականության, հզոր հուզականության լիցքերը դեպի որոնման ու գտնման, սահման ու անսահմանի դիտություններն են մեկնում... ու բանատողը ըմբոստ ալիք է դառնում, բռունցքված հեղեղ, իսկ բառաշերտերը լեզվամտածողության, բարբառային ու գրական պատկերավոր դիտություն, սքանչելի կատարումներ...

Իսկ արցախցին պորտը կտրելուց, կապուտակ երկինքը դիտելուց արդեն մինչև ուղն ու ծուծը փիլիսոփա է, քանզի Հակոբյանի հավաստմամբ. «Ասում են՝ սարերը սովորություն ունեն, գիշերները, լուսնալույսով հարբում, շրջագայություն են անում երբեմն: Դա լինում է հազար տարին մեկ: Էդ մեկի օրն էր: Էդ մեկի պահն էր: Ես ու Մեծ սարը հանդիպեցինք: Կռիվ էր: Տարին՝ սև սանդաքար: Բա, ասում են՝ սարը սարին չի՞ հանդիպում»³³:

³¹ Նույն տեղում, էջ 575:

³² Նույն տեղում, էջ 576:

³³ Նույն տեղում, էջ 577:

Այո՛, ասացումը դառնում է գոյ, առասպել-քերթված, հուշ-կարոտ, հարալեզ-ների լեզբին կարոտ մրմռացող վերքեր, ու Վարդանական ասքաթերթոններում զարմանահրաշ բաներ են կատարվում, ո՞վ գիտի, իսկ որ մեկիկ-մեկիկ մեռելներն էլ են ելնում ու կովի նետվում, դա հաստատ է, էն որ սարը սարին կհանդիպի, գիշերներով սրանք էլ վեր կկենան ու կշրջագայեն, իմաստունի սովորություն է, մեկ էլ, երբ հույժ կարևոր ծրագրվելիք կա, վկան՝ մեր Մեծ Տատն ու Պապ, թեևս նրանք էլ... ու վեր կկենան, կշրջեն Արցախական աշխարհով՝ սար ու ձորերին մերձ, ու խնդիրք կհանեն, կոի՞վ է, չէ՞, «տարին՝ սև սանդաքա» հա՛, իհարկե, սարը սարին էլ կհանդիպի, յարը յարին էլ ու... էլի շատ խելառներ, թե պետք է սարերն էլ՝ այրուձի, կելնեն մարտի, թե պետք է Ղարսեցու թոռ Վիշապ Դավոյի երգն էլ, Ցից քարն էլ, Քար աղբյուրն էլ, Ավետիք Բահաթրյանն ու Մուշեղ Աբրահամյանն էլ, Շուշին ու Անին էլ, Քիրսն ու Արցոն և Մաղաթովը, Մուրատը՝ երկուսն էլ Ավետարանոցից, թեկուզ կովում էին մեկը Ֆրանսիա՝ Բոնապարտ, մյուսը՝ Ռուսաստան՝ Նիկոլայ ներկայացնելով, հա՛, կհանդիպեն Քիրսն ու Մոռվ, Սիփան ու Ռեսկան... Հեն՝ վախ, Ավո և Նժդեհ, Տիգրան Մեծ ու Սահակ Բագրատունի, բա՛...

«Ծմակիլի ամեն ծառ զինվոր է դառնում ու կանգնում տողանի: Իմ Սարգիս հոր սարերն են: Ո՞վ է ասել՝ ջան սարեր, ջան արև, ջան Ղարաբաղ»³⁴:

Իհարկե, կհանդիպեն այս լույսի տակ չհանդիպելին ու հանդիպելին, աստղերն ու արև, անձրև ու հող, համբույր ու մահ, կյանք ու բույր... ու կբուրեն դեղձենու, ծիրանենու, լոբենու, վարդեվարդի բույրերով, անթուփ կմնան, բայց՝ զգլխիչ ու անմար կարոտներով նահատակ, ե՞րբ էր...

Վիպասքի մուտքը հնամենի «Երկիր սրբավայրն» է նախանշում. քերթողը՝ իր ներաշխարհին, զգացմունքների հրդեհին, խոհածությունների մետաֆիզիկային, փնտրումների տիեզերահեն ու անտեսանելի անսահմանությանն ու անդնդախոր ծերպերին ունկնդիր, հոգու ու սիրո աչքը հառած ծնունդների գաղտնագրերին, որոնումների մեջ է։ Իսկ աշխարհի տալիք ու առնելիք, մաֆիոզ պահվածքից էլնող գերհագեցված մեխանիզմով սարքերը վերջնական նպատակով արյուն են դրում, փորձում հին քերթողական, դասական ոճ, զարդանախշային պոետիկա (անտիկյան ու ցայլ ժամանակների տեսք), քննողական, աստղագիտական, փիլիսոփայական-խմաստասիրական պատմություն, լինելություն ունեցողներին ոչնչացնել. հարկա՛վ, քերթվածը-բանաստեղծությունը միշտ և ամենուր անկախ պիտի լինի այս ամենից, բանաստեղծությունը պիտի մնա մաքրամաքուր երակ՝ մարդկության փչացող մարմնին փորձելով իր երակների ավիշի միջոցով թունազատել ու կենդանություն բերել, ներարկել մաքրամաքուր սեր։ Բանաստեղծը՝ Հակոբյանը, այս միտումներով է անհանգիստ ու մտքի նծույզը ձգել է նախնականության երիզներ, եզերքներ՝ փնտրելու դեռևս անաղարտություն՝ ասրափայլ հանդերձներով սերն ու այդ սիրուց խողված տիեզերական հղումեր բերելու ու թարմացնելու անմաքուր ժամանակները։ Ավա՛դ, հանդիպումը մնում է անգո, ժամանակատեսը՝ միֆ, աներևակայելի ու անհագնացող ցավը՝ անհույս, որը հուսաշող է դառնում վրձնելու լինելության կերպում հայտնված միակ վկաներին, որ գուցե ժամանակից ու տարածությունից դուրս են, բայց այդ

³⁴ Նույն տեղում, էջ 581:

անվերջանալի, աստված ու չաստվածներից նետահար բանաստեղծը բանաստեղծ է, ստեղծող, ինչպես՝ աստված ու... ինքն էլ անհնազանդ է, հետամուտ անչափ թանկագին խորհրդի:

- Նավակներս-աչքերդ, գույգ-կտրում-անցնում են անձրևների ու ժամանակների ծովերն ամեն, հեղեղները և կանգնում ինչ-որ ակնթարթներում՝ ժամանակից դուրս, ամենաերանելի...

Ինչ որ մեկը աղմկելով խառնվում է Աստծո գործերին... Հավիտենություն, աստվածներ, չաստվածներ, ժամանակ, տարածություն, աներևակայելի խորշեր, սեր ու երազանք, երազանք, կորուսյալ պատրանք, խորհուրդ ու վերագտնելու ահ ու սպանդ..., որ կա ու չկա, քանզի, միննույն է, աշխետ ձիու քաշը, որ Վարդանն է հիշեցնում, սովոր է տրվել սլացքին, բուրմունքին ու որոնել, որոնել, չափել անչափելիությունները, երազներին հաղորդ դառնալ ու կորսված այդ ճանապարհներին՝ յուր երազների ձուլները բույլ-բույլ բաժան-բաժան անելով հղել ժամանակներին կարծրացած...

«Հաղորդություն»-ը, որ «Երգ երգոց»-ից է բնաբանված, հաղորդվողին ևս մղում է երկփեղկ դռան երկփեղկվաբաց սարսուռների, ահա հոգիները սրբասուրբ շշուկներով դառնում են աշխարհիկ ցավ, աշխարհիկ լույս, որ ելումուտ է դեգերում անհասցե, անկանգ, ու քերթողը ինքը՝ սպասված, չճաշակած համբույրին ավելի խոհակիր, բանի խորհրդով անվերջ մանանա է առաքում կապտակապույտ երկնքին, սարերին, հանդերին, աստծուն, աշխարհին, որոնք ավելի սիրառատ են դառնում, խենթ ու խելառ, պսակի ծաղիկ, երբ նա՝ բանաստեղծը, շնչում է սիրածի անունը...

աշխարհը իմ աշխարհն է դառնում,

իսկ դու ասում ես՝ անունս մի տուր³⁵,

քանզի սրտի սիրելին գերադասում է սիրո խայտանքում չլսել առանց այն էլ այդ բացօթյա դասից խելակորույս, ամբոսաբույր շնչոցները, որ բազմանում, հա՛բազմանում են...

ЗИНАИДА БАЛАЯН

ФИЛОСОФСКИЕ ПРОЧТЕНИЯ МИФОВ И УТВЕРЖДЕНИЙ

РЕЗЮМЕ

Арцахская национально-освободительная борьба, последняя, беспрецедентная, героическая страница политической судьбы Армении, полна неопишемых драматических эпизодов мужества и высокого военного таланта, которые послужили темой замечательных произведений искусства, художественной литературы в ее тематических различиях, характеризующих национальный идеологический строй: повесть, мемуары, рассказ, повесть, исторический роман, цикл драматических

³⁵ Նույն տեղում, էջ 583:

произведений, и были созданы литературными деятелями, участвовавшими в той борьбе, пережившими борьбу - солдаты пера...

Роман "Цветы Христа" - одна из жемчужин этой серии, с неповторимым всплеском мысли и души, импровизационными складками, экстравагантным проявлением таланта, автором которого является один из уникальных представителей современной армянской литературы, Вардан Акопян, мастер поэтических приемов, стоящий на пути Арцахского движения, борьбы за существование.

Суждения о культуре языкового мышления "Цветов Христа" приводят к интересным выводам.

Социально-эстетические представления Акопяна с его объективными и субъективными оценками и наблюдениями часто занимают единое пространство выражения. Система эстетики поэта выражает свои уникальные категории через прекрасное, благородное, трагическое и комическое. Удивительно как этот поток категорий эстетики в литературе вплетается в единое целое.

Система эстетических категорий с ее смешанными проявлениями предшествует жанровому многообразию романа, а последнее есть следствие авторского миропонимания, обращения к различным вопросам общественной жизни: философствования о национальных традициях, обрядах, верованиях, характерах, поведения и нравов, оценки сохранения ценностей, классовых тенденций, разделений, понимания концепции человеческих классов по отношению к искусству, литературе, кроме того, собственного отношения поэта, открывающего окно в человеческую мораль, политические и исторические явления.

Ключевые слова: Ницше, Монте, Кирс, безумцы Зары, повесть, мемуар, цветник Христа, Сардарapat, гайдук, Мров, Гево, аралез (древнеармянское языческое божество в образе собаки, воскрешающее храбрых воинов).

ZINAIDA BALAYAN

PHILOSOPHICAL READINGS OF MYTHS AND STATEMENTS

SUMMARY

The Artsakh national liberation struggle, the last, unprecedented, heroic page of the political fate of Armenia, is full of indescribable dramatic episodes of courage and high military talent, which served as the subject of wonderful works of art, fiction in its thematic differences that characterize the national ideological system: a story, memoirs, a historical novel, a cycle of dramatic works, and were created by literary figures who participated in that struggle, survived the struggle - soldiers of the pen ...

The novel «Flowers of Christ» is one of the pearls of this series, with a unique sparkle of thought and soul, improvisational folds, an extravagant manifestation of talent, the author

of which is one of the unique representatives of modern Armenian literature, Vardan Hakobyan, a master of poetic techniques, standing in the way of the Artsakh movement, struggle for existence.

Judgments about the culture of linguistic thinking in «Flowers of Christ» lead to interesting conclusions.

Hakobyan's social and aesthetic ideas with his objective and subjective assessments and observations often occupy a single space of expression. The poet's system of aesthetics expresses its unique categories through the beautiful, the noble, the tragic and the comic. It is amazing how this stream of categories of aesthetics in literature is woven into a single whole.

The system of aesthetic categories with its mixed manifestations precedes the genre diversity of the novel, and the latter is a consequence of the author's worldview, addressing various issues of social life: philosophizing about national traditions, rituals, beliefs, characters, behavior and mores, assessing the preservation of values, class trends, divisions, understanding the concept of human classes in relation to art, literature, in addition, the poet's own attitude, which opens a window into human morality, political and historical phenomena.

Key words: Nietzsche, Monte, Kirs, madmen of Zara, story, memoir, Christ's flower garden, Sardarapat, haiduk, Mrov, Gevo, Aralez (Ancient Armenian pagan deity in the form of a dog, resurrecting brave warriors).

**ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Գրաբարի դասական և հետդասական շրջանների երկերում ցայտուն և տեսանելի կիրառությամբ հանդիպող **արդ, զի՛արդ, աղաչեմ, ձեզէն, մեզէն, քեզէն, բառնամ, դստովեմ, միւսանգամ, մեղա՛յ** բառերով ու բառաձևերով, **մի՛, ո՛չ** ժխտական բառ-մասնիկներով կազմված, ինչպես նաև նախդրավոր ու քերականական բնույթի բազմաթիվ կառույցներ հաջողությամբ հանդիպում են **Գրիգոր Նարեկացու «Մատենադերձերգութեան»** երկում: Միայն նշված շրջանակներում գործածվող թեք՝ սեռական, տրական, հայցական հոլովներով ենթակայով կառույցներ չեն հանդիպում Մատյանում:

Բանալի բառեր՝ Աստված, Հիսուս Քրիստոս, աստվածաբանություն, Ողբերգության Մատյան, բառական, քերականական կառույցներ, ցայտուն ոճական կիրառություն, նախդրավոր, ժխտական բառ-մասնիկ, թեք հոլով, արձակ, չափածո ստեղծագործություն, մեղայ:

Մեր քննարկման կիզակետում Գրիգոր Նարեկացու **Ողբերգության Մատյանն է**, որն անվանում են նաև **Աղոթամատյան՝** բաղկացած շուրջ քսան աղոթաբաժիններից: Մատյանը գրված է 10-րդ դարի գրաբարով և առանձնանում է ոճական բազմազանություններով: 5-րդ դարի գրաբարի շարահյուսության որոշ հատկանիշներ, կառույցներ այստեղ տեղի են տալիս, օրինակ՝ թեք հոլովներով՝ սեռական, տրական, հայցական, արտահայտված ենթականեր չեն հանդիպում, նախադասության կառուցվածքային առանձնահատկությունների տարբերություններ են արձանագրվում, գեղարվեստական պատկերավորման միջոցների արտահայտության տարբերություններ են նկատելի: Մատյանը աներևակայելի հարուստ բառապաշար ունի, հեղեղված է բառակապակցական անթիվ և անհաշիվ, յուրատեսակ դրսևորումներով, բառապաշարի այդպիսի ճոխությունն ու հարստությունը ապահովում է հեղինակի բառակերտման արվեստը. սրտի խորքից են ճառագում ու փայլատակում հարյուրավոր թե հազարավոր ինքնաստեղծ բառական միավորները, որոնք, կարծես, հանպատրաստից տեղ են գրավում խոսքի մեջ:

Մի կես էջում, օրինակ՝ **ոչ** ժխտականով 10 նախադասություն է գործածում, դրանցից մեկը ներկայացնենք.

«Ո՛չ ի **համբաւէլն** զքեզ կորուսեալ, և իբր գերկրաւոր մարմին գողացեալ, համայնաջինջ և ամենասպառ զսերմն ծննդոցն կրճատեցեր, անկորուստ և անվնասելի ընդ փրկեցելոցն հաղորդեցես»¹:

¹ Մբ. Գրիգոր Նարեկացի, Նարեկ-Աղոթամատեան, Ե., «ՎՄՎ-Պրինտ» հր., 2013 (այսուհետև՝ Նարեկ-Աղոթամատեան), էջ 236:

«Ո՛չ էլ երբ քեզ համբավում էին կորուսյալ և իբր երկրավոր գողացյալ մարմին, նրանց սերունդներին ի սպառ համայնաջինջ արեցիր, որպեսզի ինձ՝ բարյաց ընտրությանը հիշատակելու անարժանիս, անկորուստ և անվնասելի փրկյալներին բախտակից անես»²:

Նարեկացին Մատյանն ավարտում է հիշատակարանով՝ «Յիշատակարան Մատենիս դրութեան» («Մատյանի հիմնադրության հիշատակարան»), որտեղ հիացմունքով է խոսում Հոռոմաց հաղթական ու մեծ կայսր Վասիլի մասին, ով երկրներ է գրավել, հասել նաև հայոց աշխարհի հյուսիս-արևելյան կողմերը՝ երեք տարի հաստատելով խաղաղություն ու շենացնելով երկիրը:

«Արդ, այն անդորրության ժամանակամիջոցին, երբ եկեղեցու թշնամիները տապալված են վերջապես, հորինեցի, հիմնեցի, կառուցեցի, կուտեցի, արձանացրի, դիզեցի, բարդեցի, կանգնեցրի, պատրաստեցի **այս շահեկան գիրքը**, ուր իբրև միակ հրաշակերտի մեջ՝ հավաքեցի բազմաստեղյան դրվագներ. ես՝ Գրիգոր կրոնավոր քահանաս, հետինս բանահյուսներից և կրտսերս վարժապետաց, գործակցությամբ Նարեկի մեծափառ և բարձրապատիվ ուխտի վանական Հովհաննես ընտրյալ եղբորս, որի հետ՝ իբրև երկու անձը մեկ դեմքով և կերպարանքով կենցաղավարեցինք՝ լինելով ոչ միայն ըստ մարմնի հարազատներ, այլ նաև ըստ ամենայնի միաշունչ, միակրոն, համապատիվ և սրտակցորդ՝ **չորս աչքս ուղիղ միևնույն խորհրդին հառած**. ընդգծ.՝ **Էդ. Մկրտչյանի**» (Նարեկ, 2013, էջ 611)³:

Այս խոսքերից նկատելի է, թե հրաշք Մատյանն ի՛նչ եղանակով և ո՛ւմ տքնաջանությամբ է աշխարհ եկել:

Տարակուսանք չկա, որ Մատյանը կանոնավոր գրաբարով է ծնունդ առել, ուղղագրական բնույթի տարբերություններ ու շեղումներ չկան, հոլովման և խոնարհման համակարգերը ստույգ են ներկայացված, նախդիրների գործածությունը դրական և ընդունելի պատկեր ունի, բառապաշարի խնդրում ակնհայտ տարբերություններ են արձանագրվում, որոնք, անշուշտ, առնչվում են գրաբարի սկզբնական շերտի բառերի գործածության ակտիվացման կամ սահմանափակման օբյեկտիվ խնդիրների և լիաշունչ բառաստեղծումների հետ, նախադասության կառուցվածքի և շարահյուսական որոշ կառույցների գործածության հարցում ակնհայտ տարբերություններ են նկատվում, որոնք, մեր կարծիքով, խոսքի ինքնատիպ և տարատեսակ ոճերի ու ոճավորման սկզբունքների, ինչպես նաև բնութագրվող թեմաների պահանջները բավարարելու արքասիք են. որքա՞ն տարբերություն կա, օրինակ, պատերազմական ահավոր բախումները ներկայացնելու կամ նկարագրելու և Աստծո հետ ինտիմ կամ ընդհանուր բնույթի թեմաներով երկխոսություն բացելու, ինչ-որ արդյունքի հասնելու միջև:

Անցնենք բուն քննարկումներին:

Գրաբարում բազմաթիվ բառեր ու բառաձևեր կան, որոնց գործածությունը

² Նույն տեղում, էջ 237:

³ Նույն տեղում, էջ 611:

կարող է հաճախական լինել կամ սովորական, չափավոր, սակայն՝ ցայտուն և տեսա-
նելի, ուշադրություն գրավող:

Այդպիսի բառեր, բառաձևեր են՝ արդ, **զիա՞րդ**, **աղաչեմ**, **մեզեն**, **ձեզեն**, **քեզեն**, **բառնամ**, **դարովեմ**, **միւսանգամ**, նախադրավար ձևեր՝ **զքեն** (զ+բացառ.), **զնմանե** (զ+բացառ.), **զքն** (զ+ գործ.), **յիս** (ի+հայց.), **զիս** (զ+հայց.) և այլն:

Արդ, որ նշանակում է **այժմ**, **ահա**, շատ գործածական բառ է, հարյուրավոր գործածություն է հանդիպում «Նարեկ»-ում, մեկը՝ «**Արդ**, մատո՛ւ, խնամակալ, հօր Երկնաւոր, բարի, ամենից հաստիչ յոչէից»⁴՝ **Արդ**, մոտեցրո՛ւ, խնամակալ, հօր, երկնավոր, բարի, ամենայնի արարիչ ոչնչից:

Զիա՞րդ «ինչպե՞ս». էջ 362-ում կիրառված է երեք անգամ, 512-ում՝ երկու անգամ, 574-ում՝ մեկ անգամ. «Եւ **զիա՞րդ** զնախնին վեհից մոռացայ, զծառայն մեծիդ»՝ Բայց ինչպե՞ս մոռացա վեհերի նախնուն՝ ծառային մեծիդ: Էջ 368-369-ում՝ տասնմեկ կիրառություն:

Աղաչեմ՝ «աղերսագին խնդրել, աղոթել». Հիշենք Եղիշեից՝ Վարդանի ճառը. «**Արդ աղաչեմ** զքեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ...»⁵

Խնդրում եմ ձեզ, ո՛վ իմ քա՛ջ զինակիցներ:

Նարեկացին անպակաս չի մնում, նույնպես գործածում է, օրինակ՝ «**Աղաչեմ զքեզ**», միայն խնամակալ, մարդասեր, գթած, կեցուցիչ, հօր, այցելու, պաշտպան» (Աստծուն է դիմում., էջ 480) կամ՝ «**Ահա աղաչեմ** զքեզ, բարեգո՛ւր, ամենայն սրբովք պաղատիմ...»⁶

Մեք մեզեն, դուք ձեզեն, ես ինձեն, դու քեզեն կառույցները ձևավորվում են անձնական դերանվան 1-ին և 2-րդ դեմքերի ուղղական և բացառական հոլովաձևերի միացությունից, ըստ որում՝ բացառականն ավելանալով ուղղականին՝ սաստական իմաստ է արտահայտում. **մեք մեզեն** = «Մենք ինքներս, հենց մենք», և պատահում է, որ ուղղականն ընկնում-զեղչվում է, մնում է բացառականը, որը փաստորեն ենթակայի դեր է կատարում՝ **մեզեն, ձեզեն, քեզեն, ինձեն** ձևերով:

Գրաբարում սրանք գործածական են, օրինակ՝ «Դուք ողջ լերո՛ւք, և **մեք մեզեն** ողջ ենք դիցն օգնականությամբ»⁷՝ Դուք ողջ եղեք, և մենք ինքներս ողջ ենք աստվածների օգնությամբ: Օրինակը Եղիշեից է, այլ հեղինակների մոտ նույնպես հանդիպում են նշված կառույցները՝ ինչպես միասին ուղղականն ու բացառականը, այդպես էլ միայն բացառականը: Փորձեր են եղել բացառական հոլովով ենթակա համարել, սխալ էր, չընդունվեց:

Բարեբախտությամբ Նարեկացին ենթակայի դերով **դու** դերանվան առանձնակի բացառականի՝ **քեզեն** (կարող էր լինել նաև **դու քեզեն**) երկրորդական ձևը գործածել է նախադասության մեջ, և դա այն դեպքում, որ **դու**-ի կանոնավոր եզակի բացառականը «**ի քեն**» է, որը ենթակայական իմաստից գուրկ է:

⁴ Նույն տեղում, էջ 130:

⁵ Եղիշե, Ե., 1937, էջ 532:

⁶ Նարեկ-Աղոթամատեն, էջ 532:

⁷ Եղիշե, Գրաբ. Ձեռ., 1976, էջ 343:

Օրինակ՝ «... արա՛, Տե՛ր, վախճան դադարման առնուլ ընդ այսց բանից մաղթանաց ինքնանախատս կշտամբութեան՝ և որ յիս կրին չար սովորութիւնք, որ **քեզէն** կարգեցեր սահման աւետեաց ակնկալութեան դատապարտելոյս»⁸ Տե՛ր, արա այնպէս, որ մաղթանքի այս ինքնանախատ կշտամբութեան խոսքերիս հետ դադարեն և իրենց վախճանը գտնեն մեջս կրող սովորությունները չար, չէ՞ որ **դու** ես դատապարտյալիս համար սահմանակարգել հույսի ավետիս:

Բառնամ – բազմիմաստ բայ է՝ «1. վերցնել, տանել, 2. շալակել, 3. վեր բարձրացնել, 4. մեջտեղից վերացնել, 5. բռնել, 6. կշռել, 7. կարողանալ տանել. չեզոք նշանակությամբ՝ վերանալ»: Անցյալ կատարյալի հիմքում վերականգնվում է **ձ** բաղաձայնը՝ ունենալով **բարձ** ձևը:

Այս բառը արտահայտիչ կիրառություններ է ունենում հատկապէս **վերցնելու** և **վերացնելու** իմաստներով: Օրինակ՝ «**Բառնամ** զմեղս քո»՝ կրում-վերցնում եմ քո մեղքերը: **Բարձ**՝ վերացնելու իմաստով հանդիպում է Եղիշէի մոտ. պարսից մոզերը Հազկէրտին խորհուրդ են տալիս «մեջտեղից վերացնել հայոց աղանդը»՝ կրոնը.

«Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց, և որպէս երևիս մեզ ի դէնիս մերում, տիրես դու երկրին Քուշանաց, Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ քո իշխանութիւնդ: Բայց միայն զաղանդ քրիստոնէից **բարձ** ի միջոյ»⁹ ... Բայց միայն քրիստոնյաների աղանդը՝ կրոնը, մեջտեղից **վերացրու**:

Նաբեկացին **բառնալ** բայի՝ **վերցնելու** և **վերացնելու** իմաստներով կիրառություններ ունի.

Օրինակ՝ «**Բա՛րձ** զմեղս իմ, հզօ՛ր, լոյծ զանէծս իմ, օրհնեա՛լ, քաւեա՛ զպարտիս իմ, ողորմա՛ծ, ջնջեա՛ զյանցանս իմ...»¹⁰ Վերցրո՛ւ մեղքերն իմ, հզօ՛ր, լուծի՛ր անէծքն իմ, օրհնյա՛լ, քալի՛ր պարտքերն իմ, ողորմա՛ծ, ջնջի՛ր հանցանքներն իմ:

Վերացնելու, ջնջելու իմաստով.

«... բժշկեա՛, ամենակարո՛ղ, զներքինս և արտաքինս, զտիպքն և զգիծքն և զխարանս հարուածոցն, **բարձեալ** և մաքրեալ դեղովք»¹¹՝ ... **վերացնելով, ջնջելով** և մաքրելով դեղերով:

Միսսանգամ կամ **միւս անգամ** (մ. ա. 1. դարձյալ, նորից, կրկին, վերստին, երկրորդ անգամ, 2. երկրորդ) բառը խոսակցական լեզվի երանգ ունի, և պատմիչներն օգտագործում են, իսկ թարգմանիչներն ընտրում են նշված բառերից մեկնումեկը:

Օրինակ՝ «Եւ որք մնացեալքն էին՝ վատնեալք և ցրուեալք լինէին ի լեռնադաշտս ամուր ձորոցն, և յորժամ պատահէին միմեանց՝ դարձեալ **միսսանգամ** զմիմեանս սատակէին»¹²: Թարգմանիչ **Երվանդ Տեր-Մինասյանը** **միսսանգամ** բառն այլ բառով չի թարգմանել, քանի որ մոտը նրա իմաստն արտահայտող բառ կա՝ **դարձեալ**, ու գրել է... և երբ պատահում էին միմյանց, **դարձյալ** սպանում էին մեկմեկու:

⁸ Նաբեկ- Աղոթամատեան, էջ 530:

⁹ Գրաբարյան Ձեռ., էջ 343:

¹⁰ Նաբեկ-Աղոթամատեան, էջ 506:

¹¹ Նույն տեղում, էջ 532:

¹² Եղիշէ, 1989, էջ 238:

Խորենացու մոտ՝ «Իսկ ի գրգռել **միսսանգամ** զօրայն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ...»¹³: **Ստ. Մալխասյանը** թարգմանում է **նորից** բառով՝ «Երբ Հայոց զորքը պատրաստվում էր **նորից** պատերազմելու Շամիրամ տիկնոջ հետ...»:

Խորենացին մեկ այլ տեղ ևս գործածում է այդ բառը. (Տիտանյան Բելի մասին է). «... քանզի խորհեր ի միջոցի ամբոխին ամրանալ, մինչև հասցե բովանդակ զօրն, զի **միսսանգամ** ճակատ յօրինեսցէ»¹⁴: Նույն **Ստ. Մալխասյանն** այստեղ **միսսանգամ** բառը թարգմանում է «**երկրորդ անգամ**»-ով. «... որպեսզի **երկրորդ** անգամ ճակատամարտ սարքի»:

Նարեկացին միսսանգամ բառը նույնպես օգտագործել է:

Օրինակ՝ 1. «... ի բաց հերքեցայ՝ ելեալ ի դրախտէն, արդ, միաւորականաւս այսու ուղիղ անբծութեամբ ի յաւանդ իսկապէս շնորհի անդրէին **միսսանգամ** համբարձեալ սովիմբ՝ ի թոխս լուսոյ ահա յերկինս ժամանեցից հետնեալ»¹⁵: «... հեռու քաշվեցի՝ արտաքսվելով դրախտից, արդ, միավորական ուղիղ և անբիծ այս դավանանքով, որ ավանդն է իսկական շնորհիդ, համբառնալով սրանով, լուսաթն թոխքով **վերստին** երկինք պիտի ժամանեմ»:

2. «Այլ արագեա՛, ամենապարզև զօրութիւն անճա՛ռ, ձեռն փրկութեան ի կորուստ գերելոյս, զի օգնեալ ի քէն՝ դարձայց միսսանգամ ի դրաց դժոխոց»¹⁶: «Բայց դու շտապի՛ր, ամենապարզև զօրութիւն անճա՛ռ, փրկութեան ձեռք մեկնել ի կորուստ գերյալիս, որպեսզի քեզնից օգտվելով՝ **կրկին** ետ դառնամ դժոխքի դռներից»:

Նկատելի է, որ Նարեկացու «**միսսանգամ**»-ը թարգմանվել է **վերստին** և **կրկին** բառերով:

Դսրովեմ «պարսավել, նախատել, քամահրել, պախարակել, հանդիմանել» գրաբարում ոչ հաճախական կիրառությամբ բառը հանդիպում է նաև **Նարեկացու Մատյանում**:

Օրինակ՝ «... աստէն անգոսնեալ եմ և անդէն խայտառակեալ, աստ **դսրովեալ** և անդ կշտամբեալ, աստ ձաղեալ և անդ նախատեալ, աստ թշնամանեալ և անդ յանդիմանեալ...»¹⁷: «... այստեղ արհամարհվեցի, այնտեղ՝ անարգանք, այստեղ՝ **պարսավանք**, այնտեղ՝ կշտամբանք, այստեղ՝ ծաղրանք և այնտեղ՝ նախատինք, այստեղ՝ թշնամանք, այնտեղ՝ հանդիմանություն...»:

. **Ինքնատիպ ոճական արժեքի դրսևորումներն են՝** ժխտական բառ-մասնիկներով, լրացում-լրացյալ (որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, անցյալ և անորոշ դերբայներով՝ բայական, նախադասության գլխավոր անդամների գեղջմամբ՝ անվանական կառույցները:

. **Մի՛, ոչ** ժխտական բառ-մասնիկներով կառույցներով (ներառյալ նախադասությունը) հեղեղված է Մատյանը: Հարկադրված ենք գրքի էջերն ու

¹³ Խորենացի, 1981, էջ 60:

¹⁴ Խորենացի, 1981, էջ 44:

¹⁵ Նարեկ-Աղոթամատեան, էջ 452:

¹⁶ Նույն տեղում, էջ 492:

¹⁷ Նույն տեղում, էջ 408:

կառույցների քանակը նշելու՝ բավարարվելով մեկական օրինակով:

Մի՝-ով օրինակներ՝

Էջ 482-483-ում՝ 25 տող, 30 կիրառություն, օրինակ՝ «Հզօ՛ր, կրկին ողորմի՛ր. **մի՛** փոխարկիր չարիքս ցափ երկունքով, համակ Բարություն **ն**ն. վտանգեալիցս **մի՛** վերցրու շնորհը քեզնից պարզնուած...»:

Էջ 508-ում՝ 11 տող, 14 կիրառ., օրինակ՝ «... **մի՛** մատուցաներ բաժակ դառնութեան ի ժամ ծարաւու...»:

Էջ 532-ում՝ 12 տող, 22 կիրառ., օրինակ՝

«... **մի՛** թողցես զտկարութիւնս, **մի՛** անարգեր զալիսն, **մի՛** կորուցուցես զկործանեալն»:

Ո՛չ-ով օրինակներ՝

Էջ 234-236-ում՝ կես էջ, 9 կիրառ., օրինակ՝

«Ո՛չ գօսանալ ձեռաց կոփողացն հրամայեցեր օրհնեալ զազաթանդ, որ թզենայն տունկ առժամայն չորացուցեր...»:

Էջ 374-ում՝ 8 տող, 9 կիրառ., օրինակ՝

«Այլ արդ, ընդէ՛ր ոչ ի վերագրեցեալն սաղմոս նախաճառական և այլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից...»:

Էջ 412-ում՝ 12 տող, 9 կիրառ., օրինակ՝

«... **ոչ** վաստակեցի ի հունձն արմտեացն, որով ի մուտս ձեանն աւուրցն խոռվութեան կերակրել պատրաստեցայց. **ոչ** կառուցի ամրութիւն որմոց...»:

Էջ 506-ում՝ 14 տող, 30 կիրառութ., օրինակ՝

«Ոչ ես դատապարտիչ՝ այլ ազատիչ, **ոչ** ես կորուսիչ՝ այլ գտիչ, **ոչ** ես մահացուցիչ՝ այլ կեցուցիչ, **ոչ** ես տարագրիչ՝ այլ ժողովիչ, ոչ ես մատնիչ՝ այլ ապրեցուցիչ, ոչ ես ընկղմիչ՝ այլ վերածիչ, **ոչ** ես զլորիչ՝ այլ կանգնիչ...» (Այսպես՝ մինչև վերջ-Աստուծո փառաբանություն):

Նախադասության անդամների գեղջմամբ անստորոգում լրացական կապակցություններ են կուտակվում, որոնց մեջ նկատելի է անցյալ դերբայի հաճախական գործածությունը պակաս չէ նաև անվանական կառույցների կիրառությունը:

Օրինակ՝ «... մի անդարման **լիցի տազնապեալն**, մի՛ առանց տաճելոյ՝ յարկն **խարխարեալ**, մի՛ անպատիւ՝ պատկերն **հնացեալ**, մի՛ պարարտութիւնն **անհամեալ**, մի՛ շուք շնորհին **անարգեալ**, մի՛ հնութիւնն **քամահեալ**, մի՛ նաւ հոգւոյս **ալեկոծեալ**, մի՛ երկարութիւն յուսոյն **կարեցեալ**, մի՛ լար շաւիղին **խզեալ**, մի՛ ամբարձմանն **թեք փստեալ**, մի՛ զուարթութիւն գեղոյն **տգեղեալ**, մի՛ պատուհանք աչաց **փակեալ**, մի՛ պատկերն խօսուն **անկեալ**»¹⁸:

Անվանական կառույցներ, բառեր.

«Աստուած և Տէր, կեանք և արարիչ, ողորմած, գթած, լոյս երկայնամիտ, անոխակալ, մարդասէր ամենագութ, պարզաստու, փրկիչ, օրհնեալ, զովեալ, փառաբանեալ, դարան ամրութեան, պատսպարան վստահութեան, առանց

¹⁸ Նույն տեղում, էջ 532:

ներգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վիրաց, անհասանելեաց հնարք, անմատչելեաց հպաւոր, անյուսութեան ելք, անուն քո խոստովանեալ Աստուծոյ Որդի, և Հօր քո՝ ընդ քեզ հօրի և ահաւորի, և Հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելոյ՝

Փա՛ռք և պաշտօն գոհաբանութեանս. Ամէն»¹⁹:

Որոշիչ-որոշյալ.

«Տէ՛ր, ինձ պատժապարտիս համբարձեալ միշտ անդուլ դատիչ, անաչառ կշտամբիչ, անպատկառ յանդիմանիչ, անանխայելի **դարովիչ**, անողորբելի պարսաւիչ, անհամբոյր ծանակիչ, անմարդասիրելի մատնիչ, անփրկելի տանջիչ, անկաշառ կափարիչ, անխնայելի յայտնիչ, ապառու՛մ հրապարակիչ, աշխարհաւոր բողոքիչ»²⁰:

Որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ.

«Բարեբանեալ Աստուա՛ծ երկնաւոր, միայն արարիչ, Տէր ամենակալ, մեծութիւն ահեղ, գթութիւն օրհնաբանելի, ողորմութիւն խոստովանելի, բարերարութիւն երկրպագելի, խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն տօնելի, պահպանութիւն խնկելի, բարձրեալ անքնին, մերձաւոր կամարար, ապաւնն անկասկածելի, մխիթար սրտից, փարատիչ վշտաց, ապաքինիչ ցաւոց, սպառումն վիատութեանց, բարձումն պարտեաց, փոխարկիչ կարեաց, կարգաւորիչ կրից, հարմարիչ բանից, սանձարկու լեզուի, շրջադրութիւն շնչոյ, կացուցիչ հագագի, ամփոփիչ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցիչ յուզմանց, հանդարտութիւն մրրկաց, խաղաղութիւն ծփանաց, որ ունիս զթնոց ամենընթաց իշխանականիս, և իմաստութեամբ նուաճեալ՝ առ քեզ դարձուցանես»²¹:

Թէ և եթէ շաղկապների խառն գործածություններ կան:

Դասական շրջանի հեղինակների մոտ հանդիպում է **թէ**-ի փոխարեն **եթէ**-ի գործածություն. այդպիսին հանդիպում է նաև Նարեկացու Մատյանում:

Օրինակ՝ «Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ՝ կարօտեալ քումդ շնորհաց, **եթէ**՝ երկնայինք և **եթէ**՝ երկրաւորք, **եթէ**՝ անկաճն մեղօք և **եթէ**՝ ամբարձալն արդարութեամբ, **եթէ**՝ տէր և **եթէ**՝ ծառայ, **եթէ**՝ տիկին և **եթէ**՝ աղախին. և ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն»²²:

Էջ 472-ում՝ 18 տող, 20 **եթէ**, բայց 8 էլ **թէ**՝ **եթէ**-ի իմաստով:

Մեկական օրինակ՝ « 1. **Եթէ** քաւեցես՝ կարող ես, **եթէ** բժշկես՝ զօրաւոր ես. 2. ... **թէ** զօգտակարն իմ ծանուցանես՝ բարի ես, **թէ** զբիծսն անտես առնիցես՝ երկայնամիտ ես, **թէ** ընդ փոքրուս ի դատ ոչ մտանից ես՝ բարձրեալ ես, **թէ** ծառայիս ձեռն մատուցես՝ ստացող ես»:

Էջ 496-ում՝ 14 տող, 1 **եթէ**, 20 **թէ**.

Օրինակ՝ «Բարձրացի պատիւ քո ինն և ցուցցի փրկութիւն իմ քն. **եթէ** զիս գտցես՝ տիրամա՛յր, **թէ** ինձ ողորմեցիս՝ սրբուհի՛, **թէ**՝ զկորուսեալս շահեցիս՝ անարա՛տ, **թէ** զարթուցեալս յանձանձեցես՝ երջանի՛կ»:

¹⁹ Նույն տեղում, էջ 538:

²⁰ Նույն տեղում, էջ 536:

²¹ Նույն տեղում, էջ 540:

²² Նույն տեղում, էջ 508:

Մատյանը հարուստ է լեզվառճական արտահայտություններով, ընդմիջարկություններով: Վկայենք մեկ օրինակ, որում և՛ **ընդմիջարկություն** կա, և՛ **վերացականը թանձրացականի փոխարեն** ոճական արտահայտություն. «Մի՛ խզեր զկապ միութեան զընդ քեզ սիրոյն պնդութեան»²³ Մի՛ խզիր քեզ հետ միության սիրո կապն ամրապինդ. «զկապ սիրոյն» (= սիրո կապը) հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը ընդմիջարկված է «**միութեան զընդ քեզ**» միավորներով, իսկ «**զկապ պնդութեան**» (= պինդ՝ ամուր կապ) որոշիչ-որոշյալ կառույցում **պնդութեան**-ը **պինդ** ածականն է՝ **-ութիւն** ածանցով. վերացականը (գոյականը) թանձրացականի փոխարեն է (ածականի փոխարեն է), և ածականը պիտի վերականգնել՝ «պնդութիւն» պինդ:

Դասական շրջանում **-իլ** վերջավորությամբ անորոշ դերբայի աննշան կիրառություններ կան. **Նարեկացու մոտ** հանդիպում են. էջ 600-ում՝ նույն հատվածում, զուգահեռաբար հանդիպում են **-ել, -իլ, -ալ** վերջավորություններով. «... ո՛չ **ռդդիլ** ջուրբ, ո՛չ **այրիլ** հուրբ, ո՛չ **ցրտանալ** ի սառնութենէ, ո՛չ վնասակար հողմով **շիջանիլ**, ոչ **աղտեղիլ** յուրուական ինչ պղծութենէ, ո՛չ զպահեալսն չարին **մատնել**, և ո՛չ ի ստորն ելիցն զմթերս... արտաքս հանել, ո՛չ անպատասպար մնալ, ո՛չ ի բաց մերկանալ»:

Նարեկացու Մատյանում գրաբարի **առ, ի, ըստ, ընդ, գ, ց** նախդիրներից ակտիվ գործառություններ ունեն **առ, գ, ի, ընդ** նախդիրները, որոնցով իմաստային բազմազան հարաբերություններով կառույցներ են ձևավորված, սակայն նրանց մեջ պակասում են շարահյուսական բնույթի այնպիսի կառույցներ, որոնցում թեք հոլովներով ենթակա է արտահայտվում:

Ի միջի այլոց, գրաբարում բացի ուղղականից, ենթական արտահայտվում է նաև **սեռական, տրական և հայցական** հոլովներով:

Օրինակ՝ 1. Եւ **հրամայեալ Արտաշիսի** բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարեւիլց կուսէ Մասեաց (Խոր., 218). սեռ. հոլ. ենթակա՝ **Արտաշիսի**: 2. **Մարթոյ ոչ է հնար** փոխել ի կերարանս ինչ, յոր և կամիցի (Եզն., 84). Տր. հ. 3. Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի **ոչ գտանել երկիր** անգործ յաշխարհիս Հայոց (Խոր., 224). Հայցականով ենթակա (accusativus cum infinitivo «**հայցականն անորոշի հետ**»):

Այստեսակ կառույցներ ենթականերով չեն հանդիպում:

Սեռական հոլովով ենթական արտահայտվում է նաև նախդրավոր կառույցում՝ «**ի+ անորոշ դերբայ և սեռական հոլով**»:

Օրինակ՝ 1. Քանզի **ի բառնալ ազգին** Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Մասանայ պարսկի (Եդ. I Յեդ.) (գրաբ. Ձեռ., 341)՝ Որովհետև երբ Արշակունիների **ազգը վերացավ**, Հայոց աշխարհին տիրեց պարսիկ Մասանի ազգը (Մասանյան դինաստիան):

2. Եւ **ի լինել ճակատուն**՝ պատուեր տայ զօրապետաց իւրոց... (Գրաբ. Ձեռ., 334): 3. Իսկ **ի գրգռել** միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի ընդ տիկնոջն Շամիրամայ (ն. տ.)՝ Իսկ **երբ հայոց զորքը** կրկին **բորբոքվեց** պատերազմելու տիկին Շամիրամի հետ (դեմ):

Այսպիսի կառույցներ չկան, հետևապես նման սեռականով ենթական չկա:

²³ Նույն տեղում, էջ 482:

Ի նախադրով հազարավոր կառույցներ կան, բայց քիչ քանակով կան նաև «ի+անորոշ դերբայ» կառույցներ, օրինակ՝ ի գգուշանալն (338), ի ժողովելն, ի ցրուելն, ի սփռելն, ի ճշդելն, ի նիրհել (190), ի զարթնուլ (192), ի համբաւելն (236) և այլն, որոնք զուրկ են սեռական ենթակայից:

Մրա մեկնաբանության պատճառը բարդ երևույթ է. ինչի՞ հետ է առնչվում, ինչպիսի՞ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ ու հանգամանքներ կան. կա՞ն, արդյոք, տարածքաժամանակային ազդեցության գործոններ, լեզվի ներքին զարգացումների խնդիր, անձնական ընկալումների բացասման միտումներ, այլև սովորական ցանկության մի շտրիխ, ուղղակի ասած՝ զարմանալի է:

Նաբեկացին զարմանահրաշ գործ է կատարել՝ Մատյանում իր տաղանդը փորձելով նաև բանաստեղծական խոսքի՝ չափածոյի բնագավառում: **Էջ 154-160-ում** չափի բերված արձակի տողերի վերջն ավարտվում է ի ձայնավորով, 64 տող է, նշենք 14 տողի վերջին բառերը՝ **ի տուժի, յիրաւի, անթափելի, անհրաժարելի, մի ունկի, արգելանի, բանտի, ողորմելի, կնքեսցի, կսկծելի, պայմանի, տասնեկի, մրրկի, ի գրաւի...**

Առավել հետաքրքիր է **Մեղայ** բառի՝ վերջին էջերում 11 տողերի կառույցների կամ նախադասությունների առաջադաս և վերջադաս կիրառությունը.

Մեղա՛յ մեծիդ բարերարութեան՝ անարգս **մեղայ**.

Մեղա՛յ ծագմանդ ճառագայթից՝ խաւարս **մեղայ**.

Մեղա՛յ շնորհացդ անբաւ երախտեաց՝ արդարն **մեղայ**.

Մեղա՛յ սիրոյդ վերնում գթութեան՝ հայտնապէս **մեղայ**.

Մեղա՛յ ստացողիդ յոչելութենէ ստուգապէս **մեղայ**²⁴...

ЭДУАРД МКРТЧЯН

ЛЕКСИКО - ГРАММАТИЧЕСКАЯ СТРУКТУРА ГРАБАРА В ТВОРЧЕСТВЕ ГРИГОРА НАРЕКАЦИ

РЕЗЮМЕ

В произведениях классического и постклассического периодах грабара ярким и видимым применимые встречаемые слова и формы слов: ард, зиард, агачем, дзезен, мезен, кезен, барнам, дсровем, миусангам, мегай, составленные с помощью отрицательных слов-частиц не и ни, также как и многочисленные предложные структуры грамматического характера успешно встречаются в поэме Григора Нарекаци "Книга скорбных песнопений." Только в отмеченных местах, используемые падежи (родительный, дательный, винительный) не выступают в роли подлежащего.

Ключевые слова: Бог, Иисус Христос, богословие, Книга Скорби, лексический,

²⁴ Նույն տեղում, էջ 24:

грамматическая структура, применение поразительной стилистики, предложный, отрицательное слово- частица, косвенный падеж, проза, стих произведения.

EDUARD MKRTCHYAN

**GRABARIAN LEXICAL GRAMMAR STRUCTURES IN THE
WORKS OF GRIGOR NAREKATSI**

SUMMARY

In Grabar 's classical and post-classical works the words and word combinations ard, zi ard, aghachem, dzezen, mezen, qezen, barnam, dsrovem, miyusangam, meghay are found with prominent and visible usage and formed with negative particles such as mi, woch as well as many prepositional and grammatical structures are successfully found in Grigor Narekatsi's work "Book of Sorrows". Only within mentioned frameworks used oblique cases such as genitive, dative, accusative structures with subject don `t meet in the "Book of Sorrows".

Key words: *God, Jesus Christ, theology, Book of Sorrows, lexical, grammatical structures, prominent stylistic usage, prepositional phrase, negative particles, oblique case, prose, verse composition, metre poetry, meghay.*

**ՆԱԽԱՀԱՅԵՐԵՆԻ «ԺԱՄԱՆԱԿ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱԽՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԽՄԲԻ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ (ԸՍՏ
ՍՅՈՒՆԻՔ – ԱՐՅԱԽԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ)**

Պատմական բարբառագիտության համար արդիական թեմաներից մեկը բարբառային բառապաշարի ստուգումնաբանական ուսումնասիրությունն է: Պատմահամեմատական մեթոդի միջոցով հնարավոր է լինում որոշել բարբառային բառապաշարի կազմում ընդգրկված հնդեվրոպական ծագում ունեցող բառերը: Այս հոդվածում փորձ է արված առանձնացնել «Ժամանակ» թեմատիկ խմբի նախահայերենի բառաշերտի բառերը, համեմատել նախկինում կատարված ուսումնասիրություններին: Հայերենի ամենամեծ միջբարբառախմբում՝ Սյունիք-Արցախի բարբառային տարածքում, «Ժամանակ» բառիմաստային խմբում ընդգրկվում են 35 բառեր: Առանձնապես քննվել կամ ստուգաբանվել են հետևյալ բառերը՝ տի(ք) «տարիք, հասակ», քոլիք 1. «անորակ այլուրից թխած հաց; ամբողջական, մասերի չբաժանված» 1. «ալարկոտ; անվարժ; դանդաղաշարժ», թոռ-թոռ, «թույլ, անհաստատ; թարմ» բառերը: Արդյունքները ցույց են տալիս, որ Սյունիք-Արցախի բարբառների բառապաշարի հիմքը բնիկ է, բխում է ընդհանուր հայերենի հիմնական բառաշերտից: Այս ամենով հանդերձ՝ բարբառային բառապաշարում կան բառեր, որոնք պահպանել են նախահայերենի հնդեվրոպական շրջանի ձևերը, օրինակ՝ տի $<$ տի «օր» // տի-զի $<$ *dei- «փայլել, լուսավորել»: Այս և նման հարցերի քննությունից կարելի է ենթադրել, որ Սյունիք-Արցախի բարբառախումբի գոյությունը սկսում է ոչ թե հայերենի գրավոր շրջանից, այլ այն ժամանակից, երբ հնդեվրոպական տարրը հաստատվել է Սյունիք-Արցախի պատմական տարածքում: Փաստորեն՝ Սյունիք-Արցախի բարբառային միավորները յուրահատուկ են ոչ միայն հնչյունական և քերականական ինքնուրույն համակարգով, այլ նաև բառապաշարի հիմնական կազմով: Անշուշտ, տարբեր շփումներից բառապաշարին անցել են նաև օտար բառեր: Մի շարք հասկացություններ, որոնք ընդհանուր են հայերենի համար, փոխարինվել են փոխառյալ բառերով: Եվ չնայած արտաքին բազմապիսի ազդեցությունների՝ բարբառային բառապաշարը մնացել է կայուն: Դա պայմանավորված է նրանով, որ բարբառային միավորները հազարավոր տարիներ գոյատևել են միննույն տարածքում, որն էլ համարվում է Սյունիք-Արցախի միջբարբառախմբի բնիկ և պատմական միջավայր:

Բանալի բառեր՝ Սյունիք-Արցախի բարբառային տարածք, «Ժամանակ» բառախմաստաբանական խումբ, ստուգաբանություն, բարբառային բառապաշար, հնդեվրոպական ծագմամբ բառ, պատմահամեմատական մեթոդ, բնիկ բառաշերտ:

1. Ուսումնասիրության բնագավառը և մեթոդաբանությունը

Պատմական բարբառագիտության ուսումնասիրության համար կարևոր է ոչ միայն բարբառային բառապաշարի շերտերի, այլև նրանցում ընդգրկված բառափաստաբանական առանձին խմբերի ծագումնաբանական, ստուգաբանական և բառաքնական հարցերը: Հաղորդակցման որևէ միջոցի ուսումնասիրություն չի կարող շրջանցել պատմական բարբառագիտության հարցերը:

Պատմական բարբառագիտության ուսումնասիրության շրջանակները կարող են լինել *մասնավոր* և *ընդհանուր*¹՝ ըստ ուսումնասիրության նյութի, առաջադրված խնդիրների:

Մասնավոր շրջանակը որևէ բարբառի պատմական ընթացքի դիտարկումն է համաժամանակյա և (կամ) տարաժամանակյա կտրվածքներում, իսկ *ընդհանուր* շրջանակը տվյալ լեզվի բարբառների միավորիչ հատկանիշների քննությունն է, որ տարվում է բարբառախմբերի կամ բարբառների պատմական շրջանի զարգացման, գրական կամ ընդհանուր խոսակցական, այլ լեզուների հետ լեզվի հետ ունեցած առնչությունների, բառապաշարի կազմի հարստացման միտումների շուրջ:

Չնայած բարբառային տարածքը այսօր խիստ նեղացել է, բայց Սյունիք-Արցախի բարբառների մեծ մասը կենդանի է, գործուն, ունի հարուստ բառապաշար:

2. Ուսումնասիրության մեթոդը

Ուսումնասիրության հիմնական մեթոդը պատմահամեմատականն է: Բազմապիսի են Սյունիք-Արցախի բարբառային տարածքի բառապաշարի շերտերը, որոնք քննվում են պատմական շրջանի հայեցակետից՝ հիմք ունենալով համեմատվող տարրերը համաժամանակյա և տարաժամանակյա բնութագրումներով:

1. Հնդեվրոպական ծագում ունեցող միավորներից առանձնացրել ենք «Ժամանակ» բառափաստաբանական խմբին վերաբերող հասկացությունները:

2. Առանձնացրել ենք այն բառերը, որոնք, կարծում ենք, ծագմամբ հնդեվրոպական են կամ ունեն հնդեվրոպական շրջանի առնչակցություններ, այսինքն՝ կարող են ծագմամբ լինել հնդեվրոպական, բայց կրած լինեն արտալեզվական ազդեցություններ:

3. «Ժամանակ» հասկացությամբ հնդեվրոպական ծագմամբ կամ այդպիսին ենթադրվող բառերը համեմատել ենք Կ. Բաքի հնդեվրոպական լեզվաընտանիքի համար առանձնացված "Parts of the body; bodily functions and conditions" (Chapter 4) բառերին¹, ապա Գ. Ջահուկյանի՝ հայերենի համար կազմված հնդեվրոպական ծագմամբ բառափաստաբանական նույնանուն խմբի բառերին²:

4. Կատարել ենք ստուգաբանություններ, փորձել ենք նաև քննել այնպիսի

¹ Buck C. D., *A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages (A contribution to the history of ideas)*, University of Chicago press, Chicago & London, 1988, p. 196-325.

² Ջահուկյան Գ., *Հայոց լեզվի պատմություն*, Նախագրային ժամանակաշրջան, ՀՄՄՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ. հր., Ե., 1987 (այսուհետև՝ *Ջահուկյան Գ.*), էջ 111-157, 261-262, 204-222:

բառեր, որոնց ուսումնասիրության ընթացքում ձևավորվել են տարբեր կարծիքներ: Հարկ եղած դեպքում նախորդ ուսումնասիրություններին հավելել են մեր տեսակետները, կատարել լրացումներ՝ նյութի քննությունը պատշաճ ներկայացնելու ակնկալությամբ:

5. Ընդհանուր պատկեր ստեղծելու և արդյունքները տեսանելի դարձնելու համար ձևավորվել են երկու աղյուսակներ, որոնք հիմք են ստեղծում կարևոր եզրակացությունների համար:

Սյունիք-Արցախի բարբառներում «ժամանակ» հասկացությանը առնչվող բառերը ծագումնաբանորեն մի քանի շերտի են բաժանվում՝ 1. նախահայերենյան, 2. հինհայերենյան, 3. օտար-բարբառային: Քիչ բառեր կան, որ վկայվում են հայերենի մյուս տարբերակներում և առկա չեն Սյունիք-Արցախի բարբառային տարածքում, իսկ նախահայերենյան շերտից մնացուկների մի մասը ընդհանուր հայերենին բնորոշ կաղապարներով, մյուս մասն էլ գրաբարի ձևիմաստային հատկանիշներով են ներթափանցել տարածքի բառապաշարին: Մեզ առավելապես հետաքրքրում են նախահայերենից և հին հայերենից ժառանգած «ժամանակ» հասկացության բառիմաստային խմբի բառերը, որոնք կարող են պատկերացում ստեղծել ոչ միայն բարբառային տարածքի լեզվական հարցերի, այլև կենցաղավարման մի շարք բնագավառներում ունեցած ըմբռնումների վերաբերյալ: Օրինակ՝ հետաքրքրական է, որ բարբառային տարածքում պիտի գործառվեն **հին**, **իսկույն**, **դանդաղ**, **հաճախ** բառերը, բայց սրանք բոլորն էլ փոխարինվել են օտար ծագմամբ բառերով:

3. Ուսումնասիրության նյութը

Տիւ՝ < տի «օր» հիմքը (Գոր.) պահպանվել է **տիզի** բառում՝ **լուսը տիզի ա անում** («լույսի մարմրելը»): Ընդ որում, Սյունիք-Արցախում գործառվող տարբերակը բխում է ոչ թե հին հայերենից՝ **տիւ**՝ հ.-ե. ***deu-**, այլ նախահայերենի ***dei-** «փայլել, լուսավորել» հիմքից, որից ձևավորված է **երկ-տի** բառը: **Տիզի || տիզա** տարբերակները Սյունիք-Արցախում գործածվում են «լույս» իմաստով մեկ. խոսքում: Անհայտ է մնում **-զի** վերջնամասը. քիչ հավանական է **տիւ-ն-ջեան**-ից բխած բարբառային տարբերակը: Գորիսի բարբառի **տիզիվավա**-ի («լացկան»), **զ**-ն չի առնչվում վերոնշյալին. **տիզիվավա**-ն **տըզան** «լացկան» բնաձայնությից ձևավորված բաղադրություն է (հմմտ.՝ **թըս-թըս-ալ > թիսիվավա**, **տըզ-տըզ-ալ > տիզիվավա**):

Կարծում ենք՝ հ.-ե. **տի** «տարիք, հասակ» արմատը բարբառախմբում հանդիպում է (Գոր. Կապ.) **կիստի || կիզտի** «փոքր» (**կէս > կիզ**) բառում, որի կազմությունը համեմատում ենք **դեռատի**, **անտի** ձևերին:

«Թարմ» իմաստով բարբառախմբի **ժեժ** բառը մնում է անհայտ ծագմամբ բառերի շարքում:

Հին բառը բացակայում է բարբառախմբում: Այն նոր է մուտք գործում: Իմաստը փոխարինվում է **վաղի**, **շուտանց** և այլ բառերով:

³ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևանի համալսարանի հր., Ե., 1971-1979, էջ 410 (այսուհետև՝ ՀԱԲ):

Ղանդաղ հասկացությունը փոխարինվում է տարբեր կազմություններով ու բառերով, այդ թվում՝ **յօրթ** «1. ձիու համաչափ քայլը՝ դանդաղ վարգը, 2. դանդաղ»։ Լ. Հովհաննիսյանը այն զուգահեռում է հին հայերենի **յորդիմ** «վազել» (իմա՝ «արագ հոսել»)՝ **յօրթ-յօրթ անել** «վազվզել»⁴ բառին։ Այս ենթադրությամբ **յօրթ**-ը առնչակցվում է հ. ե. ***er-**, ***or-** «շարժել, հուզել» հիմքին, որից, սակայն, բարբառախումբն ունի **հօրթ** (յորդ) «առատահոս», որ տարբերակվում է **հօրթ** բառից՝ «1. առու, 2. ջրից մաքրված ճանապարհ, 3. այգիների ջրբաժան, որոնցով մշտապես ջուրը բացում են, մեկ կամ մի քանի օր ջրվում են ծառերը» (***port-** < ***per-** «անցկացնել, անցնել»)։ Նկատի ունենալով բարբառախմբի ոչ կրկնավոր ձևը՝ **յօրթ**-ը «դանդաղ քայլ», այստեղից՝ **յօրթ-յօրթ (անել)** «վազվզել» (կրկնավորի արտահայտած նրբերանգից), թերևս կարելի է կարծել, որ այն ծագմամբ ընդհանուր է հ.-ե. ***erə-**, ***re-** «հանգչել, հանգստանալ, հանդարտվել, թույլ» բայանվան ձևիմաստի հետ՝ (***d(h)** աճականով՝ ***erd(h)**), հմմտ.՝ հուն. **ἐρωέω** «թողնել», **ἐρώ** «հանգստանալ», լիտվ. **rova** (= գրվ. ***rūdō**) «հանգիստ», լատվ. **rāwa** «կանգնած ջուր»⁵։

Միջօրե բառի փոխարեն առկա է **կեսօր** || **կըսօր** || **քըսօր**, որ չենք դնում հ.-ե. համանիշների շարքում⁶։

Արդ, արդեն բառերի դիմաց գործածվում է միայն **արթեն** ձևը։

Ահա «ժամանակ» բառիմաստային խմբում ընդգրկվող հ.-ե. առնչակցությամբ բառերը՝ (**կիզ**)**տի**, **նօր**, **թօռ-թօռ**, **թօռ**⁷, **մատաղ** (-աշ) **ծիր** (անալ)⁸, **մաշել**, **արթեն**, **արթեն**, **փոյթ** (> (**Ան**)**փըթ**(ըրօկ)), **յօրթ**, **տեվել**, **իրգինանալ**, **պիլօրել**, **լըրանալ**, **թաթալ**, **հուր**, **ամ/մինսովին**, **կըրկըն(վել)**, **օր**, **տի(զի)**, **ցիբել**, **քիշեր**, **ըռավետ**, **ծեք**, **նիրունցուն**, **ըսօր**, **իրեզի**, **ամիս**, **ամ(լիզ)**, **հերու**, **ծիմեռնը**, **կյալունք**, **ամեռնը**, **աշունք**, **ըղենակ**։

4. Քննարկում

4.1. Բարբառային տարբերակների բառաքնություն և ստուգաբանական փորձեր

Տի(ք) «տարիք, հասակ» բառը նշված ձևով չի հանդիպում, բայց բարբառային բառապաշարի **դախ** (> **դախըլ**) || **տախ** «1. կարծր, պինդ, 2. տարիքն առած (աղջիկ)» բառի հիմքում, ըստ նախնական ենթադրության, **տի** արմատի ձայնդարձով տարբերակն է (հմմտ. **դահ**⁹ «հին, ծերացած»)՝ «հնխ. **dāi-**, **di**, **də** «բաժանել, մաս-մաս անել»¹⁰։ Արդյոք բարբառային տարբերակները առանց ազդեցության սերում են ***d(ā)i-** հիմքից, կամ **տի-ք** (**ք** > **խ**՝ **թաք** > **թախք**) հոգնակիով տարբերակի բարբառային դրսևորումն է՝ ընդ որում (**դախըլ** տարբերակը դժվար է մեկնաբանվում. դժվար թե **տիք**-ի բայակազմական

⁴ Հովհաննիսյան Լ., *Բառային հնաբանությունները Ղարաբաղի բարբառում*, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 9 (52), 1979, էջ 58։

⁵ Pokorny J., *Indogermanisches etymologisches Wörterbuch, I, II bend (II Auflage)*, München: Francke Verlag, Bern, 1959, f. 338-339 (այսուհետև՝ Pokorny, 1959)։

⁶ Անհայտ է մնում **կես** բառի ծագումը։

⁷ ***Ter-**, ***eru** > **tor-s** (Ջահուկյան Գ., *Հայ բարբառագիտության ներածություն*, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 290)։

⁸ Առանձին չի գործածվում ծեր բառը. հանդիպում է **ծաղկել-ծիրանալ** կազմության մեջ։

⁹ Աճառեան Հ., *Հայերեն գաւառական բառարան* («Էմինեան ազգագրական ժողովածու», հատ. Թ), Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, Թիֆլիս, 1913, էջ 263։

¹⁰ ՀԱԲ, IV, էջ 403։

ձևի մնացուկ լինի, հմմտ. **դըխլե, դըխըլանալ** «պնդանալ, թարմությունը կորցնել, 2. ծերանալ»): Գոր. ունի նաև **տախ || տախ** «1. ասվում է որոշակի հասակ առնելուց հետո մարմնով լցված մարդու մասին՝ գիրուկ, 2. հաստիկ, թխիկ (չաղիկ)»¹¹: Այդուհանդերձ, մեզ թվում է, որ **տախ** բառը պրակ. փոխառություն է՝ **dāhr** (دهر) «ժամանակ, դար, ժամանակաշրջան», որ ձևիմաստային փոփոխություն է կրել բարբառախմբում:

Քոնթ¹² բառը համանուններ ունի բարբառախմբում՝ **քոնթ** «1. անորակ այլուրից թխած հաց, 2. ամբողջական, մասերի չբաժանված», **քոնթ** «1. ալարկոտ, 2. անվարժ, 3. դանդաղաշարժ», այստեղից՝ **քոնթանալ** «ծույլ դառնալ, հաշմանդամ դառնալ, երկար ժամանակ պարապ մնալուց ծուլանալ», **քոնթընել** «անգործունյա դարձնել», **քոնթ-քոնթ** «1. անվարժ, 2. դանդաղկոտ»: Արևելյան լեզուներում ունեցած տվյալներն են՝ պրակ. **kund** (كند) (հմմ. **կոնդ**¹³), թուրք. **küt** «գնդաձև»: Հայերենի մատենագրական տեղեկություններից հայտնի է **անքոյթ** «հանգիստ, խաղաղ», որ ինքնուրույն գործածությամբ չի հանդիպում: Հետագա շրջանի հայերենի բառարանային տվյալներում հանդիպում են **«անքոյթ»**՝ «ապահով¹⁴, անվտանգ, խաղաղ, հանդարտ, անխռով»¹⁵ (իտալերեն կազմությունների դիմաց՝ **attenersi al colombajo** «ամրանալ յանքոյթ տեղուց» (սրգընմակ),¹⁶ **alla sicura** «կարծել զանձն անքոյթ, յապահովի», **sicuro** «լինել անքոյթ, ոչ զանգիտել, ոչինչ երկբայիլ»)¹⁷ «Էնեականի» թարգմանչի տեքստից հասկացվում են «հանդարտ, անձայն, հեղգ, անխռով» իմաստները. «Ամբառնան ժայռք ըսպառնալիցք ընդ երկին, / Ոյց ընդ քըլաւ լըռեն **անքոյթ** շուրջ ալիք»¹⁸: «Բազմավեպում» հանդիպում է «ազատ, ապահով» իմաստներով. «...միայն մշակն է անքոյթ...»¹⁹: Գ. Ջահուկյանը այս բառին վերաբերող երեք կանխավարկած ունի, որոնք վերաբերում են հնդեվրոպական առնչակցությանը²⁰:

Գալով բարբառախմբի՝ **քոնթ** «ալարկոտ, ծույլ, անվարժ», այլև **քոնթ** «1. անորակ

¹¹ Մարգարյան Ա., Գորիսի բարբառը, Երևանի համալսարանի հր., Ե., 1975, էջ 477:

¹² Ենթադրվում է, որ **քոնթ** «դանդաղաշարժ» իմաստով բառը կարելի էր քննել տարածական հարաբերություններ արտահայտող կամ մարմնի մասեր, մարմնական գործառնություններ և պայմաններ, իսկ «հաց» իմաստով՝ ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում և ամանեղեն թեմատիկ խմբերում: Մակայն նպատակահարմար գտանք քննել «ժամանակ» հասկացությունների համանշային շարքում՝ նկատի առնելով համանուն բառերի բաղդատական քննությունը, **քոնթ** և **թոն-թոն** բառերի այս խմբին համանշվող իմաստները: Նույն մոտեցմամբ պետք է քննել **թոն-թոն** և **թոն** բառերը:

¹³ Այս մասին տե՛ս՝ Քումուսեց Մ., Սյունիք-Արցախ բարբառային տարածքի մի քանի համանունների ուսումնասիրության շուրջ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Վ. Ա. Քոսյանի ծննդյան 90-ամյակին, Ե., 2017, էջ 172-181:

¹⁴ Հմմտ. «Փախիր Գրիգոր է ի խրճիթն **անքոյթ**» («Բազմավեպ» (Աշխատասիրություն Մխիթարեան միաբանից), հատ. երրորդ, Մ. Ղազար, Վենետիկ, 1845, էջ 199):

¹⁵ Ջախջախեան վրդպ. Մ., Բաղդիրք ի բարբառ հայ եւ իտալական, Մ. Ղազար, Վենետիկ, 1837, էջ 166 (այսուհետև՝ Ջախջախեան 1839):

¹⁶ Ջախջախեան 1839, էջ 180

¹⁷ Ջախջախեան վրդպ. Մ., Բառարան Յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ (Dizionario italiano-armeno-turco), Մ. Ղազար, Վենետիկ, 1804, էջ 780:

¹⁸ Վիրգիլեայ Պ. Մ., Ենեական (թրգմ. Ե. Հիրսիուզեան), Մ. Ղազար տպ., Վենետիկ, 1845, էջ 16:

¹⁹ «Բազմավեպ» 1845, III, էջ 324:

²⁰ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հր., Ե., 2010, էջ 63 (այսուհետև՝ ՀՄԲ), տե՛ս նաև՝ ՀՄԲ I, 214:

այլուրից թխած հաց, 2. ամբողջական, մասերի չբաժանված» համանունների ծագման հարցերին (հմտ. նաև՝ **քութէշ** «կոկորդի հիվանդություն»)՝ նկատում ենք, որ նրանք իմաստային և հնչյունական առումով մասամբ կամ ամբողջապես չեն համապատասխանում արևելյան լեզուների ենթադրյալ համապատասխանակներին: Համանուններից **քութ**-ը՝ «1. անորակ այլուրից թխած հաց, 2. ամբողջական, մասերի չբաժանված», թերևս բխում է հ.-ե. ***kʷat-** (> ***kuat(h)-**) «խմոր, մակարդ, եռանդ, բորբոքում, թթվել» (բայց հմտ.՝ սլավոնականում՝ ***късѣнъ** «դանդաղ, հանգիստ (շարժման մասին)»²¹ հիմքից, իսկ **քութ** «ալարկոտ, ծույլ, անվարժ» բառը, կարծում ենք, հստակեցնում է Գ. Ջահուկյանի առաջադրած տարբերակներից մեկը, ըստ որի՝ **անքոյթ** բառի մեջ **ան**-ը նախածանց է, իսկ «քոյթ»-ը թերևս կարելի է կապել ***keē-** «շարժ(վ)ել» արմատի հետ (այս դեպքում էլ եզակի է ***kōi-** > ***քոյ** անցումը)²², որի ածանցման ձևերից **ku-card**-ը՝ «դանդաղ շարժվող, սողացող», վկայաբերվում է հնդիրանական ընդհանրություններում²³: Այս ամենից կարելի է ենթադրել, որ **քութ**-ի համանունները արևելյան լեզուներից անցած բարբառային փոխառություններ չեն, իսկ նրանցից **քութ**-ը՝ «դանդաղ շարժվող», **անքոյթ** բառի ինքնուրույն գործածությամբ տարբերակն է. բարբառախմբում **ու**-ի քմայնացումը (վերաբերում է համանուններին) պայմանավորված է **q** > **p** փոփոխության ազդեցությամբ **ու**-ի քմայնացման համաբանությամբ, հմտ.՝ **քութէշ-քութ**:

4.2. Իմաստային ճշգրտումներ և լրացումներ

Թոր-թոն «թարմ» իմաստով բառը Սյունիք-Արցախի բարբառային տարածքում հարադրությամբ է գործածվում՝ **թոն-թոն**, որ հ.ե. ***ter-** «1. թույլ, անհաստատ. 2. թարմ, 3. քնքուշ» բառից է: Բարբառախմբում հիմնականում սննդի թարմությունն արտահայտելիս է գործածվում՝ «1. նոր եկած-ուռած խմոր, 2. փուչիկներ ունեցող հաց, թխվածք, 2. թարմ միս, բանջարեղեն, 3. մատղաշ բույս, 4. փոխ. ծաղկուն, փթթուն տարիք»: Կարծում ենք՝ **թոն-թոն** «թարմ» իմաստով, հարադրությամբ բառը պետք է ընդգրկվի թեմատիկ խմբում՝ որպես հ.-ե. ***tor-** > ***ter-** (թարմ՝ ***trmo-**) «քնքուշ, թույլ»²⁴ հիմքից բարբառային կազմություն:

Գ. Ջահուկյանի ցուցակից դուրս է մնացել **այգ**՝ հ.-ե. ***ai-** «այրել, լուսավորել», բառը՝ **ծեք** (> **g-այգ**) «ծեգ՝ արևածագ, արշալույս», **ծեքել** «ծագել, արշալույսը բացվել», **ծեքծեքին** || **ծըքըծեքին** || **ծըքըլալտառեն** || **ծըքըլուին** «վաղ առավոտյան արշալույս բացվելիս»²⁵:

4.3. «Ժամանակ» թեմատիկ խմբի համեմատական տախտակ²⁶

Աղյուսակ 1.

Ըստ Կ. Բաքիթի (անգլ.)	Թիվ	Բ.-սս	?? ^{սս}	Ըստ Գ. Ջահուկյանի	Սյունիք-Արցախ
-----------------------	-----	-------	------------------	-------------------	---------------

²¹ Pokorny 1959, f. 627-628.

²² ՀՄԲ, էջ 63:

²³ Mayrhofer M., *Etymologisches Wörterbuch des Altindogermanischen (Indogermanische Bibliothek Reihe 2, Wörterbücher), I band, Heidelberg, 1992, f. 359.*

²⁴ ՀՄԲ, էջ 260:

²⁵ ՀՄԲ էջ 48, Ջահուկյան, 1987, էջ 259:

²⁶ Աղյուսակում նշված Բ.-սս և ??^{սս} համառոտությունները նշանակում են՝ Բ՝ բարբառային՝, սս՝ Սյունիք-Արցախ, ??^{սս}՝ հստակ չէ բառի առկայությունը Սյունիք-Արցախում: Թույլ գույնով նշումը բառի բացակայությունն է հայերենում:

14.11. Time	1.	Բ.	?	14.11. Ատեն	-
	2.	-	-	Հաղ	-
14.12. Age	3.	-	շսս	14.12. Տի(-ք)	(Կիզ)տի
14.13. New	4.	-	-	14.13. Նոր	Նոր
	5.	-	-	Թարմ	Թօռ-թօռ
	6.	Բ.	-	Թոր	Թօռ
14.14. Young	7.	-	-	14.14. Մատաղ	Մատաղ(-աշ)
14.15. Old	8.	-	-	14.15. Հին	-
	9.	-	-	Ծեր	Ծիր(անալ)
	10.	-	-	Երեց	-
	11.	-	-	Մա(ր)շեմ	Մաշել
14.16. Early (adv.)	-	-	-	14.16. Վաղ	-
14.17. Late (adv.)	12.	-	-	14.17. Ան-ազան	-
14.18. Now	13.	-	-	14.18. Արդ	Արթեն
14.19. Soon; Immediately	14.	-	-	14.19. Փոյթ	(Ան)փըթ(ըրօկ)
	15.	-	-	Իսկոյն	-
	16.	-	-	Անդեն	Արթեն
14.21. Swift, Fast, Quick	17.	-	-	14.21. Փոյթ	-
14.22. Slow (adj.)	18.	-	?	14.22. Դանդաղ	-
	19.	Բ.սս	շսս	Յորդիմ	Յօրթ
	20.	-	-	Տարտամ	-
14.23. Hasten, Hurry (vb. intr.)	21.	-	-	14.23. Արտորամ	-
14.24. Delay (vb. intr.)	22.	-	?	14.24. Դանդաղեմ	-
	23.	-	?	Անազանիմ	-
	24.	-	-	Յետնիմ	-
	25.	-	-	Հեղգամ	-
14.25. Begin; Beginning	-	-	-	14.25. Սկսել; սկիզբ	-
	26.	-	-	Հալիմ	-
	27.	-	-	Հալ	-
14.252. Last (vb.)	28.	-	-	14.252. Տեւեմ	Տեվել
	29.	-	-	Յերկարեմ	Իրգինանալ
	30.	-	-	Տոկ	-
	31.	-	?	Յամառ	-

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԵՍ

14.26. End (sb., temporal)	32.	-	-	14.26. Յաւ	
14.27. Finish (vb.)	-	-	-	14.27. Ավարտել (vb.)	-
	33.	-	-	Բոլորեմ	Պիլօրել
	34.	-	-	Լնում	-
	35.	-	-	Լիք	Լըրանալ
14.28. Cease	36.	-	-	14.28. Դադարեցուցանեմ	Թախար
14.29. Ready	-	-	-	14.29. Պատրաստ	-
14.31. Always	37.	-	-	14.31. Յար	Հուր
14.32. Often	38.	-	?	14.32. Յ-աճ-ախ	-
	39.	-	-	Ստէպ	-
14.33. Sometimes	40.	-	-	14.33. Երբեմն	-
14.34. Never	41.	-	-	14.34. Ամենեւին ոչ	Ամ/միսովին
	42.	-	-	Ոչ երբեք	-
14.35. Again	43.	-	-	14.35. Անդ-ը-էն	-
	44.	-	-	Կրկին	Կըրկըն(վել)
	45.	-	-	Դարձեալ	-
	46.	-	-	Վեր-ստ-ին	-
14.41. Day	47.	-	-	14.41. Աւր	Օր
	48.	-	-	Տիւ	-
	49.	-	-	Տի	Տի(զի)
	50.	-	-	Յ-երեկ	Յիրեկ
14.42. Night	51.	-	-	14.42. Գիշեր	Քիշեր
14.43. Dawn	-	-	-	14.43. Լուսաբաց	-
14.44. Morning	52.	-	?	14.44. Առ-աւաւտ	Ըռավէտ
	53.	-	-	Այգ	Օէք
14.45. Noon	54.	-	-	14.45. Միջաւրեայ	-
14.46. Evening	55.	-	-	14.46. Երեկ(-ոյ)	Ուրոյցուն
14.47. Today	56.	-	?	14.47. Սերկ	-
	57.	-	?	Այս-աւր	Ըսօր
14.48. Tomorrow	-	-	-	14.48. Վաղը	-
14.49. Yesterday	58.	-	-	14.49. Երեկ	Իրեզի
14.51. Hour	-	-	-	14.51. Ժամ	-
14.52. Minute; Second	-	-	-	14.52. Բոպէ; վայրկյան	-

14.53. Clock; Watch	-	-	-	14.53. Ժամացույց	-
14.61. Week	-	-	-	14.61. Շաբաթ	-
14.62. Sunday	-	-	-	14.62. Կիրակի	-
14.63. Monday	-	-	-	14.63. Երկուշաբթի	-
14.64. Tuesday	-	-	-	14.64. Երեքշաբթի	-
14.65. Wednesday	-	-	-	14.65. Չորեքշաբթի	-
14.66. Thursday	-	-	-	14.66. Հինգշաբթի	-
14.67. Friday	-	-	-	14.67. Ուրբաթ	-
14.68. Saturday	-	-	-	14.68. Շաբաթ օրը	-
14.71. Month	59.	-	-	14.71. Ամիս	Ամիս
14.72. Names of the Months	-	-	-	14.72. Ամիսների անունները	-
14.73. Year	60.	-	շսս	14.73. Ամ	Ամ(լիզ)
	61.	-	-	14.731. Հերու	Հերու
14.74. Winter	62.	-	-	14.74. Ձմեռ	Ծիմեռնը
14.75. Spring	63.	-	-	14.75. Գարուն	Կյարունք
14.76. Summer	64.	-	-	14.76. Ամառն	Ամեռնը
14.77. Autumn	65.	-	?	14.77. Աշուն	Աշունք
14.78. Season	66.	-	-	14.78. (Յ)եղանակ	Ըղենակ

5. Եզրակացություններ և վիճակագրություն

Բարբառային բառապաշարի պատմահամեմատական ուսումնասիրությունից և «Ժամանակ» բառախմաստաբանական խմբի բառերի քննությունից պարզվում են՝

Ա. Բարբառային բառապաշարի ծագումնաբանական շերտերը հիմնականում ընդհանուր են հայերենի հետ:

Բ. Բարբառի գոյությունը սկսում է ոչ թե հայերենի գրավոր շրջանից, այլ այն ժամանակից, երբ հնդեվրոպական տարրը հաստատվել է Սյունիք-Արցախի պատմական տարածքում:

Գ. Սյունիք-Արցախի բարբառներն ունեն բառապաշարի հիմնական կազմ կամ այսպես ասած՝ միջուկ, հնչյունական և քերականական կաղապարների ինքնուրույն համակարգ, որոնք պահպանվել են մինչև մեր օրերը՝ արտաքին բազմապիսի ազդեցությունների և ներքին խնդիրների առկայությամբ:

Դ. Վիճակագրական տախտակ²⁷

Աղյուսակ 2

Համարակալվող միավոր	Ըստ Կ. Բաքի (անգլերեն)	Բարբառային		Վիճահարույց		Ըստ Գ. Սյունիք-Արցախի Ջահուկյանի	Սյունիք-Արցախ
		Հայ.	Ս.-Ա.	Հայ.	Ս.-Ա.		
14.1	9	2	0	1	1	16	9
14.2	10	0	1	4	1	20	6
14.3	5	0	0	1	0	10	3
14.4	9	0	0	3	0	12	9
14.5	3	0	0	0	0	0	0
14.6	8	0	0	0	0	0	0
14.7	8	0	0	1	1	8	8
14. Ընդամենը	52	2	1	10	3	66	35

Ե. Ըստ արդյունքների՝ «Ժամանակ» թեմատիկ խմբի ընդհանուր բառերից, որոնք ունեն հնդեվրոպական ծագում (ըստ Կ. Բաքի կողմից կազմված ցուցակի), Սյունիք-Արցախի բարբառային տարածքում վկայվում է 35-ը, որը կազմում է 67%-ը, ընդհանուր հայերենի համեմատությամբ՝ 53%-ը:

МГЕР КУМУНЦ

ИЗУЧЕНИЕ ПРААРМЯНСКИХ СЛОВ ЛЕКСИЧЕСКОЙ ГРУППЫ КОНЦЕПТА «ВРЕМЯ» (ПО СУЙСКО – АРЦАХСКИМ ДИАЛЕКТАМ)

РЕЗЮМЕ

Одной из актуальных тем исторической диалектологии является этимологическое изучение разговорной лексики. Используя историко-сравнительный метод, можно определить слова индоевропейского происхождения, вошедшие в диалектную лексику. В данной статье предпринята попытка выделить слова доармянской лексики тематической группы «Время», сопоставить их с предыдущими исследованиями. В самой крупной междиалектной группе армянского языка, в диалектном ареале Сюник-Арцах, 35 слов входят в семантическую группу «Время». Некоторые слова были рассмотрены отдельно или этимологически проанализированы: **ти(к)** (**տի(ք)**) «возраст, рост», **кут** (**քութ**) 1: «хлеб, испеченный из муки низкого качества; полный, не разделенный на части» 1. «ленивый; необученный тихоходный», **тор-тор**

²⁷ Սյունիք-Արցախ:

(թոթ-թոթ), "слабый, неустойчивый; слова "свежий". Результаты показывают, что основу лексики сюникско-арцахских диалектов составляют коренные, производные от основной лексики общearмянского языка. В диалектной лексике есть слова, сохранившие формы протоармянского языка, индоевропейского периода, например: **тыв** < **ти** (տի < տի) "день" // **ти-зи** (// տի-զի) < *dei- "светить, освещать". Из рассмотрения этих и подобных им вопросов можно предположить, что существование Сюникско-Арцахской диалектной группы начинается не с периода армянской письменности, а с того времени, когда индоевропейская общность расселилась на исторической территории Сюник и Арцах. На самом деле диалекты Сюника-Арцаха уникальны не только своим самостоятельным фонетико-грамматическим строем, но и базовой лексикой. Разумеется, иностранные слова также поступали в лексикон из различных контактов. Ряд понятий, общих для армянского языка, заменен заимствованными словами. Несмотря на различные внешние воздействия, диалектная лексика оставалась стабильной. Это связано с тем, что диалекты Сюника и Арцаха существовали на протяжении тысячелетий на одной территории, которая считается родной и исторической средой междиалектной группы.

Ключевые слова: Сюникско-Арцахский диалектный ареал, лексическая группа "время", этимология, диалектная лексика, слово индоевропейского происхождения, историко-сопоставительный метод, коренная лексика.

MHER KUMUNZ

THE STUDY OF THE PROTO - ARMENIAN WORDS OF THE LEXICAL GROUP OF THE CONCEPT "TIME" (ACCORDING TO THE SUI – ARTSAKH DIALECTS)

SUMMARY

One of the topical topics of historical dialectology is the etymological study of colloquial vocabulary. Using the historical-comparative method, it is possible to determine the words of Indo-European origin that are included in the dialect vocabulary. This article attempts to highlight the words of the pre-Armenian vocabulary of the thematic group "Time", to compare them with previous studies. In the largest inter-dialect group of the Armenian language, in the Syunik-Artsakh dialect area, 35 words are included in the semantic group "Time". Some words were considered separately or etymologically analyzed: ti(k) (տի(ք)) "age, height", kut (քնիթ) 1: "bread baked from low quality flour; complete, not divided into parts" 1. "lazy; untrained slow-moving", tor-tor (թոթ-թոթ), "weak, unstable; the word "fresh". The results show that the basis of the vocabulary of the Syunik-Artsakh dialects is formed by the indigenous ones, derived from the main vocabulary of the pan-Armenian

language. There are words in the dialect vocabulary that have preserved the forms of the proto-Armenian language, the Indo-European period, for example: *tiv* < *ti* (տիւ < տի) "day" // *ti-zi* (// տի-զի) < **dei-* "shine, illuminate". From the consideration of these and similar questions, it can be assumed that the existence of the Syunik-Artsakh dialect group does not begin with the period of Armenian writing, but from the time when the Indo-European community settled in the historical territory of Syunik and Artsakh. In fact, the dialects of Syunik-Artsakh are unique not only for their independent phonetic and grammatical structure, but also for their basic vocabulary. Of course, foreign words also entered the lexicon from various contacts. A number of concepts common to the Armenian language have been replaced by borrowed words. Despite various external influences, the dialect vocabulary remained stable. This is due to the fact that the dialects of Syunik and Artsakh have existed for thousands of years on the same territory, which is considered the native and historical environment of the interdialect group.

Keywords. Syunik-Artsakh dialect area, lexical group "time", etymology, dialect vocabulary, word of Indo-European origin, historical-comparative method, indigenous vocabulary.

ՀՈՒՄՈՐԸ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ՔՇՄՐՈՐ» ՎԻՊԱԿՈՒՄ

Մեկ տասնյակից ավելի պատմավեպերի և հանրագիտարանային բնույթի երկու տասնյակից ավելի երկերի հեղինակ Հայկ Խաչատրյանը հանիրավի անտեսված ու հավուր պատշաճի չուսումնասիրված է մնում առ այսօր: Նրա ստեղծագործություններից միակը «Քշմրոր» վիպակն է, որ գրված է հումորային, բարբառախառն, աշխույժ ու կենդանի լեզվով: Հեղինակի հումորը բարի է, առինքնող և ընդգրկում է գյուղական կյանքի 13 ոլորտներ՝ հերոսի ծնունդը, անվանակոչությունը, ուսումնառությունը, ստեղծագործական կյանքը, համագյուղացիներին, գյուղացիների մականունները, գյուղացիների անձնական հարաբերությունները, արցախցու և ռուսի հարաբերությունները, կրթությունը, հասարակարգը, քաղաքակրթությունը, մշակութային արժեքները, հերոսի բարձրագույն կրթությունը:

Հոդվածը փորձ է ուշադրություն հրավիրելու հեղինակի ստեղծագործություններին և մի փոքրիկ անդրադարձ կատարելու այս ոլորտում եղած համեստ ավանդին:

Բանալի բառեր՝ Հայկ Խաչատրյան, Քշմրոր, Դահրավ, հումոր, գյուղացի, հասարակարգ, քաղաքակրթություն, մշակույթ:

Մեկ տասնյակից ավելի պատմավեպերի և հանրագիտարանային բնույթի երկու տասնյակից ավելի երկերի հեղինակը հանիրավի անտեսված ու լիարժեքորեն չուսումնասիրված է մնում (բացառությամբ մասնակի անդրադարձների՝ Ժ. Բեգլարյան, Շ. Սաղյան), ուստի մեր պարտքն ենք համարել մի փոքրիկ ներդրում կատարել:

Հայկ Հաբությունի Խաչատրյանը Արցախի Դահրավ գյուղից է և իր բնաշխարհն ու նրա մարդկանց է բերել «Քշմրոր» վիպակ, բայց ոչ պարզ ու լուսանկարչական եղանակով, այլ կենդանի, բարբառախառն, հումորիկ լեզվով գյուղի և գյուղացու պատկերագիրն է հավերժացրել: Դա նկարչություն է գրչով, որն ամենին չի զիջում վրձնին:

Հարկ է նկատել, որ «Քշմրորը» Հ. Խաչատրյանի միակ ստեղծագործությունն է, որում հեղինակը ցուցադրել է հումորի իր զգացումը. մյուս երկերը գրված են կանոնիկ ու հանրագիտարանային լեզվով:

Քշմրորը Շնաքարի կատարից սկիզբ առնող և դեպի արևմուտք տարածվող հսկա անտառն է, ուր կարելի է ժամերով քայլել՝ առանց երկնքի կտոր տեսնելու¹:

Այս փոքրիկ, բայց մեծ աշխարհի բոլոր ենթաշերտերն է հեղինակը դրվագ առ դրվագ բացում ու փռում ընթերցողի առջև, և բոլոր ենթաշերտերում էլ վայելքն ամբողջանում է հումորի խիստ հավասարակշռված մասնաբաժիններով:

¹ Տե՛ս Խաչատրյան Հ., Սոսյալ անտառ, Եր., «Արևիկ» հր., 1988, (այսուհետև՝ Խաչատրյան Հ.), էջ 10:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» հումորը ձևակերպում է «ոչ չարամիտ ծաղր, բարեմիտ ծիծաղ»²: Եվ այս բացատրությունը միանգամայն անփոփոխ երևում է Հ. Խաչատրյանի վիպակում:

Ինչպես նկատում է ռուս բանասեր Վ. Պրոպր, «ծիծաղել կարելի է մարդու բոլոր դրսևորումների վրա: Բացառություն է տառապանքը, որը դիտարկվել է դեռևս Արիստոտելի կողմից: Ծիծաղելի կարող են լինել մարդու արտաքինը, նրա դեմքը, մարմնակազմվածքը, շարժումները, երգիծական կարող են լինել նրա դատողությունները, որոնցում երևում է մարդու խելքի անբավարարությունը, նրա բարոյականը, նկրտումները, ցանկություններն ու նպատակները: Զվարճալի կարող է լինել մարդու խոսքը: Մի խոսքով մարդու ֆիզիկական, մտավոր և բարոյական կյանքը կարող է դառնալ ծիծաղի առարկա»³:

Եվ Հ. Խաչատրյանը հավատարիմ է այս նորմին: Ընդհանուր կարելի է առանձնացնել հումորի դրսևորման 13 ոլորտ, որոնց կանդրադառնանք առանձին-առանձին:

1. Հերոսի ծնունդը: Իր հերոսներին ներկայացնելիս ծաղրի ընկալումը բացառելու նկատառումով Խաչատրյանը վիպակն սկսում է հենց առաջին դեմքով ներկայացվող գլխավոր հերոսի ծննդյան դրվագով. «Հայրս գտնում էր, որ ես պետք է լույս աշխարհ չգայի, որովհետև տանն այլևս ապրելու տեղ չկար»⁴: Ապա երգիծում է իր անվանակոչությունը. «Ես գոհ չեմ, որ իմ անունն էլ է Գեղամ, պապիս անունն էլ, հորս անունն էլ:

Գեղամ Գեղամի Գեղամյան:

....Դպրոցում կատակով ինձ անվանում էին խորանարդ աստիճանի բարձրացրած Գեղամ»⁵:

2. Անվանակոչություն: Անվանակոչության թեման միայն անձնանուններով չի սահմանափակվում, այլ միահյուսվում է տեղանուններին:

Ըստ հեղինակի՝ մի անգամ Բաֆֆին Թիֆլիսից գալիս է Դահրավ, և նրա խնդրանքով դահրավեցիները շրջում են մի մեծ սալաքար՝ վրայի արձանագրությունը կարդալու: Խոնավությունը ջնջել էր արձանագրությունը, բայց սալի տակ հարյուրի չափ հին դրամներ են գտնում, որոնք նվիրում են Բաֆֆուն, վերջինս էլ կնոջը՝ Աննային: Բաֆֆու մահից հետո Աննան հայտնվում է Լոնդոնում և կարիքից դրդված փորձում հավաքածուն վաճառել Բրիտանական թանգարանին, սակայն հավաքածուն զոդանում են: Եվ դահրավեցիները կրկնում էին.

–Դե մեր գյուղի եղած-չեղած հարստությունը մնացել է Լոնդոնում»⁶:

² Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայկական ՄՄՀ ԳԱ հր., հ. 3, 1974, էջ 398:

³ Տե՛ս Пропп В., Проблемы комизма и смеха, gumer. info/bibliotek_Buks/Culture/propp/index.php (Որոնման ամսաթիվ՝ 11.01.2023):

⁴ Խաչատրյան Հ., էջ 5:

⁵ Խաչատրյան Հ., էջ 4-5:

⁶ Նույն տեղում, էջ 8:

Իսկ, այ, Լոնդոնը արմատակալում է Դահրավում. «Եվ գյուղացիները Լոնդոն են կոչել Շնաքարի ծերպերից մեկը: Ի հավելումն դրա՝ Դահրավում Լոնդոն անունով վեց շուն կա, երեք աքաղաղ, մեկ ջորի, մեկ տղամարդ: Մեր գյուղացիներից ամենից շատ խղճում էի Լոնդոնին: Բարի մարդ էր Լոնդոնը, բայց մի աքլորի բախտ էլ չունեւ, որովհետեւ ոչ ոք նրա անունը չէր տալիս: Գյուղացիները նրան կնքել էի Երկու նպատակ անունով»⁷: Պատճառը Լոնդոնի անհամարձակ նամակն էր իր սիրած աղջկան՝ Հեղինենին, որը ծաղրի թեմա էր դարձել:

Նամակն այսպիսին էր. «Միրելի Հեղինե. ես երկու նպատակ ունեմ. առաջինը՝ ավարտել բանֆակը, երկրորդը՝ կառուցել մեր տան երկրորդ հարկը: Քո՝ Լոնդոն»։ Հեղինեն պարտավոր էր գրածն ընկալել այսպես. «Ես սիրում եմ քեզ, և մենք կամուսնանաք, հենց որ վերջացնեմ բանֆակն ու մեր տան երկրորդ հարկի կառուցումը»⁸:

Հերոսի հասունացմանը զուգահեռ ծավալվում են ենթաշերտերը և բնականորեն ներկայացվում է նրա ուսումնառությունը:

3. Հերոսի ուսումնառությունը: Գյուղի խրճիթ-ընթերցարանի վարիչ Բարսեղը գյուղսովետի նախագահի հետ գնացել էր Ստեփանակերտ՝ գրքեր բերելու: Ստեփանակերտի կենտրոնական գրախանութում ստացել էին Շեքսպիրի «Համլետ» գրքի քառասուներկու օրինակ:

«- Ո՞վ է այդ Շեքսպիրը,- հարցրել է գյուղսովետի նախագահը Բարսեղին:

- Անգլիացի է, կարծեմ լոնդոնցի:

- Լոնդոնցի՞:

- Այո:

- Բոլոր գրքերը վերցրու,- կարգադրել է գյուղսովետի նախագահը:

Գրախանութի աշխատողը փորձել է առարկել.

- Դուք ինչո՞ւ եք նույն գրքից քառասուներկուսը գնում, աշխարհի ամենամեծ գրադարանն էլ նույն գրքից այդքան չի առնի:

- Բայց սա Շեքսպիր է,- գիտակ մարդու տեսք է ընդունել գյուղսովետի նախագահը:

- Ի՞նչ անենք Շեքսպիր է,- ասել է գրախանութի աշխատողը:

- Նա Դահրավի հետ կապ ունի:

- Ի՞նչ կապ:

- Ազգակցական:

- Շեքսպիրն անգլիացի է:

- Գրքեր ես ծախում, բայց աշխարհից անտեղյակ ես,- պատասխանել է գյուղսովետի նախագահին այնպիսի տոնով, որ գրախանութի աշխատողը կասկածել է Շեքսպիրի մասին իր իմացածը և ընկերոջն ասել.

- Գուցե այդ Շեքսպիրն, իրոք, դահրավեցի է»⁹:

⁷ Նույն տեղում, էջ 9:

⁸ Նույն տեղում, էջ 9:

⁹ Նույն տեղում, էջ 15:

Արդյունքում՝ խրճիթ-ընթերցարանի 174 գրքերից քառասուներկուսը Շեքսպիրի «Համլետն» էր: Ու երբ Գեղամը 4-րդ դասարանում սկսում է օգտվել խրճիթ-ընթերցարանից, սկսում է «Համլետից», որի ընթերցումը տևում է երկու տարի: Բարսեղը ստիպել էր ընթերցել իր ունեցած քառասուներկու «Համլետները»:

«- Քեռի Բարսեղ, սա նույն գիրքն է,- դժգոհում էի ես:

- Ուշադիր որ կարդաս, կտեսնես, որ նույնը չէ,- ասում էր Բարսեղը»¹⁰:

Ի դեպ, նշենք, որ կատակասեր վանեցիների մեջ էլ շրջանառում է հումորային մի դրվագ, երբ, Շեքսպիրի անունը լսելով, վանեցին արձագանքում է. «Շեքսպի՞ր, էդա մեր Շեկ Իսպիրն է»:

4. Հերոսի ստեղծագործական կյանքը: Ուսումնառության տարիներին դրսևորվում է Գեղամի ստեղծագործական ջիղը, և ամեն օր մի բան էր գրում, դնում ծրարի մեջ և ուղարկում Ստեփանակերտում լույս տեսնող «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրությանը: Եվ ստեղծագործությունների տպարան հասնելու ողիսականը ևս երգիծանքի թեմայի է վերածվում: Քանի որ անփորձ «գրողը» վախենում էր գյուղացիների ծաղրի առարկա դառնալուց, գրվածքներն ուղարկում էր հարևան Բաղարա գյուղի ծանոթ բնակիչների միջոցով: Բայց ուղարկածը հասցեատիրոջը հասցնելու հետ կապված կասկածները ստիպում են խոստովանել. «Համոզված էի, որ բոլոր նամակները չէ, որ տեղ են հասնում: Ոմանք մոռանում էին փոստարկղ գցել, և իմ նամակները ետ էին դառնում Բաղարա: Մինչև յոթերորդ դասարանն ավարտելը ես ամեն օր մի բանաստեղծություն եմ ուղարկել խմբագրության հասցեով: Ու մինչև հիմա էլ չգիտեմ՝ դրանց մեծ մասը Ստեփանակե՞րտ է հասել, թե՞ Բաղարա»¹¹:

5. Համապոլագիներ: Ինքն իրեն երգիծելուց հետո հեղինակն ապահովագրված է համապոլագիների կերպարները տալու: Բայց ինչպես Արիստոտելն է ժամանակին նկատել, երգիծանքը ելնում է ողբերգությունից¹²: Իհարկե, Խաչատրյանը ձեռնպահ է մնում սրտակեղեք տեսարաններից, ողբերգությունն էլ ցցուն չէ, այլ խորքային, անգամ՝ անտեսանելի, բայց զգացվող: Դրանք մարդկանց միամտության, անգրագիտության, պարզամտության, ամաչկոտության արդյունքում ծնված զվարճալի իրավիճակներ են:

Գյուղի ամենաբարձրահասակ մարդուն՝ Աբիդոնին (որն ապրում էր Բաքվում և գյուղ էր գալիս թթի սեզոնին) համապոլագիները դարձրել էին բրենդ և մրցում էին հարևան մեհտիշենցիների հետ: Ու երբ մեհտիշենցի վարսավիր Վաղարշակը տեսնում է Աբիդոնին, զարմանքից բացականչում է.

- Մերդ մեռնի տեխնիկա...

Այնպես էր ասում, կարծես թե Աբիդոնը երկու մետրի է հասել վերամբարձ կռունկի օգնությամբ¹³:

Պակաս զվարճալի չի ստացվում Աբիդոնի աղջիկ ուզելը: Համապոլագիները կազմակերպում են Աբիդոնի ու Մարիայի հանդիպումը գյուղի ամենաբարձր

¹⁰ Նույն տեղում, էջ 15:

¹¹ Նույն տեղում, էջ 16:

¹² Տե՛ս Արիստոտել, Պոեթիկա, Եր., Հայպետհրատ, 1955:

¹³ Տե՛ս Խաչատրյան Շ., էջ 22:

պատշգամբ ունեցող Աբունց երկհարկանի տանը և լրտես կարգում փոքրիկ տղաներից մեկին:

Հեղինակը տալիս է այդ հանդիսավոր իրադարձության ընթացքը. «Հանդիպումը տեղի ունեցավ կեսօրին: Աբիդոնը կանգնեց պատշգամբի մի ծայրում, Մարիան՝ մյուս: Երկուսն էլ ամաչելուց չէին նայում միմյանց: Կես ժամ լուռ մնալուց հետո Աբիդոնը հայացքը դարձնում է մի անոթոշ կոդմ ու ասում.

- Գալի՞ս ես, թե չես գալիս...

Մարիան նրան չի արձագանքում: Կես ժամ հետո Աբիդոնը նորից է ասում.

- Գալի՞ս ես, թե չես գալիս...

Ձեռնահարկում թաքնված տղան հոգնում է Աբիդոնի ու Մարիայի լռությունից... ջրհորդանը գրկած իջնում բակ:

Այդ օրվանից դահրավեցիները Աբիդոնին տվեցին «Գալիս ես, թե չես գալիս» մականունը»¹⁴:

6. Մականուններ: Զվարճալի են ու խոսուն նաև մականունները:

«Դահրավը մականունների գյուղ է: Մականուններ ունեն և՛ տոհմերը, և՛ մարդիկ, և՛ լեռներն ու դաշտերը, և՛ գետերն ու ձորակները, և՛ ընդհանրապես ամեն ինչ»¹⁵, - գրում է հեղինակը:

Օրինակ՝ 14-րդ դարի վերջում Կիլիկիայից Դահրավ գաղթած Կիլիկենց տոհմը կոչել են Յոթ օրականում սեր անող շեկ Կիլիկենք: Գյուղի հարուստների տղաներին՝ Հեթումին ու Ղազարին, Բոստոնից բերել տված կտորից¹⁶ կարած կոստյումների համար կոչել են Ավագ Բոստոն (Ղազար) և Կրտսեր Բոստոն (Հեթում):

Ավագ Բոստոնը սիրում էր գյուղի գեղեցկուհիներից մեկին՝ Արշալույսին: Բայց շուտով նրանք գծովում են: Պատճառը անտառում փայտ կտրելիս Ավագ Բոստոնի գերփայլ կոստյումի պատովելն էր: Գյուղական դերձակը մի կերպ կցմցել էր այն, բայց պատովածքը նկատել են բոլոր դահրավեցիները¹⁷: Եվ քանի որ կոստյումից բացի Ղազարն ուրիշ արժանիք չուներ, Արշալույսը նրա հետ կապը խզել էր:

Ու այդ լուրը շրջում էր ամբողջ գյուղով, և գյուղացիներն իրար ծանուցում էին.

- Ասում են՝ սև կատու է անցել նաև Զաբելի և Կրտսեր Բոստոնի միջև:

- Ի՞նչ է, Կրտսեր Բոստոնի կոստյումն էլ է պատովել:

- Չէ, նրա կոստյումը դեռ չի պատովել, բայց Զաբելն ուզում է ետ չմնալ իր ազգական ընկերուհուց՝ Արշալույսից: Որոշել է ինքն էլ Կրտսեր Բոստոնին թողնի¹⁸:

7. Գյուղացիների անձնական հարաբերությունները: Ուշագրավ է, որ գյուղացիներին նկարագրելիս հեղինակը սատիրայի չի դիմում: Ինչպես ժամանակին «Մեռած հոգիների» լեզուն և ոճը՝ հողվածում իրավացիորեն նկատել է Դերենիկ Դեմիրճյանը. «Սատիրան ժողովրդի տեղը չէ և եթե... հանդես են գալիս ժողովրդական տիպեր, դրանք էլ նկարագրված են բարեմիտ ծիծաղի, հումորի պլանով, կոմիկ գծերով:

¹⁴ Նույն տեղում, էջ 25:

¹⁵ Նույն տեղում, էջ 24:

¹⁶ Հետագայում այդ կտորը ստացել է բոստոն անունը:

¹⁷ Նույն տեղում, էջ 27:

¹⁸ Նույն տեղում, էջ 30:

Նրանք չեն ծաղրվել»¹⁹: Այս դիտարկումը միանգամայն համապատասխանում է Հայկ Խաչատրյանի հերոսներին:

Գյուղում էր ապրում Ձենով Գասպարը, որը ոչ թե խոսում, այլ որոտում էր: Հնարագետ դահրավեցիները խելք խելքի են տվել և որոշել այնպես անել, որ Ձենով Գասպարի ձայնը անտեղի չկորչի: Բերել ու Ձենով Գասպարին հարևան են դարձրել կիսով չափ խուլ Մնացականին, քանի որ, ըստ գյուղացիների, Մնացականի լիարժեք զրուցընկեր միայն Ձենով Գասպարը կարող էր լինել:

Սովորաբար Ձենով Գասպարի և խուլ Մնացականի զրույցներն ամփոփում էին Դահրավի կյանքի տվյալ օրվա կարևոր նորությունները: Եվ գյուղացիներից շատերը, որոնք հոգնում էին դուրս գալ գյուղամեջ՝ լուրերն իմանալու, բավարարվում էին Ձենով Գասպարի ու խուլ Մնացականի զրույցը լսելով:

Հարևան գյուղերում նախանձում էին. « Ձենով Գասպարը և՛ ռադիո է, և՛ թերթ, և՛ գիրք, և՛ հեռուստատեսություն»²⁰:

8. Ղարաբաղյան և ռուսը: Շատ խորքային դիտարկում է կատարում Հ. Խաչատրյանը՝ գրելով. «Ղարաբաղի դեմ հին ու հնագույն անցյալում այնքան են գրոհել, որ նրա զավակները աչքները բացում են թե չէ՝ ինքնապաշտպանության բնագոյով, աստծուց առաջ զենքն են պաշտում ու ռուսին»²¹:

«Ղարաբաղում քչերը գիտեին ռուսերեն: Բայց աշխարհում ոչ մի ղարաբաղցի չէր լինի, մեծ թե փոքր, կին թե տղամարդ, որ չիմանար «գորավստվույտե» բառը»²², - գրում է Հ. Խաչատրյանը:

Ղարաբաղյան ռուսերենի իմացությունը սկսվում էր այդ բառով: Ապա շարունակում է. «Մայրս ասում էր, որ իմ ապուպապերից մեկն է այդ բառը Պետերբուրգից բերել Ղարաբաղ: (Ապուպապի անունը Երկար Գեղամ էր և 1702 թ.-ին Պետրոս Առաջինի մոտ օգնության խնդրանքով ուղարկված պատվիրակության անդամներից էր)»: Եվ հեղինակը հեզնում է. «Այս Երկար Գեղամը վեր է կացել, հազար ճամփա կտրել, հասել Պետերբուրգ ու բերել «գորավստվույտե» բառը: Ա՛յ քեզ խելք: Բա մարդ Ղարաբաղից կգնա Պետերբուրգ, թե ինչ է՝ մի բառ եմ բերո՞ւմ»²³:

9. Գյուղացին և կրթությունը: Անգրագետ գյուղացիներից շատերը կրթության հարգը գիտեին: Այդ հողի վրա երբեմն վիճաբանություններ էին լինում: Ամուսինները վիճում են իրենց դստեր՝ Վեհանուշի կրթության շուրջ: Կինն ուզում էր, որ դուստրը յոթերորդ դասարանն ավարտելուց հետո կրթությունը շարունակի, ամուսինը դեմ էր. «- Ուրեմն յոթ տարին քի՞չ է: Ես որ յոթ տարի սովորած լինեի՝ հիմա կոլտնտեսության նախագահ կլինեի: Ասենք՝ չէ, նախագահն իմ սրտին մոտ գործ չէ: Անտառապահ կդառնայի, ոնց որ մեր Կարապետը, ձի կնստեի նրա նման, ես Կարապետից ինչո՞վ եմ պակաս: Ինձ շատ է դուր գալիս նրա սպիտակաբաշ ձին: Կնստեի ու գոնե մի անգամ

¹⁹ Տե՛ս Դեմիրճյան Դ., *Երկերի ժողովածու, 14 հատորով, հ. XIII, Ե., Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., 1983, էջ 250:*

²⁰ *Խաչատրյան Հ., էջ 30:*

²¹ *Նույն տեղում, էջ 55:*

²² *Նույն տեղում, էջ 55:*

²³ *Նույն տեղում, էջ 55:*

կհասնեի Քշմրորի վերջը: Ախր էսքան ապրեցի, բայց չտեսա, թե Քշմրորը մինչև ուր է ձգվում:

- Ինչե՞ր ես ասում, այ մարդ, ուրիշները մտածում են Բաքու, Մոսկվա տեսնելու մասին, ասում են, որ ռուսերեն իմանաս՝ մինչև Լոնդոն էլ կհասնես.... Իսկ երեկ Հովհաննես Սամվելյանն (դպրոցի տնօրենը - Լ.Ս.) ասում էր, թե հիմա դահրավեցիք պիտի մտածեն, որ իրենց գավակները տասնամյակն էլ ավարտեն, համալսարանն էլ ավարտեն, համալսարանից դեն մի բան էլ կա, մոռացա անունը, էդ բանն էլ»²⁴:

10. Հասարակարգ: Դահրավում քեռի Արշակը հայտնի էր իր կաշվե կապտագույն բաճկոնով, որը չէր մաշում և ամառ-ձմեռ քեռի Արշակի հագին էր:

Թուլը թափ տալու ժամանակ կոլտնտեսությունն իր գլխավոր ուժերը կենտրոնացնում էր թթենու այգում: Թափի բրիգադավար է դառնում քեռի Արշակը: Նրա բրիգադավարությունը տևում է ընդամենը մեկուկես ամիս: Թափից հետո նա սովորական այգեպան է: «Տարվա մեջ մեկուկես ամիս գեներալ է լինում, մնացած ժամանակ՝ շարքային զինվոր: Կոլտնտեսության նախագահները փոփոխվում էին, բայց քեռի Արշակը անփոփոխ էր: Նրա կաշվե բաճկոնին նախանձողներն ասում էին.

- Քանի՞ տարի է Դահրավում կոլտնտեսություն կա, ո՞վ է հիշում՝ այդ ո՞ր վարչության նիստում են քեռի Արշակին բրիգադավար հաստատել...

- Ի՛նչ վարչության նիստ, ի՛նչ բան,- պատասխանում էին սրամիտները,- քեռի Արշակը ցարի ժամանակներից է բրիգադավար»²⁵:

Թափած թուլը կիսատակառնների մեջ սայլերով տեղափոխում էին օղեգործարան, և մարդկանց ու իրերի ճակատագրերի միահյուսումը ամբողջանում է հեղինակի մեկ արտահայտությամբ. «Դա, իհարկե, գործարան չէր, այդտեղ ոչ մի մեքենա չէր գտնի: Կամ այդ օղեգործարանը, կամ քեռի Արշակի բրիգադավարությունը՝ տարվա մեջ մեկուկես-երկու ամսվա կյանք էլ սա ուներ»²⁶:

11. Քաղաքակրթություն: Քաղաքակրթության չափանիշը գյուղում կոշիկն էր, Սևին էլ՝ գյուղի միակ կոշկակարը: Բայց դահրավեցիները տրեխ էին հագնում: Սևու մշտական հաճախորդները գյուղի դպրոցում աշխատող տասներկու ուսուցիչներն էին՝ Հովհաննես Սամվելյանի գլխավորությամբ: Կոշիկ ունեին նաև կոլտնտեսության ու գյուղատվետի նախագահները, բայց սրանք իրենց կոշիկները նորոգելու չէին տալիս: Նրանք կոշիկ էին հագնում միայն Ստեփանակերտ ուրն է խորհրդակցության գնալիս: Այնպես որ նախագահներից յուրաքանչյուրին մեկական զույգ կոշիկը հերիքում էր տասը-տասնհինգ տարի: Եվ առավոտյան նրանցից մեկնումեկին կոշիկով տեսնելիս սովորական են դառնում այսպիսի խոսակցությունները.

- Բարի լույս, Յուլակ:
- Լույս բարի, Աբրահամ:
- Գյուղատվետի նախագահը աչքովդ չի՞ ընկել:
- Տեսա, ներքև էր իջնում:

²⁴ Նույն տեղում, էջ 64:

²⁵ Նույն տեղում, էջ 77-78:

²⁶ Նույն տեղում, էջ 78:

- Տրե՛ խ եր հագել, թե՛ կոշիկ:
- Կոշիկ:
- Ուրեմն, էսօր նրան չեմ հանդիպի, գործս վաղվան մնաց²⁷:

12. Մշակութային արժեքներ: Մշակույթն ու գյուղական ավանդույթները ևս Խաչատրյանի երգիծանքի ուղեծրում են: Ահա Սևու կնոջ՝ Ջարուհու նկարագրությունը. «Ջարուհու գոտին արծաթյա ճարմանդներ ուներ: Ճարմանդներից մեկի վրա Անի քաղաքի զինանշան հովազն էր: Գոտու վրա շարված էին ոսկյա, արծաթյա ու պղնձե հին դրամներ: Պսպղուն դրամների կրկնակ մի շարան էլ ծածկում էր Ջարուհու ճակատը: Նրա ձախ ականջից մարգարտյա օղ էր կախված: Ձախ ձեռքի բազուկին հագրել էր արծաթյա երկարուկ բազպան, որն ասում են հագար տարվա հնություն ուներ: Այնպես որ, Ջարուհին միայն կոշկակար Սևու կինը չէր, նա Դահրավի շարժական թանգարանն էր»²⁸:

Երգիծելու մյուս թեման թթենու այգում ամեն տարի այգի եկող աղջիկների արտաքինի, շարժումների, պահվածքի հիման վրա տարվա գեղեցկուհի ընտրելու ավանդույթն էր և այդ առիթով գյուղացիներից մեկի փիլիսոփայությունը:

«Թաղևու Մանուշակյանը հարցատարափի տակ է գցում Միքայել Սամվելյանին և փորձում պարզել գեղեցկուհու ընտրության խնդրի հետ կապված կնճռոտ կողմերը:

- Ասում են Եվրոպայում էլ են գեղեցկուհի ընտրում, ճի՞շտ է:
- Ճիշտ է, Թաղևու:
- Նրա՞նք էլ են մեզ նման ընտրում:
- Չէ, Թաղևու: Նրանք չափում են աղջկա գլխի, կոնքի, իրանի, սրունքերի, ոտքերի ու ձեռքերի համաչափությունը, շրթուքների շարժումներն ու ատամնաշարի ամրությունն ու սպիտակությունը:

- Էդ բոլորը որտե՞ղ են անում, թթենու այգո՞ւմ:
- Նրանք թթենու այգի չունեն, Թաղևու:
- Ուրեմն ամբողջ Եվրոպայում մեր գյուղի թթենու այգու չափ մի այգի չկա՞²⁹:

13. Հերոսի բարձրագույն կրթությունը: Վիպակի վերջին դրվագը հերոսի ուսանողական տարիներն են, և այստեղ հնչում է երգիծանքի տխուր նոտան. «Պատության մեջ եղել են դեպքեր, երբ թշնամին նվաճել է քո հայրենի հողը, մի քանի հարյուր տարի նստել նրա վրա և հետո, ի լուր աշխարհի, հայտարարել, թե այդ հողը իր բնօրրանն է: Ճիշտ այդպես էլ հիշողությանս տարածքի մի մասը հերկվեցին փուչ դասախոսություններով և հավիտյանս հավիտենից մնացին խոպան»³⁰:

Ինչպես երևում է, Հայկ Խաչատրյանի ինքնատիպ գանձարանը անսպառ նյութ կարող է տալ ուսումնասիրողին, հարստացնել հանրագիտարանային գիտելիքներով, տեղափոխել հին ժամանակներ ու ապրել տալ մեր պատմությունը:

²⁷ Նույն տեղում, էջ 80:

²⁸ Նույն տեղում, էջ 80-81:

²⁹ Նույն տեղում, էջ 85:

³⁰ Նույն տեղում, էջ 107:

Այսպիսով՝ այս փոքրիկ անդրադարձով փորձեցինք ուշադրություն հրավիրել ուսումնասիրության վիթխարի նյութ տվող և զարմանալիորեն անտեսված մի գրողի՝ Հայկ Խաչատրյանի հարուստ գրականությանը, այն հույսով, որ նրա երկերին հավուր պատշաճի անդրադարձ կկատարվի և կտրամադրվի հանրությանը՝ ճանաչելու և արժևորելու ակնկալիքով:

ЛИАНА САНТРИАН

ЮМОР В РОМАНЕ АЙКА ХАЧАТРИЯНА "КШМРОР"

РЕЗЮМЕ

Айк Хачатрян, автор более десятка исторических романов и более двух десятков энциклопедических произведений, до сегодняшнего дня остается совершенно забытым и должным образом не изученным. Единственным его произведением является роман "Кшмрор", который написан юмористическим, диалектным, веселым и живым языком. Юмор автора добрый, привлекательный и охватывает 13 сфер сельской жизни: рождение, имянаречение, образование, творческая жизнь героя, односельчане, прозвища, личные отношения односельчан, карабахско-российские отношения, образование, общественный порядок, цивилизация, культурные ценности, высшее образование героя.

Статья является попыткой привлечь внимание к работам автора и внести небольшую лепту в скромный вклад в этой области.

Ключевые слова: Айк Хачатрян, Кшмрор, Дахрав, юмор, крестьянин, общественный строй, цивилизация, культура.

LIANA SANTRYAN

HUMOR IN HAYK KHACHATRYAN'S "KSHMROR" NOVEL

SUMMARY

Hayk Khachatryan, the author of more than a dozen historical novels and more than two dozen encyclopedic works, remains completely neglected and not properly studied until today. His only work is the novel "Kshmrор" written in a humorous, dialectal, brisk and lively language. The author's humor is kind, attractive and covers 13 areas of rural life: the hero's birth, naming, the hero's education, the hero's creative life, fellow villagers, villagers' nicknames, villagers' personal relationships, Karabakh-Russian relations, education, public order, civilization, cultural values, the hero's higher education.

The article is an attempt to draw attention to the author's works and to make a small support to the modest contribution in this field.

Key words: Hayk Khachatryan, Kshmrор, Dahrav, humor, peasant, social order, civilization, culture.

ՈՒՍՈՒՑՉԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ ԴԱՍԻՆ

Հողվածում դիտարկված են տարրական դպրոցի ուսուցչի դասի նախապատրաստումը, հաջողությունն ու արդյունավետությունը:

Դասի ընթացքում է ամբողջական կարգով ու միասնական պայմաններում ձևավորվում ուսուցչի և աշակերտի փոխկապակցված, իրար հաջորդող ու փոփոխվող փոխազդեցությունները: Ուսուցչի դասի նախապատրաստումը, օրվա դասի կազմած պլանը նրա ստեղծագործական ոգու արտահայտությունն է: Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել, պլանին կցել համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշները: Հետևաբար, ուսուցչի պարտականությունները ներառում են ուսումնական նյութի մանրակրկիտ պատրաստումն ու դասի կառավորումը, ինչպես նաև մեթոդի ճիշտ ընտրություն:

Ուսուցման ճիշտ ընտրած մեթոդների օգնությամբ է ուսուցիչը ձգտում բարձրացնել ու հարստացնել սովորողների գիտելիքները, հասնել նրան, որ նրանք կարողանան տիրապետել գիտության համապատասխան հիմունքներին և սկզբունքներին:

Շատ ճիշտ է ուսուցչի դերն ու նշանակությունը որակել ժողովուրդը՝ ասելով. «Ուսուցիչ չեն դառնում, ուսուցիչ ծնվում են»: Եվ այդ ի բնե օժտված անհատականությանն է վերապահված դաստիարակել, գիտությամբ ու պատվապահությամբ, հայրենասիրությամբ, ազգասիրությամբ, ընկերասիրությամբ, ազնվությամբ զինել մատաղ սերնդին՝ նրան արժանավոր որդի, քաղաքացի, հավատարիմ ու ազգասեր հատկանիշներ ունեցող մարդ տեսնելու հեռանկարով: Իսկ այդ ամենի ակունքը նախ և առաջ դպրոցի դասարաններն են ու այստեղ անկացվող ծրագրված դասերի արդյունավետությունը:

Դասի հիմնական սկզբունքներն ու խնդիրները ռեալություն դարձնելու գործընթացն ընկած է ուսուցչի ուսերին, նրա ձեռք բերած գիտելիքների ու պրակտիկայում գործադրած ջանքերի շնորհիվ, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցության շրջանակների աստիճանաբար լայնացման նախապայմանով:

Ուսուցիչների լավագույն օրինակներ կարող են հանդիսանալ Մ. Մաշտոցը, Մ. Խորենացին, Գր. Նարեկացին, Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Կ. Ուշինսկին, Վ. Սուխոմլինսկին և շատ ու շատ ուրիշ երևելիներ, առաքյալներ:

Բանալի բառեր՝ ուսուցիչ, դաս, ուսումնական պլան, մեթոդ, ծրագիր, աշակերտ, բարձր որակ, պատրաստվածություն, խաղ, դաստիարակում:

Մանկավարժության մեթոդաբանությունը դասին վերաբերող ահագին գիտանյութ է շրջանառության մեջ դրվել: Այդուհանդերձ նրա շուրջ քննություն կատարելը նոր շրջանակներ է բացում, նոր ու օգտակար մոտեցումներ նախանշում: Ուսումնական տարին սկսելուց առաջ ուսուցիչը նախապատրաստվում է ընդհանուր դասընթացին, ծանոթանում է ուսումնական պլաններին ու ծրագրերին, ուսումնական ձեռնարկներին, դասագրքերին, մեթոդական ձեռնարկներին:

Ինչպես նաև ուսումնասիրում է դասավանդվող առարկայի և հարակից հիմնահարցերի ընդհանուր խնդիրները:

Ուսուցչի օրվա դասի հաջողությունն ամենից առաջ պայմանավորվում է նրա ճշգրիտ պլանավորումով: Ուսուցիչը կազմում է օրացուցային թեմատիկ պլան. դրա կատարման գործում էական դեր է խաղում ուսուցչի մանկավարժական փորձը: Ուսուցիչներն իրենց աշխատանքի առաջին փուլում դասերը պլանավորում են մանրամասն՝ ցույց տալով դասի նպատակը, համառոտ գրառված հիմնական հարցերը: Այսպիսով, դասերի պլանավորումը պետք է ծառայեցվի ուսուցիչների մանկավարժական վարպետության բարձրացմանը:

Օրվա դասի պլանն ուսուցչի ամենօրյա անձնական գործունեության ուղեցույցը պետք է լինի: Նա օրվա դասի թեման ընտրելիս ելակետ է ընդունում իր գիտելիքներն ու մասնագիտական պատրաստվածությունը: Որքան խորը տիրապետի իր մասնագիտության գաղտնիքներին, այնքան բարձր կլինի գործունեության արդյունքները:¹ Ուսուցչի օրվա դասի կազմած պլանը նրա ստեղծագործական հետադիմ է, և այն, ի վերջո, դառնում է նրա մանկավարժական արվեստի հայելին: Դասին նախապատրաստվելիս ուսուցիչը հաշվի է առնում նաև աշակերտների հնարավորությունները:

Մեծ լուսավորիչ մանկավարժ Խ. Աբովյանը, ուսուցչի գիտական պատրաստվածության մասին խոսելով, մատնանշել է, որ ուսուցման հաջողության նախապայմաններից ամենագլխավորը ուսուցչի բարձր որակն ու առարկայի պատրաստվածությունն է: Տեղին է հիշել ականավոր մանկավարժ Վ.Ա. Սուխոմլինսկու արժեքավոր խորհուրդն ուղղված ուսուցչին. «Եթե ուսուցիչը թեկուզ մեկ օր կանգ է առնում իր մտավոր աճում, նա դադարում է գիտելիքների ջահ լինելուց իր սաների համար»:²

Մանկավարժական աշխատանքը աներևակայելի է առանց ստեղծագործական մոտեցման: Ուսուցչի ստեղծագործական ջիղը, նրա մանկավարժական տաղանդը ծնվում են մշտական, համառ ու նպատակասլաց ստեղծագործ աշխատանքի շնորհիվ:

Դպրոցում ուսուցչի համար ստեղծագործական բարենպաստ պայմանների ստեղծումը կարևորել է Մ. Մ. Պոտաշնիկը, որ կարելի է ծնվել ստեղծագործող, եռանդուն, անհանգիստ, բայց հաճախ նույնիսկ տաղանդավոր մարդը գործունեության անբարենպաստ պայմանների պատճառով այդպես էլ չի կարողանում օգտագործել իր ստեղծագործական ներուժն ու հնարավորությունները:³

Անընդհատ որոնման աշխատանք կատարելով՝ նա ոչ միայն հարստացնում է

¹ Հարությունյան Գ., Դասի արդյունավետության բարձրացման ուղիները, Ստ., 2002, էջ 7-11:

² Սուխոմլինսկի Վ., Խորհուրդներ ուսուցչին, «Լույս» հր., Ե., 1975, էջ 128:

³ Սոտաշնիկ Մ., Управление современной школой.-М., изд. «Просвещение», 1992, с. 167:

իր գիտելիքների պաշարը, այլև ձեռք է բերում կատարելագործելու վարպետություն: Թեման բացատրելիս ուսուցիչը պետք է կիրառի այնպիսի դիդակտիկ ու ինտերակտիվ արդիական մանկավարժական մեթոդներ, որոնք կնպաստեն աշակերտների կողմից գիտական գիտելիքների ձեռքբերմանը:

Սովորողների կարողությունների և հմտությունների ձևավորման համար նշանակություն ունի դասվանդման ընթացքում համապատասխան մեթոդների ընտրությունը: Այսօր դպրոցում ուսուցիչների կողմից լայնորեն կիրառվում է ԽԻԿ համակարգն իր երեք փուլերով:

- Խթանում, որը ավանդական ուսուցման նախապատրաստական փուլն է,
- Իմաստի ընկալում, որը փաստորեն, նոր նյութի հաղորդման փուլն է,
- Կշռադատում, որը համապատասխանում է հաղորդած նյութի ամրակայման

պահին:

Այս մեթոդները հարմար են կիրառել խթանման փուլում՝

- մտագրոհ
- խմբավորում
- պրիզմա
- հինգրուպեանոց ազատ շարադրանք.....

Իմաստի ընկալման փուլում՝

- T- աձև աղյուսակ
- Վենի տրամագիր
- զրույց
- բանավեճ
- համառոտ դասախոսություններ
- խճանկար.....

Կշռադատման փուլում՝

- քառաբաժան աղյուսակ
- անկյուններ
- երեք բանալի, մեկ կողպեք.....

Իհարկե ոչ բոլոր ուսուցիչներն են իրենց դասին կիրառում ժամանակակից մեթոդներ, դասը վարում են հնացած, միօրինակ մեթոդներով: Դասի արդյունավետության բարձրացումը յուրաքանչյուր ուսուցչի գլխավոր խնդիրն է, առավելապես՝ արդի շրջանում, երբ ուսուցիչը գտնվում է մի իրավիճակում, որտեղ մի կողմում համակարգիչն է, մյուս կողմում՝ դասագիրքը: Ուսուցիչը, օգտագործելով ժամանակակից մեթոդներ, հնարավորություն է տալիս աշակերտներին զինել խոր ու կայուն գիտելիքներով: Հայ ականավոր մանկավարժ, հոգեբան Գուրգեն Էդիլյանը՝ «Դասավանդման ձևեր» աշխատության մեջ գրել է. «Ուսուցման մեթոդների բազմազանությունը կազմում է դասավանդման հիմքը, ընտրություն անելը ոչ թե վնասում է գործին և ուսուցչին դժվարությունների մեջ ձգում, այլ նրան ազատում է նեղ կապանքներից»:⁴ Շատ կարևոր է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը տարրական

⁴ Էդիլյան Գ., *Դասավանդման ձևեր*, Էջմիածին, 1913, էջ 134:

դասարաններում: Այն ճիշտ և տեղին կիրառելով՝ բարձրանում է սովորելու շարժառիթը, բարելավում է դասի անցկացման մեթոդները և մեծ դեր է խաղում դասին արագ և որակյալ պատրաստվելուն: Տարրական դասարաններում գիտելիքների յուրացման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար կարելի է կիրառել խաղային տեխնոլոգիան: Խաղը շփման եղանակ է և ի հաշիվ երկխոսության, մրցակցության՝ հաղթահարում է ուսուցման միակողմանիությունը: Խաղը ունի և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական, և՛ սոցիալական ուղղվածություն: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես տարրական դպրոցում: Խաղերը հետաքրքրություն և ստեղծագործական վերաբերմունք են ձևավորվում առարկայի հանդեպ, խթանում դպրոցականի ակտիվությունը դասին, նպաստում աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում ուսուցչին ակտիվացնել անվստահ, անհամարձակ երեխային, որովհետև հենց խաղի ժամանակ է իրեն ազատ զգում: Խաղին կարող է մասնակցել նաև ուսուցիչը՝ դրսևորելով երեխայակենտրոն մոտեցում: Խաղի ընթացքում երեխաները կարողանում են մտածել տվյալ հարցի շուրջ: Խաղն օգնում է հասկանալ, որ իր խնդիրները, մտահոգությունը ուշադրության արժանի են: Արդյունքում երեխաները ձեռք են բերում ինքնավստահություն, և զարգանում է նրանց գննողականությունը:

Այսպես.

- դասի հաջողությունն ու արդյունավետությունը պլանավորելու համար ուսուցիչը պետք է դասին լավ նախապատրաստվի:
- մասնագիտական խելամիտ ու զուգակցված հարցերն ու առաջադրանքները մեծապես կնպաստեն աշակերտների գիտելիքների բարձրացմանը:
- առաջադրանքները պետք է այնպես ձևակերպել, որ աշակերտները կարողանան հասնել իրենց իսկ ուզած արդյունքին:

Ավելորդ չենք համարում հիշեցնել ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու այն դրույթը, ըստ որի, «Ճիշտ կազմակերպված դասերը աշակերտներին սովորեցնում են ինքնուրույն աշխատանքի, դաստիարակում պատասխանատվության զգացում, օգնում տիրապետել գիտելիքներին, հմտություններին»:

Յուրաքանչյուր դաս պետք է համապատասխանի պլանում նշված թեմային: Ուսուցիչները տվյալ դասի պլանում նշում են, թե քանի աշակերտի պիտի հարցնեն նյութի ամրապնդման ուղղությամբ, ինչ հարցեր, առաջադրանքներ պիտի տան՝ ստուգելու նրանց կողմից ուսումնական նյութի յուրացման խորությունն ու կայունությունը: Ուսուցիչը հարցերն պետք է ձևակերպի այնպես, որ աշակերտները որոշակի ջանքերի միջոցով կարողանան հասնել անհրաժեշտ արդյունքին: Առաջադրված հարցերը չպետք է լինեն հուշող, պետք է լինեն պարզ, հասկանալի, մտապահիլող:

Խելամտորեն առաջադրված հարցերը դասի բոլոր փուլերում հանդիսանում են այն գլխավոր միջոցները, որոնց շնորհիվ ապահովվում է աշակերտների ճանաչողական ակտիվությունն ուսուցման գործընթացում:

Ինչպես գիտենք, զննականությունը բարձրացնում է սովորողների հետաքրքրությունը գիտելիքների խոր ու կայուն յուրացմանը, և դրան նպաստում է ուսուցչի հնարավորինս շատ զննական, դիտողական պարագաների, ցուցադրումների օգտագործումը: Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը պետք է գրավի հարցասիրության, հետաքրքրասիրության, իմացական հետաքրքրության արթնացման հաշվին: Կարևոր է ոչ միայն դասի սկզբում ապահովել թեմայի ուսումնասիրման պահանջները, այլև դասի ընթացքում, հատկապես երկրորդ մասում, երբ վրա է հասնում լարվածությունը⁵:

Կարծում ենք, որ դասը պետք է ընդմիջել ֆիզկուլտ դադարներով, դիդակտիկ ու շարժուն խաղերով, դա թույլ կտա աշակերտներին հանգստանալ, հանել լարվածությունն ու հավաքել նոր ուժեր: Դիտողականությամբ հագեցած դասը աշակերտների մեջ առաջ է բերում խորհելու, մտածելու ցանկություն: Դիտողականության օգնությամբ ավելի է հեշտանում դասանյութի բացատրությունը, նրա ամրակայումն ու յուրացումը: Ավելի հետաքրքիր ու բովանդակալից է դառնում դասը, բարձրանում է երեխաների ակտիվությունը: Ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին գրել է. «Ո՞վ չի նկատել, որ մեր հիշողության մեջ առանձին ամրությամբ են օգնում այն պատկերները, որոնք ինքներս ընկալել ենք հայեցողության միջոցով, մեզ հմայած այդպիսի նկարի հետ մենք հեշտությամբ ու ամուր կապում ենք նույնիսկ վերացական գաղափարներ, որոնք առանց դրան արագորեն կջնջվեն»:⁶

Ուսուցիչն ապահովում է աշակերտների ակտիվությունը, հատկապես աշակերտների ճանաչողական ակտիվությունը, հետաքրքրությունն ու ուշադրությունը: Դ. Աղայանը ուսուցման հաջողության հիմքը համարում է ուսուցչի կողմից իր գործը և աշակերտներին սիրելը, նրանցով ոգևորելը:

«Պարտավորություն վարժապետաց» հոդվածում գրում է. «Գլխավորը և միակը ուսուցման հոգին է, այն կյանքը, որով զարգանում է սովորողի միտքը»⁷:

Աշակերտ-ուսուցիչ կապը պետք է լինի անշահախնդիր, թափանցիկ ու պարզ: Դասի յուրաքանչյուր փուլում ուսուցիչը հակված է բարձրացնել աշակերտների արժանապատվությունը, այսինքն՝ դասի ընթացքը զուգահեռով, փոխկապակցված լինի ուսուցչի տակտի, հարգանքի և պահանջկոտության սկզբունքներին:

Ուսուցիչը, հանգամանորեն ուսումնասիրելով իր բոլոր աշակերտներին, կճանաչի նրանցից յուրաքանչյուրի ֆիզիկական, մտավոր, հոգեկան առանձնահատկությունները:

Օրինակ, եթե աշակերտը դասը չի սովորել կամ վատ է պատասխանել, ապա աշակերտը ոչ թե պիտի արժանանա ուսուցչի կշտամբանքին, այլ նրա սիրո, հոգատարության, հասկացողության տարաբնույթ դրսևորումներին: Իր դասին ընդգրկի ոչ միայն ակտիվ աշակերտներին, այլև մշտական ուշադրության կենտրոնում պահի պասիվ աշակերտներին: Լավագույն ուսուցիչը անպայմանորեն ամեն մի աշակերտի

⁵ Բաբանսկի Յու., Մանկավարժություն, Մոսկվա, էջ 178:

⁶ Ուշինսկի Կ., Մանկավարժական ընտիր երկեր, հ.1, 1959, էջ 156:

⁷ Աղայան Դ., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 76:

նկատմամբ պետք է ունենա անհատական մոտեցում ու ցուցաբերի հավասար սկզբունքներ:

Տաթևի համալսարանի (1346-1409թթ.) բաբունապետ Գրիգոր Տաթևացին, որը 30 տարի ղեկավարել է Տաթևի համալսարանը, իր «Մահմանադրությունն դաստիարակության» աշխատության մեջ ներկայացրել է սեփական մանկավարժական հայացքները: Ըստ նրա, ուսուցիչը պետք է լինի գիտուն, սեր ունենա երեխաների հանդեպ, լինի ոչ շատ գորովագույթ, ոչ ավելորդ խստապահանջ, կարողանա հետաքրքիր ու պարզ ձևով կազմակերպել ուսուցման գործընթացը, սովորեցնի ինքնուրույն մտածել:

Ուսուցիչը դասը նախապատրաստելիս պարտավոր է ուշադրություն դարձնել աշակերտների կողմից ուսումնական նյութի գիտակցական յուրացմանը: Նման յուրացման ցուցանիշներից մեկը աշակերտների կողմից ուսումնական նյութի բովանդակությունը պարզ ու հստակ վերարտադրման ընդունակություն դրսևորելն է: Այնուամենայնիվ, ուսուցման ամբողջ հաջողությունը պայմանավորված է աշակերտների ակտիվությամբ: Յու. Բաբանսկու կարծիքով աշակերտների ակտիվությունը պետք է ուղղված լինի ոչ միայն նյութի ըմբռնմանն ու յուրացմանը, այլև գիտելիքների ինքնուրույնաբար ձեռքբերմանը:⁸

Ըստ Աղայանի, ուսուցիչը պետք է լինի իսկական մարդու կերպար, ամենուրեք իրեն դրսևորի որպես հայրենանվեր քաղաքացի, բազում թելերով կապվի մեր հասարակությանը, խորամուխ լինի նրա առօրյայում, սովորի նրանից, բարձր պահի նրա պատիվը, պահպանի մեր ժողովրդի դարավոր, խորիմաստ ավանդույթները:

Աղայանը միաժամանակ մատնանշում է, որ լավ ուսուցիչը աշակերտի իդեալն է. «Ով չգիտե, որ աշակերտը ասելով վարժապետին, ատում է և նորա ուսմունքը, որքան որ այդ օգտակար լիներ և ընդհակառակն, պատվելով վարժապետին, սիրում է և նորա դասերը թեև դոքա անօգուտ ևս լինեն»: Ուսուցիչը իր աշակերտների համար բարոյական տիպար է, որը պետք է ուսուցանի գործի և խոսքի համամասնությամբ. նա պիտի լինի անաչառ բոլոր աշակերտների նկատմամբ⁹:

Ուսուցչի լեզուն, խոսքը, պատմելու, բացատրելու, պարզաբանելու վարպետությունը, շարժն ու ձևը պետք է այնպես գրավիչ լինեն, ինչպես հանճարեղ դերասանի խաղը:

Լավագույն ուսուցիչը նա է, ում մասնագիտական գիտելիքներն ու բարոյական որակները մշտապես միասնության մեջ են և գործում են անխափան: Հարուստ գիտելիքներն ու բարոյական որակներն այն «սլաքներն» են, որոնցից առաջինը (գիտելիքները) ցույց է տալիս ուսուցչի խելքի ուժը, իսկ երկրորդը (բարոյական որակները)՝ հոգու ուժը: Բավական է, որ այդ ուժերից մեկը բացակայի, ուսուցիչը կգրկվի իր բարձր կոչման տերը լինելուց:

Ուսուցչի վարած դասը, ինչպես եկեղեցու զանգի խորհրդավոր ձայնը, պետք է «դողանջի»: Նրա դաս հարցնելը, ուսումնական նոր նյութի հաղորդումը, ուսուցման

⁸ Բաբանսկի Յու., *Դասի կատարելագործման պրոբլեմները*, «Մոսկվա» հր., 1981, էջ 52:

⁹ Աղայան Ղ., *Երկերի ժողովածու*, հ. 4, էջ 401:

մեթոդների, հնարների ու միջոցների զուգակցված կիրառումը, ողջ դասի ընթացքում աշակերտներին ակտիվ վիճակում պահելը, դիտազննական պարագաների, ուսուցման տեխնիկական միջոցների տեղը-տեղին օգտագործումը, գրատախտակին գեղեցիկ գրած մի բառը, մի անունը, պետք է արվեստի նմուշների գրավչություն ունենան¹⁰:

Յուրաքանչյուր դաս ստեղծագործություն է, այն սովորողների անձի ձևավորման և զարգացման միջոցն է: Դասը հանդիսանում է սովորողների աշխարհայացքի ձևավորման, նրանց խոր ու կայուն գիտելիքներով զինելու, ունակությունների ու կարողությունների զարգացման հիմնական միջոց: Դասի ընթացքում ամբողջական կարգով ու միասնական պայմաններում ձևավորվում են ուսուցչի և աշակերտի փոխկապակցված, իրար հաջորդող ու փոփոխվող փոխազդեցությունները: Կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաներ, ժամանակակից ուսուցման մեթոդներ՝ ուսուցիչը ձգտում է բարձրացնել ու հարստացնել սովորողների գիտելիքները, հասնել նրան, որ նրանք կարողանան տիրապետել գիտության հիմնարար սկզբունքներին:

ОКСАНА ГАСПАРЯН

ПОДГОТОВКА УЧИТЕЛЯ К УРОКУ

РЕЗЮМЕ

В статье рассматривается подготовка учителя начальной школы к занятиям, его успех и эффективность.

Во время занятия взаимосвязь между учителем и учеником формируется в едином порядке. Выражение творческого духа учителя-это есть его подготовка к занятию.

План каждого урока должен быть тщательно составлен. К нему должен быть приложен соответствующий дидактический материал и должны быть определены критерии заданий. Поэтому в обязанности учителя входят: тщательная подготовка учебного материала, оборудования, а также правильный выбор метода. С помощью правильно выбранного метода учитель стремится расширить и обогатить знания студентов, чтобы они сумели овладеть основными принципами науки. Очень верно народ определил роль и место учителя, говоря: “Учителем не становятся, а рождаются”. И эта свыше наделенная личность сумеет с честью воспитать подрастающее поколение, обладающее патриотическими качествами: любовь к нации, дружелюбие, преданность, то есть видеть человека- достойного сыном своего народа. Истоками всего этого являются начальные классы, где наблюдается эффективность запланированных занятий.

Реализации основных задач лежит на плечах учителя, на его знаниях, которые он приобрел, а также благодаря усилиям применения на практике соотношения ученик-учитель.

Примерами лучших учителей могут считаться известные апостолы: М. Маштоц, М. Хоренаци, Г. Нарекаци, Х. Абовян, Г.Агаян, К. Ушинский, В. Сухомлинский и др.

Ключевые слова: учитель, урок, учебный план, метод, программа, ученик, высокое качество, подготовленность, игра, воспитание.

¹⁰ Ամիրջանյան Յու., Մահալյան Ա., Մանկավարժություն, «Մանկավարժ» հր., Ե., 2005, էջ 77:

OKSANA GASPARYAN

TEACHER'S PREPARATION FOR THE LESSON

SUMMARY

The article examines the preparation, success and effectiveness of the elementary school teacher's class. During the lesson, the interconnected, successive and changing interrelationship between the teacher and the pupil are formed in a complete order and under unified conditions. Preparation of the teacher's class, the plan of the day is the expression of his creative spirit. The plan of each class must be worked out in detail, must be attached an appropriate didactic material to set the task criteria. Therefore, the teacher's responsibilities include thorough preparation of the educational material and the furnishing of the class, as well as the right choice of the method. With the help of the right methods of teaching, the teacher seeks to raise and enrich the knowledge of learners, to achieve that they can master the basics and principles of science. Very correctly, the people defined the role and place of the teacher, saying: " They don't become teachers, teachers are born." And this naturally gifted person will be able to educate the younger generation with knowledge and honor, possessing patriotic qualities: love for the nation, friendliness, devotion, that is, to see a person as a worthy son of his people. And the source of all that is, first of all, the school classes and the effectiveness of the planned lessons taught here.

The process of turning the basic principles and problems of the lesson into reality lies on the shoulders of the teacher, through his knowledge and efforts in practice, and the gradual expansion of the framework of the pupil-teacher relationship.

The best examples of teachers can be M. Mashtots, M. Khorenatsi, Gr. Narekatsi, Kh. Abovyan, G. Aghayan, K. Ushinsky, V. Sukhomlinsky and many, many other notables, apostles.

Keywords: *teacher, class, curriculum, method, programme, pupil, high quality, preparation, play, upbringing.*

THE APPROACHES OF TEACHING ENGLISH AND THE USE OF INNOVATIVE TECHNOLOGIES IN THE ENGLISH TEACHING PROCESS

Having confirmed the approaches of teaching the English language, which include various methods and the development of innovative technologies has provided a new method in teaching English in recent years. Using ICT (Innovative Computer Technologies) the English language teachers must master the methodology of operating ICT tools to organize an educational process. Moreover, ICT can also function as an instrument of curriculum differentiation. The ICT enables the teacher to free up time for creative activities and create individual learning routes for students. One of the most positive results of using ICT in education is the possibility of greater satisfaction of the individual needs of students. Technologies provide not only interesting curriculum content, but also allow more reliable assessment of students' knowledge, identify weaknesses in their preparation, and determine the necessary knowledge and skills for teachers.

Generally, this article concludes the impact of ICT on teaching is undeniable. ICT environment develops the experience of both teachers and students. The innovative computer technologies in teaching are not the main method of teaching English but this method is full of opportunities and flexibility.

Key words: approach, method, information, ICT, educational process, interactive method, students, result, skills.

The main purpose of this study is to examine traditional and non-traditional methods of teaching English language, to underline the benefits of nowadays methods using the Innovative Computer Technologies in teaching English. There are three approaches to studying language and all methods are conventionally divided into the following groups¹:

Structural approach² (language is seen as an interconnected system of grammatical elements)

- The Grammar Translation Method (Celce-Murcia, 1991) - This method has been known to us since Soviet times, which is based on written translation and reading. In this case, texts are usually composed aimed at developing some grammatical rules. The basis is vocabulary learning, spelling, grammar and practice through written translation of grammatically rich texts. Now this method is used to study dead languages.

¹ Gusevskaya N.YU., *Language Teaching Theory and Methods*. Perm National Research Polytechnic University, Perm, 2015, p.246-252.

² Diane Larsen-Freeman, Jeanette De Carrico. *An Introduction to Applied Linguistics*, London, 2019, p.16.

Audio-lingual method³

- The essence of this method is that the learner constantly listens and repeats the recording in a foreign language.

Proprioceptive method⁴

- The proprioceptive language learning method (proprioceptive method) is a language learning technique which emphasizes simultaneous development of cognitive, motor, neurological, and auditory functions as all being part of a comprehensive language learning process.

Proponents of this method claim that the learner should use his language, oral speech constantly during learning, even when completing written tasks.

A functional approach⁵, where language is a means of expressing and implementing certain functions.

Situational language teaching (Oral approach)

- Based on the structure of the language the learner learns the most frequently used words and phrases through repetition and immediately puts them into practice. Here, the spoken word rules over the written word and maximum attention is paid to the mistakes that can be made during the spoken word.

Directed practice /experience/

- In this case, the learner constantly repeats the phrases until they are memorized mechanically. In this way, the learner's vocabulary and language flexibility are affected, but we achieve automatic mastery of basic/base/expressions of the language.

Interactive approach (language is a tool for creating and establishing social relations)

The direct method

- It is planned that the foreign language is taught in the same way as the native language, that is, the teaching process itself is conducted in the foreign language, and the use of the native language is excluded as much as possible the idea of the method is the "natural" assimilation of a foreign language, as in the case of a native language which is also called the natural method.

The series method

³ Kebson Kakunta, *Microteaching: Audio-lingual Method*, Pedagogical University, Mozambique, 2020, p 25.

⁴ <https://www.k12academics.com/education-subjects/language-education/language-teaching-methods/proprioceptive-language-learning-met>.

⁵ Richards & Rogers, *Approaches and Methods in Language Teaching*, Cambridge, New York 2016.

- Vocabulary enrichment by repeating sequential actions over and over again. Example: Every morning I wake up at 7 o'clock, take a shower, get dressed, have breakfast, have coffee, go to school, hang out with friends after school, etc. This same example can be used for better mastery with different tenses.

Communicative language teaching⁶

- Plans to use the language being studied not only to complete assignments but also to communicate with the teacher and other learners. It includes interactive exercises such as dialogues, role plays, group work, etc.

Language immersion⁷

- The method is used in elementary school, promoting the option of bilingualism, teaching the subjects of the school curriculum in a foreign language. Even reading in the mother tongue is started after passing the stage of reading in the foreign language.

Silent method⁸

- In this case, the teacher is more silent than talking. When teaching pronunciation in elementary grades, the teacher uses various colored charts, where each colour or symbol represents a sound. In this way, new words are also taught.

Natural approach⁹

- The emphasis is on the notion that the learner can learn anything. Any new lesson must be built on the previous lesson and be available for learning.

Physical response method

- In the first stage, learners passively perceive the material without using it. In the second stage, they have to respond to some words, especially verbs, for example by doing them. And only after overcoming these two stages, only the learners themselves use the mastered material.

Reading and telling method¹⁰

- Considered a sub-branch of the Physical Response Method. The teacher tells small stories with rich vocabulary to the students and then asks questions about the story. The latter must answer the questions using the words of the material.

Dogme language teaching¹¹

- This method refuses to use any textbook during language learning, emphasizing teacher-learner interaction. The learning materials that the learner should use should be self-created materials.

⁶ https://en.wikipedia.org/wiki/Communicative_language_teaching.

⁷ Colin, Baker, *Bilingual Education and Bilingualism*, Great Britain, 2011, p 10.

⁸ Caleb Gattegno, *Teaching Foreign Languages in Schools: The Silent Way*, 1963.

⁹ Richards & Rogers, *Approaches and Methods in Language Teaching*, Cambridge, New York 2016, p. 261.

¹⁰ James Asher, *San Jose State University, California*, 1977.

¹¹ M. V. Romanova, "Dogme" Approach in *Teaching English as a Foreign Language*, p. 38.

Pimsleur method¹²

- Pimsleur method is based on the use of audio recordings. The latter gradually become more complex, each time introducing a new active vocabulary.

Michelle Thomas method¹³

- It includes a series of classroom audio recordings of a teacher working with two learners, explaining grammar rules, teaching vocabulary, and giving assignments. The listener is automatically included in the classroom process, getting the impression of working in a group.

In recent years, it has become important not only to know the language, but also how quickly and easily the language learning process takes place. The development and application of new methods increase the effective approaches role. The process of development and introduction of new information technologies is even more important¹⁴. The use of information technology reveals the enormous potential of the computer as a means of learning. Computer learning programs have many advantages over traditional teaching methods. Teachers try to use new modern technologies in their work. They use various supplementary e-books and software, but it does not always fit directly into the textbook. Therefore, at the moment, we have to independently develop didactic support for the class, using, of course, multimedia technologies. A modern teacher should take into account the fact that the information and telecommunication technologies of education have steadily entered life. The use of new information technologies expands the scope of the educational process, increases its practical orientation, contributes to increasing the motivation of students in the educational process, the development of intellectual and creative abilities of students, their ability to independently acquire new knowledge and create. In the educational process, the computer is not a mechanical teacher, not a substitute or analogue of the teacher, but an active tool for the development of children, expanding and expanding the possibilities of his cognitive activity.

The computer enables the teacher to free up time for creative activities and create individual learning routes for students. Teaching with the help of information and telecommunication technologies in English classes is an effective pedagogical tool for studying foreign language culture and developing communication skills. ICT contributes to the acceleration of the educational process, the increase of students' interest in the subject, improves the quality of mastering the material, makes it possible to personalize the educational process, and makes it possible to avoid the subjectivity of evaluation. At the same time, modern educational materials in English are mainly didactic audio materials, so the resource capabilities of the Internet educational environment allow the use of new interactive materials and manuals, as well as the ability for the teacher to develop his own slides. Foreign

¹² <https://www.sololingual.com/apps-programs/pimsleur-review>.

¹³ <https://www.alllanguageresources.com/michel-thomas/>.

¹⁴ Information Technology and Development https://www.maxwell.syr.edu/Steinberg_James_B/.

language teachers must master the methodology of using ICT tools to organize a student-centered educational process.

In modern sources, information and communication technology refers to a wide range of digital technologies used to create, transmit and disseminate information and provide services (computer hardware, software, telephone lines, cellular communications, e-mail, cellular and satellite technologies, wireless and cable technologies: networks) communication, multimedia and Internet). The most frequently used ICT tools in the educational process: electronic textbooks and manuals, which are displayed using a computer and multimedia projector, electronic encyclopedias and reference books, simulators and test programs, Internet educational resources, DVDs and CDs with pictures and illustrations, video and audio equipment, research papers and projects.

Working forms of computer programs for the English language teaching include

- Vocabulary learning
- Work with pronunciation
- Dialogue and monologue training
- Test writing training
- The resources available to us on the Internet are vast. Many didactic problems are solved thanks to the Internet during a foreign language lesson.
- Development of reading and writing skills using materials from the Internet

One of the most important results of using ICT in education is the possibility of greater satisfaction of the individual needs of students. Technologies not only provide more interesting curriculum content, but also allow more reliable assessment of students' knowledge, identify weaknesses in their preparation, and determine the best options for imparting the necessary knowledge and skills for teachers:


- Efficiency
 - General cultural development of students
 - Computer skills improvement
 - Improving language level
 - Personalization of learning (differentiated tasks)
 - Self-confirming of the student, to conduct classes at a high aesthetic and emotional level (music, animation)
 - Increase the amount of work done in the lesson by 1.5 - 2 times
 - Improve the control of knowledge
 - Organize the educational process rationally, increase the efficiency of the class
-
- develop research skills
 - provide access to various information systems, electronic libraries
 - individualize the learning process

To understand the benefits of ICT method in teaching English and to improve the

students skills We have chosen a group of students at «Grigor Narekatsi» University of Stepanakert and arranged a three-month course of English language in the "Smart Classroom".

The group of students were of different age but of the same level of English. One of the topics of the lesson was Armenian and English kitchen. By the end of the class the students have been introduced to the vocabulary connected with kitchen. The prepared video-based slide illustrated the names of the vegetables, fruits and one traditional Armenian dish and one traditional English dish. The traditional Armenian dish «ghapama» was showed through pictures and video-based material, after watching which we passed to the traditional English dish-shepherd`s Pie with illustrations and video-based material too. In the end of the lesson the students demonstrated an understanding of kitchen connected vocabulary. During other classes the presented slides were concerned specifically grammar definitions, exercises (previously explained on the topic, the exact version of which was presented in the slide), video materials, which were in English, while fixed below with Armenian or Russian translation. In this way, students developed both listening and reading skills. At the end of the lesson, students were able to share the important facts of the material they have heard, seen, learnt and practiced. There was observed a high activity among the students. Being a new interactive method, information technologies are an inexhaustible source of motivation when studying a language.

Here are the results of the observation which shows students opinion about the efficiency of traditional approaches of teaching English and innovative technologies in teaching English.



20 percent of the students chose the traditional method of teaching. While 80 percent of students thought that ICT teaching methods helped them to get knowledge more comprehensibly.

After viewing the methods of teaching we have come to the conclusion that using only one method separately may have less progress than using the benefits of all methods paying more attention to the ICT in English language teaching as an innovative method. Teachers should obtain computer technologies for successful teaching English and also be aware that the impact of teaching and learning English is determined by the teaching approach, not by computer technology. Innovative computer technologies are not the main method of teaching English but this method is full of great opportunities.

ՆԱՆԱԲ ԵՐԵՄՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հաստատելով անգլերեն լեզվի դասավանդման մոտեցումները, որոնք ներառում են տարբեր մեթոդներ, վերջին տարիներին նորարարական տեխնոլոգիաների զարգացումը նոր մեթոդ է ապահովել անգլերենի դասավանդման գործընթացում: Օգտագործելով ՆՀՏ (նորարարական համակարգչային տեխնոլոգիաներ), անգլերեն լեզվի ուսուցիչները պետք է տիրապետեն համակարգչային տեխնոլոգիաների գործիքների գործարկման մեթոդաբանությանը՝ կրթական գործընթաց կազմակերպելու համար: Ավելին, ՆՀՏ-ն կարող է նաև գործել որպես ուսումնական ծրագրերի տարբերակման գործիք: ՆՀՏ-ն ուսուցչին հնարավորություն է տալիս ժամանակ տրամադրել ստեղծագործական գործունեությանը և ստեղծել սովորողների համար անհատական ուսումնական մոտեցումներ: Կրթության մեջ համակարգչային տեխնոլոգիաների կիրառման ամենադրական արդյունքներից է ուսանողների անհատական կարիքների ավելի մեծ բավարարման հնարավորությունը: Տեխնոլոգիաներն ապահովում են ոչ միայն ուսումնական ծրագրի հետաքրքիր բովանդակություն, այլև թույլ են տալիս ավելի հուսալի գնահատել ուսանողների գիտելիքները, բացահայտել նրանց թույլ կողմերը և որոշել նրանց գիտելիքներն ու հմտությունները:

Այս հոդվածը, ընդհանուր առմամբ, եզրակացնում է, որ ՆՀՏ-ի ազդեցությունը ուսուցման վրա անհերքելի է: ՆՀՏ-ի հնարավորությունները զարգացնում են ինչպես ուսուցիչների, այնպես էլ ուսանողների հմտությունները: Դասավանդման մեջ նորարարական համակարգչային տեխնոլոգիաները անգլերենի դասավանդման հիմնական մեթոդը չեն, սակայն այս մեթոդը լի է հնարավորություններով և ճկունությամբ:

Բանալի բառեր՝ մոտեցում, մեթոդ, տեղեկատվություն, ՆՀՏ, ուսումնական գործընթաց, ինտերակտիվ մեթոդ, ուսանողներ, արդյունք, հմտություններ:

НАНАР ЕРЕМЯН

«ПОДХОДЫ И ИСПОЛЬЗОВАНИЕ ИННОВАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ»

РЕЗЮМЕ

Утвердив подходы к обучению английскому языку, включающие в себя различные методы и развитие инновационных технологий обеспечило новый метод в обучении английскому языку в последние годы. Используя ИКТ (инновационные компьютерные технологии), преподаватели английского языка должны овладеть методикой использования средств ИКТ для организации учебного процесса. Более того, ИКТ также могут выступать в качестве инструмента дифференциации учебных программ. ИКТ позволяет учителю уделить время творческой деятельности и создать индивидуальные подходы обучения для учащихся. Одним из наиболее положительных результатов использования ИКТ в образовании является возможность удовлетворения индивидуальных потребностей учащихся. Технологии обеспечивают не только интересное содержание учебных программ, но и позволяют более достоверно оценивать знания учащихся, выявлять слабые места в их подготовленности, определять необходимые знания и навыки.

Автор статьи делает вывод о том, что влияние ИКТ на обучение неоспоримо. Возможности ИКТ развивают навыки, как преподавателей, так и студентов. Несмотря на то, что ИКТ не являются основным методом обучения английскому языку, этот метод полон возможностей и гибкости.

Ключевые слова: *подход, метод, информация, ИКТ, образовательный процесс, интерактивный метод, учащиеся, результат, навыки.*

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՄՏՃԱՌ

Մասնագիտական գործունեության իրականացման դրդապատճառների և անվտանգության խնդրի փոխկապակցվածությանը հատկացվում է մեծ ուշադրություն, քանի որ վերջիններս ոչ միայն հանդիսանում են մասնագիտական գործունեության ծավալման հիմք, այլև տվյալ գործունեության կառուցվածքային բաղադրիչների կապող օղակ:

Սույն աշխատանքի շրջանակներում փորձ է արվել ներկայացնել մասնագիտական գործունեության և ընդհանրապես աշխատանքային գործունեության ծավալման դրդապատճառային հիմքն ու վտանգների դերը, որոնք ձևավորվում են պատճառահետևանքային կապերի ստեղծման միջոցով՝ անգիտակցաբար կամ հանդիսանում են մարդու կողմից գիտակցաբար ստեղծվող իրավիճակներ:

Հոդվածում ներկայացված է հիմնախնդրի շրջանակներում իրականացված մեր ուսումնասիրությունը, որի նպատակն է պարզաբանել հոգեբանական անվտանգության դերը անձի մասնագիտական գործունեության դրդապատճառային համակարգում:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրել և լուծել ենք հետևյալ խնդիրները.

1. տեսական աղբյուրների ուսումնասիրությունների միջոցով նկարագրել հոգեբանական անվտանգության առանձնահատկությունները և դրանց կապը անձի մասնագիտական գործունեության հետ;
2. ընդգծել մասնագիտական գործունեության մեջ անձի վրա ազդող վտանգները;
3. ներկայացնել մասնագիտական գործունեության ծավալման դրդապատճառային համակարգի կապը հոգեբանական անվտանգության հետ:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք ենք ընտրել գիտակցության և գործունեության միասնության սկզբունքը, որը մշակվել է Ս. Լ. Ռուբինշտեյնի փիլիսոփայական-հոգեբանական հայեցակարգի շրջանակներում, գործունեության վրա հիմնված մոտեցում, որը մշակվել է Լ.Ս. Վիգոտսկու, Ա.Ն. Լեոնտևի, Բ.Մ. Տեպլովի, Վ.Դ. Շադրիկովի աշխատություններում, գործունեության մոտիվացման մոտեցումը, որը մշակվել է Ա. Մալուխի և Ե.Պ. Բյինի կողմից և Ի.Ա. Բանայի, Ե.Ն. Վոլկովայի և Լ.Ա. Ռեզուշի կողմից մշակված՝ շրջակա միջավայրի և անձի հոգեբանական անվտանգության հայեցակարգը:

Հիմք ընդունելով աշխատանքում ներկայացված մոտեցումները՝ կարելի է նշել, որ բանիմաց մասնագետի կողմից յուրաքանչյուր գործունեություն անցնում է, այսպես ասված, «ընդունման» գործընթաց, որի ընթացքում այն դիտարկվում է պահանջ-մոլանքների բավարարման և անվտանգության դրդապատճառի տեսանկյունից: Մեր կողմից դիտարկվող և Ս.Ա. Դռուժիլյովի կողմից ներկայացված դրդապատճառների

տեսակների կոնտեքստում գրեթե յուրաքանչյուր բաղադրիչի ոչ լիարժեքությունը կարող է հանգեցնել աշխատակցի անձի հոգեբանական անվտանգության խաթարման:

Բանալի բառեր՝ հոգեբանական անվտանգություն, մասնագիտական գործունեություն, դրդապատճառ, վտանգ, դրդապատճառային համակարգ, լարվածություն, ֆիզիկական վնաս, գործունեության արդյունավետություն, վարք, աշխատանքային հարաբերություններ:

Մասնագիտական գործունեության դրդապատճառների խնդրին հատկացվում է մեծ ուշադրություն, քանի որ այն հանդիսանում է մասնագիտական գործունեության բաղադրիչների կապող օղակ: Դրանց շարքին են դասվում՝ հաջողությունը, արդյունավետությունը, մարդասիրական միտումները, «կյանքի իմաստի» ձեռքբերումը, ինքնիրացման և ինքնակառավարման ցանկությունը, բավարարվածության զգացումը և հոգեբանական անվտանգության զգացումը: Ռ. Վ. Ադուգումգյանի, Վ. Ռ. Պապոյանի, Ա. Ս. Գալստյանի, Ե. Բ. Մուրադյանի, Դ. Յ. Սարգսյանի, Ծ. Ս. Ամիրյանի համահեղինակած ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նշել դրդապատճառների ուսումնասիրման մի քանի մոտեցում.

1. Անձնային մոտեցում, որի շրջանակներում ուշադրությունը կենտրոնացվում է գործունեության սուբյեկտին,
2. Գործընթացային մոտեցում, որի շրջանակներում ուշադրությունը կենտրոնացվում է սուբյեկտ-օբյեկտային հարաբերությունների ուսումնասիրման վրա,
3. Ի.Ն. Մոսսի կողմից մշակված օբյեկտային մոտեցում:

Անձնային մոտեցման շրջանակներում դրդապատճառ տերմինը ընկալվում է որպես որոշակի հուզական վիճակի ձգտում, վերաբերմունք առարկաների և մարդկանց նկատմամբ, որպես անձնային հատկություն, որոշակի գործունեությամբ զբաղվելու պահանջմունք և այլն: **Գործընթացային** մոտեցման շրջանակներում դրդապատճառ տերմինի բացատրությունը բերվում է միջավայրի հետ հումեոստատիկ հարաբերակցության պահպանմանը և շրջակա իրականությունը ճանաչելու գործընթացին: **Օբյեկտային** մոտեցման շրջանակներում դրդապատճառը կարող է ներկայացվել որպես արտաքին միջավայրի գործոն, գործունեությունից բխող գործոն և այլն¹: Մեր տեսանկյունից, դրդապատճառի դերի մեկնաբանության համար հարկ է դիտարկել այն ընդհանրական մոտեցմամբ, փորձելով պարզաբանել, թե որքանով է դրդապատճառը ազդում ինքնիրացման զգացողության ձևավորման և դրանից բխող անվտանգության վրա: Ըստ այդմ, հոգեբանության մեջ դրդապատճառը ընկալվում է որպես գործոնների ընդհանրություն, որոնք կազմակերպում և ուղղորդում են մարդու վարքը: Դա վարքի դետերմինավորման գործընթաց է, որը կարող է պայմանավորված լինել արտաքին և ներքին գրգռիչներով:

¹ Агузумця Р. В., Папоян В. Р., Галстян А. С., Мурадян Е. Б., Саргсян Д. Ю., Амирян Ц. С. - Психологическая безопасность личности в профессиональной деятельности; URL:

https://www.researchgate.net/publication/346547759_PERSON'S_PSYCHOLOGICAL_SAFETY_IN_THE_PROFESSIONAL_ACTIVITY_Psihologiceskaa_bezopasnost_licnosti_v_professionalnoj_deatelnosti

² Бодров В.А. Психология профессиональной пригодности. Учебное пособие для вузов – М. ПЕП СЭ, 2001, 511 стр.

Մասնագիտական գործունեության և վարքի դրդապատճառների ձևավորման մեջ հիմնական դերը տրված է պահանջմունքներին (անհատի վիճակը, որը որոշվում է նրա գոյության և զարգացման համար անհրաժեշտ օբյեկտների անհրաժեշտությամբ և հանդես է գալիս որպես նրա գործունեության աղբյուր): Դրդապատճառների առավել ամբողջական կառուցվածքը տվել է Ա. Մալոուն, որտեղ առաջին դիրքերում նա առանձնացրել է ֆիզիոլոգիական, անվտանգության և սոցիալական պահանջմունքները³:

Աշխատակցի դրդապատճառը կարելի է անվանել մասնագիտական զարգացման ամենանշանակալի գործոններից մեկը: Դրդապատճառների համակարգը, որը հիմնված է անձի՝ որոշակի տեսակի աշխատանքով զբաղվելու ցանկության վրա, ի վերջո կանխորոշում է նրա կենտրոնացումը արդյունքի վրա, պատրաստակամությունը, կատարել մասնագիտական խնդիրները ամբողջ ծավալով, կազմակերպության նկատմամբ լոյալությունը և այլն⁴:

Իրենց հերթին դրդապատճառներն են կանխորոշում անձի հոգեբանական անվտանգությունը: Որպես այդպիսին անվտանգության մեխանիզմը բավականին բազմակողմանի է պարզագույն ուսումնասիրությունների ենթարկման համար, քանի որ հոգեկան անվտանգության մեխանիզմը հիմնվում է բնածին ինքնապաշտպանության բնագծի վրա: Իրականում, ֆիզիկական տեսանկյունից մարդը բավականին հաճախ վտանգի տակ է դնում իր կյանքը և առողջությունը, չնայած այն հանգամանքին, որ գրեթե միշտ առկա է հնարավորություն խուսափել վտանգից, բայց պետք է հաշվի առնել նաև այն, որ պաշտպանվածությունը հաճախակի հիմնվում է մարդու գիտելիքների վրա, և բավականին բարդ է գուշակել մարդու վարքը գիտելիքի անբավարարության կամ բացակայության դեպքում⁵: Քանի որ մասնագիտական գործունեության անվտանգության հարցը առաջին հերթին սկսել է ուսումնասիրվել արտադրական գործունեության շրջանակներում, տարբեր աշխատություններում դիտարկվող վտանգի պատճառները բավականին նեղ իմաստով են ներկայացված⁶, բայց հարմարեցնելով այդ պատճառների իմաստային բնութագիրը՝ կարելի է վերջիններս կիրառելի դարձնել նաև ոչ արտադրական, մասնագիտական գործունեության տեսակների համար: Ըստ այդմ կարելի է առանձնացնել վտանգների մի խումբ, որոնք իրենց մեջ միավորում են և՛ հոգեկան լարվածության և՛ ֆիզիկական վնասներ կրելու բնույթ: Դրանց շարքին են դասվում.

1. Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը և նրանց կողմից վտանգին դիմակայելու ունակության նվազումը:

³ St' u Маркова А.К. Психология профессионализма. М., 1996. St' u Маслоу А.Г. Мотивация и личность. Пер. с англ. СПб.: Евразия, 1999.

⁴ St' u Дмитриева Л.Г., Левашова Е.С. МОТИВАЦИЯ КАК КОМПОНЕНТ ПРОФЕССИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ // DIZWW. 2021. №12. URL: <https://cyberleninka.ru/article/n/motivatsiya-kak-komponent-professionalnogo-razvitiya-lichnosti> (дата обращения: 02.12.2022).

⁵ St' u Куликова Е. А. Психология безопасности – необходимый компонент качественной подготовки специалиста для транспортной отрасли // Гуманитарные научные исследования. – 2016. – № 9. – URL: <http://human.snauka.ru/2016/09/16588>.

⁶ St' u Куликова Е. А., Путькова А. Д. Оценка и анализ случаев травматизма на железнодорожном транспорте // Безопасность и охрана труда на железнодорожном транспорте. – 2017. – № 2. – С. 12–21.

Գիտական և տեխնոլոգիական առաջընթացի շնորհիվ ի հայտ եկող ավելի ու ավելի բարդ տեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաները մեծացնում են դժբախտ պատահարների ռիսկը:

2. Ժամանակակից բարձր տեխնոլոգիական մեքենաներին հարմարեցում

Ժամանակակից տեխնոլոգիաները և սարքավորումները շատերի կողմից ընկալվում են որպես կյանքի և գործունեության անբաժանելի մաս: Մարդը հաճախ խախտում է շահագործման կանոնները՝ մոռանալով անվտանգության տարրական կանոնների և բարդ սարքավորումների հետ կապված մեծ վտանգի մասին (Էլեկտրական ցնցում, հրդեհ, վթար):

3. Տնտեսական անբարենպաստ իրավիճակ

Ֆինանսական ռեսուրսների բացակայությունը շատերին ստիպում է լրացուցիչ աշխատել, իսկ աշխատունակությունը վերականգնելու համար բավարար ժամանակի բացակայության պատճառով առաջանում է հոգնածություն և գերաշխատանք:

4. Կախվածության նոր ձևեր

Բնտերնետային կախվածությունը, գաջեթների կախվածությունը նպաստում է ցրվածությանը, կանխում են մասնագիտական գործունեության վրա ուշադրության ամբողջական կենտրոնացմանը, ինչը կտրուկ մեծացնում է վտանգը՝ կատարված աշխատանքի նկատմամբ հետաքրքրության բացակայության հետ միասին:

5. Բնական աղբյուրների բացակայություն

Սուր զգացողությունների ցանկությունը մարդկանց մոտ հաճախ առաջանում է հարմարավետ կյանքի ֆոնի վրա: Այս կախվածությունը սովորաբար անգիտակցաբար դրսևորվում է ծայրահեղ հոբբիների ընտրության մեջ, որոնք կապված են գործունեության վտանգների հետ: "Սուր զգացողություն" ստանալու անհրաժեշտությունը, որը կապված է նյարդային համակարգի այնպիսի բնածին հատկությունների հետ, ինչպիսիք են ուժն ու դինամիզմը, թույլ չի տալիս մարդուն համարժեք գնահատել իրավիճակը և սոցիալական ուժերը, որոնք դրդում են նրան վտանգավոր գործողությունների¹⁸:

Անվտանգության խնդիրների մանրամասն դիտարկման համար, առաջին հերթին, իհարկե, պետք է ուսումնասիրել աշխատակցի վարքի առանձնահատկությունները, որոնց հետ կապված է ներքին լարվածությունը, որն իր կողմից զգացվում է անհանգստության վիճակում: Վերոնշյալ վիճակը ձևավորվում է այն ժամանակ, երբ աշխատակիցը ունենում է պահանջմունքներ, որոնց բավարարման համար ներկայիս պայմաններում հնարավորություններ առկա չեն, իսկ դրանց արդյունքում առաջացող ունայնությունը խաթարում է գործողությունների համաձայնեցվածությունը⁷:

Սովորաբար անվտանգության զգացողության և անվտանգության ապահովման կարիքները կապված են հաջողակ լինելու դրդապատճառի հետ, ինչը, իր հերթին, նաև անմիջապես կապված է անձնային ներքին ռեսուրսների հետ, որոնք իրենցից ներկայացնում են աշխատողի մասնագիտական ոլորտում ինքնիրացման միջոցներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կերպով լուծել աշխատանքային խնդիրները և նպաս-

⁷ Ск'и Балдин К. В., Воробьев С. Н. Риск-менеджмент: учеб. пособие. - М.: Гардарики, 2005. - 285 с.

տում են սթրեսաձին գործոնների նկատմամբ կայունությանը⁸:

Հաճախ վտանգը դիտարկվում է ոչ միայն ֆիզիկական վնաս ստանալու կոնտեքստում, այլ նաև սոցիալ-հոգեբանական տեսանկյունից՝ մոնոտոնություն, ժամանակի պակաս, անսպասելի և անորոշ իրավիճակներ, ուշադրության արագ կենտրոնացում և այլն, որոնք վտանգավոր են հոգեկան առողջության համար: Այդ ամենը բերում է մասնագիտական գործունեության արդյունավետության արագ իջեցմանը⁹:

Վերոնշյալը տանում է անվտանգության կանոնների անտեսման, ինչը աշխատակցի համար կարող է ունենալ որոշակի հետևանքներ, ինչպիսիք են ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական վնասը:

Չափազանց մեծ դրդապատճառների ազդեցության տակ կարող է ձևավորվել մասնագետի կողմից իրավիճակի ընկալման համարժեքություն, և ըստ այդմ աշխատակցի համար ոչ ցանկալի իրավիճակը կարող է համարվել քիչ հավանական, բայց դրա հետ մեկտեղ որքան ուժեղ է սուբյեկտի համար իմաստալից նպատակի հասնելու շարժառիթը, այնքան մեծ է նրա անհասանելի լինելու վտանգը, մասնավորապես, Հերքս-Դոդսոնի օրենքն ասում է, որ գործունեությունը հաջողության չի հասնում, երբ մարդը ինչ-որ բան չի ուզում կամ չափազանց է ցանկանում¹⁰:

Ս. Ա. Դոուլդիլովը իր աշխատությունում փորձել է ընդհանրական պատկերացում տալ այն դրդապատճառներին, որոնք դրսևորվում են մասնագիտական գործունեության ընթացքում: Դրանց շարքին են դասվում՝ շահույթ, անվտանգություն, հարմարավետություն, բավարարվածություն և նիվիլիրացում կամ հարթեցում աշխատանքային թիմում:

Այդ ամենը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. **Շահույթի դրդապատճառը** կայանում է կատարված աշխատանքի դիմաց վարձատրության ստանալու մեջ: Այս կոնտեքստում շահույթ հասկացության մեջ միավորված է և նյութականը (աշխատավարձ) և սոցիալականը (հեղինակություն, ինքնահաստատում, մասնագիտական հպարտություն): Արդյունքների և ստացված օգուտների միջև ակնհայտ կապի առկայությունը փաստացի ուժեղացնում է աշխատանքի դրդապատճառի ուժը: Այս առումով կարևոր է, որ աշխատակիցները պարբերաբար և ժամանակին տեղեկացնեն իրենց աշխատանքի արդյունքների մասին:
2. **Անվտանգության դրդապատճառ**՝ դա աշխատանքային գործունեությունում ծագող վտանգների շտկումն է: Վտանգ ասելով հասկանում ենք ոչ միայն ֆիզիկական վնասվածքների հնարավորությունը, որոնք սպառնում են աշխատողի առողջությանը և կյանքին, նյութական վտանգները (կապված տեխնիկայի վնասվածության, պարզևատրման և պաշտոնի իջեցման հետ), այլև

⁸ St' u Иванова Татьяна Юрьевна, Леонтьев Дмитрий Алексеевич, Осин Евгений Николаевич, Рассказова Елена Игоревна, Кошелева Наталья Валерьевна *Современные проблемы изучения личностных ресурсов в профессиональной деятельности* // Организационная психология. 2018. №1. URL: <https://cyberleninka.ru/article/n/sovremennye-problemy-izucheniya-lichnostnyh-resursov-v-professionalnoy-deyatelnosti> (дата обращения: 02.12.2022).

⁹ St' u Футин В. Н. Ортобиотика: развитие умений владеть собой: учеб. пособие. – М.: РАПС, 2008. – 108 с.

¹⁰ St' u Психологический справочник Психология 2000, Столичный Гуманитарный Институт 109088, Москва; URL: <http://psi.webzone.ru/st/331100.htm>.

հասարակական կարգի վտանգները (վարչական պատիժներ, հարգանքի և հեղինակության կորուստ, աշխատանքից ազատում և այլն):

3. **Հարմարավետության դրդապատճառ** կայանում է հանձնարարականների կամ պարտականությունների իրագործման հարմար և հեշտ մեթոդի ընտրության մեջ, ինչը կապահովի ցածր հոգեկան լարվածություն: Սույն մեխանիզմը գործում է մասնագիտական գործունեության տարբեր ոլորտներում և վերաբերվում է ոչ միայն հմտության ձևավորմանն, այլև ժամանակի և ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը:
4. **Բավարարվածության դրդապատճառը** դրսևորվում է աշխատանքի գործընթացից և արդյունքներից հաճույքի ստացման մեջ: Նման բավարարվածությունը կարող է առաջանալ անմիջապես ձեռք բերված արդյունքից, և կարող է միջնորդավորված լինել այն ավանդով, որը ծառայում է հետավոր նպատակին հասնելու համար: Բավարարվածության դրդապատճառի առաջացումը կախված կլինի արժեքային չափանիշներից, հակումներից, աշխատողի շահերից: Նման շարժառիթը հատկապես ուժեղ է այն ժամանակ, երբ մասնագիտությունը համապատասխանում է աշխատողի անձնային ուղղվածությանը և հանդիսանում է վերջինիս համար հեղինակավոր:
5. **Հարթեցման դրդապատճառը** դրսևորվում է տվյալ աշխատանքային կամ մասնագիտական խմբում գործող նորմերին համապատասխան գործունեություն ծավալելու մեջ, վերաձևակերպված լինել ոչ ավելի վատ, քան մյուսները: Աշխատակիցների կարծիքը հաշվի առնելու շարժառիթը գալիս է մարդուց, որը ձգտում է միանալ ուրիշների կարծիքին, այն տեսանկյունից, որ շրջապատող մարդիկ ինչ-որ բան են ակնկալում նրանից: Այս շարժառիթը հանդիսանում է կոլեկտիվ աշխատանքի արդյունք¹¹:

Ուսումնասիրելով և ամփոփելով հիմնախնդիրը՝ հարկ է նշել, որ և՛ մարդ-մարդ, և՛ մարդ-տեխնիկա գործունեության համակարգերում առկա ժամանակակից փոփոխությունները ազդում են ոչ միայն աշխատանքային միջավայրի, այլ նաև աշխատանքային հարաբերությունների, պայմանների և դրդապատճառային համակարգի վրա: Ա. Մասլոուի տեսության համաձայն՝ յուրաքանչյուր գործունեություն, եթե այն իրականացվում է իրազեկված մասնագետների կողմից, անցնում է այսպես ասված ընդունման գործընթաց, որի ընթացքում այն դիտարկվում է տարրական պահանջ-մունքների բավարարման և անվտանգության դրդապատճառի տեսանկյունից, որը առաջ է քաշում ոչ միայն ֆիզիկական անվտանգության, այլև հոգեբանական անվտանգության հարց: Հիմք ընդունելով Ս. Ա. Դեուիլյովի կողմից ներկայացված դրդապատճառների տեսակները, կարելի է ասել, որ գրեթե յուրաքանչյուր բաղադրիչի ոչ լիարժեքությունը կարող է հանգեցնել աշխատակցի անձի հոգեբանական անվտանգության խաթարման:

¹¹ St' u Дружилов С. А. - Основы психологии профессиональной деятельности инженеров-электриков; "Modern Problems of Science and Education. Surgery" (ISSN - 2686-9101); Москва, 2010; URL: <https://monographies.ru/ru/book/section?id=2962>.

ALBERT ZURABYAN

PSYCHOLOGICAL SAFETY AS MOTIVATION OF PROFESSIONAL ACTIVITY

SUMMARY

The relationship between the motives for the implementation of professional activities and the problem of security is given great attention, since the latter are not only the basis for the deployment of professional activities, but also the link between the structural components of this activity.

Within the framework of this work, an attempt was made to present the motivational basis and the role of the dangers of professional activity and labor activity in general, which are formed by creating cause-and-effect relationships, unconsciously or are situations consciously created by a person.. The article presents our study, the purpose of which is to clarify the role of psychological security in the motivational system of a person's professional activity.

To achieve this goal, we set and solved the following tasks.

- 1. to describe the features of psychological security and their connection with the professional activity of the individual by studying theoretical sources;*
- 2. to emphasize the dangers of professional activity that affect the personality;*
- 3. to present the relationship between the motivational system of professional activity and psychological safety*

We chose the principle of the unity of consciousness and activity, developed by S.L. Rubinstein within the framework of the philosophical and psychological concept, the activity approach developed in the works of L. S. Vygotsky, A. N. Leontiev, B. M. Teplov, V. D. Shadrikov, the motivational approach to activity developed by A. Maslow, E. P. Ilyin, I. A. Baeva, E. N. Volkova and L. A. Regush.

Based on the approaches presented in the article, it can be noted that on the part of a skilled specialist, each activity goes through a process of so-called "acceptance", during which it is considered from the point of view of satisfying needs and motivating safety. In the context of the motives we are considering and presented by S. A. Druzhilov, the inferiority of almost every component can lead to a violation of the psychological safety of the employee's personality.

Key words: *psychological safety, professional activity, motive, danger, motivational system, stress, physical harm, effectiveness of activity, behavior, labor relations.*

**ՀՈՒՋԱԿԱՆ ԱՅՐՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(SS ՈԼՈՐՏԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

SS ոլորտը, հանդիսանալով ժամանակակից աշխարհի արագ զարգացող մասնագիտական ոլորտներից մեկը, գրեթե միշտ գտնվում է քննարկման և ուսումնասիրման կիզակետում: Հաշվի առնելով, որ SS ոլորտը հանդիսանում է ոչ միայն մարդ-տեխնիկա, այլ նաև մարդ-մարդ կայուն համագործակցության միջավայր, մեր կողմից **նպատակ է դրվել** ուսումնասիրել հուզական այրման համախտանիշի դրսևորման առանձնահատկությունները SS ոլորտում մասնագիտական գործունեություն ծավալող աշխատակիցների շրջանում: Սույն նպատակից ելնելով՝ **մենք ենթադրում ենք**, որ SS ոլորտում մասնագիտական գործունեություն ծավալող աշխատակիցների մասնագիտական գործունեության ծավալման դրդապատճառները և անհատական առանձնահատկությունների դրսևորումը կարող են բացասական ազդեցություն ունենալ աշխատակցի հոգեբանական ապահովության վրա և հանդիսանալ հուզական այրման համախտանիշի ձևավորման նախադրյալ: Հետազոտության համար մեթոդաբանական հիմք ենք ընտրել գիտակցության և գործունեության միասնության սկզբունքը, որը մշակվել է Ս. Լ. Ռուբինշտեյնի փիլիսոփայական-հոգեբանական հայեցակարգի շրջանակներում, գործունեության վրա հիմնված մոտեցում, որը մշակվել է Լ.Ս. Վիգոտսկու, Ա.Ն. Լեոնտևի, Բ.Մ. Տեպլովի, Վ.Դ. Շադրիկովի աշխատություններում և Բ.Ա. Բանայի, Ե.Ն. Վոլկովայի և Լ.Ա. Ռեզուշի կողմից մշակված շրջակա միջավայրի և անձի հոգեբանական անվտանգության հայեցակարգը: Հոդվածում իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտրանքի սահմաններում արտահայտված նեյրոտիզմը, էքստրովերտությունը, ներքին և արտաքին բացասական դրդապատճառների համապատասխան պայմաններում կարող են հանդիսանալ հուզական այրման համախտանիշի ձևավորման նախադրյալ:

Բանալի բառեր: Հուզական այրում, SS, մասնագիտական գործունեություն, անձնային առանձնահատկություններ, աշխատանքային դրդապատճառներ, հոգեբանական ապահովություն, գերժանրաբեռնվածություն, աշխատանքային պայմաններ, առցանց, անցանց:

Վերջին շրջանում հուզական հյուծվածությունը դարձել է քննարկման արդիական թեմա, ինչի հիման վրա իրականացվող դիտարկումները թույլ են տալիս ենթադրել, որ համախտանիշի ազդեցությանը հիմնականում ենթարկվում են «մարդ-մարդ» ոլորտում գործունեություն ծավալող անձինք:

Խնդրի շուրջ իր տեսանկյունը արտահայտելով՝ Ե. Պ. Իլյինը նշում է, որ մի շարք աշխատությունների ընդհանրացումը բերում է այն բնութագրին, որ հուզական այրումը հանդիսանում է «մեր ժամանակի ախտանիշ» կամ «քաղաքակրթությունների ժամանակակից հիվանդություն», որը նման է 19-րդ դարի մելանխոլիային կամ 20-րդ դարի ներոսթենիային: Նման կոլեկտիվ հիվանդությունները փաստում են մարդու և հասարակության միջև հարաբերությունների խախտման առկայության մասին¹:

Հուզական հյուծվածության խնդիրը առաջ քաշելով՝ 1974 թ. Խ.Դ. Ֆրեյդենբերգը հռչակում է հրապարակում այն կամավորների մասին, ովքեր սոցիալական ոլորտում աշխատել են տեղի եկեղեցու անունից: Առօրյա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կամավորների մոտ նկատվել են դեպրեսիայի, հուզական հյուծվածության և հոգնածության նման ախտանիշներ: Հետազոտվողների դիտման արդյունքերը վերլուծելիս Խ.Դ. Ֆրեյդենբերգը նշում էր, որ սկզբում այդ մարդիկ բացարձակ հիացած էին իրենց գործունեությամբ, բայց գործունեության ընթացքում հիացմունքն աստիճանաբար նվազում էր, իսկ դրա հետ մեկտեղ փոփոխվում էր իրենց վերաբերմունքը այն մարդկանց նկատմամբ, ում իրենք աջակցում էին: Սկզբում դա բարյացակամ, ուշադիր վերաբերմունք էր, հետո այն վերածվում էր մերժող, բացասական ցինիզմի: Վատացել են նաև գործընկերների հետ հարաբերությունները, առաջացել է մեղքի զգացում և այդ ամենից կտրվելու ցանկություն: Վերոնշյալ երևույթը մեկնաբանելու համար նա ներմուծեց «հուզական այրում» տերմինը՝ բնութագրելով առողջ մարդկանց հոգեբանական վիճակը, ովքեր ակտիվ կապի մեջ են հաճախորդների կամ հիվանդների հետ հուզականորեն հազեցած մթնոլորտում մասնագիտական օգնություն ցուցաբերելիս:

Ժամանակակից գիտության մեջ «հուզական այրում» տերմինը միանշանակ չի մեկնաբանվում: Ըստ Կ. Մասլաչի՝ համախտանիշը ներառում է հուզական հյուծվածություն, անձնագերծում (ցինիզմ) և մասնագիտական նվաճումների կրճատում²: Ավելի ուշ Կ. Կոնդոն բնութագրում է «burnout» տերմինը՝ որպես աշխատանքային վայրին հակահարմարման վիճակ, որը ձևավորվում է չափազանց մեծ ծանրաբեռնվածության և ոչ ադեկվատ միջանձնային հարաբերությունների առկայության պատճառով³: Տ.Վ. Ֆորմանյուկը հուզական այրման համախտանիշը համարում է մարդկանց հետ աշխատող անձանց հատուկ մասնագիտական հիվանդության տեսակ⁴: Իր հերթին Վ.Վ. Բոյկոն նշում է, որ հուզական այրումը հույզերի մասնակի կամ ամբողջական բացառման ձևով արտահայտվող, անձի կողմից մշակված հոգեբանական պաշտպանական մեխանիզմ է, որը դրսևորվում է ի պատասխան հոգետրավմատիկ իրավիճակի⁵:

¹ Sk' u Ильин, Е.П. Эмоции и чувства / Е.П.Ильин. – СПб.: Питер, 2002. 221 с. .

² Sk' u Maslach C., Leiter M.P. The truth about burnout: How organization cause personal stress and what to do about in. San Francisco, CA: Jossey-Bass, 1997. 200 p. .

³ Sk' u Ронгинская, Т.И. Синдром выгорания в социальных профессиях [Текст] / Т.И. Ронгинская // Психологический журнал, 2002, № 3, с. 85–95.

⁴ Sk' u Форманюк, Т.В. Синдром эмоционального сгорания как показатель профессиональной дезадаптации учителя [Текст] / Т.В. Форманюк // Вопросы психологии. 1994. № 6, с. 57–63.

⁵ Sk' u Бойко, В.В. Энергия эмоций в общении [Текст] / В.В. Бойко. – М. : информационно-издательский дом «Филинг», 2005. 278 с. .

Տարաբնույթ մեկնաբանությունների հիման վրա սկսեցին ձևավորվել հուզական այրման համախտանիշի զարգացման և հետևանքների տարբեր մոդելներ: Վերը նշված օրինակի համաձայն, ի սկզբանե ուշադրությունը կենտրոնացվում էր երեք՝ պարբերաբար իրար հաջորդող նշանների վրա, որտեղ առաջին փուլը դիտարկվում էր հյուծումը, իսկ վերջինը՝ ոչ կոմպետենտ լինելու զգացողությունը, որոնք ձևավորվում էին աշխատանքային սթրեսների ազդեցության հիման վրա: Ըստ այդմ ձևավորվել են աշխատանքային սթրեսների վրա հիմնված մոտեցումներ, որոնք տանում են անհավասարակշռության և գերլարվածության:

Նման մեխանիզմը կիրառող առաջին մոդելներից է տրանսակտ մոդելը, որի փուլերի եռյակն են հանդիսանում. **աշխատանքային սթրեսները** (աշխատանքային պահանջների և անձնային ռեսուրսների անհավասարություն), **անձնային գերձանրաբեռնվածություն** (հյուծման և տագնապայնության նկատմամբ հուզական ռեակցիա), **պաշտպանողական վարք** (դիրքորոշումների և վարքի փոփոխություն, ցինիզմի ավելացում):

Շարունակաբար մշակվեցին ռեսուրսների և պահանջների անհավասարության երկու փորձարարական մոդել. աշխատանքային ռեսուրսի և պահանջի [The Job Demands - Resources (JD-R) model] և ռեսուրսների փոխազդեցության մոդել [The Conversation of Resources (COR) model]: JD-R մոդելը կենտրոնանում է անձի կողմից անընդհատ գործնական առաջադրանքներ ստանալու և դրանք կրճատելու կամ լուծելու բավական ռեսուրսներ չունենալու գաղափարի շուրջ⁶: COR մոդելը հետևում է մոտիվացիոն տեսությանը՝ ենթադրելով, որ հուզական այրումը ձևավորվում է հասանելի ռեսուրսների նկատմամբ առկա անընդհատ վտանգից⁷: Երբ անձը գիտակցում է, որ իր ռեսուրսները վտանգված են, ձգտում է պահպանել դրանք, քանի որ կորուստը կամ սպասվելիք կորուստը կարող են բարդացնել հուզական այրումը: Հուզական այրման վերոնշյալ տեսությունները հաստատվել են գիտական հետազոտություններում:

Հուզական այրման համախտանիշի ժամանակ առկա անհավասարակշռության մոդելի տարբեր տեսակները իրենց արտահայտությունն են գտել Աշխատանքային գործունեության ոլորտների մոդելներ շրջանակներում [Areas of Worklife (AW) model (AW)], որը դիտարկում է աշխատանքային սթրեսները անհատականություն-աշխատանք համակարգի անհավասարակշռության հասկացությունների շրջանակներում կամ դրանց անհամապատասխանությունները, ինչպես նաև նշանակում է վեց հիմնական ոլորտ, որոնցում առաջանում է այդ անհամապատասխանությունը՝ աշխատանքի ծանրաբեռնվածություն, վերահսկողություն, վարձատրություն, կոլեկտիվ, արդարություն և արժեքներ:

Այս ոլորտներում սպասումների անհամապատասխանությունը հանգեցնում է

⁶ *Sté u Bakker AB, Demerouti E. The Job Demands-Resources model: state of the art. J ManagPsychol 2007; 22:309-28.*

⁷ *Sté u Hobfoll SE, Freedy J. Conservation of resources: a general stress theory applied to burnout. In: Schaufeli WB, Maslach C, Marek T (eds). Professional burnout: recent developments in theory and research. New York: Taylor & Francis, 1993:115-29.*

այրման որոշակի աստիճանի, որն էլ իր հերթին կանխորոշում է վիճակների տարբեր ելքեր, ինչպիսիք են մասնագիտական աշխատունակություն, սոցիալական վարք և անձնական բարեկեցություն: Ըստ այդմ որքան մեծ է անձի սպասելիքները աշխատանքային գործունեությունից, այդքան մեծ է համախտանիշի առաջացման հավանականությունը և հակառակը⁸:

Հուզական այրման ձևավորման շուրջ իրենց տեսանկյունն են ներկայացնում նաև Գ. Բենետը, Ռ.Պ. Կապլանը և Վ. Ջ. Սպիդգեռը, որոնք առանձնացվում են հուզական այրման ձևավորման երեք հիմնական նախանշան: Հեղինակները նշում են, որ համախտանիշի զարգացմանը նախորդում է բարձր ակտիվության շրջան, երբ անձը ամբողջությամբ գրավված է աշխատանքով, հրաժարվում է այն պահանջմունքների բավարարումից, որոնք անմիջական կապ չունեն աշխատանքի հետ: Ըստ այդմ առանձնացվում է երեք նախանշան, որոնցից են.

1. Հյուծումը

Այն սահմանվում է որպես հուզական և ֆիզիկական ռեսուրսների զերբեռնվածության և սպառման, հոգնածության զգացում, որը չի անցնում գիշերային քնից հետո: Հանգստից հետո այդ երևույթները նվազում են, սակայն վերսկսվում են նախկին աշխատանքային իրավիճակի վերադառնալուց հետո:

2. Օտարում

Երբ մասնագետները փոխում են իրենց կարեկցանքը հիվանդի (հաճախորդի) նկատմամբ, զարգացող հուզական հեռացումը գնահատում են որպես աշխատանքում հուզական սթրեսորների հետ գործունենալու փորձ: Ծայրահեղ դրսևորումներում մարդուն գրեթե ոչինչ չի անհանգստացնում մասնագիտական գործունեությունից, գրեթե ոչինչ չի առաջացնում հուզական արձագանք՝ ոչ դրական, ոչ էլ բացասական հանգամանքներ:

3. Սեփական արդյունավետության զգացման կորուստ

Մարդը հեռանկարներ չի տեսնում իր մասնագիտական գործունեության մեջ, նվազում է գոհունակությունը սեփական աշխատանքից, կորցնում է հավատը սեփական մասնագիտական ունակությունների նկատմամբ⁹:

Սույն աշխատանքի կոնտեքստում որպես հիմք մեր կողմից դիտարկվում է Վ.Վ Բոյկոյի մոտեցումը, որի կոնտեքստը ընդհանրացնելով՝ ներկայումս ավելի շատ կապում են հոգեւոմատիկ ինքնազգացողության հետ՝ այն վերագրելով նախահիվանդության պայմաններին: Այդ հանգամանքից ելնելով հիվանդությունների միջազգային դասակարգման մեջ (ICD-X) Հուզական այրման համախտանիշը վերագրում են Z73

⁸ *Sté u Christina Maslach, Michael P. Leiter - Представление о синдроме эмоционального выгорания: современное исследование и его применение в психиатрии // пер. Шишорин Р. М., Срывкова К. А. // World Psychiatry 2016; 15: с. 103-111.*

⁹ *Sté u Caplan, R. P. Stress, anxiety, and depression in hospital consultants, generar practitioners, and senior health service managers // British Medical Journal. -1994.-V. 309. с. 1261-1263.*

բաժնին. «Մթնոլորտ, որը կապված է նորմալ ապրելակերպի պահպանման դժվարությունների հետ»¹⁰:

Վ.Վ. Բոյկոն առանձնացնում է համախտանիշի ձևավորման երեք փուլ¹¹, որտեղ **առաջինը լարվածության փուլն է**, որը բնութագրվում է հուզական հյուծվածության զգացումով, սեփական մասնագիտական գործունեության հետևանքով առաջացած հոգնածությամբ: Այս փուլում դրսևորվում են մի շարք ախտանիշներ.

- Հոգեբանական տրավմատիկ հանգամանքների ապրում (անձը ընկալում է աշխատանքային պայմանները և մասնագիտական միջանձնային հարաբերությունները որպես հոգեբանորեն տրավմատիկ),
- դժգոհություն սեփական անձից (դժգոհություն սեփական մասնագիտական գործունեությունից և ինքն իրենից՝ որպես պրոֆեսիոնալ),
- փակուղում գտնվելու զգացում, դրսևորվում է իրավիճակի հուսահատության զգացման, աշխատանք կամ ընդհանրապես մասնագիտական գործունեություն փոխելու ցանկություն տեսքով,
- տագնապ և դեպրեսիա, դրսևորվում է մասնագիտական գործունեության մեջ անհանգստության զարգացումով, նյարդայնության բարձրացումով, դեպրեսիվ տրամադրություններով:

Երկրորդը դիմադրության փուլն է: Այն բնութագրվում է որպես ավելորդ հուզական հյուծում, որը հրահրում է պաշտպանական ռեակցիաների զարգացումը և առաջացումը, որոնք իրենց հերթին դարձնում են մարդուն հուզականորեն փակված, անտարբեր և այլն: Նման ֆոնի վրա մասնագիտական գործունեության և հաղորդակցության ցանկացած հուզական ներգրավվածություն մարդու մոտ առաջացնում է ավելորդ հոգնածության զգացում:

Այս փուլում դրսևորվող ախտանիշներն են.

- Հուզական ռեակցիաների ընտրողականության ոչ ադեկվատություն, տրամադրության անկառավարելի ազդեցությունը մասնագիտական հարաբերությունների վրա,
- Զգացմունքային-բարոյական ապակողմնորոշում-մասնագիտական հարաբերությունների մեջ անտարբերության զարգացում,
- Հույզերի խնայողության ոլորտի ընդլայնում՝ հուզական մեկուսացում, օտարացում, ցանկացած հաղորդակցություն դադարեցնելու ցանկություն,
- Մասնագիտական պարտականությունների կրճատում - Մասնագիտական գործունեության կասեցում, աշխատանքային պարտականությունների վրա ծախսվող ժամանակի կրճատում:

Երրորդը հյուծման փուլն է, որը բնութագրվում է անձի հոգեֆիզիոլոգիական գերբեռնվածությամբ, դատարկությամբ, սեփական մասնագիտական նվաճումների մակարդակի իջեցմամբ, մասնագիտական հաղորդակցությունների խախտմամբ,

¹⁰ <https://icd.who.int/browse10/2019/en#/Z73.0>.

¹¹ *Տե՛ս Բ. Բ. Բոյկո - Энергия эмоций в общении: взгляд на себя и на других, М.: Филинь, 1996, ISBN 5-900855-60-0, с. 250.*

աշխատակիցների նկատմամբ ցինիկ վերաբերմունքի զարգացմամբ, հոգեւորմատիկ խանգարումների զարգացմամբ: Այն արտահայտվում է հետևյալ ախտանիշներով.

- Հուզական դեֆիցիտ - հուզական անզգայության զարգացում՝ գերձանրաբեռնվածության ֆոնին նվազագույնի հավասարեցնելով հուզական ներդրումը աշխատանքի մեջ, ավտոմատիզմի և մասնագիտական պարտականությունների կատարման ժամանակ անձի հյուծում,
- Զգացմունքային օտարում - մասնագիտական կապերի մեջ պաշտպանիչ դաշտի ստեղծում,
- Հոգեւորմատիկ խանգարումներ - ֆիզիկական զգացողության վատթարացում, քնի խանգարման, գլխացավերի և ճնշման հետ խնդիրների առաջացում:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ հարկ է նշել, որ մարդ-մարդ գործունեության համակարգերում առկա ժամանակակից փոփոխությունները ազդում են աշխատանքային միջավայրի, աշխատանքային հարաբերությունների, պայմանների և դրդապատճառային համակարգի վրա, ինչը մասնագիտական գործունեության գործնական բեռի հետ համատեղ բերում է հուզական այրման համախտանիշի ձևավորման և ընդհանուր առմամբ հոգեբանական ապահովության խաթարման¹²:

Հետազոտություն


Մեր կողմից իրականացված հետազոտությանը մասնակցել են 20-55 տարիքային խմբի մեջ ներառված 30 անձ, որոնք գործունեություն են ծավալում IT ոլորտի տարբեր բլոկներում: Մասնակիցների աշխատանքային ստաժը միջինում կազմում է 4,5 տարի:

Հետազոտության ընթացքում մեր կողմից կիրառվել են.

1. Վ. Վ. Բոյկոյի «Հուզական այրման մակարդակի ախտորոշում» մեթոդիկական, որի նպատակն է հուզական այրման դրսևորման մակարդակի չափումը սթրեսի զարգացման երեք գործոնների տեսքով՝ «լարվածություն», «դիմադրություն», «հյուծում»: Մեթոդիկական հնարավորություն է տալիս մանրամասնորեն դիտարկել հուզական այրման համախտանիշի պատկերը և տեսնել առաջատար ախտանիշները:
2. Ա. Սերբյանի և Ն. Խաչատրյանի կողմից կազմված «Մեծ հնգյակ» հարցարանի կարճ տարբերակը, որի նպատակն է չափել, նկարագրել, դասակարգել ու վերլուծել անձնային գծերը, որը իրականացվում է նեյրոտիզմ, էքստրովերսիա, լայնախոհություն, բարյացակամություն և բարեխղճություն 5 հիմնական գծերի չափման միջոցով:
3. Ա. Ռեանայի կողմից փոփոխված Կ. Զեմֆիոյի «Մասնագիտական գործունեության դրդապատճառների ուսումնասիրման» մեթոդիկական հիմնված է արտաքին և ներքին դրդապատճառների ուսումնասիրման վրա: Մեթոդիկայի կոնստեքստում ներքին դրդապատճառները դրսևոր-

¹² Stéu Францевич Е.Т. — Психологическое неблагополучие, как фактор риска безопасности образовательной среды // Психолог. – 2014. – № 1. – С. 125 - 174. DOI: 10.7256/2306-0425.2014.1.11490. URL: https://nbpublish.com/library_read_article.php?id=11490.

վում են այն ժամանակ, երբ սուբյեկտի գործունեությունը նշանակալի է առաջին հերթին իր համար, իսկ եթե մասնագիտական գործունեության հիմքում ընկած են այլ հետաքրքրություններ, որոնք կարելի է դիտարկել որպես արտաքին, այսինքն՝ գործունեության բնույթից դուրս գտնվող, ապա այստեղ դրսևորվում են արտաքին դրդապատճառները, որոնք իրենց հերթին, բաժանվում են դրականի և բացասականի:



Դիագրամ 1-ում ներկայացված Վ.Վ Բոլկոյի մեթոդիկայի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ **անձի հոգեբանական պաշտպանության լարվածությունը** հետազոտվողներից 26-ի մոտ ձևավորված չէ, 4-ի մոտ ձևավորման փուլում է: Այստեղ հույզերը խլանում են, զգացմունքների և փոր-

Դիագրամ 1

ձառությունների սրությունը բթացվում է, առաջանում է դժգոհություն սեփական անձից և, ավելին, առաջանում է սեփական անօգուտության զգացում, անհանգստություն և դեպրեսիա: Հենց այս փուլն է ազդարարողը և հրահրողը հուզական այրման համախտանիշի ձևավորման գործում:



Դիագրամ 2

Հոգեբանական պաշտպանության դիմադրությունն ենթադրում է ոչ ադեկվատ, ընտրովի հուզական արձագանք; հուզական և բարոյական ապակոդմնորոշում, հույզերի խնայողության ոլորտի ընդլայնում, մասնագիտական պարտականությունների կրճատում: Դիագրամ 2-ում ներկայացված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ հետա-


զոտվողներից 10-ի մոտ այն արդեն ձևավորված է, 10-ի մոտ այն դեռ գտնվում է

ձևավորման փուլում, իսկ 10-ի մոտ տվյալ փուլը չի ձևավորվել: Այս փուլում լարվածության ի հայտ գալու պահից սկսվում է աճող սթրեսի նկատմամբ դիմադրությունը: Մարդը ձգտում է հոգեբանական հարմարավետության, ուստի

փորձում է նվազեցնել արտաքին հանգամանքների ճնշումը:

Ուսումնասիրելով դիագրամ 3-ում ներկայացված **հյուծման ձևավորվածության մակարդակը**, հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ հետազոտության ընտրանքի (SS ոլորտի մասնագետների)

շրջանում հետազոտվողներից 12-ի մոտ հյուծման փուլը չի ձևավորվել, 8-ի մոտ կամ ձևավորվել է, կամ գտնվում



Գծազրամ 3

է ձևավորման փուլում: Այս փուլը բնութագրվում է առողջության, մասնագիտական արժեքների կորստով, հուզական և անձնական մեկուսացմամբ, հուզական դեֆիցիտով, ընդհանուր էներգետիկ տոնուսի անկմամբ և նյարդային համակարգի թուլացմամբ, որտեղ "այրում" պաշտպանական մեխանիզմը դառնում է անձի անբաժանելի հատկանիշ:

Առկա տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ **լարվածության** փուլում դոմինանտող է անհանգստություն և դեպրեսիա աշխտանիշը, **դիմադրության** փուլում ոչ ադեկվատ ընտրովի հուզական արձագանքը, հույզերի խնայողության շրջանակի ընդլայնում և մասնագիտական պարտականությունների կրճատում ախտանիշները, իսկ **հյուծման** փուլում հուզական դեֆիցիտ և հուզական օտարում ախտանիշները:

Չնայած այն հանգամանքին, որ ախտանիշների գրեթե կեսը չձևավորված վիճակում են, վերլուծությունը ցույց է տալիս, որ սույն ընտրանքի շրջանակներում թե՛ առցանց, թե՛ անցանց տարբերակով մասնագիտական գործունեություն ծավալող անձանց մոտ վառ արտահայտված է դիմադրության վիճակը, որը արտահայտվում է ոչ ադեկվատ, ընտրողական հուզական ռեակցիայի, հուզաբարոյական ապակողմնորոշման, հույզերի տնտեսման ոլորտի ընդլայնման և, ի վերջո, մասնագիտական պարտավորությունների ռեդուկցիայի տեսքով: Վերոնշյալի պատճառների պարզաբանման նպատակով մեր կողմից իրականացվել է անձնային գործոնների և աշխատանքային մոտիվների ուսումնասիրություն: Աղյուսակ 1-ում ներկայացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է բացասական կապ արտաքին բացասական դրդապատճառների և բարեխղճության միջև ($R = -0,39$): Բացասական կապ է առկա

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԵՍ

նաև լարվածության և ներքին դրդապատճառների ($R = -0,39$), ներքին դրդապատճառների և հյուծվածության ($R = -0,44$; $p < 0.05$) միջև: Բացասական են կապերը նաև դիմադրողականության և էքստրովերսիայի ($R = -0,40$; $p < 0.05$), ինչպես նաև ներքին դրդապատճառների ($R = -0,42$; $p < 0.05$) միջև: Հյուծման գործոնին անդրադառնալով՝ հարկավոր է նշել, որ ընտրանքի շրջանակներում նեյրոտիզմի ($R = -0,44$; $p < 0.05$) և էքստրովերտության ($R = -0,40$; $p < 0.05$) ցուցանիշները ունեն հակադարձ կապ հուզական այրման համախտանիշի շրջանակներում արտահայտվող հյուծվածության հետ:

	Էքստրովերսիա	Լայնախոհություն	Բարյացակամություն	Բարեխղճություն	Ներքին դրդապատճառներ	Արտաքին դրական	Արտաքին բացասական	Լարվածություն	Դիմադրություն	Հյուծում
Նեյրոտիզմ	.628 "	.495 "	.157	.028	.222	- ,155	.187	- ,334	- ,270	- ,446
Էքստրովերսիա		.488 "	.134	- ,138	.114	- ,014	.011	- ,327	- ,402	- ,401
Լայնախոհություն			.159	.148	- ,284	- ,221	- ,042	- ,048	- ,153	.003
Բարյացակամություն				.101	.225	.294	- ,037	- ,093	.036	- ,165
Բարեխղճություն					- ,078	.074	- ,395	- ,139	- ,030	- ,018
Ներքին դրդապատճառներ						.117	- ,389	- ,396	- ,425	- ,440
Արտաքին դրական							.238	.227	.039	- ,135
Արտաքին բացասական								.316	.282	.095
Լարվածություն									.269	.522 "
Դիմադրություն										.395

Աղյուսակ 1

Առկա հակադարձ կապերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնագիտական գործունեության կառուցումը արտաքին բացասական մոտիվների վրա կարող է բերել ինքնաարդյունավետության, նպատակալացության, պարտաճանաչության ցուցանիշների ցածրացմանը, իր հերթին, ոչ բավարար ներքին դրդապատճառները մասնագիտական գործունեության առաջնային մոտիվների երկրորդ պլան մղումը կարող է ձևավորել հույզերի խնայողության ախտանիշ, ինչը ցածր էքստրովերտության ժամանակ կարող է բերել ոգևորվածության, կենսուրախության և այլ գործոնների ցածրացման, ինչի անուշադրության մատնումը, ի վերջո, կրերի մասնագիտական պարտականությունների կրճատման և հիմքեր կստեղծի հյուծման ախտանիշի ձևավորման համար: Դա իրենից կենթադրի ոչ միայն հուզականորեն օտարված վիճակի ձևավորում կամ անտարբերություն աշխատանքային միջավայրում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, այլ նաև լարվածության մակարդակի բարձրացում, ինչն ի վերջո կարող է բերել մասնագիտական գործունեության դադարեցման կամ, թույլ արտահայտվածության դեպքում, աշխատանքային միջավայրի և պայմանների փոփոխության:

Ընդհանրացնելով հոդվածում իրականացված վերլուծությունը՝ կարելի է հստակ նշել, որ տեսական ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տալիս պնդել, որ հուզական այրման համախտանիշը ձևավորվում է մասնագիտական գործունեության ծավալման ընթացքում, իսկ ընտրանքի սահմաններում թույլ արտահայտված նեյրոտիզմը, էքստրովերտությունը, ներքին դրդապատճառները՝ արտահայտված աշխատանքի արդյունքից և բուն գործընթացից բավարարվածություն ստանալու, կոնկրետ գործունեության մեջ ամբողջական ինքնաիրացման հնարավորություն ստանալու դրդապատճառներով և արտաքին բացասական դրդապատճառները՝ արտահայտված ֆինանսական միջոցներ ձեռք բերելու, սոցիալական պրեստիժի ձեռքբերման և հարգանքի արժանանալու, արտաքին նպատակներ ունենալու դրդապատճառներով, համապատասխան պայմաններում կարող են հանդիսանալ հուզական այրման համախտանիշի ձևավորման նախադրյալ:

АЛЬБЕРТ ЗУРАБЯН

ИССЛЕДОВАНИЕ ФАКТОРОВ ОБУСЛАВЛИВАЮЩИХ ЭМОЦИОНАЛЬНОЕ ВЫГОРАНИЕ В ПРОФЕССИОНАЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ (НА ПРИМЕРЕ СОТРУДНИКОВ СФЕРЫ ИТ)

РЕЗЮМЕ

*Сфера ИТ, являясь одной из быстро развивающихся профессиональных сфер современного мира и почти всегда находится в центре обсуждения и изучения. Учитывая, что данная сфера является средой стабильного взаимодействия не только человека и техники, но и человек-человек, мы поставили перед собой **цель** изучить особенности проявления синдрома эмоционального выгорания среди сотрудников, осуществляющих профессиональную деятельность в сфере ИТ. Исходя из этой цели, мы **предполагаем**, что мотивация к профессиональной деятельности и проявление индивидуальных особенностей сотрудников, осуществляющих профессиональную*

деятельность в сфере ИТ, могут оказать негативное влияние на психологическую безопасность работника и стать предпосылкой формирования синдрома эмоционального выгорания. Методологической основой исследования мы выбрали принцип единства сознания и деятельности, разработанный в рамках философско-психологической концепции С. Л. Рубинштейна, деятельностный подход, разработанный в работах Л. С. Выготского, А. Н. Леонтьева, Б. М. Теплова, В. Д. Шадрикова и концепцию безопасности окружающей среды и психики личности, разработанную И. А. Баевым, Е. Н. Волковой и Л. А. Регушем. Проведенный в статье анализ, показывает, что невротизм, экстраверсия, внутренняя и внешняя мотивация выраженные в рамках выборки при соответствующих условиях могут стать предпосылкой формирования синдрома эмоционального выгорания.

Ключевые слова: Эмоциональное выгорание, ИТ, профессиональная деятельность, личностные особенности, мотивация труда, психологическая безопасность, перегрузка, условия труда, Онлайн, Офлайн.

ALBERT ZURABYAN

RESEARCH OF FACTORS CAUSING EMOTIONAL BURNOUT IN PROFESSIONAL ACTIVITY (USING THE EXAMPLE OF IT EMPLOYEES)

SUMMARY

Being one of the fastest-growing professional fields in the modern world, the IT sector is almost always the focus of discussion and research. Taking into account that the IT sector is not only a person-technology environment but also a stable person-person cooperation environment, we set a goal to study the characteristics of the emotional burnout syndrome among employees engaged in professional activities in the IT sector. Based on this goal, we assume that motivation for professional activities and the manifestation of individual characteristics of employees engaged in professional activities in the IT field can have a negative impact on the employees' psychological safety and become a prerequisite for the formation of emotional burnout syndrome. We chose the principle of unity of consciousness and activity developed by S. L. as a methodological basis for the research. Within the framework of Rubinstein's philosophical-psychological concept, an activity-based approach developed by L. S. Vygotsky, A. N. In the works of Leontev, B. M. Teplov, V. D. Shadrikov, and I.A. Baeva, Y. N. Volkova and L. A. The concept of environmental and personal psychological safety was developed by Regush. The analysis carried out in the article shows that neuroticism, extroversion, and internal and external negative motivation expressed within the sample can be a prerequisite for the formation of emotional burnout syndrome under appropriate conditions.

Keywords: Emotional burnout, IT, professional activity, personal characteristics, work motivation, psychological safety, overload, working conditions, Online, Offline.

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԿԱՆԸ (ԲԵՐՁՈՐԻ)

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՅՔՈՒՄ

Հոդվածում ցույց է տրվում, որ Ադրբեջանի կողմից, սկսած 2022 թվականի դեկտեմբերի 12-ից առայսօր, կեղծ «Բնապահպանական» պատճառաբանությամբ Ստեփանակերտ-Գորիս մայրուղու Շուշի-Քարին տակ հատվածի փակումը և Հայաստանից Արցախ գնացող էներգակիրների խափանումը նպատակ ունի Արցախի բնակչությանը ենթարկել էթնիկ զտման և հայրենագրվման, իսկ Հայաստանից՝ նորանոր տարածքների զավթման:

Հոդվածում հիմնավորվում է, որ Արցախի Հանրապետությունը փաստացիորեն (դե ֆակտո) իր անկախությունը հռչակել է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան, սակայն իրավապես (դե յուրե) որևէ մեկի՝ նույնիսկ Հայաստանի Հանրապետության կողմից նրա անկախությունը չի ճանաչվել: Որպես ինքնիշխան պետություն, Արցախն ունի պետականության բոլոր վավերապայմանները՝ դրանից բխող հետևանքներով: Հետևաբար, Արցախի օրենսդրությամբ՝ ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, որի հետ Ադրբեջանը որևէ առնչություն չունի:

Վերջում հոդվածագիրը եզրակացնում է, որ, որքան էլ ոստիսը դաժան ու անմարդկային լինի, հնարավոր չէ գլխատել հայ ժողովրդին: Ամեն դեպքում, օրակարգում հայ ժողովրդի առաջնահերթ ռազմավարական խնդիրը սեփական հողում արցախահայության կյանքի անվտանգության ապահովումն է: Այս պահին որևէ այլ հարց չի կարող կարևոր լինել: Նահանջի տեղ չունենք:

Բանալի բառեր՝ Ստեփանակերտ-Գորիս մայրուղի, Բերձորի միջանցք, եռակողմ հայտարարություն, «Լեռնային Ղարաբաղ» վարչատարածքային միավոր, հանքավայր, թուրանական ծրագիր, քեմալական Թուրքիա, բոլշևիկյան Ռուսաստան, անկախության հանրաքվե:

Արցախի Հանրապետության ժողովրդի համար 2022 թվականի ձմռան ամիսները բուռն իրադարձություններով բավական հագեցված էին:

Դեկտեմբերի 3-ին Բաքուն պաշտոնական հայտարարություն տարածեց, որ Ադրբեջանի Հանրապետության Քելբաջարի շրջանում սկսում են նախնական դիտարկում՝ ուսումնասիրելու օգտակար հանածոների հանքավայրերում ապօրինի շահագործման փաստերը հանրապետության այն տարածքում, որտեղ ժամանակավորապես ռուսական խաղաղապահ զորախումբ է տեղակայված (նկատի է ունեցվել Արցախի Հանրապետության ներկայիս Մարտակերտի շրջանի հյուսիսային մասը): Նույն օրը մի խումբ ադրբեջանցիներ փորձեցին մտնել Մարտակերտի շրջանի Կաշե-

նի հանքավայր, սակայն չի հաջողվել, քանի որ հանքը շահագործող ընկերության անվտանգությունը կանգնեցրել և չի թողել, որ մուտք գործեն հանքի տարածք: Չհասնելով իրենց նպատակին՝ նույն օրը Ստեփանակերտ - Գորիս մայրուղու Շուշի - Քարին տակ հատվածում քաղաքացիական հագուստներով մի խումբ ադրբեջանցիներ կեղծ «բնապահպանական» պատճառաբանությամբ փակեցին Ստեփանակերտ - Գորիս մայրուղին: Ռուսաստանի Դաշնության խաղապահների ավելի քան երեք ժամ տևած բանակցություններից հետո ճանապարհը երկուստեք բացվեց:

2022 թվականի դեկտեմբերի 12-ի առավոտյան դարձյալ մի խումբ ադրբեջանցիներ, նույն պատճառաբանությամբ, Ստեփանակերտ - Գորիս մայրուղու Շուշի - Քարին տակ հատվածում հերթական անգամ փակեցին ճանապարհը, իսկ դեկտեմբերի 13-ին Ադրբեջանը խափանեց Հայաստանից Արցախ գնացող գազի մատակարարումը: Այն վերականգնվեց դեկտեմբերի 16 -ին:

Ադրբեջանական ՋԼՄ-ների փոխանցմամբ՝ ակցիա իրականացնող բնապահպանների պահանջը ռուս խաղաղապահ զորախմբի հրամանատարի հետ հանդիպումն էր, քանի որ նախօրեին նրանց չի հաջողվել մեկնարկել դիտարկումը Մարտակերտի շրջանի Դրմբոնի և Կաշենի հանքավայրերում: Կայացած հանդիպումն որևէ արդյունք չի տվել, և «բնապահպանները» օր-օրի նաև քաղաքական պահանջներ են հնչեցնում՝ կապված Քաշաթաղի (Լաչինի) շրջանում Ադրբեջանի սահմանապահ ծառայության և մաքսային կոմիտեի կետերի տեղադրման, տարածաշրջանից ռուսական խաղաղապահների հեռացման, Սյունիքի մարզի հարավային մասով միջանցքի տրամադրման և այլ հարցերի հետ: Ակնհայտ է, որ «բնապահպանների» վերջնական թիրախը՝ Արցախը հայաթափելուց հետո Սյունիքով (Ջանգեզուր) «միջանցք» տրամադրելու պահանջն է, մեծ հաշվով՝ թուրանական ծրագրի իրականացման միջոցով հայկական պետության վերացումը:

Մեկնաբանելով Լաչինի միջանցքում ստեղծված իրադրությունը՝ ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ս. Ջախարովան դեկտեմբերի 15-ին հայտարարեց, որ այն պայմանավորված է հանքավայրերի շահագործման շուրջ կողմերի տարաձայնություններով: Տարօրինակ այդ մոտեցման կապակցությամբ հետազայում համանման միտք են արտահայտել նաև արտաքին գործերի նախարար Ս. Լավրովը և Կրեմլի խոսնակ Դ. Պեսկովը, ըստ որոնց տարաձայնությունները ծագել են կողմերի, այսինքն՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև: Փաստորեն, խաղաղապահ և միջնորդ Ռուսաստանն Արցախի Հանրապետությունը դիտում է (և միշտ էլ դիտել է) որպես բանակցությունների առարկա, այլ՝ ոչ կողմ: Վերջինս 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ Հայտարարության մեջ դիտվում է որպես աշխարհագրական տարածք: Այստեղ զարմանալու ոչինչ չկա, և պատահական չէ, որ Ռուսաստանի ղեկավարները, առիթն եղած դեպքում, չեն զլանում հայտարարել, որ Լեռնային Ղարաբաղը գտնվում է Ադրբեջանի սահմաններում: Դեռ ավելին, Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը պարբերաբար հաղորդագրություններ է տարածում, որ ռուս խաղաղապահների պատասխանատվության գոտում խախտումներ չեն արձանագրվել (կարծես ճանապարհի արգելափակումը և Արցախի 120.000 բնակչությանը սովամահ անելը խախտում չի հանդիսանում), և որ

ռուս խաղաղապահների հրամանատարությունը շարունակում է բանակցությունները հայկական և ադրբեջանական կողմերի հետ՝ Ստեփանակերտ - Գորիս ճանապարհի երթևեկությունը վերականգնելու համար:

Դեկտեմբերի 23-ին, Մոսկվայում Ռուսաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ, Ս. Լավրովը Լաչինի միջանցքի արգելափակման կապակցությամբ առանց վարանելու հայտարարել է, որ «Հանքերը, որոնց մասին խոսք է գնում, շահագործվել են դեռ խորհրդային ժամանակներից: Խորհրդային տարիներին այնտեղ (երբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը մտնում էր Ադրբեջանի ԽՍՀ կազմի մեջ) կային ձեռնարկություններ (այժմ, ըստ երևույթին, դրանք վերածվել են բիզնեսի): Նրանք դեռ այնտեղ են: Սա ժառանգած խնդրի մի մասն է: Այն կարող է վերջնականապես լուծվել միայն խաղաղության պայմանագիր կնքելով և այս իրավական հարցում վերջակետ դնելով»: Իսկ Ադրբեջանի ԱԳ նախարար Զ. Բայրամովը կրկնել է իր երկրի նախագահի ծեծված խոսքերն այն մասին, որ Ադրբեջանում «Լեռնային Ղարաբաղ» վարչատարածքային միավոր չկա, ուստի տարածաշրջանի հայ բնակչությունը պետք է վերաինտեգրվի Ադրբեջանի հասարակական կյանքի մեջ: Հանդիպման ընթացքում Լավրովը նույնպես գերծ է մնացել «Լեռնային Ղարաբաղ» եզրույթն օգտագործելուց:

Ի դեպ, Հայաստանի պահանջով դեկտեմբերի 21-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում քննարկվել է Հայաստանն Արցախին կապող ճանապարհին ստեղծված իրավիճակը: Միջանցքի վերաբերյալ որևէ բանաձևի ընդունումը տապալվել է չորս երկրների՝ Ալբանիայի, Ռուսաստանի, Արաբական Միացյալ Էմիրաթների և Մեծ Բրիտանիայի Ժխտական պահվածքի շնորհիվ: Ինչպես նախկինում, Ադրբեջանի ներկայացուցիչն այդ նիստում ևս շեշտել է, որ «Լեռնային Ղարաբաղ» կոչվող տարածքն Ադրբեջանի ինքնիշխան տարածքն է, որը ճանաչված է միջազգային մակարդակով:

Բերձորի միջանցքի ապաշրջափակման վերաբերյալ Արցախի Հանրապետության կառավարության 28. 12. 2022 թ. տարածած հայտարարության մեջ մեկ անգամ ևս վերահաստատվել է, որ Արցախում հանքարդյունաբերությունը իրականացվում է միջազգային ամենաբարձր չափանիշներով, որին համապատասխանեցված են նաև ոլորտի՝ օրենսդրությամբ սահմանված կարգավորումները: «Հաշվի առնելով սակայն հարևան երկրի «Էկոակտիվիստների» ստեղծած անառողջ միջավայրն ու միջազգային հանրությանը մոլորեցնելու փորձերը՝ որոշում է կայացվել դիմել միջազգային կազմակերպություններին՝ «Բեյզ Մեթրլս» ընկերության գործունեության հետ կապված միջազգային էկոլոգիական փորձաքննություն իրականացնելու համար»: Ընկերության ղեկավարության հետ համատեղ որոշում է կայացվել ժամանակավորապես դադարեցնել ընկերության հանքավայրի շահագործումը՝ մինչև փորձաքննության ավարտվելը: Մինչև ժամանակ Արցախի Հանրապետության կառավարությունը դիմել է ՄԱԿ - ի համապատասխան կառույցներին և միջազգային մյուս մասնագիտական կազմակերպություններին՝ փորձաքննության իրականացումը սեղմ ժամկետներում կազմակերպելու համար:

Թվում է՝ ամեն ինչ պարզ է, սակայն՝ առաջին հայացքից: Արցախցիներն իրենց կաշվի վրա վաղուց են զգացել Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը և նոր չեն հասկանում, որ հակառակորդն առաջին հերթին ձգտում է Արցախի բնակչությանը ենթարկել էթնիկ զտման և հայրենագրկման, իսկ Հայաստանից՝ նորանոր տարածքների գավթման: Օրինական հարց է ծագում՝ որքանով են հիմնավորված ադրբեջանցիների՝ Արցախի տարածքում գտնվող հանքավայրերի մշտադիտարկման, գույքագրման և շրջակա միջավայրի հետաքննության ու դրանից բխող հաղորդակցության միջոցների վերաբերյալ հարցադրումները, ի՞նչ նպատակներ է հետապնդում Բաքուն, ո՞ւմ է պատկանում Արցախի հողը և նրա ընդերքը, այդ առումով ի՞նչ ծանրակշիռ փաստեր և իրավական ակտեր ունեն թե՛ Արցախը, և թե՛ Ադրբեջանը, որքանով են դրանք հիմնավորված միջազգային իրավունքի տեսանկյունից, միջազգային փաստաթղթերում ի՞նչ է նկատի առնվում «Լեռնային Ղարաբաղ» հասկացության կամ հիմնահարցի տակ: Դիմենք անառարկելի փաստերին:

Պատմական Արցախի տարածքում սփռված տասնյակ քարագիր արձանագրությունները և վանքերում գրված մատյանները վկայում են, որ տարածաշրջանի հողը, անտառները և ջրերը հնուց ի վեր պատկանել են հայկական վանքերին, տաճարներին և եկեղեցիներին, ինչպես նաև երկրի աշխարհիկ տերերին ու նրանց ենթակա գյուղացիներին: Գանձասարի վանքի տաճարի արևմտյան պատի վրա Արցախի ինքնակալ Հասան Ջալալը և նրա Աթաբեկ որդին արձանագրություն են թողել (13-րդ դար), որտեղ սերունդներին ավանդել են՝ թույլ չտալ՝ երկրամասի հողերը մահմեդականների սեփականությունը դառնան¹: Հասան - Ջալալյան տոհմը, կարծես կանխատեսել էր, որ վաչկատուն ցեղերը միշտ դրան են ձգտելու: Ավա՛ղ, այդպես էլ եղավ: Հուսանք, որ չի շարունակվի:

Թուրքական քոչվոր տարրը, դավաճան Մելիք - Շահնագարի օգնությամբ, Արցախական աշխարհի լեռնային մասում բնավորվեց 18-րդ դարի 50-ական թվականներին՝ հիմնադրելով Շուշիի խանությունը: Վերջինիս հիմնադիր Փանահ խան կոչեցյալը չէր միջամտում երկրի հողային խնդիրներին, որովհետև նա իր հետ Արցախի դաշտային մասից անգամ մի թիզ հող չէր բերել, իսկ երկրամասի հողային հարցը կարգավորվել է հայոց վաղեմի սովորություններով: Հենց դրանով պետք է բացատրել, որ Շուշիի խաները և նրանց սպասավորները Լեռնային Արցախի տարածքում անգամ սեփական գերեզմանատեղի չեն ունեցել և հուղարկավորվել են դաշտային բնակավայրերի մոտ: Երկրամասում, միայն 18-րդ դարի 90-ական թվականների աղետալի անցքերը (սով, ժանտախտ, Գանձասարի վանքի կողոպուտը, Դիզակի մելիքի աքսորը, Խաչենի մելիքի սպանությունը, Գյուլիստանի և Վարանդայի մելիքների՝ հպատակների հետ միասին Ղարաբաղից դուրս գալը և Վրաստանում բնակվելը, Աղա-Մահմադ խանի արշավանքները և այլն) առիթ տվեցին Շուշիի Իբրահիմ և Մեհթի կուլի խաներին նենգությամբ իրավունք ձեռք բերել դատարկված հայոց հողերի նկատմամբ և իրենց թուրքալեզու ցեղակիցներին բնակեցնել դրանց մի մասի վրա:

Ռուսական կայսրության անդրկովկասյան արշավանքների արդյունքում 19-րդ

¹ Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Երևան, Արցախ, 1982, էջ 40:

դարի սկզբին նվաճվեց նաև Ղարաբաղի խանությունը, որը հիմնականում ներառում էր պատմական Արցախի և Սյունիքի տարածքները: Ցարական Ռուսաստանի և շահական Պարսկաստանի միջև Արցախի Գյուլիստան գավառում 1813 թ. հոկտեմբերի 13-ին կնքված պայմանագրում որևէ խոսք չկա «ազերի» կամ «Ադրբեջան» էթնո-տարածքային եզրույթների մասին: Դրանք Անգլիայի և Թուրքիայի կողմից մոզունվեցին Ղարաբաղը Ռուսաստանին կցվելուց ավելի քան մեկ դար հետո: Այդ տարիներին երկրամասը բազմիցս ենթարկվել է վարչատարածքային փոփոխությունների: Վերջին անգամ նրա հիմնական մասը գտնվում էր Շուշիի գավառի մեջ, որի բնակչության 58,2%-ը հայեր են եղել²:

1917 թ. ռուսական փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունները տակնուվրա արեցին կայսրությունը: Այդ դեպքերից զերծ չմնաց նաև Շուշիի գավառը: Երբ բոլշևիկների կողմից կազմալուծվեց կովկասյան ռազմաճակատը, երկրամասը հայտնվեց սովի և մեկուսացման ճիւղերում: Ամենուրեք վխտում էին թուրք-թաթարական հրոսակախմբերը, որոնց նպատակը Արևմտյան Հայաստանի պես հայ ժողովրդի արևելյան հատվածի ոչնչացումն էր:

Թուրանական ծրագրին կուլ չգնալու և անկախությունը վերականգնելու համար հայ ժողովուրդը լարեց իր բոլոր ուժերը: 1918 - 1920 թթ. Լեռնային Ղարաբաղն ինքնուրույն վարչա-քաղաքական միավոր էր հանդիսանում Անդրկովկասում և ուներ իր կառավարությունն ու Ազգային խորհուրդը (պառլամենտը): Երկու տարվա ընթացքում Ղարաբաղի հայության 10 համագումար է հրավիրվել, որոնցում, բացի 7-րդ համագումարից, մերժվել են մուսավաթական Ադրբեջանի հետ առնչություն ունենալու որևէ վարչական ծրագիր: Հատկանշական է, որ անգլիացիները, յոթ ամիս մնալով Ղարաբաղում, բոլոր միջոցներով փորձում էին երկրամասը բռնակցել Ադրբեջանին: Եվ երբ այդ հարցում մերժում ստացան Ղարաբաղի հայության 5-րդ համագումարի կողմից, անգլիական զորքերի հրամանատար Շատելվորտը հայտարարել է. «Ի նկատի ունեցեք, որ ձեր ճանապարհները կարող են փակել, այն ժամանակ դուք որտեղի՞ց մթերք կստանաք, ինչպե՞ս կպահպանեք հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ: Կարող են ձեզ տնտեսապես բոլորոտ հայտարարել, կարո՞ղ եք առանց հացի ապրել: Եվ եթե հուզված, զինված ամբոխը հարձակվի ձեզ վրա, կարո՞ղ եք պաշտպանվել»³: Շատելվորտի այդ դասը, թե ի՞նչ պետք է անել Ղարաբաղի ժողովրդին հպատակեցնելու համար, լավ են յուրացրել այսօրվա թուրք-ազերիները, ինչն էլ ներկայումս փորձարկում են մեր նկատմամբ:

Քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի սիրախաղերի արդյունքում Խորհրդային Ադրբեջանը պատմական Արցախի լեռնային մասին տեր դարձավ Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության (ՌԿ(բ)Կ) Կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի կուսակցական որոշման հիման վրա, մի փաստաթուղթ, որը, միջազգային իրավունքի տեսանկյունից, նորմատիվ իրավա-

² Stet'u Центральный Государственный исторический архив СССР, фонд 1268, оп. 1 д. 108, л. 140:

³ Մրամայիս, Ղարաբաղի տագնապը, Երևան, 1993, էջ 18:

կան ակտի ուժ չունեն։ Այդ փաստաթղթի համաձայն՝ Լեոնային Ղարաբաղը թողնվեց Ադրբեջանի սահմաններում՝ տրամադրելով նրան մարզային ինքնավարություն։ Սակայն Ադրբեջանը հապաղեց և նույնիսկ դիմեց ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի փոխարեն գործող Անդրկովկասյան երկրամասայի կոմիտեին՝ Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցը վերանայելու խնդրանքով⁴։ Այն մերժվեց և Անդրերկրկոմի 1923 թ. հունիսի 23-ի որոշմամբ հանձնարարվեց Ադրբեջանի իշխանություններին՝ ստեղծելիք ինքնավար մարզի հռչակագրի մեջ մարզի տարածքի հողի ու ջրի տեր համարել նույն տարածքի հայ բնակչությանը։ Եվ, ահա, Ադրբեջանի Կենտգործկոմի 1923 թ. հուլիսի 7-ի ընդունած հռչակագրի 1-ին կետով շեշտվել է՝ «Լեոնային Ղարաբաղի հայկական մասից կազմել ինքնավար մարզ...», իսկ 3-րդ կետի ծանոթագրությամբ նշվել, որ «բոլոր արոտավայրերը, անասունները, այգիները և հողի ու ջրի փաստական տնօրինությունը պահպանվում է ներկայիս տերերի ձեռքում»⁵։

ԼՂԲՄ-ի իրավական կարգավիճակի վերաբերյալ առաջին փաստաթուղթը՝ Խորհրդային Ադրբեջանի կողմից 1924 թ. հուլիսի 4-ին ինքնավար մարզին շնորհված «Սահմանադրությունն» էր։ Սահմանադրության երկրորդ բաժնից նկատելի է, որ Լեոնային Ղարաբաղի տարածքը ստեղծվում էր Շուշիի, Ջևանշիրի Կարյազկինոյի և Ղուբաթլուի գավառների՝ սահմանադրության մեջ նշված բնակավայրերից։ Կոյուրին-տարիզմի տեսակետից իր նախադեպը չունեցող այդ ահավոր սահմանադրական նորմը հիմք հանդիսացավ, որպեսզի Բաքվի իշխանությունները որոշեն մարզի սահմանները։ Եվ որոշեցին այնպես, որ 11,5 հազար քառ. կմ տարածք ունեցող պատմական Արցախի նահանգից թողնվեց 4,4 հազար քառ. կմ-ը։ Մարզից կտրեցին դաշտային բերրի հողերը, Արցախի հյուսիսային շրջանները՝ շփման ոչ մի կետ չթողնելով Խորհրդային Հայաստանի հետ։ Ճիշտ է, այդ փաստաթղթում որևէ խոսք չկար ինքնավար մարզի հողերի պատկանելության մասին, սակայն նրա 3-րդ հոդվածն ամրագրել էր, որ Լեոնային Ղարաբաղը մասնակցում է Խորհրդային Ադրբեջանի բոլոր մարմիններում համեմատական չափի սկզբունքով⁶։ Իրավական տեսանկյունից սա մեծ կռիվն է և նշանակում է, որ Խորհրդային Ադրբեջանի տարածքում պետական իշխանության կրողներից մեկն էլ Արցախի հայ ժողովուրդն էր։

ԼՂԲՄ-ի իրավական կարգավիճակի վերաբերյալ վերջին փաստաթուղթը «Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» Ադր. ԽՍՀ 1981 թ. հունիսի 16 ի օրենքն էր (այսուհետ՝ Օրենք), որը մշակվել էր ԽՍՀՄ 1977 թ. և Ադր. ԽՍՀ 1978 թ. սահմանադրություններին համապատասխան։ Մի քանի խոսք նշված օրենքի մասին։ Վերջինս մշակվել էր ԽՍՀՄ սահմանադրության 86 և 87-րդ հոդվածների դրույթների հիման վրա, որոնց համաձայն՝ ինքնավար մարզը խորհրդային ինքնավարության ձև է, որի մասին օրենքը, ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների խորհրդի ներկայացմամբ, ընդունվում է այն միութենական հանրապետության կողմից, որի կազմում ինքնավար մարզը մտնում էր։ Խոսք չկա, որ ԽՍՀՄ և Ադր. ԽՍՀ

⁴ Sté u Центральный партийный архив института марксизма-ленинизма ЦК КПСС, Ф. 64, оп. 1, д. 86, л. 86:

⁵ Sté u Газета “Бакинский рабочий”, N 151, от 9 июля 1923 года.

⁶ Sté u «Կոմունիստ» թերթ, N 145 (924), էջ 26, Բաքու, 6-ին հուլիսի, 1924 թ.:

սահմանադրություններին համապատասխան՝ ԼՂԻՄ-ը գտնվում էր Ադր. ԽՍՀ - ի կազմում: Միննույն ժամանակ, Օրենքից նկատելի է, որ ինքնավար մարզի կարգավիճակն առաջին հերթին որոշվում էր ԽՍՀ Միության օրենսդրությամբ:

Հատկանշական է Օրենքի 3-րդ հոդվածը, որի համաձայն՝ «ինքնավար մարզի տարածքը չի կարող փոփոխվել առանց ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի խորհրդի համաձայնության»⁷: Իրավաբանորեն դա նշանակում է, որ ԽՍՀՄ շրջանակներում ԼՂԻՄ - ն իր տարածքի նկատմամբ օժտված է եղել այնպիսի գերիշխանությամբ, ինչպիսին ունեցել է իր տարածքի նկատմամբ Խորհրդային Ադրբեջանը՝ ինքնավար մարզի սահմաններից դուրս: Բացի դա, մարզի գերիշխանությունն իր տարածքի նկատմամբ ինչ որ առումով բացարձակ է եղել, քանի որ առանց նրա համաձայնության ինքնավար մարզի սահմանները չէին կարող փոփոխվել: Նույնիսկ միութենական և հանրապետական մարմինները լիազորված չեն եղել ինքնավար մարզի սահմանները փոփոխելու: Այդ իրավունքը պատկանել է միայն ինքնավար մարզի, տվյալ դեպքում՝ Արցախի ժողովրդին: Այդ առումով Օրենքը մանրամասնել է, որ ինքնավար մարզի սահմանների փոփոխումը, շրջանների, քաղաքների, ավանների և մյուս բնակավայրերի անվանումը և վերանվանումը կատարվում է ԽՍՀ Միության և Ադր. ԽՍՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ամեն պարագայում ինքնավար մարզի վարչատարածքային հարցերը լուծվել են՝ հաշվի առնելով ինքնավար մարզի համապատասխան պետական մարմինների կարծիքները:

Օրենքում աներկբա շեշտվել է, որ ԽՍՀՄ և Ադր. ԽՍՀ սահմանադրություններին համապատասխան՝ պետական իշխանության բարձրագույն մարմինը՝ ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ Խորհուրդը, Օրենքով իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է «իր տարածքում»:

Լիազորությունների մի բնագավառն էլ նախատեսված էր Օրենքի 22-րդ հոդվածով, ըստ որի՝ մարզային խորհուրդը պետական կառավարում և պետական վերահսկողություն է իրականացնում մարզի տարածքում ջրերի, անտառների, ընդերքի, մթնոլորտային օդի և կենդանական աշխարհի օգտագործման ու պահպանության բնագավառում... վերահսկում է ընդերքի օգտագործման ժամանակ խախտված հողամասերը անվտանգ վիճակի մեջ բերելու, ինչպես նաև հողերի վերամշակման միջոցառումների իրականացումը:

Խորհրդային պետականության բոլոր ձևերը ներկայացված էին ԽՍՀՄ օրենսդրական մարմնում, չնայած նրանցից ոչ մեկը միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ չի հանդիսացել: Այն հանգամանքը, որ ԽՍՀՄ սահմանադրության 110-րդ հոդվածին համապատասխան՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդում ԼՂԻՄ-ից ընտրվել է հինգ պատգամավոր, իսկ ինքնավար մարզի դատախազը նշանակվել է ԽՍՀՄ գլխավոր դատախազի կողմից, վկայում է, որ մարզի վրա տարածվել է նաև ԽՍՀ Միության օրենսդրությունը:

⁷ Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետության օրենքը՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին», *Բաքու, Ազերնեշր, 1987*:

Մարզը Խորհրդային Ադրբեջանի ազգային պետական կառուցվածքում՝ որպես հայ ժողովրդի ազգային պետականության ձև, ամրագրված էր ոչ միայն հանրապետության Գերագույն խորհրդում, նրա բարձրագույն օրենսդրական մարմնում ներկայացված լինելու իրավունքով, այլև նրանով, որ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահի տեղակալներից մեկն ընտրվել է ինքնավար մարզից: Իսկ դա նշանակում է, որ հանրապետության պետական իշխանության պաշտոնների աստիճանակարգում ինքնավար մարզի ներկայացուցչի կարգավիճակը սահմանադրորեն ամրագրված է եղել:

Օրենքը տարընթերցումների տեղիք չի տալիս, այլ միայն վկայում է, որ ԽՍՀՄ միասնական իրավական տարածքում, ԼՂԻՄ-ի և Խորհրդային Ադրբեջանի կարգավիճակները՝ խորհրդային պետականության ձևերի տեսանկյունից շատ չեն տարբերվել իրարից:

Խորհրդային Միության փլուզման նախօրյակին նրա բարձրագույն պետական մարմինը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, 1990 թ. ապրիլի 3-ին ընդունեց օրենք ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու կարգի մասին: Ընդ որում, դուրս եկող հանրապետության կազմում գտնվող ինքնավար կազմավորմանն իրավունք էր վերապահվում ինքնուրույն որոշելու իր ճակատագիրը՝ ԽՍՀՄ կազմում մնալ, թե՞ զնալ դուրս եկող հանրապետության հետևից⁸:

Ինքնավար մարզին հարակից, հայերով բնակեցված Շահումյանի շրջանը չնայած վարչականորեն ԼՂԻՄ կազմում չի եղել, սակայն շրջանի վրա նույնպես տարածվում էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ապրիլի 3-ի օրենքի 3-րդ հոդվածի պահանջը, որում ասվում էր. «Միութենական հանրապետությունում, որի տարածքում կան տվյալ տեղանքում բնակչության մեծամասնություն կազմող հավաք բնակվող ազգախմբեր, հանրաքվեի արդյունքներն ամփոփելիս այդ տեղանքներում քվեարկության արդյունքները հաշվարկվում են առանձին»:

1991 թ. օգոստոսյան (օգոստոսի 18-21-ը) պետական խռովությունը (պուտչ) ազդարարեց Խորհրդային Միության հոգևարքը: Օգոստոսի 30-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունվեց Հռչակագիր՝ «Ադրբեջանական պետության անկախության վերականգնման մասին»: Հռչակագիրը, հայտարարելով Ադրբեջանի անկախության վերականգնման մասին, վկայակոչել է 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանական ժողովրդական հանրապետությանը: Իսկ դրանք այն տարիներն էին, որի ժամանակ, Լեռնային Ղարաբաղը, հանդիսանալով արդեն իսկ ինքնորոշված վարչաքաղաքական միավոր, Ադրբեջանի կազմի մեջ չէր մտնում:

Ուստի Արցախի հայությունը զգաց պահի լրջությունը և դիմեց միակ ճիշտ քայլին: Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ, 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունեց

⁸ Stet'u Закон СССР от 3 апреля 1990 года "О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР", Ведомости СНД и ВС СССР, 1990, N 15:

Հռչակագիր՝ «Ինքնավար մարզի և հարակից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հռչակելու մասին»: Համաձայն Հռչակագրի՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը՝ գործում են ԽՍՀՄ սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև ներկայումս գործող այն մյուս օրենքները, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին»⁹:

Այսպիսով, Արցախն իր անկախությունը հռչակել է դեռևս գոյություն ունեցող Խորհրդային Միության օրենսդրության տառին ու ոգուն համապատասխան՝ չխախտելով որևէ օրենք և ընթացակարգ: Այն անթերի է և անխոցելի:

Ադրբեջանը, չհայտարարված պատերազմի մեջ մտնելով նորաստեղծ Արցախի Հանրապետության հետ և, ստանալով արժանի հակահարված, դիմեց լկտի քայլի. նրա Գերագույն խորհուրդը 1991 թ. նոյեմբերի 23-ին ընդունեց օրենք՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը լուծարելու, «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ կազմավորելու մասին» Ադրկենտգործկոմի 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետը և «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» 1981 թ. հունիսի 16-ի Ադր. ԽՍՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին: Այդ հրեշավոր օրենքով Արցախի Հանրապետության Ստեփանակերտ, Մարտակերտ և Մարտունի քաղաքները վերանվանվեցին համապատասխանաբար Խանքենդի, Ադդարա և Խոջավանդ թրքափոխ անուններով:

Նախկին ինքնավար մարզի տարածքը մտցվեց Ադդարայի, Խոջավանդի, Խոջալուի և Շուշիի շրջանների մեջ: Վերացվեցին Հադրութի և Ասկերանի շրջանները¹⁰:

Այդ այն դեպքում, երբ համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի՝ «ինքնավար մարզի տարածքը չի կարող փոփոխվել առանց ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի խորհրդի համաձայնության»: Վերոնշյալ օրենքն անօրինական էր և իրավական ուժ չունեց նաև այն առումով, որ հակասում էր ինչպես դեռևս գործող ԽՍՀՄ սահմանադրության 87-րդ հոդվածին, որը երաշխավորում էր ինքնավար մարզի կարգավիճակը, այնպես էլ ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3 - ի՝ ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու մասին օրենքին: Այդ առումով Հադրութի և Ասկերանի շրջանների վերացումը նույնպես իրավական ուժ չունեց: Եվ պատահական չէ, որ ինքնավար մարզը լուծարելու մասին Ադրբեջանի կողմից ընդունված օրենքն ընդամենը 3 օրվա կյանք ունեցավ: Այն ճանաչվեց հակասահմանադրական և վերացվեց ԽՍՀՄ սահմանադրական հսկողության կոմիտեի 1991 թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ¹¹: Սակայն այդ որոշումն Ադրբեջանի համար մեղյալ փաստաթուղթ էր, և նա ավելի լկտի քայլ կատարեց՝ խորհրդարանի 1992 թ. Հոկտեմբերի 13-ի որոշմամբ Մարտակերտի շրջանը նույնպես վերացվեց՝ տարածքը բաժանելով Քելլաջարի, Թարթառի և Ադդամի շրջանների միջև:

Ադրբեջանի այն պատճառաբանությունը, որ ԼՂԻՄ-ի կարգավիճակի մասին

⁹ Տե՛ս Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հռչակելու մասին, 2 սեպտեմբերի 1991 թ., «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 3 սեպտեմբերի 1991 թ.:

¹⁰ Տե՛ս Ведомости Верховного Совета Республики Азербайджан, 1991 г., N 24, с. 448:

¹¹ Տե՛ս Ведомости Съезда Народных Депутатов СССР и Верховного Совета СССР, 1991г. N 28, с. 2-5:

օրենքն ինքնավար մարզի խորհրդին Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հռչակելու լիազորությամբ չի օժտել, անհիմն է և չի համապատասխանում իրականությանը, քանի որ մարզի համար այդ լիազորությունը ծագել է 1981 թ. Օրենքի ընդունումից ինը տարի անց, այսինքն՝ 1990 թվականին: Բացի այդ, 1981 թ. Օրենքում հատուկ նշված է, որ ինքնավար մարզի խորհուրդն իրականացնում է նաև այլ լիազորություններ՝ նախատեսված ԽՍՀՄ և Ադր. ԽՍՀ օրենսդրությամբ:

Խորհրդային Միության փլուզումից մի քանի օր առաջ Լեռնային Ղարաբաղում անցկացվեց անկախության հանրաքվե, որի արդյունքում բնակչության մեծամասնությունը կողմ արտահայտվեց Ադրբեջանից անկախանալու օգտին¹²: Դրանից անմիջապես հետո կազմավորվեցին պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինները:

Երկրի օրենսդիր մարմնի՝ 1992 թվականի հունվարի 6-ին ընդունված՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական օրենքի 6-րդ մասի համաձայն՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողը, ընդերքը, անտառները, բնական մյուս պաշարները հանրապետության ազգային հարստությունն են, նրա պետական սեփականությունն ու պատկանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդին»¹³:

Սահմանադրական օրենքի այդ դրույթը հետագայում տեղ գտավ երկրի Հիմնական օրենքում և մի շարք նորմատիվ իրավական ակտերում: Այսպես, Արցախի Հանրապետության Սահմանադրության բաղկացուցիչ մասը կազմող նախաբանում, որպես Սահմանադրության ընդունման հիմնարար փաստաթուղթ, վկայակոչվում է նաև ԼՂՀ օրենսդիր մարմնի կողմից 1992 թվականի հունվարի 6-ին ընդունված՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին» Հռչակագիրը: Իսկ Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասն ուղղակի հռչակում է, որ «ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են»¹⁴:

«Ընդերքի մասին» ԼՂՀ օրենսգրքի համաձայն (գործում է 2014 թ. հունվարի 1-ից)՝ ԼՂՀ ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, որը կարող է տրամադրվել օգտագործման միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով:

Ընդերքի տեղամասերը չեն կարող լինել առքուվաճառքի, գրավի առարկա կամ օտարվել այլ ձևով:

«Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքը (գործում է 2006 թվականից) կարգավորում է ԼՂՀ-ում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման

¹² *St'e u Gazeta "Советский Карабах" от 18 декабря 1991 года, N 215:*

¹³ *St'e u Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին», 6 հունվարի 1992 թ.:*

¹⁴ *St'e u Հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին», 6 հունվարի 1992 թ., Արցախի Հանրապետության Սահմանադրություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, N 04, 28 փետրվարի 2017 թ.:*

խնդիրները և սահմանում է ԼՂՀ-ում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Օրենքի համաձայն՝ բնապահպանական վերահսկողությամբ լիազորված է միայն հանրապետության բնապահպանական պետական տեսչությունը:

Այսպիսով, Արցախի Հանրապետությունը փաստացիորեն (դե ֆակտո) իր անկախությունը հռչակել է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան, սակայն իրավապես (դե յուրե) որևէ մեկի՝ նույնիսկ Հայաստանի Հանրապետության կողմից նրա անկախությունը չի ճանաչվել: Որպես ինքնիշխան պետություն, Արցախն ունի պետականության բոլոր վավերապայմանները՝ դրանից բխող հետևանքներով: Իր հերթին, Ադրբեջանն աշխարհում փաստացիորեն և իրավապես ճանաչված պետություն է՝ անդամակցելով միջազգային մի շարք կառույցների: Ստացվում է, որ Արցախի օրենսդրությամբ ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, իսկ Ադրբեջանի օրենսդրությամբ՝ նրա սեփականությունը, ելնելով նրանից, որ Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղի վարչատարածքային միավոր ընդհանրապես գոյություն չունի:

Ադրբեջանի նախագահը, համարելով, որ պատերազմի դաշտում վերջնականապես լուծել է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը, 2021 թ. հունիս 8 -ի հրամանագրով Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած ԼՂՀ տարածքը բաժանել է երկու տնտեսական շրջանների՝ Ղարաբաղյան՝ ներառելով Ադդամի (նաև Մարտակերտի շրջանի մի մասը), Շուշիի, Ֆիզուլիի (Մարտունու շրջանի մի մասը և Վարանդա բնակավայրը), Թարթառի (նաև Մարտակերտի շրջանի մի մասը), Խոջավենդի (Հաղորդի և Մարտունու շրջանները), Խոջալուի (Ասկերանի շրջանը) շրջաններն ու Խանքենդի (Ստեփանակերտ) քաղաքը և Արևելա-Զանգեզուրյան՝ ներառելով Ջերալիլի (Հաղորդի շրջանի հարավային թևը՝ Ջրական բնակավայրով), Զանգեղանի (Քաշաթաղի շրջանի հարավային թևը՝ Կովսական բնակավայրով), Ղուբաթլուի (Քաշաթաղի շրջանի հարավային թևը՝ Սանասար բնակավայրով), Լաչինի (Քաշաթաղի շրջանը՝ Բերձոր շրջկենտրոնով) և Քելբաջարի (Քարվաճառի) շրջանը և Մարտակերտի շրջանի մի մասը)¹⁵:

Ահա գործ ունենք մի այնպիսի հարևանի և հակառակորդի հետ, որի համար «Լեռնային Ղարաբաղ» աշխարհագրական անվանումը հակացուցական է: Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության տարածքային նման վերաձևումները չեն նպաստում արցախյան հիմնահարցի արդարացի լուծմանը, այլ միայն հայատյացություն են սերմանում և երկրամասը հայաթափելու նպատակ են հետապնդում: Ինչ քայլի էլ որ դիմեն, «Լեռնային Ղարաբաղ» եզրույթը պատմության երեսից ջնջել չի լինի, այն, որպես վարչատարածքային միավոր, քաղաքական իմաստով առաջին անգամ

¹⁵ St' u Ukaz prezidenta Azerbaydzhanskoy Respubliki ot 7 iyulya 2021 goda "O novom delenii ekonomicheskikh rayonov v Azerbaydzhanskoy Respublike".

արձանագրվել է Ադրբեջանի Հանրապետության կառավարության և Ղարաբաղի հայ բնակչության միջև 1919 թ. օգոստոսի 19-ին կնքված համաձայնագրում: Այդ փաստաթղթերում նշվել են նաև այն հայաբնակ տարածքները, որոնք դեռևս այն ժամանակ Լեռնային Ղարաբաղի մաս են համարվել. դրանք են՝ Շուշիի գավառի մաս կազմող Դիզակի (ներկայիս Հադրութի շրջանը), Խաչենի (ներկայիս Ասկերանի և Մարտակերտի շրջանների մի մասը), Ջրաբերդի (ներկայիս Մարտակերտի շրջանի մի մասը) և Վարանդայի (ներկայիս Շուշի շրջանը, Մարտունու և Ասկերանի շրջանների մի մասը) գավառակները: Հետագայում խորհրդային և միջազգային բոլոր փաստաթղթերում «Լեռնային Ղարաբաղ» վարչաքաղաքական միավորը կյանքի իրավունք ստացավ հենց այդ սահմաններում: Այն բազմիցս արձանագրվել է Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական Միության, Եվրոպայի Խորհրդի, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (Մինսկի խումբ) փաստաթղթերում և Հայաստանի, Ռուսաստանի ու Ադրբեջանի ղեկավարների 2020 թվականի նոյեմբերի 9-ի Հայտարարությունում (վերջին փաստաթղթում՝ 4 անգամ)¹⁶ և այլն:

Հետպատերազմյան իրադարձությունները ցույց են տալիս, որ Ադրբեջանը և Թուրքիան՝ համատեղ քաղաքականությամբ, ցանկանում են ծնկի բերել հայ ժողովրդին՝ թուրանական ծրագրի մեջ խրված արցախյան և զանգեզուրյան սեպերը վերացնելու հեռանկարով: Վտանգն ակնհայտ է և իրական: Այդ այն դեպքում, երբ վերջին պատերազմը ադետալի հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար, որոնք դեռևս իրենց զգացնել են տալիս: Սակայն, որքան էլ ադետալի լինեն հետևանքները, չպետք է լավկանությամբ զբաղվենք, այլ հրնթացս ոտքի կանգնենք և առաջ շարժվենք: Շատ ազգեր են պարտություն կրել և անհայտացել պատմության թատերաբեմից: Բայց կան ազգեր, որոնք կուլ չեն գնացել անցյալին և իրենց համառ ու քրտնաջան աշխատանքով բարձրացել են ընկած տեղից՝ վերաիմաստավորելով իրենց պատմության ընթացքը: Դա, առաջին հերթին, վերաբերում է մեզ:

Եթե Ադրբեջանի համար Լեռնային Ղարաբաղը սոսկ աշխարհագրական տարածք է, ապա այն հայ ժողովրդի անբաժան Հայրենիքի մի մասն է՝ իր հազարամյա պատմությամբ, կրոնով, մշակույթով և էթնիկ ինքնատիպությամբ: Դա անվիճելի է: Սակայն, քաղաքականության պակասի շնորհիվ, առաջին պատերազմից հետո այդպես էլ չկողմնորոշվեցինք՝ ո՞րն է մերը, ո՞րը՝ ոչ: Չհասկացանք նաև, որ, ինչպես մինչ վերջին պատերազմը, այնպես էլ դրանից հետո, ժամանակը մեր օգտին չի (չէր) աշխատում: Պատրանքներից ու արկածախնդիր հայտարարություններից ներկա իրողությունների դաշտ պետք է տեղափոխվենք՝ շրջափակման մեջ գտնվող Արցախի ժողովրդին սովի ճիրաններից փրկելու և անվտանգությունն ապահովելու համար: Հաշվի առնելով, որ միջազգային բոլոր փաստաթղթերում «Լեռնային Ղարաբաղ» և նրա «տարածք» եզրույթների տակ հիմնականում նկատի են առնվում 1923 թվականին ստեղծված

¹⁶ *St' u Zayavlenie prezidenta Azerbaydzhanskoy respubliki, prem'yer-ministra Respubliki Armeniya i prezidenta Rossiyskoy Federatsii ot 9 noyabrya 2020 goda "O polnom prekrashchenii ognya i vseh voennykh deystviy v zone Nagorno-Karabakhskogo konflikta"*:

Լեռնային Ղարաբաղի Բնքնավար Մարզը և նրա սահմանները, և որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվել է հենց այդ սահմաններում, իսկ Ադրբեջանը Թուրքիայի օգնությամբ կոպտորեն խախտել է կրակը դադարեցնելու պահպանման մասին 1994 թվականի մայիսի 11-ի Բիշքեքյան համաձայնության պահանջները և ներխուժել դե ֆակտո գոյություն ունեցող ԼՂՀ տարածքն ու վերահսկողության տակ վերցրել նրա մի մեծ մասը, ուստի, մեր կարծիքով, առաջնահերթ ռազմավարական խնդիրը Արցախի և Ադրբեջանի իշխանությունների երկխոսության միջոցով կյանքի ճանապարհը բացելուն ուղղված քայլերի կատարումն է, որից հետո հանրապետության կարգավիճակի ամրագրումը՝ նախկին ԼՂԻՄ-ի սահմանների վերականգնման տեսլականում, ինչը հնարավորություն կտա ներքին տեղահանվածներին անխափան վերադառնալու իրենց բնակավայրերը:

Ներկա պայմաններում երազխաբություն կլինի մտածել, որ «միջազգային կառույցները», «առաջադեմ մարդկությունը», «միջազգային հանրությունը», «քաղաքակիրթ աշխարհը» կամ աղոթքներն ի գործ են արցախահայության հարցն այս կամ այն ձևով լուծելու: Անգույժ այս աշխարհում միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները և նորմերը կաթվածահար վիճակում են կամ էլ գոռբաների համար են գործում, լալահառաչ թույլերի համար՝ հազար անգամ ոչ: Մենք բարեկամ, ընկեր չունենք այս անարդար աշխարհում: Ո՞ր են մեր բարեկամները, երբ ցեղասպանության յաթաղանը վերստին կախված է հայ ժողովրդի գլխին: Ե՞րբ պետք է հասկանանք, որ աշխարհի ուժեղները զգվանքով են նայում մեր լաց ու կոծին և ճառ ասողներին՝ գերադասելով զինավառ և գործի մարդկանց: Վստահություն տածենք ոչ թե հյուսիսի կամ արևմուտքի, այլ սեփական ուժերի վրա: Մեր միակ ընկերը մեր միասնությունը, համախմբվածությունը և մեր բազուկն է: Կան նպատակներ, որոնց համար մի քանի սերունդներ են պայքարում: Այդպիսին է հենց արցախյան հիմնախնդիրը: Որքան էլ մեզ համար ցավալի լինի արցախյան հարցի արյունածոր վիճակը, չպետք է մոռանալ Տրդատ Մեծի պատգամը սերունդներին՝ մարդկային գոյության բարձրունքներում ուժեղն է արդարը:

Առայսօր Բերձորի միջանցքը շարունակվում է մնալ փակ և, ըստ Ադրբեջանի ղեկավարի հայտարարության եթե որոշ հայեր չեն ցանկանում ապրել որպես Ադրբեջանի քաղաքացիներ, նրանց համար ճանապարհը բաց է, և հանգիստ կարող են հեռանալ... Դա ոչ այլ ինչ է, քան պետական մակարդակով արտագաղթի, գտման կամ տեղահանման քաղաքականության նախաձեռնում, որը մշակութային, լեզվական և կրոնական տարբերությունների հողի վրա ուղղված է Արցախի հայերին վտարելու իր պատմական հայրենիքից: Հասնելով Արցախի հողի մի մասի նկատմամբ իրենց նպատակին, որը ներկայումս ամայի է, այժմ Բաքուն խնդիր է դրել հայ ժողովրդի արցախյան մյուս հատվածին իր պատմական բնօրանից լրիվ արմատախիլ անել:

Խոսքը գործ դարձնելու համար ադրբեջանական դիրքերից չեն դադարում պարբերաբար կրակոցները հայկական դիրքերի և գյուղերի ուղղությամբ ու հնչող սպառնալիքները, որ հայերը հեռանան իրենց բնակավայրերից: Իսկ նոր տարում՝ նոր սպառնալիք հնչեց. հունվարի 9-ից ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող

տարածքից անջատվել են Հայաստանից դեպի Արցախ եներգասնուցումը: Արցախը ստիպված անցել է եներգախնայողության առավելագույն ռեժիմի՝ հանրապետությունում իրականացնելով հովհարային անջատումներ: Բայց որքան էլ ուսույժ դաժան ու անմարդկային լինի, հնարավոր չէ գլխատել հայ ժողովրդին: Ամեն դեպքում, օրակարգում հայ ժողովրդի առաջնահերթ ռազմավարական խնդիրը սեփական հողում արցախահայության կյանքի անվտանգության ապահովումն է: Այս պահին որևէ այլ հարց չի կարող կարևոր լինել: Դրված է պետականության գոյության հարցը: Նահանջի մասին խոսք լինել չի կարող:

Ծագած հանգամանքներից ելնելով Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում ընդդեմ Ադրբեջանի իրավական գործընթացներ ձեռնարկեց՝ պահանջելով հրատապ միջոց կիրառել և պարտավորեցնել Ադրբեջանին՝ բացել փակված Լաչինի միջանցքը, ապահովել մարդկանց, տրանսպորտի ազատ, երկկողմ տեղաշարժեր, ինչպես նաև վերականգնել եներգիայի մատակարարումը:

Արդարադատության միջազգային դատարանը 2023 թ. փետրվարի 21-ին հրապարակեց Լաչինի միջանցքով ապաշրջափակման վերաբերյալ ժամանակավոր միջոց կիրառելու պահանջի մասին որոշումը՝ կիրառելով հետևյալ ժամանակավոր միջոցը. Ադրբեջանը պետք է իր՝ կոնվենցիայով իր ստանձնած պարտավորությունների համաձայն՝ ապահովել տրանսպորտի և մարդկանց անխափան տեղաշարժը Լաչինի միջանցքով՝ երկու ուղղությամբ: Ճիշտ է՝ Հաագայում տեղակայված Արդարադատության միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտերի կատարման գործընթացում անմիջական գործիքակազմեր չկան, սակայն Լաչինի միջանցքի վերաբերյալ կայացված իրավական ակտի գոյությունը երկու հայկական հանրապետություններին թույլ կտա ավելի արդյունավետ դիվանագիտություն իրականացնել՝ որոշման պահանջները կատարելու առումով:

Հայ ժողովուրդը նման է վառվող պատրույգի: Ավարառու ցեղերը որքան ցանկացել են հանգցնել այն, մոմն ավելի պայծառ է վառվել և հանգցնողների մորուքը վառել: Ակնթարթի պես կանցնեն այս ծանր օրերը, կբացվի կյանքի ճանապարհը, և հայ ժողովուրդը իր աննկուն կամքի ու աշխատասիրության շնորհիվ վերելք կապրի, իսկ Արցախն իր հպարտ տեսքով նորից վեր կհանի՝ ի հեճուկս չարակամների:

ВЛАДИМИР ОВСЕПЯН

ПРИВИДЕНИЕ ГЕНОЦИДА В ЛАЧИНСКОМ (БЕРДЗОРСКОМ) КОРИДОРЕ

РЕЗЮМЕ

В статье показано, что по ложной “экологической” причине с 12 декабря 2022 года по сегодняшний день закрытие участка Шуши-Карин так автодороги Степанакерт-Горис и срыв передвижения энергоносителей, идущих из Армении в Арцах имеет цель подвергнуть население Арцаха к этническим чисткам и лишения родины, как и оккупация новых территорий Армении.

В статье утверждается, что Республика Арцах фактически (де-факто) провозгласила свою независимость в соответствии с общепринятыми принципами и нормами международного права, но юридически (де-юре) ее независимость не была признана никем, даже Республикой Армения. Как суверенное государство Арцах имеет все действительные условия государственности с вытекающими отсюда последствиями. Поэтому, согласно законодательству Арцаха, недра являются исключительной собственностью государства, к которому Азербайджан не имеет никакого отношения.

В конце автор статьи делает вывод, что, как бы ни был жесток и бесчеловечен враг, обезглавить армянский народ невозможно. В любом случае приоритетной стратегической проблемой армянского народа, стоящей на повестке дня, является обеспечение безопасности жизни карабахцев на своей земле. В данный момент никакие другие вопросы не могут быть важными. Нам некуда отступать.

Ключевые слова: *трасса Степанакерт-Горис, Бердзорский коридор, трехсторонняя декларация, административно-территориальная единица “Нагорный Карабах”, шахта, туранский проект, кемальская Турция, большевистская Россия, референдум о независимости.*

VIADIMIR HOVSEPYAN

THE GOST OF THE GENOCIDE IN THE BERDZOR` S (LACHIN) CORRIDOR

SUMMARY

The article shows that since December 12, 2022 until today, under the false “environmental” pretenses the closure of the section Shushi-Karin Tak of the Stepanakert-Goris highway and the disruption of energy carriers going from Armenia to Artsakh aims to subject the population of Artsakh to ethnic cleansing and depatriation, and to the seizure of new territories from Armenia. The article substantiates that the Republic of Artsakh actually (de facto) declared its independence in accordance with the accepted principles and norms of international law, but legally (de jure) its independence was not recognized by anyone, not even by the Republic of Armenia. As a sovereign state, Artsakh has all the valid conditions of statehood with the resulting consequences. Therefore, according to Artsakh legislation, the subsoil is the exclusive property of the state, with which Azerbaijan has nothing to do.

At the end, the auther of the article concludes that, no matter how cruel and inhuman the enemy is, it is not possible to decapitate the Armenian people. In any case, the priority strategic problem of the Armenian people on the agenda is to ensure the safety of life of Artsakh Armenians in their own land. At this moment, no other issue can be important. We have nowhere to retreat.

Key words: *Stepanakert-Goris highway, Berdzor Corridor, tripartite declaration, "Nagorno Karabakh" administrative territorial unit, mine, Turanian project, Kemal Turkey, Bolshevik Russia, independence referendum.*

**ԱՐՄԵՆՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ԽՐԲԵՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԱՍՏԱԿԸ***

(ուսումնասիրությունը կատարուած է Գալուստ Գիւլպէնկեան
հիմնարկութեան դրամաշնորհով)

Հոդուածը ներկայացնում ու վերլուծում է հայ մանկապատանեկան խմբերգային երաժշտության մէջ երաժշտահան Արմենուհի Կարապետեանի ստեղծագործական վաստակը:

Արմենուհի Կարապետեան անցնող երեսուն տարիների ընթացքին ստեղծագործել է աւելի քան քառասուն մանկապատանեկան խմբերգեր, որոնց մեծամասնությունը, նվիրված լինելով Շուշիի «Վարանդա» երգչախմբին, կատարվել է Արցախում:

Հոդվածագիրը խմբերգերը բաժանել է հինգ տեսակների: 1. կատակային աշխույժ խմբերգեր, 2. հանդարտ ու քնարաշունչ խմբերգեր, 3. հայրենասիրական խմբերգեր, 4. Խմբերգաշարեր, 5. հոգեւոր խմբերգեր:

Յուրաքանչյուր տեսակից մի քանի առավել կարեւոր խմբերգերի վերլուծումով հոդվածագիր հեղինակը ընդգծել է բոլոր այն նորարարությունները, որ Արմենուհի Կարապետեան բերել է մանկապատանեկան խմբերգային երաժշտութեան բնագավառի մէջ:

Արմենուհի Կարապետեան ժամանակակից հայ երաժշտահան է, որ ապրում է Երեւանում:

Բանալի բառեր՝ Մանկապատանեկան խմբերգային, կատակային խմբերգեր, հոգեւոր խմբերգեր, հայրենասիրական խմբերգեր, քնարաշունչ խմբերգեր, խմբերգային շարեր, Շուշի, Վարանդա:

Իր մանկապատանեկան երգչախմբային ստեղծագործություններուն մէջ, նաեւ որպէս նորարար շունչի տէր երաժշտահանի, ամենէն ցայտուն ներկայացուցիչներէն մէկն է Արմենուհի Կարապետեան, որ իր ստեղծած որակական յատկանիշներուն զուգահեռ, նաեւ քանակական առումով ամենէն բեղմնաւորը կարելի է համարել:

Մանկապատանեկան խմբերգային 42 ստեղծագործութիւններ եւ բազմալեզու (արաբերէն, ֆրանսերէն) չորս շարային երկարաշունչ ու ինքնատիպ մշակումներ, իր շնորհիւ հայ երաժշտարուեստի կեանք մտած են՝ ձեռք բերելով տարածուն ներկայութիւն: Ի շարս իր բազմաձիւր ու այլաբնոյթ յօրինումներուն, ցարդ կատարած իր ներդրմին շնորհիւ, իր անուան շուրջ անոնք հիւսած են արդար հոչակ մը:

* Ուսումնասիրությունը կատարուած է Գալուստ Գիւլպէնկեան հիմնադրամի հովանավորութեամբ:

11 տարեկանին ստեղծագործելով «Ոսկեմագիկ» մանկական օփերան, իսկ 12 տարեկանին՝ «Հինգ երգ Կոմիտասի խօսքերով»-ը, շատ կանուխ հասակին կարողացած է մտնել մանկապատանեկան ներաշխարհին ներս, յատուկ նուիրում ու շնորհ ցուցաբերելով երաժշտական այդ սեռին նկատմամբ: Այս յատկութեան կը նպաստէ իր ուսուցչին՝ Ղազարոս Սարեանի անուան երաժշտական դպրոցին մէջ իր ուսումնառութիւնը (այժմ ան մաս կը կազմէ նոյն դպրոցի ուսուցչական կազմին): Մեզի տուած իր հարցազրոյցին մէջ Արմենուհի Կարապետեան կը յիշէ, որ իր առաջին մանկապատանեկան խմբերգը եղած է Լիբանանի Այնճար հայաւանի Համագգայինի «Կաքաւիկ» մանկապատանեկան երգչախումբին համար ստեղծագործած «Կաքաւիկ-ներու երգը»-ը, որ իր բնոյթով, հայրենակարօտ մանուկ հոգիներու աղերս է՝ հեռաւոր ավերէ առ հայրենիք եւ առ հայրենի երգ ու բան: Նոյն հարցազրոյցին մէջ կը նշէ. «Իմ մանկութեան լսած մանկապատանեկան խմբերգերը եղել են Շահինսկու խմբերգերն ու մի քանի մուլտերու երգերը, որովհետեւ այն ժամանակ մեծ տարածում ու տարողութիւն չունէին հայկական մանկապատանեկան խմբերգերը, թէւ Հայաստանում գործում էին բազմաթիւ մանկապատանեկան երգչախմբեր: Նոր սերունդը նոր խմբերերով օժտելու հրամայականը գլխաւոր խթան են եղել ինձ համար՝ յատկապէս ստեղծագործելու այդ ժանրում: Զուգահեռաբար Շուշիի «Վարանդա» եւ Լիբանանի «Կարկաչ» երգչախմբերի տարեկան համերգների համար ստեղծագործուած խմբերգերը կազմում են գերակշիռ մաս: Շատ կարելոր է, որ նմակդ հասցէատէր ունենայ: Այս իմաստով զոյգ երգչախմբերի տարեկան համերգները կարելոր խթան հանդիսացան իմ խմբերգերի ծննդեան: Ինձ համար անկիւնադարձային էր բանաստեղծ, մանկագիր Յուրի Սահակեանի հետ իմ համագործակցութիւնը: Իմ խմբերգերի գերակշիռ մասը նրա խօսքերով են գրուել»:

Արմենուհի Կարապետեանի կատարած նորարարութիւններէն մէկն է կոտրել ցարդ ամրացած ու կաղապարուած՝ քառեակ - կրկներգ, այլապէս դասական կարծրատիպը եւ ստեղծագործաբար համոզիչ փոփոխութիւններ կատարել բանաստեղծական խօսքին մէջ: Բնականաբար, իբրեւ երաժշտահանի, իրեն համար առաջնահերթութիւնը երաժշտութիւնն է եւ ոչ թէ անպայմանօրէն խմբերգին բառային կառոյցը: Ան խմբերգի բառին, ոգիին ու նշանակութեան կառչած կը մնայ եւ ոչ թէ անոր կառոյցին: Այլ խօսքով, բանաստեղծութեան իմաստին հետամուտ, ան կ'ընթանայ նոր արտայայտչականութիւններ որոնելու ու գտնելու ճանապարհով: Իր քնարաշունչ ու հայեցի մեղեդիներով թաթաւուն մանկապատանեկան խմբերգերուն կողքին, քիչ չեն թիւր անոնց, որոնց մեղեդիները կրնան հեշտօրէն չլիշուիլ ունկնդիրին կողմէն, սակայն կատարողին թէ ունկնդրին մէջ անպայման կը դրոշմեն կենսաշող ապրում մը, որ իր մէջ կը պարունակէ մանուկին թէ պատանիին ինքնատիպութեան բացայայտման միտող քրքիջ մը, չարաճճիութիւն մը, հետաքրքրական վիճակ ստեղծող լարուածութիւն մը: Իր խմբերգերէն շատեր, ըլլան անոնք հիմնուած չափածոյ թէ արձակունակ բանաստեղծութեան վրայ, իրենց մէջ կը կրեն ենթաթէքստ մը եւ կը ձգտին անոր լիակատար բացայայտման, միաժամանակ կրելով ազգային պատկանելիութեան կնիքը: «Շատ զգոյշ եմ մանուկների համար գրելուց եւ ազատ՝ մեծահասակների պարագային: Թէեւ իմ գրածից իջնում եմ երեխայական տարիքին աւելի մօտ լինելու համար մանկական աշխարհին, սակայն իմ խմբերգերում աշխատում եմ

ազատուել մանկունակության ախտից: Պարզ, հասարակ ու հեշտօրեն մատչելի լինելուն դեմ եմ, որ հնարաւոր լինի պահել-պահպանել որակական յատկանիշներն ու չափանիշները նաեւ մանկապատանեկան խմբերգերում», կ'եզրակացնէ ան՝ մեզի տուած իր հարցազրոյցին մէջ:

Հայաստանի ձայնասփիւռի եւ հեռատեսիլի «Արեւիկ» համոյթին նուիրուած «Արեւ քեռին» երգը առաջին կատարուած ստեղծագործութիւնն ըլլալով, հետագային ունեցած է իր խմբերգային տարբերակը: Այնուհետեւ երեք տասնամեակի վրայ երկարող իր վաստակը կարելի է դասաւորել հետեւեալ հինգ խմբաւորումներուն: Իւրաքանչիւր խմբաւորումէն ընտրովի կ'անդրանդառնանք առաւել նորարար ու ցայտուն խմբերգերու, ընդգծելու համար յեղինակին մանկապատանեկան ներաշխարհին մերձենալու, զայն խմբերգային արուեստի միջոցով ազնուացնելու ու անոր գեղարուեստական ճաշակը յղկելու՝ իր ոճին, ճիգին, մօտեցումին ու նորարարութեան: ա.- Կատակային ու աշխոյժ խմբերգեր

(«Տերեն ասաց տերեւին», «Պուտ-պուտիկ», «Կարկաչ», «Հաֆ թէ հաւ», «Կեցցէ՛ք յանգ ու կառապան», «Մեր խեղճ իշուկը», «Քիթունիկ», «Արեւ-արեւ. արեւիկ» «Գետը անգէտ թէ լիներ», «Անվերջանալի երգ», «Ծիտն ու զատիկը», «Դան-դան», «Ածան հալիկ», «Փոր ու գլուխ», «Փոքրիկ թզուկն ու իր թզուկ շունը», «Բմ կատուն», «Արտուտիկ», «Դեհ, պտեր», «Դան-դան», «Նապաստակի երազը»)

Այս խմբերգերը առիծի բաժինը կը կազմեն զուարթ ու կենսախիղ, բեմադրական հնարանքներու առիթ տուող՝ հայ մանկապատանեկան խմբերգային երգացանկերուն մէջ: Անոնք, Ստեփան Բաբայորոսեանի, Ռոպերթ Պետրոսեանի եւ Ստեփան Շաքարեանի խմբերգերուն հետ, կուզան նոր շրջանի մը սկիզբը ազդարարել:

«Տերեն ասաց տերեւին» խմբերգը ինքն իր մէջ բազմամաս ստեղծագործութիւն է, ուր տարբեր մեղեդային շերտեր իրարու կը յաջորդեն, կը «Հալածեն» ու երբեմն ալ կը խաչաձեւեն: Հիմնական նիւթը Յուրի Սահակեանի համանուն բանաստեղծութիւնն է թէւ, որ միտք բանի կը հաղորդէ խմբերգին, սակայն, մեծ վարպետութեամբ ընտրուած ու օգտագործուած զուգակցուող ժողովրդային խօսք-մօթիւնները համապատասխան կոլորիտային մթնոլորտով կը համեմեն խմբերգը:

Երգչախումբի առաջին մուտքը արձագանգի տպաւորութիւն կ'ըստեղծէ, որուն ազուցուած երկրորդ թեմային յաւելումը արդէն աքուստիկ տպաւորութիւն կ'առաջացնէ: Յետոյ նոյն մեղեդին նուագակցութիւն կը դառնայ: Արդէն ոճական առանձնայատկութիւն դարձած հնարքով իրար կը խառնուին երկու գլխաւոր թեմաներ («Հոպել» եւ «Արեւի շողն դիպել է»): Մենակատարի մեղեդին նոյն գլխաւոր թեման է, այս անգամ քառաշար մը (*կվարտա*) վերել բարձրացուած: Կատակային այն տպաւորութիւնը կը ստեղծուի, որ կարծես երգչախումբէն մէկը տոնայնութենէն դուրս եկած է ու մեծ ոգեւորութեամբ ինքնամոռաց կ'երգէ ու յանկարծ անդրադառնալով իր «Մխալին»՝ կը սրբագրէ: Ընթացքին ասերգային (Recitative) բաժիններ սահանքներով (clisando) լարուած հետաքրքրութիւն կը ստեղծեն: Այս բոլորը տրամադրութիւն ու մթնոլորտ կը ստեղծեն բուն թեմային հասնելու համար: Իրարմէ անչատ, բայց իրարու հետ ամբողջութիւն կազմով, մանր մօթիւններուն վրայ կը կառուցուի ամբողջ ստեղծագործութիւնը, ուր յեղինակին ստեղծագործական ոճին համահունչ, կը կիրառուի ամբողջական կամմա (Scale: mi, fa#, Sol#, la #) ինչպէս նաեւ թարմացնող

տոնայնական փոփոխություն: Աւարտին զուարթ «խառնաշփոթ» կը տիրէ, երբ խմբերգի բոլոր տարրերը՝ ասերգը, սահերգը, կարճ մեղեդիները, ժողովրդական բառ-բացականչությունները եւ այլն, կը միանան իրար: Ցանկութեան պարագային հնարաւորություն կ'ընձեռնուի բեմադրական հպումներու՝ առաւել ցայտուն ու հետաքրքրական դարձնելու խմբերգին մէջ առկայ երկիմաստությունը: Աւարտին, բառերուն համահունչ, կրկին կը հանդիպինք տոնայնական դէպի վերեւ թռիչքի, համապատասխան քայլերգայնությունն յուշող ու թելադրող հիւսուածքին հետ: Խմբերգը յաղթանակած տերեւներու «քայլերք»-ով կ'աւարտի: Բառերու մէջ թագնուած զուարթախոհությունն ու այլաբանությունը պարզորոշ է այս խմբերգին մէջ, սակայն շեշտադրումը կատակային իմաստէն աւելի երաժշտական յարթակին վրայ կը դրուի:

«Պուտ-պուտիկ». Յեղինակին առաջին մանկապատանեկան խմբերգերէն է այս մէկը՝ Աթաբէկ Խնկոեանի երկարաշունչ բանաստեղծութենէ մը հատուածաբար առնուած խօսքերով: Հոս եւս Արմենուհի Կարապետեան ազատօրէն վերաբերած է խմբերգի բառային կառոյցին, անդրադառնալով անոր շուտասելուկային բնոյթին՝ առաւել ցայտուն դարձնելով զայն:

Այս խմբերգն ալ դուրս կ'ուզայ կրկներգ- քառեակ կաղապարէն եւ ունի խաղերգային բնոյթ, այնքան բնորոշ հայ ժողովրդական երաժշտութեան, ուր մեծալար-փոքրալար (Major-minor) համադրումը եւս առկայ է:

Նախանուագը, որ հետագային պիտի դառնայ գլխաւոր թեմաներէն մէկը, կ'ազդարարէ երկու այլ թեմաներու մուտքը, որոնք շուտով պիտի միասին երգուին ստեղծելով հետաքրքրական միասնություն մը, որ իր սրընթաց հեւքին մէջ պիտի վերածուի հետզհետէ աստիճանաբար զարգացող արտասանութեան: Ահա այստեղ է, որ նախանուագը բառեր կը զգենու եւ կ'երգուի իբրեւ առանձին թեմա, այս անգամ ազդարարելով չորրորդ թեմայի մուտքը: Վերստին կը յայտնուին առաջին ու երկրորդ թեմաները, որոնք կը պատրաստեն այս անգամ հինգերորդ թեմայի մուտքը: Յաջորդող վեցերորդ թեման երգին գլխաւոր շուտասելուկն է, որ հետզհետէ վերածուելով նախորդող թեմաներուն կը հասնի իր մեկնակէտին՝ «Ո՛վ գիտի»:

Միջին կապող հատուածը, անընդհատ արդէն առանձին լսուած թեմաներուն խառնիխուռն կերպով կրկին յայտնուիլը, արտասանութեան բնութագրական ներմուծումը եւ թարմացնող տոնայնական փոփոխությունը խմբերգի կառուցման հիմքը կը կազմեն:

«Քիթունիկ». Դարձեալ Յուրի Սահակեանի մանկական բառախաղային բանաստեղծութեան վրայ հիմնուած այս խմբերգը ըստ էութեան զաւեշտային է, ուր կատակը հիմնուած ու համեմուած է «Գիտունիկ» եւ «Քիթունիկ» բառերուն վրայ: Դաշնամուրային փոքրիկ եւ տրամադրող նախերգանքէն ետք մուտք կը գործէ հիմնական աշխոյժ թեման, որու պատմողական միաձայն բնոյթը յանկարծ կը բազմաձայնուի, ստեղծելով լարուած ու անակնկալ մը նախապատրաստող վիճակի: Շուտասելուկը առկայ է նաեւ այս երգին մէջ: «Գիտունիկ» ու «Քիթունիկ» բառերն են հիմքը կատակին, որ զիրար հրմշտկելով՝ հոս եւս տեղի կուտան շուտասելուկ-ասերգին, որու աւարտին, կրկին երգուելով եւ դաշնամուրային դէպի երկրորդ քառեակ առաջնորդող տոնայնական փոփոխութեամբ (modulation) կը շարունակուի, այս անգամ մէկ հատած (bar) ուշացումով նոյն մեղեդիին՝ զիրար հալածելու

արձագանգային ազդեցությամբ, զուարթ աւարտի կը հասցուի խմբերգը, բառախաղային մասերուն մէջ բեմադրական հնարքներու օգտագործմամբ խաղերգային կատարումի հնարաւորութիւն ընձեռելով մանուկ ու պատանի երգողներուն:

բ.- Հանդարտ ու քնարաշունչ խմբերգեր

(«Ծաղիկների ծնունդը», «Օրորոցային», «Ամպիկ», «Իմ երգը», «Բարի օր», «Կարապը», «Լոռիկ»)

Այս խմբերգները բնոյթով քնարաշունչ ու գեղակերտ մեղեդիներու շտեմարանն են կը բղխին: Անոնց մեղեդայնութիւնը ինքնատիպ է ու երբեւէ չի յիշեցներ այլ աղբիւրներէ յորդող նոյնանման մեղեդիներ: Այս մարզին մէջ ահաւասիկ հոս է, որ կ'ընդգծուի անոնց վաւերական ու ինքնատիպ արժէքը:

«Բարի օր». Պարզ ու խորունկ, յիշուող ու երգեցիկ մեղեդիով այս խմբերգը կառուցուած է Յուրի Սահակեանի համանուն բանաստեղծութեան վրայ: «Ամէն օր՝ բարի օր». այս կարծէք մեծանուն բանաստեղծին ու մանկագիրին ստորագրութիւնն ու այցեքարտն ըլլար: Խմբերգը ունի երկձայն ու եռաձայնէն քառաձայնի հասնող երկու տարբերակներ, որոնք տարբեր արհեստավարժ մակարդակներու վրայ գտնուող երգչախումբերու կատարման հնարաւորութիւն կուտան:

Թափանցիկ ու պարզ նուագակցութեան մը հետ կը հոսի առաջին քառեակին մեղեդին, որու աւարտին անմիջապէս կը միանայ երկրորդ քառեակը, ուր ուշագրաւ փոփոխութեան կ'ենթարկուի նախ՝ նուագակցութիւնը, ուր 16-ական ձայնանիշերը տիրապետող կը դառնան եւ երբ բանաստեղծական թեքստը «Բարի օր» կը մաղթէ հանդերին ու դաշտերուն, գեփիւտի քնքշութեան վիճակի մը արտայայտիչը կ'ըլլայ տուեալ բառերուն եւ մեղեդիին արձագանքային կրկնութիւնը: Աւելի ուշ, տոնայնական փոփոխութեամբ, յաջորդուող երրորդ քառեակը կը պարզէ առանձինն հետաքրքրութիւն առթող եւ հմտօրէն կիրառուած պատկեր, երբ խմբերգի մեղեդին վրայ կ'երգուի կրկներգը եւ իրար մէջ մտած երկու մեղեդիները հարց ու պատասխանի այլ գեղեցկութիւն մը կը պարզեն: Երկու մեղեդային գծերը, պոլիֆոնիկ տարրերով կը միանան իրար: Խմբերգը կ'աւարտի վերնագրի առաջին բառը՝ «Ամէն»ը անջատաբար օգտագործելով, քառաձայն, աղօթքի աւարտի նման, որպէս օրհնանք:

գ.- Հայրենասիրական ու արցախեան շարժման նուիրուած խմբերգեր

(«Արցախ», «Վերածնունդ իմ Շուշի», «Արի արանց երկիր», «Հայկի ժառանգը», «Հայ հոգին», «Անմահների կանչը»)

Այս խմբերգերը իրենց մեկնակէտն ունին արցախեան համաժողովրդային շարժումը եւ ծնունդ առած են Շուշիի «Վարանդա» երգչախումբի տարեկան համերգներուն առիթով: Յատկանշական է, որ անոնք, խմբերգերուն բանաստեղծութիւններուն իսկ թելադրանքով, գերծ են աժան ամբոխավարութեան ախտէն ու գեղարուեստական բիրեղութեամբ կ'արտացոլան: «Արի արանց երկիր»ն ու «Հայկի ժառանգը»ն ունին երգող թէ ունկնդրող պատանիներուն մէջ ազգային ինքնաճանաչողութիւնն ամրացնող խօսք ու մեղեդի: «Հայ հոգին» (խօսք՝ Մուշեղ Իշխան), ստեղծուած Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան պատուէրով, պսակաւոր ժառանգի համավարակի պատճառով համաշխարհային տնային մեկուսացման պայմաններուն մէջ ձայնագրուելու եւ առցանց տարածուելու նպատակով: 17 երկիրներէ 26 հանրահայտ հայ երաժիշտներու կողմէ կատարուած ու տարածուած այս երգը ունի նաեւ մանկա-

պատանեկան թե՛ խառն կազմերու համար պատրաստուած երգչախմբային տարբերակներ: «Վերածնունդ իմ Շուշի»-ի տրոսմաթախիծ մեղեդին (խօսք Մանուէլ Զավախք) մէկ կողմէ նոր ազատագրուած քաղաքի առաջին տարիներու աւերակ ու կենցաղային առումով դժնդակ պայմաններու ականատեսի զգացողութիւն է, միւս կողմէ ալ սակայն, մշակութային հինաւուրց մայրաքաղաքի նկատմամբ անպարագիծ սիրոյ, նուիրումի եւ հաւատարմութեան խօստում է: Իսկ «Անմահների կանչը»-ը (խօսք՝ Աշոտ Հունանեան) յիշատակի, երախտիքի ու յանուն արդարութեան ու հայրենի եզերքի պաշտպանութեան պայքարը շարունակելու խօստման երգ է:

դ.- Խմբերգաշարեր եւ շարային կառոյցով բազմալեզու մշակումներ
(*Ռուբէն Հախումերտեանի երգերով «Պիտի երգեմ քանի դեռ կամ» շարի մշակում, Շառլ Ազնաւուրի երգերու մշակումով «Fantasie sur Aznavour», «Սուրբ Ծննդեան խորհուրդը» մանկապատանեկան օրաթորիա, Ռահպանի եղբայրներու երգերու մշակումով «Արաբական երգաշար», ռազմահայրենասիրական երգերու մշակումով «Հայկական հայրենասիրական երգաշար», «Հինգ երգ Գոմիտասի խօսքերով», «Հիշում ենք և պահանջում» եռամսս խմբերգ)*

Արմենուհի Կարապետեանի մանկապատանեկան խմբերգագրութեան մէջ յատուկ տեղ կը գրաւեն այս երգաշարերը, որոնցմէ Ռուբէն Հախումերտեանի եւ Շառլ Ազնաւուրի երգաշարերուն մշակումները միաժամանակ ունին մանկապատանեկան եւ երիտասարդական խառն երգչախումբերու համար պատրաստուած տարբերակներ:

Այս եօթ շարերը դուրս կու գան առանձինն երգերու խմբերգագրումի ու պարագայաբար ու պատահականօրէն կողք կողքի շարելու պարզունակութենէն, այլեւ, անոնցմէ իւրաքանչիւրին երգերը ստեղծագործական տարբեր մօտեցումներով ագուցուած են իրարու: Շատ յաճախ երգաշարին մաս չկազմող նոյն յեղինակներու այլ երգեր, իբրեւ դաշնամուրային նուագակցութիւն, կուգան կապող օղակ հանդիսանալու երգերուն միջեւ: Երբեմն զոյգ սրինգներու հարումային նուագարաններ յաւելեալ երանգով կ'օժտեն շարերը: Երբեմն ալ ռնգային թե՛ բացականչական բաժիններ, ըստ նպատակայարմարութեան, կու գան փոխարինելու երգին բառերը, ուշագրաւ ու յաճելի դարձնելով այդ կապող օղակները եւ կամ ալ, դաշնամուրին հետ դառնալու ձայնային նուագակցութիւն՝ գլխաւոր թեմայի մը համար: Այս շարերը, իբրեւ խմբերգային ուրոյն գիծ ու նշանակութիւն, առանձինն էջ կը բանան եւ, Ռուպերթ Պետրոսեանի Սայաթ-Նովայի երգաշարով մշակուած խմբերգաշարին հետ, ցարդ կը մնան առաձինն ու անկրկնելի:

«Յիշում եմ ու պահանջում»

Հայկական ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, միաժամանակ հրեական *հոլոքոսթ*ին ալ նուիրուած այս երեք խմբերգները ունին ներքին միասնութիւն, սակայն անոնցմէ իւրաքանչիւրը առանձնաբար ալ կատարուելու յարմարութիւն ունի ինքնին:

Առաջին խմբերգը, «Տխուր հեքիաթ»-ը ունի տխուր, ողբերգական, բայց ոչ մեղամաղձոտ, այլ՝ լուսաւոր մեղեդի: *Աքապելա* է եւ հատուածական զանգերու ներմուծումը իւրայատուկ թարմութիւն կը ներմուծէ կատարման: «Ուզում եմ սրբել արցունքն իմ տատի»՝ լատտեսական կապող հատուածով մը, առաջին խմբերգը կը միանայ երկրորդին՝ «Անվերջ հարցեր»-ուն, որ քնքոյշ մեղեդի է, հայկական ժողովրդական երաժշտական ոճային երանգներով հարուստ: Իսկ երրորդ հատուածը՝

«Պատգամ»-ը ունի մարտական կոտ հնչողություն, որուն նոր թափ կը հաղորդէ ներմուծուող դաշնամուրի եւ փոքր թմբուկին նուագակցութիւնը: Բազմախառն կշռոյթով (7/8, 5/8, 8/8, 3/4), լաւատեսական, պայծառ, ամռակոտ ու յաղթութիւն աւետող այս խմբերգաշարը (խօսք՝ Կարօ Վարդանեան) «Երգող Հայաստան» հանրապետական մրցոյթին, իբրեւ յաղթող խմբերգ կատարուած է առաջին անգամ: Պաթոսով լի, յետ ցեղասպանութեան հոգեմտաւոր բարդոյթներն ու նուաստացումը փարատող, ազգային ու համամարդկային ինքնարժէքի գնահատման նպաստող, ոչ լացակումած այս խմբերգին Կատարողական բարդութիւններն յաղթահարելու համար, երաժշտահանը մտածուած կերպով հենակէտեր օգտագործած է խմբերգի՝ այլապէս բարդ թուացող հիւսուածքին մէջ, առաւել թիւով երգչախումբերու կողմէ կատարուելու հնարաւորութիւն ընձեռելով:

Ե.- Հոգեւոր խմբերգեր

Սուրբ Ծննդեան խորհուրդին առնչուած հոգեւոր բնոյթի արդի խմբերգեր հագուագիւտ են ո՛չ միայն հայ մանկապատանեկան, այլեւ խառն երգչախումբերու համար: Խորհրդային ժամանակաշրջանի հակակրօն գաղափառախօսութիւնը բնակահար երբեւէ չէ խրախուսած այս ոլորտին նուիրուած խմբերգեր: Այս իմաստով, նորարարական յաջող փորձեր են Արմենուհի Կարապետեանի, եւ իրմէ տասնեակ մը առաջ, Ստեփան Շաքարեանի հոգեւոր բնոյթի երգաշարերը:

«Խորհուրդ Սուրբ Ծննդեան» մանկապատանեկան օրաթորիա

Սուրբ Ծննդեան օրաթորիան ստեղծուած է Պէյրութի Համազգայինի «Կարկաչ» երգչախումբի պատուերով ու անոր առաջին կատարումը եղած է Լիբանանի մէջ, 2018-ին:

Օրաթորիայի ութ խմբերգերէն իւրաքանչիւրը ունի իր վերնագիրը եւ առանձին կատարման համար ալ հարմար է: Մեզի տուած իր հարցադրոյցին մէջ Արմենուհի Կարապետեան կը հաստատէ. «Մեր սերունդը մանկութիւնից հեռու է պահուել Սուրբ Ծննդեան թէ այլ հոգեւոր բնոյթի տօնական մթնոլորտից ու տօնական շեշտադրումը եղել է Ամանորի վրայ: Մանկութիւնից չենք լսել նման երգեր: Յետ խորհրդային տարիներին ծանօթացանք Christmas carols կոչուած երգերի եւ մղում եղաւ հայ իրականութեան մէջ էլ հայալեզու արդի խմբերգեր յօրինել»:

Օրաթորիայի բանաստեղծութիւնները առնուած են հայկական սուրբ ծննդեան ժողովրդային աւետիսներէ եւ աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հանրաժանօթ երգերու հայերէն թարգմանութիւններէ: Մեկնակէտ ունենալով սակայն հանրաժանօթ երգերուն նոր ու մանկապատանեկան ներաշխարհին համապատասխան *ինտոնացիաներ* ու մեղեդիներ շնորհել:

Առաջին խմբերգը հանրաժանօթ «Փոքրիկ քաղաք Բեթլեհեմի» աւետիսն է: Հանրաժանօթ ու համաշխարհային լայն տարածում ունեցող երգին բառերը, յար եւ նման քանի մը տարածուն այլ երգի բառերու, նոր մեղեդիով օժտուած են, որոնք չեն զիջիր իրենց բնագիր եղանակներուն: Գիշերային խորհրդաւոր մեղեդային մուտքը կը զարգանայ տօնայնական փոփոխութիւններով հարուստ հենքի մը վրայ (do maj.-mi Maj.-re min.- Do maj), որու նուագակցութիւնը, երկրորդ քառեակին հետ, հետզհետէ կուժեղանայ, կը ճոխանայ: Իսկ փոքր, միջին հատուածէ մը ետք՝ («Այնպէս լռիկ ու խաղաղիկ») փառաբանական աւարտով արդէն կը կրէ եռահնչիւնային կառուցուածք:

Երկրորդ խմբերգը՝ «Օրհնեալ է Աստուած»ը կառուցուած է առաքելական

շարականներու սկզբունքներու խելամիտ օգտագործումով, ուր քայլերը քառորդներով են՝ այնքան բնորոշ հնադարեան հայ հոգեւոր երաժշտութեան: Հիմնային բնոյթի այս խմբերգին մէջ երաժշտահանը օգտագործած է ուշագրաւ հնարք մը, երգչախումբը երկու մասի բաժնելու, աքուստիք առումով ալ աւելի արձագանքային, հնչել ու հետաքրքրական դարձնելու համար անոր կատարումը: Առկայ է առաջին եւ երկրորդ շերտեր, որով կատարողները կրնան նոյնիսկ կանգնելու տեղերը փոխելով համապատասխան շեշտադրում կատարել: Աւարտին՝ մենակատարի բաժնի «Սուրբ» բառի յաւելումով (Ֆա մեծալար՝ ո՛ւ կիսվարով) խմբերգը կը հասնի Մակար Եկմալեանական պատարագի աւարտական հատուածներու ոճի աւարտի:

Յաջորդ խմբերգը՝ «Փառք քեզ, օրհնեալ հայր»-ը փառաբանութիւն է, որ ունի յստակ կառուցուածք, որուն Ա եւ Բ մասերու զարգացումը նուագակցութեան շնորհիւ է, ուր չկան մօտիւլացիաներ: Նուագակցութիւնը իւրաքանչիւր քառեակին հետ կը փոխէ իր նկարագիրը, երբ ութերորդականները նախ կը դառնան 16-երորդական եւ ապա՝ 32-րդական եւ աւարտին՝ կրկին 8-րդականներով կը վերադառնայ իր սկզբնային վիճակին: Խմբերգի երկձայնութիւնը առաւելաբար կ'ապահովուի մեղեդիին հետ տեքստային եւ սեկստային զուգահեռ քայլով:

«Աւետիսներ» խմբերգին համար օգտագործուած են հայկական սուրբ ծննդեան աւետիսներ, որոշ մասին համար՝ նոյնիսկ մեղեդին: Ինքն իր մէջ թաւալուող ու կոմպոզիտորական արուեստի շնորհիւ զարգացող մշակումը կը սկսի երկձայն ու ապա՝ Երգի մեղեդին քվարտայով, կվինտայով եւ սեկստայով առաւել տարածուն կը դառնայ: Այս ընթացքին էապէս կը նպաստէ դաշնամուրային կշռութաւոր (Rhythmic) զարգացումը: Խմբերգին կորիզը հանրայայտ «Քեզ աւետիս, մեզ աւետիս»ն է, որուն ազդեցութեամբ սկիզբի («Թանկուր, թանկուր, մարադա») եւ աւարտի՝ զոյգ աւետիսներուն («Արդ ցնծացէ՛ք, ուրախացէ՛ք») երաժշտութիւնը յեղինակային է եւ շատ պատշաճ ու գերազանցօրէն ժողովրդային երաժշտութեան ոճի: Խմբերգը թէւ Խրթին բարբառային տեքստ ունի, սակայն պատանի կատարողներուն համար առիթ կ'ընծայէ մերձենալու հայոց լեզուի բարբառային առանձնայատկութիւններու, իբրեւ այդպիսին իսկ հետաքրքրութիւն յառաջացնելով անոնց մէջ:

«Այսօր տօն է սուրբ ծննդեան» խմբերգի բառերը ամբողջութեամբ առնուած են հայաստանեայց եկեղեցւոյ Սուրբ Ծննդեան շարականի բառերէն, որոնցմէ բխած, անմեղ ներաշխարհէ ելած նոր մեղեդին ամբողջութեամբ հայկական ինդոնացիոն հիմք ունի:

«Յայտնուեց Նա մեզ»-ը Սուրբ Ծննդեան գողտրիկ խմբերգ մըն է, որ կը հնչէ հոմօֆօն (homophone) սահանքով: Ընդհանրապէս երկձայն, տեղէ տեղ՝ եռաձայն: Դաշնամուրային ընկերակցութիւնը ունի մեղեդիին յատուկ նրբագեղութիւն:

«Ցնծայ՝ աշխարհը»-ը հանրայայտ «Ծափ գարկ աշխարհ, ցնծա՛ այսօր» արեւմտեան հանրայայտ ծննդեան աւետիսի նոր մեղեդիով հայացումն է, որ արագաթիչ սրնթաց իր հեւքին մէջ անընդմէջ չափի փոփոխութիւններ կրելով (6/8, 4/8, 3/8), ոգեւորիչ մթնոլորտ կը ստեղծէ: Ընթացքի անակնկալ յապաղումներն ու վերստին առաջացումը իր հերթին կենսական մթնոլորտ կը ստեղծէ: Լաւապէս մտածուած արտայայտութիւն է միջին դանդաղ մասի մեղեդիին համատեղ զուգակցումը կվարտա ինտերվալով, իսկ աւելի ուշ՝ երգի երկու տարբեր հատուածներու զուգահեռ

կատարումը: Զուարթ աւարտին նախօրդած «Քանզի ծնաւ Արքայն հօր» եռաձայն արագ կրկնութիւնները հանդիսաւոր մեծալարային աւարտի կը հասցնեն խմբերգը:

Օրաթորիան կ'աւարտի «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» խմբերգով, ուր, նախ վերստին կը յիշեցուի հիմնական թեմաներէն մէկը՝ «Օրհնեալ է Աստուած» (երկրորդ խմբերգը), կրկին երկու մասի բաժնուած երգչախմբային հնչողութեամբ, եւ ապա, վրայ կը հասնի «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» յաղթապանծ շարականի պոլիֆոնիկ հնարքներով շարադրանքը, որուն կուգայ աւելնալ դաշնամուրի զանգակի տպաւորութիւն գործող հիւստուածքն ու եկեղեցական տօնական զուարթ զանգեր՝ Campana (Լիբանանի «Կարկաչ» երգչախումբի կողմէ առաջին կատարման ընթացքին հնչեցին եկեղեցւոյ զանգերը, անակնկալ ու իրօրինակ ապրում ստեղծելով):

Գ.- Բազմաբնոյթ այլ խմբերգեր

(«Նոր <<Նոր տարի>>», «Կաքավիկների երգը», «Կոկիկ-մոկիկ», Նոր տարվայ եւս ուրիշ 2 երգեր, «Հիմն երաժշտական դպրոցին», «Զօն դպրոցին», «ՀԲԸՄ հիմնը», «Ամպի լացը»)

Տասնեակ մը հաշուող այս խմբերգերը, որոնք իրենց բնոյթով ու նիւթով չեն մտներ վերոյիշեալ խմբաւորումներուն մէջ, մաս կը կազմեն Արմենուիի Կարապետեանի բազմահարուստ մանկապատանեկան խմբերգային ստեղծագործութիւններուն:

ЗАКАР КЕШЕШЯН

АРМЕНИИ КАРАПЕТЯН- НОВАТОР В АРМЯНСКОЙ ДЕТСКО-ЮНОШЕСКОЙ ХОРОВОЙ МУЗЫКЕ

РЕЗЮМЕ

В статье автор представляет и анализирует творческий путь композитора Арменуи Карапетян в детско-юношеской хоровой музыке. В течение пройденных тридцати лет Арменуи Карапетян создала более, чем сорок детско-юношеских песен, большинство которых, будучи посвященными шушинскому хору "Варанда", исполнялись в Арцахе. Автор статьи хоровые песни разделил на пять разновидностей: 1. веселые, шуточные песни 2. медленные, лирические 3. патриотические 4. хоровые сюиты 5. духовные песни Анализом некоторых наиболее важных хоровых песен автор статьи подчеркнул все те новшества, которые она внесла в детско-юношескую хоровую музыкальную область. Арменуи Карапетян - современный армянский композитор, который живет в Ереване.

Ключевые слова: *детско-юношеская хоровая музыка, шуточные песни духовные песни, патриотические песни, лирические песни, хоровые сюиты, Шуши, Варанда.*

ZAKAR KESHISHIAN

**ARMENUHI KARAPETYAN, THE INNOVATOR IN ARMENIAN CHILDREN'S AND YOUTH
CHORAL MUSIC**

SUMMARY

The article presents and analyzes the creative contribution of composer Armenuhi Karapetyan in Armenian children's and youth choral music.

Over the past thirty years, Armenuhi Karapetia has created more than forty children's and youth songs for choir. Most of her songs are dedicated to the Varanda Choir of Shushi and were performed in Artsakh during the past 25 years. The author of the article divided choruses into five different types: humorous and vital songs, calm and lyrical songs, patriotic songs, spiritual songs and choral medleys.

By analyzing some of the most important choruses of each type, the author of the article emphasized all the innovations that Armenuhi Karapetian brought to the field of Armenian children's and youth choral music.

Armenuhi Karapeya is a contemporary Armenian composer who lives in Yerevan.

Key words: *Children's choruses, humorous choruses, spiritual choruses, patriotic choruses, lyrical choruses, choral medleys, Shushi, Varanda.*

ՆԱԲԵԿԱՑԻՆ ԵՎ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆԸ

«Նարեկացին և հայ մանրանկարչությունը» հոդվածում խոսվում է հայ մանրանկարչության զարգացման պատմության, ոճերի ու դպրոցների մասին: Տեղեկություններ է հաղորդվում 10-րդ դարում ձեռագրերի գրչության արվեստի և մանրանկարչության վերաբերյալ:

Անգնահատելի արժեք են Նարեկացու ստեղծագործության արվեստաբանական վերլուծությունները՝ կապված հայ մանրանկարչական արվեստի նվաճումների հետ:

Նարեկացուն նվիրված գործերը ունեն բարձր արվեստ, ինքնատիպ են զարդանախշերով, պայծառ գույներով: Գնահատվում է «Նարեկացին հայ ձեռագրական արվեստում» աշխատությունը, քննության առնվում Նարեկացուն նվիրված մանրանկարները՝ որպես Նարեկացու կերպարի, ազգային խառնվածքի բնութագրական արտահայտություններ:

Նարեկացուն բնորոշող, նրան պատկերող կոթողները դիտվում են որպես արվեստի բարձրարժեք գործեր՝ բազմաթիվ կողմերով բնութագրելով Մեծն հանճարին:

Բանալի բառեր՝ Մանրանկարչություն, անցյալի ժառանգություն, գրքերի ձևավորում, հնագույն նմուշներ, պատմական անձնավորություններ, միջնադարյան բանաստեղծ, ձեռագրային արվեստ, արվեստաբանական վերլուծություններ, դիմանկարներ, զարդանախշեր, պատկերանկար, ազգային խառնվածք:

Հնագույն արվեստների թվին է պատկանում մանրանկարչությունը (մինիատյուր), արվեստի մի ստեղծագործություն, որը ոչ տպագիր գրքի պատկերազարդում է, կերպարվեստի ստեղծագործություն, որն առանձնանում է փոքր չափերով և գեղարվեստական հնարքների նրբությամբ:

Մանրանկարչության հիմնական բնագավառներից մեկը գրքի մանրանկարչությունն է (ծաղկումը) կամ գրքարվեստը՝ գրչագիր մատյաններում ձեռքով կատարված նկարները գուաշով, սոսնձաներկով, ջրաներկով կամ այլ ներկով գունանկարված պատկերները, ինչպես նաև այդ գրքերի ձևավորումը՝ անվանաթերթ, խորաններ, լուսանցազարդեր, բուսական և կենդանական մոտիվներով տեսարաններ:

Հայաստանում գրքի նկարազարդման արվեստի առաջացումը կապված է 405 թ. Մեսրոպ Մաշտոցի ստեղծած հայկական գրային համակարգի՝ հայերեն այբուբենի, ինչպես նաև քրիստոնեական սրբազան գրքերի, մասնավորապես՝ Ավետարանների թարգմանության և արտագրության հետ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ոչ բոլոր ժողովուրդներն են ունեցել մանրանկարչության կենտրոններ: Դրանք ակնհայտ են միայն գիր ու գրականություն ստեղծած ժողովուրդների մոտ:

Փաստերը վկայում են, որ մարդկությանը հայտնի մանրանկարչական հնագույն նմուշները պահպանվել են մ.թ.ա. Հին Եգիպտոսում (նոր թագավորության

շրջանի «մեղայների գրքերը»): Հին հույները պատկերագրողել են գրքի ամբողջ շարադրանքը (հատկապես հատկանշական են Հոմերոսի գրվածքները), պապիրուսագլարների վրա արված մանրանկարները կինոկադրերի պես հաջորդել են միմյանց: Հելլենիստական շրջանում մանրանկարչության գլխավոր կենտրոններ են եղել Ալեքսանդրիան, Հռոմը, Բյուզանդիոնը, Անտիոքը և այլն, որոնք ունեցել են տարբեր ոճեր ու սյուժեներ:

Հայկական մանրանկարչությունը աչքի ընկավ ոճերի և դպրոցների բազմազանությամբ: Մաշտոցյան գյուտով, հայ դպրության սկզբնավորման հետ գրվեցին նաև ձեռագիր գրքեր, դպրության հետ միասին զարգացավ հայկական մանրանկարչությունը, որն ավելի աչքի ընկավ իր գունագեղ էությամբ, ոճական բազմազանությամբ: Համաշխարհային մշակույթի մնայուն գանձերի թվում հիշատակության արժանի է հայկական գրքային մանրանկարչությունը, որի հնագույն նմուշները պահպանվել են 6-րդ դարից: Դրանք մեծ նշանակություն ունեն միջնադարյան Հայաստանի կյանքի ու կենցաղի, տարագների, բարքերի, արհեստների, հայոց բնաշխարհի ուսումնասիրության համար:

Հայաստանում գործած բազմաթիվ մանրանկարչական կենտրոններից հատկապես նշանավոր են Անի-Հաղպատի, Գլաձորի, Վանի, Մեծոփի, Տաթևի, Երզնկայի, Կարին-Էրզրումի, Ղրիմի և այլ գրչության դպրոցները, որտեղ ստեղծագործել են միջնադարյան վարպետ մանրանկարիչներ Ստեփանոսը, Իգնատիոսը, Մարգարեն, Գրիգոր Ծաղկողը, Մոմիկը (13-14-դդ.), Ավագը, Հովհաննեսը, Թորոս Տարոնացին (14-րդ դար), Գրիգոր Տաթևացին, Ծերուն Ծաղկողը (14-15 դդ.), Գրիգորիսը, Վարդանը, Կարապետը, Մանվելը, Մկրտիչ Նաղաշը, Թոմա Կաֆայեցին (15-րդ դար), Բարսեղը, Նաղաշ Հովնաթանը, Ղազար Բարբերդցին, Հակոբ Ջուղայեցին (17-րդ դար), Թեոդորոս Կարնեցին (18-րդ դար) և շատ ուրիշներ: Հայ մանրանկարչության մեջ բնորոշ են հատկապես զարդաձևերը կամ օրնամենտները: Ձեռագրերում առանձնապես աչքի են ընկնում բնագրի սկզբնական էջերի, խորանների գլուխների, վերնագրերի գլխատառերի և լուսանցքների զարդանկարումները: Գեղարվեստական արժեքի հետ զուգընթաց՝ մանրանկարչության հայաստանյան նմուշները անգնահատելի աղբյուր են հայ երաժշտության, թատրոնի, ազգագրության, արհեստների, հողագործության, բուսական ու կենդանական աշխարհի պատմության ուսումնասիրության համար:

Մանրանկարներում պահպանվել են մի շարք պատմական անձնավորությունների նկարներ, որոնց թվում՝ Գրիգոր Նարեկացու (10-րդ դար), Ներսես Շնորհալու (12-րդ դար), Մխիթար Հերացու (12-րդ դար), Սարգիս Պիծակի (14-րդ դար), Լևոն Դ և Հեթում Բ թագավորների (13-14-րդ դար), Գրիգոր Տաթևացու (14-15-րդ դարեր) և այլ աշխարհիկ ու հոգևորական բազմաթիվ մարդկանց դիմանկարներ:

«Կիլիկյան մանրանկարչության հետագա զարգացման ուղիներն արդեն բավական հստակ երևում են 1173 թ. ընդօրինակված, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում պահվող փոքրաչափ «Նարեկ»-ում՝ դեռ 1002 թ. հայ հանճարեղ բանաստեղծ, փիլիսոփա ու երաժիշտ Գրիգոր Նարեկացու գրած «Մատյան ողբերգության» չափածո աղոթագրքում: Ձեռագրի ծաղկողն էր Սկևռայի դպրոցը ներկայացնող տաղանդավոր գեղագիր և մանրանկարիչ Գրիգոր Մլիճեցին: Հատկապես

ուշագրավ են մատյանում գետեղված՝ Գրիգոր Նարեկացու չորս դիմանկարները, որոնցում նա պատկերված է լուսապսակով և ոսկե հարթ ֆոնի վրա»¹, - կարդում ենք Արարատ Աղասյանի «Արվեստի պատմություն. Կերպարվեստ. Գիրք 1» գրքում: Հեղինակը վկայում է, որ «Նարեկ»-ը, ինչպես և 1193 թ. գրված և մանրանկարիչ Կոնստանդինի նկարագրած Ավետարանը (Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության մատենադարան, Վենետիկ) Կիլիկյայի գրչատներում բուն Հայաստանի՝ Մեծ Հայքի գրքարվեստի ավանդույթները դեռևս պահպանող ու շարունակող վերջին ձեռագրերն էին:

Մենք հնարավորություն չունենք մանրակրկիտ վերլուծել հայ մանրանկարչության նմուշները, որոնք այսօր էլ զարմացնում են իրենց բարձրաճաշակ գույներով: Ուսումնասիրելով որոշ աղբյուրներ, տեսնում ենք, որ մանրանկարիչներից շատերի անունները չեն պահպանվել: Փորձել ենք եղած նյութերի սահմաններում բացահայտել միջնադարյան մեծանուն բանաստեղծ Գր. Նարեկացու թեմաներով մանրանկարչական արվեստը՝ հիմք ունենալով Մայրանուշ Մանուկյանի, Դավիթ Ղազարյանի հեղինակությամբ 2016 թ. հրատարակված «Գրիգոր Նարեկացին հայ ձեռագրական արվեստում» աշխատությունը, ուր բազմաթիվ նյութերի հիման վրա հեղինակները բացահայտում են Նարեկացուն՝ հայ ձեռագրական արվեստում: Կատարված արվեստաբանական վերլուծությունները հետաքրքիր են և ուսանելի՝ Նարեկացու պատկերման ավանդույթի բացահայտման առումով:

Միջնադարի մեծանուն բանաստեղծ Գր. Նարեկացու համառոտ կենսագրությունը գտնվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի N 1568 ձեռագրում: «Այն «Մատյան ողբերգության» պոեմի՝ մատենադարանում պահպանվող ամենահին ձեռագիրն է, որը գրված է 1172 թ. մագաղաթի վրա և զարդարված է նուրբ ու գեղեցիկ գունավոր մանրանկարչական պատկերներով և խորագրերով»², - կարդում ենք Մ. Մկրյանի «Հայ հին գրականության պատմություն» գրքում:

Հայտնի է, որ հայ իրականության մեջ 10-րդ դարում զարգանում է մանրանկարչությունը, ծաղկում են ձեռագրերի գրչության արվեստն ու մանրանկարչությունը: 10-րդ դարում սկզբնավորված Վերածնունդը իր ցայտուն արտահայտությունը գտավ գեղարվեստական գրականության մեջ՝ հանձնելու Գր. Նարեկացու ստեղծագործություններին:

Իր բանաստեղծական ներշնչումը նա ստացել է անմիջապես կյանքից, և կյանքի հետ ունեցած ուժեղ կապը պայմանավորում է նրա տաղերի ու «Մատյան ողբերգության» պոեմի գեղարվեստական բարձր արժեքը:

Անգնահատելի արժեք են նաև Նարեկացու ստեղծագործության արվեստաբանական վերլուծությունները՝ կապված հայ մանրանկարչական արվեստի նվաճումների հետ, բացահայտելով Նարեկացու պատկերը հայ մանրանկարչության համատեքստում: Այդ մանրանկարները իրենց գեղարվեստական մակարդակով, պատկերավոր մտածողությամբ արժեքավոր կերպարներ են վաղբրիստոնեական կիրառական արվեստում: Հատկապես հետաքրքիր են դիմանկարները՝ Նարեկացու

¹ Աղասյան Ա., *Արվեստի պատմություն. Կերպարվեստ. գիրք 1*, Ե., 2020, էջ 26:

² Մկրյան Մ., *Հայ հին գրականության պատմություն*, Ե., 1976, էջ 452:

նկարիչ Մլիչեցու հեղինակությամբ՝ կատարված բարձր արվեստով /գրքային մանրանկարչություն/: Փաստերը վկայում են, որ պահպանվել են 5 ձեռագրեր, որոնք հատուկ տեղ են գրավում կիլիկյան մանրանկարչական արվեստում և տարբերվում են ոճով: Հայ մանրանկարիչների գործերը այսօր էլ զարմացնում են իրենց բարձրաճաշակ արվեստով, ինքնատիպ զարդանախշերով, պայծառ գույներով: Մանրանկարիչներից շատերի անունները չեն պահպանվել: Մեզ են հասել Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի, Մովսիկի և ուրիշների անուններ, որոնք տաղանդավոր մանրանկարիչներ են, դրանց գործերը զարդարում են նաև մեր ձեռագիր մատյանները:

Հայ մանրանկարչության գագաթն է 12-րդ դարում «Նարեկը» (1173 թ.)՝ Նարեկացու դիմանկարով: Մատենադարանի կոլեկցիաներից հետաքրքիր է «Աստված Նարեկացու մոտ» մանրանկարը, որը ամենավեհի ու մարդկայինի պատկերն է:

«Գրիգոր Նարեկացին հայ ձեռագրական արվեստում» աշխատության մեջ քննարկվում է հայկական ձեռագրարվեստը, նրբաճաշակ այն նմուշները, որոնք վերաբերում են Նարեկացու արվեստին՝ «Մատյանի» կամ հեղինակի դիմանկարի պատկերմանը:

«Գրիգոր Նարեկացու պատկերման ավանդույթը հաշվարկվում է շուրջ յոթ հարյուր տարի: Այս սկսվում է ԺԲ դարից, երբ հայ եկեղեցին դասում է նրան սրբերի շարքը և շարունակվում է մինչև ԺԹ դարը:

Նարեկացու պատկերումը ձևավորվել և զարգացել է որպես սրբի, գրողի, հրաշագործի, վանականի պատկերագրություն: Այն իր տեղն է գտել քրիստոնեական սրբերի շարքում և դիտարկվել է քրիստոնեական հանրագիտարանային գրականության մեջ»³, - գրում է Ս. Մանուկյանը:

Քննելով Նարեկացու կերպարը հայ մանրանկարչության մեջ երևույթի հետ կապված մատենադարանի ձեռագրերը՝ հմուտ վերլուծաբանը մանրամասն քննության է առնում մանրանկարները, բացահայտում Նարեկացու կերպարի հոգեբանական-փիլիսոփայական շերտերը, ազգային, անհատական խառնվածքը:

Հիրավի, Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը թե՛ գաղափարա-գեղարվեստական առանձնահատկություններով, թե՛ հայ մանրանկարչության բովանդակային ու գեղեցիկ պատկերագրությամբ բարձրաթեք գեղարվեստական որակ է:

Մեզ, բնականաբար, ծանոթ չեն բոլոր տարբերակները, սակայն ծանոթ պատկերներում, մանրանկարային տեքստերում տեսնում ենք հայ վարպետ ծաղկողների ստեղծագործական ձիրքն ու երևակայությունը: Մեզ համար պարզ է դառնում տարբեր վայրերի, հայկական ինքնատիպ մշակույթի, մանրանկարչական դպրոցների արվեստների առանձնահատկությունները:

Ուսումնասիրությունները պարզում են, որ մի շարք մանրանկարներ ստեղծվել են մշակույթային կենտրոններից հեռու վանքերում, թեպետ մանրանկարիչը ծանոթ է եղել Նարեկացու պատկերման ավանդույթներին: Ս. Մանուկյանը դիտարկում է Գր. Նարեկացու պատկերները տարբեր դարաշրջանների մատյաններում:

Մանրանկարներում միշտ էլ յուրովի է ներկայանում մեծն Նարեկացին:

Պատկերների բովանդակությունը բացահայտում է Սուրբ Նարեկացու վարքը,

³ Նարեկացին հայ ձեռագրական արվեստում, «Նաիրի» հր., Ե., 2016 (այսուհետև՝ Նարեկացին հայ ձեռագրական արվեստում), էջ 5:

նրա հրաշագործություններն ու բուժումները: Ծաղկողները կիրառել են հայ մանրանկարչության ավանդական ձևերն ու մեթոդները, որոնք անմահացնում են Նարեկացի հանճարի էությունը:

Բավականաչափ հետաքրքիր է Դավիթ Ղազարյանի «Գրիգոր Նարեկացին ժապավենաձև հմայիլների գեղարվեստական հարդարանքում» ուսումնասիրությունը:

Միջնադարյան հայ մատենագրության մեջ ընդօրինակվել են ոչ միայն աղոթագրքերը, տաղարանները, ժամագրքերը, Ավետարանները, Հայսմավուրֆները, այլ նաև աղոթքներ ու աղերսներ պարունակող ժողովածուները, որոնք անվանվել են հմայիլներ: Դրանց օրինակները մենք հանդիպում ենք Մաշտոցի անվան Մատենադարանում, ինչպես նաև Էջմիածնի Մայր Տաճարում:

«Մեծությամբ 3-րդ հավաքածուն Սուրբ Ղազար կղզում է՝ Մխիթարյան միաբանությունում: Մեծությամբ 4-րդ հավաքածուն գտնվում է Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում»⁴, - հավաստում է Դավիթ Ղազարյանը: Գիտնականը բազմաթիվ ուսումնասիրությունների վկայություններով բերում է հմայիլների ցանկն ու նրանց մասին եղած տեղեկությունները:

Հմայիլներում ընդգծվում են Նարեկացու այն աղոթքները, որոնք ունեն բուժիչ և պահպանիչ ներգործություն: Հմայիլներում ակնհայտ են Նարեկացու «Մատյանից» կատարված մեջբերումները: «Ժապավենաձև հմայիլների գեղարվեստական հարդարանքում իր հաստատուն տեղն է գտել նաև Գր. Նարեկացու պատկերումը, որն, ինչպես մյուս մանրանկարները, որպես կանոն, գտնվում է վերջինիս աղոթքներից առաջ»⁵, - գրում է Դ. Ղազարյանը:

Նա բացահայտում է Նարեկացու մանրանկարները՝ Նարեկացին միայնակ, Նարեկացին կանգնած, Նարեկացին ծնրաղիբ աղոթելիս: Հատկապես ուշադրության արժանի է Նարեկացին եկեղեցում ծնրաղիբ աղոթելիս պատկերը:

Նկարազարդումներում մենք տեսնում ենք Նարեկացու հավատքի ուժը: Նշված մանրանկարները մեզ համար բացահայտում են մանրանկարիչների կողմից Նարեկացու հզորության ցուցադրման մեծ ձգտումը, նրա հոգևոր կերպարի ուժի գնահատումը:

Ուսումնասիրելով մի շարք մանրանկարներ՝ մենք տեսնում ենք Նարեկացի սուրբ այրի հանդեպ հավատը, սերը, նրա ազդեցիկ ուժը, ստեղծագործությունների դաստիարակիչ ու ճանաչողական նշանակությունը:

Այնքան մեծ է Նարեկացու տեղն ու դերը մեր մշակույթի պատմության մեջ, որ ծաղկողները, մանրանկարիչ վարպետները սիրով են ձեռնամուխ եղել իրենց գործին՝ ստեղծագործական իրենց աշխարհում հյուսելով Նարեկացու կերպարը, բացահայտելով նրա դերը թե՛ միջնադարյան մեր գրականության և թե՛ հայ մանրանկարչության պատմության մեջ:

Նարեկացու արվեստաբանական հետազոտությունը սպառված չէ, ինչպես սպառված չէ հայ մանրանկարչության պատմությունը:

Հայկական մանրանկարչության՝ Նարեկացուն բնութագրող, նրան պատկերող կոթողները բարձրարվեստ ստեղծագործություններ են, որոնք բազում կողմերով բնութագրում են Նարեկացի հանճարին:

⁴ Նույն տեղում, էջ 16:

⁵ Նույն տեղում, էջ 22:

ԱՆԱԻՏ ՕԳԱՆՅԱՆ

«НАРЕКАЦИ И АРМЯНСКАЯ МИНИАТЮРА»

РЕЗЮМЕ

В статье “Нарекаци и армянская миниатюра” говорится об истории, стилях и школах армянской миниатюры. Приводятся сведения о рукописном искусстве и миниатюре X века.

Велика ценность художественного анализа произведений Нарекаци, связанная с достижениями в искусстве армянской миниатюры.

Работы, посвященные Нарекаци, отличаются высоким искусством, самобытным орнаментом, яркими красками. Оценивается работа “Нарекаци в армянском рукописном искусстве”, исследуются посвященные Нарекаци миниатюры как характерное отражение образа Нарекаци и национального темперамента.

Описывающие Нарекаци шедевры рассматриваются как ценные произведения искусства, во многом характеризующие великого гения.

Ключевые слова: *Миниатюра, наследие прошлого, книжный дизайн, древние экспонаты, исторические личности, средневековый поэт, рукописное искусство, художественный анализ, портреты, орнаменты, иконопись, национальный темперамент.*

ANAHIT OHANYAN

NAREKATSI AND THE ARMENIAN MINIATURE

SUMMARY

The article «Narekatsi and the Armenian miniature» deals with the history, styles and schools of the Armenian miniature. Information about hand-written art and miniature of the 10th century is given.

The artistic analysis of Narekatsi's works associated with the achievements in the art of the Armenian miniature, is of great value.

The works dedicated to Narekatsi are distinguished by high art, original ornamentation, and bright colors. The work “Narekatsi in Armenian Manuscript Art” is evaluated, the miniatures dedicated to Narekatsi are examined as a characteristic reflection of the image of Narekatsi and the national temperament.

The masterpieces that describe Narekatsi are regarded as valuable works of art, in many ways characterizing the great genius.

Key words: *Miniature, heritage of the past, book design, ancient exhibits, historical figures, medieval poet, handwritten art, artistic analysis, portraits, ornaments, iconography, national temperament.*

ՎԻՐՏՈՒԱԼ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ռ. Թովչյանի և Ա. Մելքոնյանի «Ավտոմատ համակարգեր» գրքում թե ինչ մեխանիզմներ են գործադրված, ինչ խնդիրներ են պահանջված, ավտոմատ համակարգերի բնույթը պարզաբանելու, առաջադրված ենթավերնագրերի («Ավտոմատ համակարգեր», «Ինչպես կառուցել ավտոմատ», «Լուծում տալ իրական կյանքի խնդրին», «Բտերատիվ ավտոմատներ», «Փնտրման ավտոմատներ», «Թվայնացված տվյալների մշակում», «Անխմացիա» և այլն) փակագծերը բացելու ուղղությամբ ինչ հիպոթեզներ առաջ քաշված ընթերցողին, սովորողին կօգնի միայն քննվող ձեռնարկի նյութի ամբողջական յուրացման դեպքում՝ իր առաջակված բոլոր օղակներով հանդերձ:

Նախահաշվարկված ենթատեքստերում կարևորվում է ավտոմատ համակարգի գործողությունների ընթացքը ինչպիսի քայլեր կարող է նախապլանավորած կարգով իրականացնել, գործողությունների ինչպիսի ցանկ կարելի է առաջադրել ավտոմատ համակարգի կառուցման համար, որի ընթացքում կփոխվի **ավտոմատի իրականացման տրամաբանությունը՝ ալգորիթմը**, կամ գտնել **ինտերատիվ, դիմառնության, հաստարկման, հիպոթեզի (կանխավարկածի) մեթոդների** կիրառման մեխանիզմն ու նրա **օգտակար գործողության գործակիցը**, նվազագույն կամ առավելագույն արժեքը, գտնել **փնտրման բանալին, հասկանալ պատկերի թվայնացման խնդիրը, գրաֆիկական պատկերների օգտագործման ձևային, վիզուալ պատկերի խտության կերպը, ընդգծել վիզուալիզացնող (ապաթվայնացնող) ավտոմատի կառուցման դերը** և այլն:

Աշխարհում անընդհատ փոփոխվող և գիտության մեջ նոր մտեցումներ առաջադրող մարտահրավերներին, անկասկած, պետք է պատասխանել գիտական փաստարկներով, օր-օրի զարգացող, ավտոմատացվող դարում ստեղծելով համակարգեր, որոնք կնպաստեն հասարակության լայն շերտերին՝ իրենց աշխատանքը թեթևացնել գիտական թվայնացված ավտոմատ համակարգերով, մանավանդ կարևոր է այն բանաձևումը, ըստ որի «Ավտոմատ համակարգը պետք է ստանա պատահարը բնութագրող թվային արժեք» (Թովչյան Ռ., Մելքոնյան Ա.):

Ավտոմատ համակարգի ստեղծման մեջ դրան հասնելու լավագույն տարբերակը վիրտուալ աշխարհի գաղտնիքներին տիրապետելն է, գիտության լեզվով այն կառավարելը, որի առաջնային սկզբունքը, որպես ապագայի բանալի, համակարգչային մտածելակերպ ձեռք բերելն է, ինչին ուղղորդված է Ռ. Թովչյանի և Ա. Մելքոնյանի ներկայացրած, բավականին ծանրակշիռ փաստարկներով առաջադրված ու նորարարական սկզբունքներով շարադրված ձեռնարկը՝ քննված ժամանակակից տարբեր մեթոդների զուգակցմամբ, հիպոթեզների հերքմամբ և հաստատմամբ:

Ձեռնարկի հեղինակները շատ շնորհակալ գործ են կատարել՝ ընդգծելով ավտոմատ համակարգի նշանակությունը գիտական սանդղակի օղակներում:

***Բանալի բառեր՝** բաղադրյալ պատահարներ, չափելի մեծություններ, նոր վիճակ, ավտոմատ, անիմացիա, պատահար, զինվոր, սովորող համակարգ, կոմում են խմբով, կանոն, ալգորիթմ, Եղիշե Չարենց:*

Ուշագրավ վերնագիր ունի Թոփչյան Ռուբենի (համահեղինակությամբ Մելքոնյան Ալինայի) գիրքը՝ «Համակարգչային մտածելակերպ», ասել է թե՛ երևույթի դիտարկման նոր մեկնակետ, որը նշագրում, տեսանելի է դարձնում բազմախորհուրդ իրականությունը: Այսինքն՝ յուրաքանչյուրի ներսում ապրող ներքին մարդու անսպառ հնարավորությունների բացման բանալի է տալիս այդ գիրքը, մեծապես նպաստում մարդու ինքնաճանաչմանն ու տիեզերական ճշմարտության հայտնաբերմանը (այս առումով բավականին խոստում է կազմի վրա տեղադրված գծանկարը): Գույների առաջադրանքային միտվածությունը, գծի, աղյուսակների ճշգրտության տանող մաթեմատիկական հստակ փիլիսոփայությունը խթանում են մտքի կառավարմանն ու կերպավորմանը՝ ապագան առավել տեսանելի դարձնող ծրագրերի տեսքով, կոնկրետ գործողությունների մեջ:

«Համակարգչային մտածելակերպը» յուրօրինակ ժողովածու է, որն ունի իր բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունները, և «Աչքի պես պարզ, աչքի պես բարդ» թումանյանական իմաստությունը շատ է պատշաճում գիտական-մանկավարժական այս աշխատությանը: «Ավտոմատ համակարգեր», «Ինչպես կառուցել ավտոմատ», «Լուծում տալ իրական կյանքի խնդրին», «Խաղեր և արհեստական տրամաբանություն», «Իտերատիվ ավտոմատներ», «Փնտրման ավտոմատներ», «Տվյալների ներկայացում», «Թվայնացած տվյալների մշակում», «Թվայնացած տվյալների վերլուծություն» և «Ենթահամակարգը»... Գրքի բաժիններն օրգանապես լրացնում են մեկը մյուսին՝ դյուրացնելով նյութի լիարժեք ընկալումը: Ավելին, ամեն մի բաժին սկսվում է սովորողներին ուղղված հարցադրումներով՝ «Ի՞նչ կսովորեք», «Ինչի՞ համար է պետք», ինչպես նաև բացատրական «Ներածություն»-ով, որոնք նախանշում են այն ելքը, որը տանում է ուղիղ դեպի գաղտնիքների դուռը: Ընթերցողն ինքը դառնում է իրականացնողը կանոնակարգված գործողությունների, որոնք հստակորեն համապատասխանեցված են վիճակների հետ՝ բացառելով սխալականությունը:

Շտապեմ նշել, որ գրքի առաջին իսկ տողերն անմիջականություն ու անկեղծ մթնոլորտ են ստեղծում հեղինակների և հաղորդակցվողի միջև, թվում է, թե ոչ թե դասագիրք է 7-րդ դասարանի համար, ինչպես նշված է, այլ մի աննախադեպ ու ինքնատիպ գրուցարան, գուցե ճիշտ կլիներ ասել՝ համակարգչային լեզվի այբբենարան, որը միանգամայն հեռու է ամենքին ծանոթ, թող ներվի, տոփանված, դասագրքային կրկնաբանություններից (տրաֆարետ), այսինքն՝ նոր ասելիքը թարմ ձև է հուշել հեղինակներին: Ավելին, պատումների լեզուն (դրանք երեխաներին դիմառնության մեթոդով են ներկայացվում) միանգամայն պարզ է ու մատչելի, առաջին իսկ

հայացքից ուշադրություն է գրավում նորությունները մատուցելու անմիջականությունը, խոսքն ուղեկցվում է մեկը մեկին հաջորդող զարմանահրաշ հայտնությունների շղթայով: Այնպես որ ընթերցողն ակամա դառնում է մասնակից երևակայական (վիրտուալ) աշխարհի կառավարմանն ու կատարելագործմանը՝ զարգացնելով ու բազմապատկելով իր կարողությունները:

Կոնկրետ օրինակներով ու փաստերով ցույց է տրվում, թե գործիքներն ինչպես են ստեղծվում՝ դեռևս վաղնջական ժամանակներից սկսած, դառնում «մարդու մարմնի մասերի հնարավորությունների շարունակությունը» (օրինակ՝ քարը, թուրը, նետը, ապա՝ թակարդը և այլն): Գիտության զարգացմանը զուգընթաց, գործիքները պարզագույն միջոցներից հասել են համակարգչի ու ամենատարբեր սարքավորումների (ապարատներ) հայտնությանը, որոնք աշխատում են նաև «առանց մարդու միջամտության»:

Հեղինակներ Թոփչյանի և Մելքոնյանի հետ միասին սովորողը կառուցում է ապարատ (ինքնավար), նրանով կառավարում աշխարհը՝ իրականացնելով իր ծրագրերը, ապահովելով գործողությունների ճշգրիտ հաջորդականությունը:

Ահավասիկ, նախաբանի մեջ, ուր մտերմիկ խոսք է բացվում, կարդում ենք. **«Այս գիրքը ուսումնասիրելով կբացահայտես վիրտուալ աշխարհի գաղտնիքները, կհասկանաս նրա տրամաբանությունը և կկարողանաս կառավարել այն: ... Եկ միասին սովորենք մտածել՝ օգտագործելով համակարգչի հնարավորությունները, լինել արագ և ճշգրիտ, իմանալ և կարողանալ շատ»**¹: Այսպես՝ առանց գունագարդումների: Հավաստի: Համոզիչ: Անբռնազբոս, հեռու միտքը «զարդարող» այն միտումներից, որոնք հայ գեղագիտության հիմնադիր Նալբանդյանը կհամարեր «արվեստական թույն»:

Մի այսպիսի դիտարկում ևս. «Ինչպես» և «Ինչը» ամբողջ գրքում ուղեկցում են ընթերցողին: «Ինչպես» քայլ առ քայլ մեզ տանում է դեպի «Ինչը»՝ իր մեջ ամփոփելով բազմաթիվ հոգեբանական-ուսուցողական տարրեր, որոնցով ընդհանրապես աչքի է ընկնում այս բացառիկ ժողովածուն, որն ընթերցելով ակամայից հիշում ես շուշեցի հասարակ մի մանկավարժի՝ Ավետիք Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» դեռևս ձեռագիր գրքին տրված չարենցյան գնահատականը. «Գիրք հանճարեղ և զարմանալի... 1937»²: Առանց չափազանցության:

«Համակարգչային մտածելակերպ» աշխատության մեջ երեխայի աշխարհը ընդլայնվում է անվերջ, իր մեջ ներառում մինչ այդ անծանոթ աշխարհներ, համակարգիչը վերածվում է «ներքին մարդու» յուրօրինակ առավելության, որը կատարելագործում, շոշափելիորեն տեսանելի ու առարկայական է դարձնում նրա տեսլականը, բանական միտքը բազմապատկվում է արհեստականի կիրառելիությամբ: Սակայն այստեղ կա զարգացման գործընթացին հատուկ մի իրողություն: Ո՞րն է դա: Վերջնական ու ավարտուն չեն ո՛չ «ինչպես» /ճանապարհը, որ տանում է դեպի

¹ Թոփչյան Ռ., Մելքոնյան Ա., *Համակարգչային մտածելակերպ: Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն: Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի փորձնական դասագիրք*, Ե., «Շանթ Քոմիյու» ՍՊԸ, 2021 (այսուհետև՝ Թոփչյան Ռ., Մելքոնյան Ա.), էջ 5 (212 էջ):

² Չարենց Ե., տե՛ս Բահաթրյան Ավ., *Հին հայոց տաղաչափական արվեստը (քննական տեսություն)*, Ե., Երևանի համալսարանի հր., 1984 (գրքի առաջին և միակ հրատարակչությունը՝ Հին հայոց տաղաչափական արուեստը. Քննական տեսություն Ավետիքայ Բահաթրեան. Շուշի, Միրզաջան Մահոմեդի Յակոբեանցի տպարանում. 1891), էջ V (185 էջ):

ապարատի կառուցումը/՝ ո՛չ էլ «ինչը» /արդյունքը/, նրանք ենթակա են շարունակական զարգացումների: Եվ վերջնարդյունքը՝ «ինչը», վերածվում է համակարգչային բազմաբովանդակ գործողությունների: Օրինակները գրքում շատ են, դրանք զարգանում-ընդլայնվում են քննարկումների ձևով՝ յուրաքանչյուր դեպքում ապահովելով տրվող առաջադրանքները կատարող կոնկրետ հարցադրումներ ու լուծումներ: Եվ **«կարևոր է, որ համակարգիչն արտահայտի նախատեսվող աշխատանքի տրամաբանությունը»**, պահպանի կապն աշխարհի հետ՝ տվիչների ու մոնիպուլյատորների միջոցով: Ասենք՝ երբ «մետրոյի» դռները բացվում ու փակվում են ինքնավար ձևով, ըստ անհրաժեշտության: Եվ ոչ միայն: **«Դիտարկենք, թե ինչպես է ուղևորների հաշվառումը կատարվում մետրոյում: Մուտքի մոտ տեղադրված է սարք, որի դռնակը բացվում է, երբ մետաղադրամ էք գցում անցքից: Հենց որ մարդը անցնում է բացված դռնակով, այն արագ և ինքնուրույն փակվում է: Նոր գցված մետաղադրամը նորից կստիպի դռնակին բացվել և այդպես շարունակ:**

Մետրոյի դռնակը ավտոմատ է, որի հետ մարդը համագործակցում է: Դռնակը կառավարվում է նախօրոք որոշված կանոններով, որոնցից ավտոմատը չի շեղվում»³:

Հեղինակներ Թուփչյանը և Մելքոնյանը ոչ միայն կատարելապես տիրապետում են համակարգչային աշխատանքի կազմակերպման նրբությունների ուսուցմանը, այլև սովորողների հոգեբանության, մանկավարժական գործի առանձնահատկությունների փորձառու գիտակներ են: Ու պատահական չէ, որ համակարգչի այս կամ այն գործառույթը քննարկումից հետո վերլուծվում է հանգամանորեն: Ամեն սովորող ինքն իր համար հայտնության է հասնում:

Համակարգիչը, ինչ խոսք, գիտական առաջընթացի և անհրաժեշտության ծնունդ է, որն ի հայտ է եկել, ինչպես ասում են, դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ խիստ կարիք էր զգացվում այս կամ այն ռազմական գործողությունը ծրագրավորել ու անսխալ ընթացք տալ մտքի ու մտածումի նպատակային կիրառումներին: Տեխնոլոգիաների զարգացման մեր դարում այն հասել է աննախադեպ կատարելության: Համակարգիչն այսօր մեծ պահանջարկ ունի ամբողջ աշխարհում, այն ոչ միայն ծառայում է դժվարին ծրագրերն իրականացնելու, հաղորդակցման ու բազմապիսի դժվարին գործերի, այլև իրենով է պայմանավորում համաշխարհային հասարակության գիտական ձեռքբերումների մակարդակն ու ընթացքը:

Արդի ժամանակներում հնարավոր չէ պատկերացնել գիտության որևէ ոլորտի զարգացում ու առաջընթաց առանց համակարգչի գործուն մասնակցության ու խորը իմացությունների՝ լինի դա տիեզերքի հետազոտությունը, բժշկությունը, արդյունաբերությունը, կրթությունը, ռազմագիտությունը, մամուլը, մշակույթը, թե այլ մի բնագավառ:

Ամփոփելով խոսքս՝ ասեմ, որ «Համակարգչային մտածելակերպը» /այն ունի նաև ենթավերնագիր՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»/ պահանջված ուսումնական ձեռնարկ է, որը պետք է ուսումնասիրության առարկա դարձնել նաև բուհերի ու քոլեջների ուսանողության համար, քանի որ ցանկացած

³ Թուփչյան Ռ., Մելքոնյան Ա., էջ 13:

մասնագիտության ամբողջական յուրացումը պայմանավորվում է համակարգիչների կիրառմամբ: Ահա թե ինչու այնքան կարևոր և արդիական է Թոփչյան Ռուբենի և Մելքոնյան Ալինայի «Համակարգչային մտածելակերպը», և անգնահատելի է նրա դերը մեր իրականության մեջ, մանավանդ՝ գիտակրթական աշխարհում:

ВАРДАН АКОПЯН

НАУЧНЫЕ ОСНОВЫ УПРАВЛЕНИЯ ВИРТУАЛЬНЫМ МИРОМ

РЕЗЮМЕ

В книге “Автоматизированные системы” Р. Топчяна и А. Мелконяна представлены те механизмы, те задачи, которые требуются для уточнения характера автоматизированных систем, в предложенных подзаголовках (“Автоматизированные системы”, “Как построить автомат”, “Решение реальных проблем”, “Итеративные автоматы”, “Поисковые машины”, “Цифровая обработка данных”, “Анимация” и др.), какая гипотеза выдвинута в направлении раскрытия скобок читателю и учащемуся, поможет только полное усвоение материала исследуемого пособия со всеми предлагаемыми звеньями.

В предусмотренных подзаголовках главным считает процесс действий автоматизированной системы, какие шаги может реализовать предусмотренным порядком, какой список действий можно выдвинуть для конструирования автоматизированной системы, в процессе которого изменяется логика автоматизированной системы: алгоритм или нахождения итеративности, персонификация, механизм применения и его коэффициент полезного действия, минимальная или максимальная значимость, найти ключ поиска, понять цифровую проблему изображения, форму использования графических изображений, использование насыщенности визуального изображения, роль построения визуализирующего автомата (децифрирующий).

В мире постоянно изменяющихся и предлагаемых в науке вызовов новыми подходами, несомненно, позволяет отвечать научными аргументами, создавая системы в развивающемся веке изо дня в день, в автоматизированном веке, которые поспособствуют облегчению работы широких слоев общества с научно- оцифрованными автоматизированными системами. Особенно важна эта формулировка, согласно которой “Автоматизированная система” должна получить происшествие, характеризующее цифровую оценку. (Р. Топчян, А. Мелконян).

В создании автоматизированной системы лучшей версией овладения секретами виртуального мира, управление его научным языком, который является основным принципом, как ключ к будущему, приобретение компьютерного мышления, на что направлено пособие Р. Топчяна и А. Мелконяна, в котором представлены исследуемые различными современными методами отрицание или подтверждение гипотез новейшими весомыми аргументами. Авторы осуществляют благодарную работу, подчеркивая роль автоматизированной системы в научных масштабах.

Ключевые слова: сложные аварии, измеряемые величины, новое состояние, автоматизированный, анимация, несчастный случай, солдат, система обучения, сражаться в группах, правило, алгоритм, Егише Чаренц.

VARDAN HAKOBYAN

SCIENTIFIC BASIS OF VIRTUAL WORLD MANAGEMENT

RESUME

In the book "Automatic Systems" by R. Topchyan and A. Melkonyan, what mechanisms are used, what problems are required, to clarify the character of automatic systems, the proposed sub-titles ("Automatic Systems", "How to Build an Automaton", "Solution to a Real-Life Problem", "Iterative Automata", "Search Machines", "Digital Data Processing", "Animation", etc.) what hypothesis is put forward to the reader and learner to open the brackets, the reader will be helped only by the complete assimilation of the material of the examined manual with all its proposed layers.

In pre-computationed subtext is important what steps the automated system can perform in a pre-planned process, what list of actions can be proposed for the construction of an automatic system, during which the logic of the automaton's implementation will be changed, the algorithm, or to find the use of interactive, personification, intersection, hypothesis methods, the mechanism and its useful operation coefficient, the minimum or maximum value, to find the search key, understand the problem of image digitization, the form of using graphic images, the way of visual image density, emphasize the role of the construction of a visualizing (de-digitizing) automaton, etc.

The challenges that are constantly changing in the world and that innovative approaches to science in science must undoubtedly be answered with scientific arguments, creating systems in the day-by-day developing, automated age that will help the general public to ease their work with scientific digitized automatic systems, especially the formulation according to "The automatic system should receive a numerical value characterizing the accident" (Topchyan R., Melkonyan A.).

The challenges of constantly changing and providing innovative approaches in science in the world should undoubtedly be answered by scientific arguments, by creating systems in a day-by-day developing, automated century, that will contribute to the broader layers of society to ease their work with scientific digitized automatic systems, especially is important formulating of the automatic system, which should receive a digital value that describes an event" (Topchian R., Melchizedek A.).

The best way to achieve this in the creation of an automatic system is to master the secrets of the virtual world, to manage it in the language of science, the primary principle of which, as the key to the future, is to acquire a computer thinking, to which contributes R. Topchyan's and A. Melkonyan's manual presented with quite weighty arguments and written with innovative principles, examined by combining different modern methods, refuting and confirming hypotheses. The authors of the manual have done a very grateful job of emphasizing the importance of automation in the circles of the scientific layers.

Key words: *complicated events, measurable quantities, new state, automaton, animation, event, soldier, learning system, fighting in a group, rule, algorithm, Yeghishe Charents.*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի Հայ-ռուսական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս
2. **ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող
3. **ԼԱՌԻՐԱ ՄՈՒՐԱՅԱՆ** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
4. **ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող
5. **ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՎՊՀ պրոֆեսոր, ԳԻ գիտաշխատող
6. **ԶԻՆԱԴՐԱ ԲԱԼԱՅԱՆ** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
7. **ԷՂՈՒԱՐԴ ՄՎՏՅՅԱՆ** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
8. **ՍՅԵՐ ՔՈՒՍՈՒՆՅ** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
9. **ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շուշիի տեխնոլոգիական համալսարան
10. **ՕՔՍԱՆԱ ԳԱՄՊԱՐՅԱՆ** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մանկավարժության ամբիոնի դասախոս
11. **ՆԱՆԱՐ ԵՐԵՍՅԱՆ** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզուների ամբիոնի դասախոս
12. **ԱԼԲԵՐՏ ԶՈՒՐԱԲՅԱՆ** – ասպիրանտ, ԵՊՀ ԻՄ դասախոս
13. **ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ** – ԱՀ վաստակավոր իրավաբան, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ
14. **ԶԱՔԱՐ ՔԷՇԻՇԵԱՆ** – խմբավար, շուիահար, դուդուկահար, Լիբանանի Հայկազեան համալսարանի և Բարսեղ Կանաչեան երաշտական քոլեջի դասախոս
15. **ԱՆԱՀԻՏ ՕՀԱՆՅԱՆ** – Շուշիի տեխնոլոգիական համալսարան «Գյուրջյան» դիզայնի և հագուստի մոդելավորման դեպարտամենտ
16. **ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտոր, ԱՀ Գրողների միության նախագահ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

1. **АЗАТ ЕГИАЗАРЯН** - доктор филологических наук, профессор, преподаватель кафедрой армянского языка и литературы Ереванского армяно-русского университета
2. **АРМЕН АВАНЕСЯН** – кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегамяна НАН РА
3. **ЛАУРА МУРАДЯН** - доктор филологических наук, профессор
4. **АРКМЕНИК НИКОГОСЯН** - кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегамяна НАН РА
5. **ВАНО ЕГИАЗАРЯН** – доктор, профессор филологических наук, профессор ВГУ, работник ИИ
6. **ЗИНАИДА БАЛАЯН** - доктор филологических наук, профессор
7. **ЭДУАРД МКРТЧЯН** - доктор филологических наук, профессор
8. **МГЕР КУМУНЦ** - кандидат филологических наук, доцент
9. **ЛИАНА САНТРЯН** - кандидат филологических наук, доцент, Шушинский технологический университет
10. **ОКСАНА ГАСПАРЯН** - преподаватель кафедры педагогики Степанакертского университета "Григор Нарекаци"
11. **НАНАР ЕРЕМЯН** - преподаватель кафедры иностранных языков Степанакертского университета "Григор Нарекаци"
12. **АЛЬБЕРТ ЗУРАБЯН** – аспирант, преподаватель в ЕГУ ИФ
13. **ВЛАДИМИР ОСЕПЯН** - заслуженный юрист Республики Арцах, заведующий юридической кафедры степанакертского университета "Григор Нарекаци"
14. **ЗАКАР КЕШЕПЯН** – дирижер, играющий на свирели, играющий на дудуке, преподаватель ливанского университета Айказян и музыкального колледжа имени Барсега Каначяна
15. **АНАИТ ОГАНЯН** – кафедра моделирования дизайна и одежды "Гюрджан" Шушинского технологического университета
16. **ВАРДАН АКОПЯН** - доктор, профессор филологических наук, ректор университета "Григор Нарекаци", председатель Союза писателей.

INFORMATION ABOUT AUTHORS

1. **AZAT EGHIAZARYAN** - Doctor of Philology, Professor, Lecturer of the Armenian Language and Literature Chair at Armenian-Russian University
2. **ARMEN AVANESYAN** - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Institute of Literature after M. Abeghian of NAS of RA
3. **LAURA MURADYAN** - Doctor of Philology, Professor
4. **ARQMENIK NIKOGHOSYAN** - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Literature Institute after M. Abeghian of NAS of RA
5. **VANO EGHIAZARYAN** – Doctor of Philological Science, Professor, Professor at Vanadzor State University, Researcher of the Institute of Sciences
6. **ZINAIDA BALAYAN** - Doctor of Philology, Professor
7. **EDUARD MKRTCHYAN** - Doctor of Philology, Professor
8. **MHER KUMUNZ** - Doctor of Philological Sciences, Associate Professor
9. **LIANA SANTRYAN** - PhD in Philology, Associate Professor, Shusha Technological University
10. **OXSANA GASPARYAN** - Lecturer of the Chair of Pedagogy at "Grigor Narekatsi" University of Stepanakert
11. **YEREMYAN NANAR** - Lecturer of Foreign Languages Department at Grigor Narekatsi University
12. **ALBERT ZURABYAN** - Graduate student, Lecturer at YSU IB
13. **VLADIMIR HOVSEPYAN** - Honored Lawyer of the Armenian Academy of Sciences, Head of the Law Department of "Grigor Narekatsi" University of Stepanakert
14. **ZAKAR KESHISHIAN** - Conductor, shvi player, duduk player, lecturer at Haigazian University and Barsegh Kanachian Charity College in Lebanon
15. **ANAHIT OHANYAN** – Department of Design and Fashion Modeling, Shushi University ANAHIT OHANYAN - Shushi Technological University, "Gyurjian" Department of Design and Fashion Modeling
16. **VARDAN HAKOBYAN** - Doctor of Philological Science, Professor, Rector of "Grigor Narekatsi" University, the President of Artsakh Writers Association

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ»

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ 1 (15)-2023

Հասարակական գիտությունների հանդես

СТЕПАНАКЕРТСКИЙ УНИВЕРСИТЕТ

“ГРИГОР НАРЕКАЦИ”

ДПРАТУН 1 (15)-2023

Журнал общественных наук

STEPANAKERT “GRIGOR NAREKATSY”

UNIVERSITY

DPRATUN 1 (15)-2023

Journal of Social Sciences

Տպագրությունը՝ օֆսեթ

Թուղթը՝ օֆսեթ

Չափսը՝ 60 x 84 1/8

Ծավալը՝ 24,5 տպ. մամուլ

Տպաքանակը՝ 300

